EUA EUROPEAN UNIVERSITY OF ARMENIA ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

«ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

“EUROPEAN UNIVERSITY” COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES

13 (01)

ՀՏԴ 001
ԳՄԴ 72
Ե 744

Հաստատված է ԵՀ Գիտական խորհրդի
2022թ. մայիսի 31-ի թիվ 37 նիստում

Գլխավոր խմբագիր՝
Բիշարյան Հեղինե, մանկավարժական գիտ. թեկնածու

Խմբագրական խորհուրդ
Մանասյան Գ., աշխարհագրական գիտ. թեկնածու, դոցենտ
Վահանյան Գ., տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Կիրակոսյան Ն., տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Հայրապետյան Վ., տեխնիկական գիտ. դոկտոր, պրոֆեսոր
Մելիքյան Վ., տեխնիկական գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ
Խաչատրյան Ա., իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր
Տոնոյան Ն., իրավագիտության թեկնածու, դոցենտ
Մուրադյան Մ., իրավագիտության թեկնածու, դոցենտ
Շահգելդյան Մ., քաղաքական գիտությունների թեկնածու
Եսոյան Մ., պատմական գիտ. թեկնածու, դոցենտ
Ղարիբյան Ա., փիլիսոփայական գիտ.թեկնածու
Նալչաջյան Կ., հոգեբանական գիտ. թեկնածու, դոցենտ
Քելոյան Մ., հոգեբանական գիտ. թեկնածու, դոցենտ
Թովմասյան Հ., բանասիրական գիտ. դոկտոր
Հակոբյան Ս., բանասիրական գիտ. թեկնածու
Հարությունյան Ս., ֆիզ.-մաթ. գիտ.թեկնածու, դոցենտ

Ե 744 **Եվրոպական համալսարան:** Գիտ. Հոդվածների ժող./ԵՀ
Գլխ. խմբ.՝ **Հ.Բիշարյան** - Եր.: «ԵՀ» հրատ., 2022: Գիրք 13(01): - 240 էջ:

Ժողովածուն ընդգրկում է կառավարման, քաղաքագիտության, տնտեսագիտության և ֆինանսների, իրավագիտության, հոգեբանության, լեզվաբանության, տեղեկատվական տեխնոլոգիաների տարբեր ոլորտների հրատապ խնդիրների վերլուծությանը նվիրված հոդվածներ: Ներկայացված հետազոտությունների արդյունքները կարող են օգտակար լինել համապատասխան բնագավառներում զբաղված մասնագետների, ասպիրանտների, հայցորդների, ինչպես նաև գիտության նորագույն նվաճումներով հետաքրքրվող անձանց:

ЕВРОПЕЙСКИЙ УНИВЕРСИТЕТ: СБОРНИК НАУЧНЫХ ТРУДОВ
EUROPEAN UNIVERSITY: COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES

ՀՏԴ 001
ԳՄԴ 72

ISBN 978-99941-2-609-5

© Եվրոպական համալսարանի հրատարակչություն, 2022
© Publishing of European University, 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Կ. Ն. Սարգսյան, Տ. Ս. Մովսիսյան
Կրթության որակի ապահովման եվրոպական չափանիշների ու ուղենիշների (ՈԱԵՉՈՒ) կիրառումը ՀՀ բուհերում 6
Հ. Ռ. Երիցյան
Ծառայությունների որակի կառավարման և գնահատման սկզբունքները 22
Ա.Կ. Մուրադյան
ՀՀ վարկային համակարգի կառավարման դինամիկան վերջին տասնամյակում 28
Ե. Ռ. Կարապետյան
Tik Tok հարթակը ՀՀ-ում՝ որպես ինտերնետ մարքեթինգի նոր զարգացող գործիք 35
A. N. Jahan Biglari
A New Perspective of Topsis Method and Evaluating it in Tehran Stock Exchange 43

ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ս. Վ. Մնացականյան, Վ. Ս. Մնացականյան
ՌԴ արտաքին քաղաքականությունը մերձավոր արևելքում սիրիական ճգնաժամի համատեքստում 55
Ա. Հ. Հովհաննիսյան
Երկու պետությունների հայեցակարգը որպես պաղեստինյան հակամարտության կարգավորման սկզբունք 62

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՖԻՆԱՆՍՆԵՐ

Կ. Ն. Սարգսյան, Հ.Հ. Գրիգորյան
ՀՀ կուտակային կենսաթոշակային համակարգի խնդիրները և բարելավման հնարավորությունները 73
A. Hanisyan
Global Banking Stability under the Covid-19 Crisis 80
Ս.Վ. Խաչիկյան, Ա.Ա. Թորոսյան
Հաղորդակցության ուղիների ապաշրջափակման ազդեցությունը ՀՀ ապրանքաշրջանառության վրա 89
Ա. Հ. Հարությունյան, Լ. Ա. Աղասարյան
ՀՀ գինու սպառողական շուկայում ձևավորված գների վերլուծությունը և գնագոյացման կառուցակարգերի կատարելագործումը 100
Զ.Գ. Խուկեյան
Էներգետիկ ձեռնարկությունների արդի վիճակը և կառավարման գործիքների զարգացման ներկա մակարդակը 107

Մրցակցային միջավայրում էներգետիկ ձեռնարկությունների կառավարման գործիքների մշակման գնահատման մեթոդիկան 120

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Դ.Ա. Թումասյան
Տեսակցություններ ունենալու դատապարտյալի իրավունքը և դրա իրացման որոշ հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում 135
Գ.Ս. Մարուքյան
Ֆրանչայզինգի պայմանագրի իրավական կարգավորման որոշ առանձնահատկությունների մասին 145
Ա. Ա. Հովհաննիսյան
Անմեղության կանխավարկածի հիմնահարցերը միջազգային իրավական պրակտիկայում 152
Ա. Հ. Առաքելյան
ՄԻԵԴ վճիռների գիտագործնական և գիտատեսական նշանակությունը 160
Դ. Հակոբյան
Սահմանադրական կարգի հիմունքները որպես Արցախի Հանրապետության սահմանադրական կարևոր ինստիտուտ 167

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ա. Ա. Նադոյան, Ա. Գ. Վարդանյան
Տեղեկատվական հոգեբանական ներգործությունները հանրույթի հոգեբանական անվտանգության վրա 175

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Գ.Ա. Գևորգյան
Ազգակցական, բարեկամական, ամուսնական կապեր արտահայտող հասկացույթների փոխաբերական և դարձվածքային կիրառումները (Աստվածաշունչ, Շեքսպիր, այլ խոսույթներ) 184
Մ. Ս. Բոցինյան
Տեղաշարժեր Նոր Նախիջևանի բարբառի ձայնավորական համակարգում 190
A. A. Simonyan
Contemporary Media and Public Communication 196
Ն. Դ. Ջաբաղյան
Հեռուստահարցազրույցի լեզվագործաբանական առանձնահատկությունները 202
Ա. Մ. Ասլանյան
Այլաբանությունը և խորհրդանշական պատկերները Թոնի Մորիսոնի «Ամենակապույտ աչքը» վեպում 210

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

Ա. Գ. Բասկովչյան
Հաստատուն հոսանքով էլեկտրական շարժիչի արագության կառավարման ալգորիթմի մշակում ոչ հստակ տրամաբանության մեթոդով 221
D.R. Babayan, A.A. Ghazaryan
Multi-Vth Low Power Design Method Based on 32/28nm Openmsp 430 Processor 228
Հ. Հ. Օհանյան, Ն. Վ.Հովհաննիսյան
React.js-ի ֆունկցիոնալ և դաս բաղադրիչների առավելություններն ու թերությունները..... 235

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ՈՒ ՈՒՂԵՆԻՇՆԵՐԻ (ՈԱԵՉՈՒ) ԿԻՐԱՌՈՒՄԸ ՀՀ ԲՈՒՀԵՐՈՒՄ

Սարգսյան Կ. Ն.
տնտ.թ.
ՀԵՀ, Կառավարման ամբիոն
karinesarg@yahoo.com
Մովսիսյան Տ. Ս.
հայցորդ
ԲՊՀ, Կրթության կառավարման և պլանավորման ամբիոն
tatevmovsisyan1907@gmail.com

Ամփոփագիր

Սույն հոդվածում քննարկվում են կրթության որակի ապահովման եվրոպական և ազգային չափանիշների մշակման, կիրառման ու կատարելագործման նախադրյալները, որակի ապահովման եվրոպական և հայաստանյան չափանիշների համադրման առանձնահատկությունները, չափանիշների միջև առկա նմանություններն ու տարբերությունները: Բուհերի ինքնավերլուծությունների և փորձագիտական զեկույցների ուսումնասիրության արդյունքում բացահայտվել է նաև Հայաստանի Հանրապետությունում Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի (այսուհետ՝ ԵԲԿՏ) առանցքային գործիքներից մեկի՝ Որակի ապահովման եվրոպական չափորոշիչների ու ուղենիշների (այսուհետ՝ ՈԱԵՉՈՒ) կիրառման փաստացի վիճակը որակավորումների արժանահավատ շնորհման համատեքստում:

Հետազոտության արդյունքների համաձայն՝ որակի ապահովման ազգային և եվրոպական չափանիշների միջև առկա են նմանություններ ու տարբերություններ, և ԵԲԿՏ-ում որակի ապահովման գործընթացներն ունեն համանման նպատակներ, իսկ հոդվածում ուսումնասիրված բուհերի գործունեությունը մասամբ է բավարարում ՈԱԵՉՈՒ-ի ու Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի (այսուհետ՝ ՈԱԱԿ) կողմից իրականացվող ինստիտուցիոնալ հավատարմագրման պահանջները: Այսպիսով, հետազոտության արդյունքում վեր հանված խնդիրները խոչընդոտում են հայաստանյան բուհերին լիովին ինտեգրվելու ԵԲԿՏ-ին: Ուստի, անհրաժեշտ է նախաձեռնել համալիր միջոցառումներ որակի ապահովման գործընթացներն առավել թիրախային դարձնելու և համապատասխանեցնելու Բոլոնիայի գործընթացի գաղափարախոսությանը:

Հիմնաբառեր. բարձրագույն կրթություն, որակի ապահովում, որակի ապահովման չափանիշներ ու չափորոշիչներ, հավատարմագրման խնդիրներ:

Ներածություն

Բարձրագույն կրթության ոլորտում արդիական է եվրոպական չափանիշներին համապատասխան որակի ապահովման գործընթացների իրականացումը՝ միևնույն ժամանակ հաշվի առնելով յուրաքանչյուր երկրի կրթական համակարգի առանձնահատկությունները: Լինելով Բոլոնիայի գործընթացի առանցքային ուղղություններից մեկը՝ որակի ապահովումը նպաստում է ԵԲԿՏ-ում ակադեմիական շարժունության ընդլայմանը, շնորհվող որակավորումների արժանահավատու-

թյանը և փոխճանաչմանը, կրթության միջազգայնացմանը, մրցունակության ու վարկանիշի բարձրացմանը:

ՀՀ-ում կրթական բարեփոխումների օրակարգի մշտական հարցերից մեկը բարձրագույն կրթության որակի բարձրացումն է: Ուստի, հաշվի առնելով Հայաստանի՝ ԵԲԿՏ-ին լիովին ինտեգրվելու ջանքերը, հատկապես՝ եվրոպական մակարդակում կրթության որակի բարելավմանն ու ճանաչմանն ուղղված միջոցառումները՝ սույն հետազոտության **նպատակն է՝** համեմատել և վերլուծել որակի ապահովման եվրոպական և հայաստանյան չափանիշները, դուրս բերել նմանություններն ու տարբերությունները և բացահայտել ՀՀ բուհական համակարգում ՈԱԵՉՈՒ-ի կիրառման խոչընդոտները:

Հետազոտության **օբյեկտն է՝** որակի ապահովման եվրոպական և հայաստանյան չափանիշներն ու չափորոշիչները, **առարկան**՝ դրանց համեմատական ուսումնասիրությունը և ազդեցությունը ՀՀ բուհերի գործունեության վրա:

Հետազոտության ընթացքում կիրառվել են փաստաթղթերի համեմատական վերլուծության, համադրման մեթոդները:

ԵԲԿՏ անդամ 49 երկրների որդեգրած որակի ապահովման քաղաքականությունների, ռազմավարությունների, ընթացակարգերի, մեխանիզմների, գործիքակազմի մշակման հիմքում ընկած են Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական չափորոշիչներն ու ուղենիշները (ՈԱԵՉՈՒ): ՈԱԵՉՈՒ-ի մշակման անհրաժեշտության մասին անդրադարձ է կատարվել Բեռլինի կոմյունիկեում (2003թ.) համաձայն որի՝ Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիան (ENQA) իր գործընկեր կազմակերպությունների հետ պետք է մշակեր որակի ապահովման չափորոշիչների, ուղենիշների ու ընթացակարգերի փաստաթուղթ՝ այդպիսով ուղղորդելով որակի ապահովման դերակատարներին տրամաբանական դարձնելու որակի ապահովման գործընթացները ԵԲԿՏ-ում [*Berlin Communiqué 3*]: Արդյունքում 2005թ. Բերգենում E4 խմբի (Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիա (ENQA), Եվրոպական ուսանողական միություն (ESU), Բարձրագույն կրթական հաստատությունների եվրոպական ասոցիացիա (EURASHE) և Համալսարանների եվրոպական ասոցիացիա (EUA)) ներկայացրած առաջարկությունների հիման վրա կրթության նախարարներն ընդունեցին ՈԱԵՉՈՒ-ն՝ կոչ անելով ԵԲԿՏ անդամ երկրներին մշակել դրան համադրելի որակի ապահովման չափանիշներ և ուղենիշներ [*Bergen Communiqué, 2-3*]: Այսպիսով՝ կարճ ժամանակահատվածում ՈԱԵՉՈՒ-ն դարձավ կրթության որակի ապահովման չափորոշիչների, ուղենիշների և ընթացակարգերի խորհրդատվական փաստաթուղթ, որի նպատակն է ուղղորդել բուհերին և որակի ապահովման գործակալություններին ԵԲԿՏ անդամ երկրներում որակի ներքին ու արտաքին ապահովման համակարգերի ստեղծման, ներդրման, արդյունավետ գործառման, գնահատման և հետագա բարելավման հարցերում: Բացի ուղղորդող փաստաթուղթ լինելուց՝ ներկայումս որակի ապահովման գործակալությունների համար ՈԱԵՉՈՒ-ի կիրառումը պարտադիր պահանջ է Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիային (ENQA) անդամակցելու և Որակի ապահովման գործակալությունների եվրոպական գրանցամատյանում (EQAR) գրանցվելու համար՝ առավել թափանցիկ դարձնելու որակի ապահովման (հավատարմագրման) գործընթացները [*Խաչատրյան, Մովսիսյան 26*]:

Ուշագրավ է, որ ՈԱԵՉՈՒ-ն արտացոլում է Եվրոպական համալսարանների միության (ԵՀՄ) 2003 թ. հուլիսին ընդունված Գրացի հռչակագրի դրույթները, համաձայն որի՝ որակի ապահովման չափանիշների առանցքային նպատակն է խթանել փոխադարձ վստահու-

թյունը և բարելավել որակի ապահովման դերակատարների գործունեության թափանցիկությունը՝ միևնույն ժամանակ հարգելով յուրաքանչյուր երկրի ազգային մոտեցումները և մասնագիտական ոլորտների բազմազանությունը [*Graz, Declaration 9*]: Այսինքն՝ ՈԱԵՉՈՒ-ն մշակվել է ԵԲԿՏ անդամ երկրների կրթական համակարգերի առանձնահատկությունների հաշվառմամբ և կիրառելի է անկախ որակի ապահովման դերակատարների կազմակերպահրավական ձևից, բուհերի առանձնահատկություններից, ծավալից ու կառուցվածքից: Բացի այդ, ՈԱԵՉՈՒ-ն արտացոլում է Գրացի հռչակագրի այն դրույթը, որ կրթության որակի ապահովման առաջնայնության հարցում հետևողական լինելն ընկած է յուրաքանչյուր կրթական հաստատության վրա [*Graz, Declaration 9*]: Այսինքն՝ սույն ձևակերպմամբ վերահաստատվում է բուհերի առանցքային դերակատարությունը և կարևորությունը կրթության որակի բարելավման ու կատարելագործման գործում:

Որակի ապահովման գործընթացներն առավել թիրախային դարձնելու ու ՈԱԵՉՈՒ-ի կիրառման արդյունավետությունը գնահատելու նպատակով 2012թ. E4 խումբը մեկնարկեց ՈԱԵՉՈՒ-ի վերանայման աշխատանքները: Արդյունքում՝ սահմանվեցին ՈԱԵՉՈՒ-ի նոր նպատակները, սկզբունքները, հստակեցվեցին չափորոշիչներն ու ուղենիշները, որոնք որակի ապահովման դերակատարներին առաջադրում էին գործունեության բովանդակային վերանայումների պահանջներ [*Bollaert, 199*]: Արդյունքում ՈԱԵՉՈՒ-ի վերջնական տարբերակն ընդունվեց 2015թ. Երևանում կայացած նախարարական գագաթնաժողովում՝ այդպիսով դառնալով ԵԲԿՏ անդամ երկրներում որակի ապահովման գործընթացների բարելավման ու կատարելագործման գործիք:

ՈԱԵՉՈՒ-ին համապատասխան ՀՀ որակի ապահովման (հավատարմագրման) չափանիշների մշակման աշխատանքները մեկնարկեցին 2008թ. «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (ՈԱԱԿ) ստեղծումից հետո: Չափանիշների մշակման նպատակով կրթության ոլորտի փորձագետների հետ հանդիպում-քննարկումների և միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքում ՈԱԱԿ-ը մշակեց և Կառավարության հաստատմանը ներկայացրեց որակի ապահովմանն առնչվող փաստաթղթային փաթեթը՝ որակի ապահովման չափանիշները [*2011թ. ՀՀ կառավարության N959-Ն որոշում*] և ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման կարգը [*2011թ. ՀՀ կառավարության N978-Ն որոշում*]: Մշակվեցին նաև որակի ապահովման գործընթացները կանոնակարգող իրավական մյուս փաստաթղթերը:

Ընդհանուր առմամբ, ՀՀ որակի ապահովման չափանիշների և չափորոշիչների նպատակն է՝ աջակցել մասնագիտական կրթական հաստատություններին՝ ստեղծելու ՀՀ օրենսդրությանն ու ՈԱԵՉՈՒ-ին համապատասխան որակի ներքին ապահովման համակարգեր [*ՈԱԱԿ, 22*]: ՀՀ որակի ապահովման չափանիշները հնարավորություն են տալիս մասնագիտական կրթական հաստատություններին ինստիտուցիոնալ և ծրագրային մակարդակներում իրականացնելու ինքնավերլուծություններ և բացահայտելու հաստատության և/կամ նրա առանձին կրթական ծրագրերի խնդիրները, խոչընդոտներն ու բարելավման կարիք ունեցող տիրույթները [*Խաչատրյան, Մովսիսյան, 33*]: Այս համատեքստում ուշագրավ է այն փաստը, որ ՀՀ որակի ապահովման չափանիշները և հավատարմագրման կարգը մշակվել են 2005թ. ընդունված ՈԱԵՉՈՒ-ի հիման վրա և մինչ օրս չեն վերանայվել, այնինչ ԵԲԿՏ-ում և ՀՀ-ում իրականացվող բարեփոխումների արդյունքում իմաստափոխվել են նաև որակի ապահովմանն առնչվող մոտեցումներն ու որակի ապահովման համակարգերին ներկայացվող պահանջները:

Այսպիսով՝ ՈԱԵՉՈՒ-ն և ՀՀ որակի ապահովման չափանիշներն անցել են մշակման ու կիրառման երկարատև ճանապարհ: Դրանց մշակման հիմքում ընկած են միջազգայնորեն ընդունված փաստաթղթերը, ԵԲԿՏ անդամ երկրների կրթության ոլորտի առանձնահատկությունները, ինչպես նաև այդ երկրների՝ ազգային (պետական) և եվրոպական մակարդակներում կրթության որակի ճանաչմանն ուղղված ջանքերը:

Կրթության որակի ապահովման եվրոպական և հայաստանյան չափանիշների կիրառման վերլուծությունը ՀՀ բուհերում

Կրթության որակի ապահովման եվրոպական և հայաստանյան չափանիշների առանձնահատկությունները բացահայտելու, դրանց միջև նմանություններն ու տարբերությունները վերհանելու նպատակով՝ սույն հոդվածում համադրվել ու վերլուծվել են ՈԱԵՉՈՒ-ն և ՀՀ որակի ապահովման չափանիշները (տե՛ս Աղյուսակ 1):

Սույն հետազոտության մեջ ուսումնասիրվել են հատկապես ՀՀ ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշները, քանի որ «ՀՀ կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգով» ՀՀ-ում ծրագրային հավատարմագրումն իրականացվում է կամավորության սկզբունքով:

Աղյուսակ 1.

ՈԱԵՉՈՒ (ՄԱՍ 1)	ՀՀ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ	
	ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ	ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ
1.1 Որակի ապահովման քաղաքականություն և գործընթացներ	- Առաքելություն և նպատակ (1) - Կառավարում և վարչարարություն (2) - Ուսանողներ (4.8) - Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ (5.7) - Որակի ներքին ապահովում (10)	- Որակի ապահովում (7)
1.2 Կրթական ծրագրերի մշակում և հաստատում	- Մասնագիտությունների կրթական ծրագրեր(3) - Հետազոտություն և զարգացում (6.9) - Արտաքին կապեր և միջազգայնացում (9.5)	- Մասնագիտության կրթական ծրագիր(1) - Հետազոտական և ստեղծագործական գործունեություն(5)
1.3 Ուսանողակենտրոն ուսումնառություն, ուսուցում և գնահատում	- Մասնագիտությունների կրթական ծրագրեր (3) - Ուսանողներ (4.2, 4.6)	- Դասավանդում և ուսումնառություն(3) - Ուսանողների գնահատում(4)
1.4 Ուսանողների ընդունելություն, առաջադիմություն, ճանաչում և ատեստավորում	- Մասնագիտությունների կրթական ծրագրեր - Ուսանողներ(4) - Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ(5) - Ենթակառուցվածք և ռեսուրսներ (7)	- Մասնագիտության կրթական ծրագիր (1) - Նախընթաց կրթության ճանաչման վերաբերյալ

	- Նախընթաց կրթության ճանաչման վերաբերյալ առանձին չափանիշ նախատեսված չէ	առանձին չափանիշ նախատեսված չէ
1.5 Դասախոսական կազմ	- Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ (5)	- Պրոֆեսորադասախոսական կազմ(2)
1.6 Ուսումնառության ռեսուրսներ և ուսանողներին աջակցություն	- Կառավարում և վարչարարություն(2) - Ուսանողներ(4) - Ենթակառուցվածքներ և ռեսուրսներ(7)	- Կրթական միջավայր(6)
1.7 Տեղեկատվության կառավարում	- Կառավարում և վարչարարություն (2.4, 2.5, 2.6) - Ենթակառուցվածք և ռեսուրսներ (7) - Հասարակական պատասխանատվություն (8.3)	-
1.8 Հանրային տեղեկատվություն	- Կառավարում և վարչարարություն(2) - Հասարակական պատասխանատվություն(8) - Որակի ներքին ապահովման համակարգ (10.6)	-
1.9 Կրթական ծրագրերի շարունակական մշտադիտարկում և պարբերական վերանայում	- Մասնագիտությունների կրթական ծրագրեր (3.4, 3.5) - Ուսանողներ (4.2, 4.8)	1.Մասնագիտության կրթական ծրագիր
1.10 Շրջափուլային որակի արտաքին ապահովում	- Կառավարում և վարչարարություն (2) - Որակի ներքին ապահովման համակարգ (10.5)	-

ՀՀ որակի ապահովման եվրոպական և ազգային չափանիշների համադրությունը

ՀՀ բուհերում ՈԱԵՁՈՒ-ի պահանջներին հետևելու տեսանկյունից ուսումնասիրվել են հետևյալ բուհերի ինքնավերլուծություններն ու հավատարմագրման զեկույցները՝

Պետական բուհեր

1. Երևանի պետական համալսարան (ԵՊՀ),
2. Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան (ԲՊՀ),
3. Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան (ՀՊՏՀ),
4. Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան (ՀՊՄՀ),
5. Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան (ԵՊԲՀ),
6. ՀՀ Ոստիկանության կրթահամալիր,
7. Հայաստանի ազգային ագրարային համալսարան (ՀԱԱՀ),
8. ՀՀ պետական կառավարման ակադեմիա (ՀՀ ՊԿԱ),
9. Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա (ԵՊԿ):

Պետության մասնակցությամբ բուհեր

1. Հայաստանի եվրոպական համալսարան (ՀԵՀ)

Ոչ պետական բուհեր

1. Եվրասիա միջազգային համալսարան (ԵՄՀ)
2. Երևանի «Գլաձոր» համալսարան

Վերոնշյալ ՀՀ բուհերի ընտրությունը պայմանավորված է հետևյալ հանգամանքներով՝

- ընտրված բուհերը պատրաստում են ՀՀ ռազմավարական առաջնահերթություն ունեցող ոլորտների մասնագետներ,
- ընտրված բուհերն անցել են պետական ինստիտուցիոնալ հավատարմագրում վերջին հինգ տարվա ընթացքում,
- ապահովում են կրթության շարունակականությունը երեք մակարդակներում,
- ընտրված բուհերն ունեն համեմատաբար մեծ թվով ՊԴ կազմ և ուսումնառողներ՝ ըստ իրենց ինքնավերլուծություններում ներկայացրած տվյալների:

Ստորև ներկայացվում են հետազոտության ընդհանրացված արդյունքները՝ ըստ ՈԱԵՁՈՒ-ի 10 չափորոշիչների:

1. Որակի ապահովման քաղաքականություն և գործընթացներ

ՈԱԵՁՈՒ-ի 1-ին մասի (որակի ներքին ապահովում) 1-ին չափորոշիչն ընդգծում է բուհերում որակի ապահովման ռազմավարական մոտեցումների առկայությունը, որոնք պետք է բխեն բուհերի շահակիցների կարիքներն ու պահանջներն արտացոլող քաղաքականություններից: Այսինքն՝ կրթության որակի ապահովումը պետք է դիտարկի բուհերի ռազմավարական զարգացման ուղղություններից մեկը՝ այդպիսով ապահովելով շահակիցների ներգրավվածությունը բուհի զարգացման աշխատանքներում: Հաշվի առնելով նշվածը՝ ՀՀ-ում արտաքին գնահատման առանցքում ևս բուհերի որդեգրած քաղաքականություններն ու ռազմավարություններն են, մասնավորապես՝ բուհերի գործունեության բոլոր տիրույթների զարգացմանն ուղղված գործընթացներն ու ընթացակարգերը, վերջիններիս իրականացման աշխատանքներում շահակիցների (ուսանողներ, ՊԴ կազմ, գործատուներ) ներգրավվածությունը: Բացի այդ, բուհերի գործունեությունը գնահատելիս փորձագիտական խումբն առանձնակի կարևորում է ղեկավար կազմի և որակի ներքին ապահովման ստորաբաժանման արդյունավետ համագործակցությունը, հատկապես՝ որոշումների կայացման հիմքում որակի ներքին ապահովման գործընթացների արդյունքների դիտարկումը:

Բուհերում ՈԱԵՁՈՒ-ի 1-ին չափանիշի կիրառման փաստացի իրավիճակի ուսումնասիրությունը, ըստ փորձագիտական զեկույցների, ցույց է տալիս, որ բուհերն ունեն որակի ապահովմանն առնչվող փաստաթղթային հենք, սակայն դրանք ամբողջությամբ չեն կիրառվում ինստիտուցիոնալ մակարդակում: Մասնավորապես, որոշ բուհերի դեպքում առկա է որակի ապահովման քաղաքականության ու ռազմավարության վերանայման անհրաժեշտություն, քանի որ դրանք չեն բխում որակի ապահովման համակարգին առաջադրվող ներկայիս պահանջներից և լիովին չեն արտացոլում իրենց առանձնահատկությունները: Թեպետ ուսումնասիրված բուհերի քաղաքականությունների հիմքում դիտարկվում է Դեմինգի պլանավորում-իրականացում-գնահատում-բարելավում (ՊԻԳԲ) որակի կառավարման սկզբունքը, այնուամենայնիվ, վերջինս ինստիտուցիոնալ առումով ոչ բոլոր գործընթացներում է առկա. արտաքին փորձագետների գնահատմամբ՝ գործընթացների մեծ մասը պլանավորման ու իրականացման փուլերում են, իսկ գնահատում-

ներն ու վերանայումները ոչ բոլոր ուղղություններով են կատարված: Բուհերի ռազմավարական ծրագրերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բուհերի մեծ մասում (բացառությամբ ԵՊՀ, ԲՊՀ, ԵՄՀ) որակի ապահովմանը վերաբերող գործողությունների շրջանակն ընդգրկում է բուհի գործունեության միայն մի քանի ուղղություններ (կրթական ծրագրեր, ՊԴ կազմ, դասավանդում, ուսանողների գնահատում): Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ թեպետ ՀՀ բուհերը որակի ներքին ապահովման համակարգի զարգացման համար ռազմավարական ծրագրերում նախատեսել են միջոցառումներ և դրանց գնահատման ցուցանիշներ, սակայն դրանց մեծ մասն ընդհանրական լինելու պատճառով հստակեցման կարիք ունի: Ըստ ինքնավերլուծություններում և փորձագիտական զեկույցներում ներկայացված տվյալների՝ բուհերի թույլ կողմերից է նաև որակի ապահովման գործընթացներում շահակիցների, հատկապես արտաքին շահակիցների, ներգրավվածության ցածր մակարդակը, իսկ փորձագետների գնահատմամբ՝ բուհերի կառավարումը, առանցքային որոշումների կայացումը չի իրականացվում որակի ներքին ապահովման ստորաբաժանումների վերլուծությունների հիման վրա:

Այսպիսով, ուսումնասիրված բուհերն աշխատանքներ են տանում որակի ապահովման համակարգի գործառման ու զարգացման ուղղությամբ: Սակայն վերոնշյալ թերությունները խոչընդոտում են որակի ներքին ապահովման գործընթացների արդյունավետության բարձրացմանը, ինչն էլ թույլ է տալիս եզրակացնել, որ ՀՀ բուհերը մասամբ են բավարարում ՈԱԵՉՈՒ-ի 1-ին չափորոշչի և որակի ապահովմանն առնչվող ՀՀ հավատարմագրման չափանիշի պահանջները մասամբ են կիրառվում ՀՀ բուհերում:

2. Կրթական ծրագրերի մշակում և հաստատում

ՈԱԵՉՈՒ-ի 2-րդ չափորոշչում առանձնակի կարևորվում են ԵԲԿՏ Որակավորումների շրջանակին համապատասխան վերջնարդյունքահենք կրթական ծրագրերի մշակումը, դրանց մշակման աշխատանքներում շահակիցների ներգրավվածությունը: Հաշվի առնելով նշվածը՝ ՀՀ-ում որակի ապահովման չափանիշների հիմքում ևս ընկած են ՀՀ որակավորումների ազգային շրջանակին (ՈԱՇ) համապատասխան վերջնարդյունքահենք մասնագիտության կրթական ծրագրերի (ՄԿԾ) մշակումն ու կառավարումը, ՄԿԾ-ներում հետազոտության բաղադրիչի առկայությունն ու կրթական ծրագրերի միջազգայնացումը:

Ընտրված բուհերի ինքնավերլուծությունների և փորձագիտական զեկույցների ուսումնասիրության համաձայն՝ ՄԿԾ-ների մշակման ու հաստատման համար բոլոր բուհերում առկա են համապատասխան կարգեր ու մեթոդական ուղեցույցներ: ՄԿԾ-ների մշակման համար հիմք են հանդիսանում աշխատաշուկայի վերլուծությունները, բենչմարքինգը: Փորձագետների գնահատմամբ ՄԿԾ-ները մշակված են վերջնարդյունքահենք մոտեցմամբ: Կրթական վերջնարդյունքների մշակման համար հիմք են ծառայում ՀՀ պետական կրթական չափորոշիչները, ՀՀ ՈԱՇ-ը, տարբեր մեթոդական ուղեցույցները, բուհերի շահակիցների շրջանում իրականացված վերլուծությունները, ինչպես նաև կրթության կազմակերպիչների և կառավարիչների փորձը: Այդուհանդերձ, փորձագետների գնահատմամբ կրթական վերջնարդյունքները հիմնականում չափելի և հստակ ձևակերպված չեն, իսկ դրանց մշակման գործընթացներում խիստ ցածր է գործատուների մասնակցությունը: Փորձագիտական զեկույցների ուսումնասիրության արդյունքների համաձայն՝ ՄԿԾ-ների և ՀՀ ՈԱՇ բնութագրիչների համապատասխանեցման տարբեր գործիքներ բու-

հերում առկա չեն: Որպես միակ գործիք՝ բուհերում կիրառվում է ՄԿԾ-ների և ՀՀ ՈԱԾ բնութագրիչների քարտեզագրումը: Թեպետ ուսանողների բեռնվածությունը տեսականորեն հաշվարկվում է Կրեդիտների կուտակման և փոխանցման եվրոպական համակարգի (ԿՓԵՀ) սկզբունքներին համաձայն, այդուհանդերձ, ԿՓԵՀ-ի կիրառումը բուհերում առավել շատ ֆորմալ բնույթ է կրում: Ուսումնասիրված բուհերի թույլ կողմերից է նաև ՄԿԾ-ներում հետազոտական բաղադրիչի թույլ լինելը, շատ դեպքերում՝ նույնիսկ բացակայությունը, ինչը խոչընդոտում է ուսանողների և շրջանավարտների հետազոտական կարողությունների զարգացմանը և հետագա կատարելագործմանը: Ոչ բոլոր ՄԿԾ-ներում է ապահովված կրթության ու հետազոտության կապը, ինչը ևս փորձագիտական խմբերի դիտողություններից մեկն է: Փաստորեն, ՀՀ բուհերը դեռևս անելիքներ ունեն իրենց գործընթացները ՈԱԵՁՈՒ-ի 2-րդ չափորոշչի և ՀՀ ինստիտուցիոնալ հավատարմագրման 3-րդ չափանիշի պահանջներին համապատասխանեցնելու ուղղությամբ:

3. Ուսանողակենտրոն ուսումնառություն, ուսուցում և գնահատում

ՈԱԵՁՈՒ-ի 3-րդ չափորոշիչում առանցքային կարևորություն է տրվում ուսանողակենտրոն ուսուցմանը, քանի որ վերջինս կարևոր դեր է խաղում ուսանողի մոտիվացիայի բարձրացման, ինքնակրթման ու ինքնազարգացման գործում: Ուսանողակենտրոն ուսուցման համաձայն՝ ուսանողը պետք է ակտիվ և ինքնուրույն մասնակցություն ունենա սեփական ուսումնառության մեջ և պատասխանատու լինի կրթական վերջնարդյունքների ձեռքբերման համար: Ըստ ՈԱԵՁՈՒ-ի [*ESG 12*]՝ ուսանողակենտրոն ուսուցում հնարավոր է իրականացնել՝ 1) հարգելով ու հաշվի առնելով ուսանողների կարիքները, 2) ուսումնական գործընթացքում կիրառելով մանկավարժական տարբեր մեթոդներ ու գնահատելով դրանց արդյունավետությունը, 3) ուղղորդելով ուսանողներին, 4) խթանելով ուսանողների ինքնուրույնությունը՝ նպաստել նրանց ակադեմիական առաջադիմության բարձրացմանը, 5) ամրապնդելով դասախոս-ուսանող հարաբերությունները:

ՀՀ-ում ինստիտուցիոնալ հավատարմագրման 3-րդ չափանիշը ենթադրում է, որ բուհերը պետք է ունենան քաղաքականություններ, մեխանիզմներ ու գործիքներ, որոնցով կապահովվի ուսանողների ակտիվ մասնակցությունը դասավանդման և ուսումնառության գործընթացներում: Կարևորելով ուսանողակենտրոն մոտեցումը՝ արտաքին գնահատումն իրականացնելիս փորձագետներն ուշադրություն են դարձնում կրթական վերջնարդյունքներին համապատասխան դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների ընտրությանը, դրանց արդյունավետությանը, ուսանողների առաջընթացի գնահատմանը, ակադեմիական ազնվության պահպանման, ուսանողների կարիքների վերհանման ու նրանց իրավունքների պաշտպանության հարցերին:

Ըստ փորձագիտական գնահատման՝ ուսումնասիրված բուհերի ՄԿԾ-ներում ներկայացվում են դասավանդման, ուսումնառության և գնահատման տարբեր մեթոդներ (դասախոսություններ, բանավեճեր, խաղեր, սեմինարներ, խմբային աշխատանքներ, ինքնուրույն աշխատանքներ, լաբորատոր աշխատանքներ մտային քարտեզագրում, դեպքերի ուսումնասիրություններ, հետազոտական նախագծերի մշակում, էսսեների պատրաստում և այլն), որոնց ընտրությունը պայմանավորված է ՄԿԾ-ների առանձնահատկություններով, ակնկալվող կրթական վերջնարդյունքներով, մատուցվող նյութի բովանդակությամբ, ծավալով, ինչպես նաև ուսանողների ունակություններով: Ուսումնասիրված բուհերում ուսանողների կոմպետենցիաների

ստուգման ու գնահատման համար առկա են համապատասխան փաստաթղթեր՝ կարգեր, ուղեցույցներ: Գնահատման չափանիշներն արտացոլված են ինչպես իրավական ակտերում, այնպես էլ ՄԿԾ-ներում, դասընթացների առարկայական նկարագրերում կամ մասնագրերում: Կրթական վերջնարդյունքների, կիրառված մեթոդների, գնահատման համակարգի արդյունավետությունը գնահատելու համար բուհերը պարբերաբար իրականացնում են հարցումներ, ֆոկուս-խմբային և այլ քննարկումներ, որոնց արդյունքների հիման վրա նախատեսվում են հետագա բարելավումները: Սակայն, փորձագիտական զեկույցների ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ բուհերում ընտրված մեթոդների և կրթական վերջնարդյունքների համապատասխանությունը դեռևս խնդիր է, ինչը խոչընդոտում է ՄԿԾ-ներով սահմանված կրթական վերջնարդյունքների լիարժեք ձեռքբերմանը: Ուսումնասիրված բուհերի մեծ մասում ուսանողների գնահատումը հիմնված է առավելապես գիտելիքների ստուգման, քան ուսանողների կարողությունների և հմտությունների գնահատման և զարգացման վրա: Հետադարձ կապն, իր հերթին, առավելապես ուղղված է գնահատականների նշանակմանը, քան կրթական ծրագրով սահմանված կրթական վերջնարդյունքների ձեռքբերմանը նպաստելուն:

Ուշագրավ է նաև այն, որ ՀՀ բուհերում լրջագույն խնդիր է ակադեմիական ազնվության պահպանմանն առնչվող հարցերը: Թեպետ առկա են գրագողության դեմ պայքարի քաղաքականություններ, որոշ բուհերում՝ կանոնակարգեր, ընթացակարգեր, մեխանիզմներ և/կամ գործիքներ, այդուհանդերձ վերջիններս արդյունավետ չեն կիրառվում: Հետևաբար, ՀՀ բուհերում մինչ օրս չի ձևավորվել ակադեմիական ազնվության պահպանման համընդհանուր ընկալում և համակարգային մոտեցում, ինչը բոլոր փորձագիտական խմբերի հիմնական դիտողություններից է [Խաչատրյան, Մովսիսյան, 29]:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ ՀՀ բուհերը ջանքեր են գործադրում ուսուցումն ուսանողակենտրոն դարձնելու ուղղությամբ, առկա են ուսանողակենտրոն ուսուցումը խթանող մեխանիզմներ, մեթոդներ, սակայն առկա խնդիրները խոչընդոտում են ուսուցումն ամբողջովին ուսանողակենտրոն դարձնելուն: Ուստի, ՀՀ բուհերը մասամբ են բավարարում ՈԱԵՁՈՒ-ի 3-րդ չափորոշչի և ուսանողակենտրոն ուսուցմանն առնչվող ՀՀ հավատարմագրման 3-րդ չափանիշի պահանջները:

4. Ուսանողների ընդունելություն, առաջադիմություն, ճանաչում և ատեստավորում

ՈԱԵՁՈՒ-ի 4-րդ չափորոշիչը կենտրոնանում է ուսանողների ընդունելության, ակադեմիական առաջադիմության, նախընթաց կրթության ճանաչման ու ատեստավորման գործընթացների վրա: ՀՀ ինստիտուցիոնալ հավատարմագրման 4-րդ չափանիշը ևս պահանջում է, որ բուհերն ունենան ուսանողների հավաքագրման, ընդունելության իրականացման մեխանիզմներ, գնահատեն դրանց արդյունավետությունը, ուսանողների ակադեմիական առաջընթացն ապահովելու համար տրամադրեն խորհրդատվություններ և ուղղորդումներ: Բացի այդ, այս չափանիշով բուհերից պահանջվում է ունենալ նախընթաց կրթության ճանաչման ընթացակարգեր: Նախընթաց կրթության ճանաչումը ֆորմալ, ոչ ֆորմալ կամ ինֆորմալ կրթությամբ ձեռք բերված այն վերջնարդյունքների վավերացումն է, որոնք ձեռք են բերվել մինչև վավերացման պահանջը [*ECTS Users' Guide 75*]: Ուշագրավ է, որ նախընթաց կրթության ճանաչման և ատեստավորման վերաբերյալ առանձին չափանիշներ նախատեսված չեն, սակայն արտաքին գնահատումն իրականացվում է որակավորումների արժանահավատ շնորհման

համատեքստում: Մասնավորապես՝ դիտարկվում է, թե արդյո՞ք բուհերում գործող կրթական ծրագրերը, պրոֆեսորադասախոսական կազմն ու նյութատեխնիկական հագեցվածությունն ապահովում են արդի, գործնական հմտություններով, ՈԱՇ-ի և աշխատաշուկայի պահանջներին համապատասխան շրջանավարտների պատրաստումը [*ՈԱԱԿ հավատարմագրման հանձնաժողովի որոշում, 2-3*]:

Ընտրված բուհերի ինքնավերլուծությունների ու փորձագիտական զեկույցների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ՀՀ բուհերում կիրառվում են ուսանողների հավաքագրման, ընդունելության տարբեր մեխանիզմներ: Դիմորդների ընդունելությունը կազմակերպվում է պետական և ներբուհական մակարդակներում հաստատված կարգերով: ՀՀ բուհերը քայլեր են ձեռնարկում ԿՓԵՀ օգտագործողի ուղեցույցի և կրթության ոլորտի լիազոր մարմնի կողմից սահմանված օրինակելի կարգի դրույթներին համապատասխան արդյունավետ կրթական գործընթաց կազմակերպելու և իրականացնելու ուղղությամբ, սակայն փորձագետների դիտարկումներից կարելի է ենթադրել, որ բուհերը լիովին չեն կիրառում նշված փաստաթղթերը [*Խաչատրյան, Մովսիսյան 29*]: Ուշագրավ է, որ նախընթաց կրթության ճանաչման ընթացակարգերի առկայության և դրանց արդյունավետության մասին ամբողջական տվյալներ ներկայացված չեն (որոշ դեպքերում՝ բացակայում են) բուհերի ինքնավերլուծություններում ու փորձագիտական զեկույցներում: ԵԲԿՏ-ին ինտեգրվելու տեսանկյունից նախընթաց կրթության ճանաչմանն անդրադարձել են հավատարմագրման փորձագիտական խմբի կազմում ընդգրկված որոշ միջազգային փորձագետները, սակայն վերջիններիս դիտարկումներն արտացոլված չեն ամփոփ գնահատման մեջ, այնինչ ներկայումս ԵԲԿՏ-ում նախընթաց կրթության ճանաչումը բուհերի և ՄԿԾ-ների հավատարմագրման առանցքում են:

Թեպետ բուհերն, ըստ մասնագիտությունների, ունեն ատեստավորման ու շրջանավարտների մասնագիտական առաջընթացի երաշխավորման տարբեր մեխանիզմներ ու ընթացակարգեր, ինչպես նաև հավաքագրում են շրջանավարտների զբաղվածության մասին տվյալներ, այդուհանդերձ ինքնավերլուծություններում հստակ արտացոլված չեն տվյալների վերլուծության արդյունքների հիման վրա կատարված փոփոխությունները:

Այսպիսով՝ կարելի է եզրակացնել, որ ՀՀ բուհերը դեռևս աշխատանքներ ունեն տանելու իրենց կրթական գործընթացները ՈԱԵՉՈՒ-ի նշված չափորոշչին ու ԿՓԵՀ-ի Մաս 4, Մաս 5.2 պահանջներին լիովին համապատասխանեցնելու ուղղությամբ:

5. Դասախոսական կազմ

Դասախոսական կազմի արհեստավարժության, նրանց մասնագիտական պատրաստվածության ու կարողությունների կատարելագործմանն ուղղված միջոցառումները ՈԱԵՉՈՒ-ի 5-րդ չափորոշչի հիմնական պահանջներն են: Հաշվի առնելով նշվածը՝ ՀՀ-ում արտաքին գնահատում իրականացնելիս ուշադրության կենտրոնում ևս ՊԴ կազմի մասնագիտական ու մեթոդական պատրաստվածությունն է՝ ըստ ՄԿԾ-ների պահանջների, ՊԴ կազմի խրախուսման քաղաքականության, ինչպես նաև՝ նրանց մասնագիտական ու մեթոդական պատրաստվածությանն ուղղված միջոցառումների իրականացումն է:

Ընտրված բուհերի ինքնավերլուծությունների ու փորձագիտական զեկույցների ուսումնասիրության համաձայն՝ բուհերում գործում են ՊԴ կազմի ձևավորման, ընտրության քաղաքականություն և ընթացակարգեր: ՊԴ կազմի ընտրությունը պայմանավորված է ՄԿԾ-ների առանձնահատկություններով, թեկ-

նածուի որակավորմամբ, գիտական աստիճանով և/կամ կոչումով, մասնագիտական և մանկավարժական հմտություններով, աշխատանքային փորձով: ՊԴ կազմի մասնագիտական որակներն ու մեթոդական պատրաստվածության մակարդակը գնահատվում են ուսանողների շրջանում անցկացվող հարցումների, ֆոկուս խմբային քննարկումների, ամբիոնների վարիչների ու որակի ապահովման մասնագետների կողմից իրականացվող դասալսումների միջոցով: Վերլուծությունների արդյունքների հիման վրա կազմակերպվում են ՊԴ կազմի մասնագիտական ու մեթոդական զարգացմանն ուղղված տարբեր միջոցառումներ: Ուսումնաօժանդակ կազմ (ՈՒՕ) ընտրելիս հաշվի են առնվում աշխատակիցների որակավորումը, բարդ իրավիճակում արագ կողմնորոշվելու ու թիմային աշխատանք կատարելու ունակությունները: Ընդհանուր առմամբ, ուսումնասիրված բոլոր բուհերում ՊԴ և ՈՒՕ կազմին վերաբերող չափանիշը գնահատվել է բավարար, ինչը վկայում է այն մասին, որ ՀՀ բուհերում ՊԴ և ՈՒՕ կազմերը բավարարում են ՈԱԵՁՈՒ-ի և բուհերի պահանջները:

6. Ուսումնառության ռեսուրսներ և ուսանողներին աջակցություն

ՈԱԵՁՈՒ-ի 6-րդ չափորոշչով բուհերը պետք է ունենան համապատասխան կրթական, ֆինանսական, նյութատեխնիկական ռեսուրսներ ուսումնական գործընթացը պատշաճ կազմակերպելու, ինչպես նաև կազմակերպեն միջոցառումներ ուսանողներին աջակցություն ու ուղղորդում տրամադրելու համար: Հաշվի առնելով նշվածը՝ ՀՀ-ում ևս դիտարկվում են ՄԿԾ-ներին համապատասխան ռեսուրսներով ապահովվածությունը, դրանց պատշաճ կիրառումը, ուսանողների առաջադիմության բարձրացման նպատակով նրանց խորհրդատվությունների ու ուղղորդումների տրամադրումը: Դիտարկվում է նաև կրթական միջավայրի առկայությունը սահմանափակ կարողություններով սովորողների համար:

Ուսումնասիրված բոլոր բուհերում (բացառությամբ ՀԱԱՀ-ի, ԵՊԿ-ի) հավատարմագրման «Ենթակառուցվածքը և ռեսուրսները» չափանիշը գնահատվել է բավարար, ինչը վկայում է այն մասին, որ ՄԿԾ-ներն իրականացնելու համար բուհերում առկա է անհրաժեշտ կրթական միջավայր: Մասնավորապես՝ բուհերի լսարանները կահավորված են, համալրված տեխնիկական միջոցներով, որոնք թույլ են տալիս իրականացնել կրթական գործընթացի նպատակներն ու խնդիրները: Թեպետ ուսումնասիրված բուհերի գրադարաններն ապահովված են տարբեր գրականությամբ, այդուհանդերձ փորձագետների կարծիքով դրանք հայալեզու և օտարալեզու մասնագիտական գրականությամբ համալրման անհրաժեշտություն ունեն: Փորձագետները դրական են գնահատել, որ բուհերն ունեն ռեսուրսների բաշխման քաղաքականություն կամ մեխանիզմներ, սակայն միևնույն ժամանակ նշել են, որ բուհերի բոլոր տիրույթների համաչափ զարգացման համար անհրաժեշտ է առավել նպատակային քայլեր ձեռնարկել: Մասնավորապես՝ վերանայել ֆինանսական ռեսուրսների բաշխման քաղաքականությունները և մշակել կամ վերանայել ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմները:

Ուսանողների առաջադիմության բարձրացման նպատակով նրանց խորհրդատվությունների ու ուղղորդումների տրամադրումը ՀՀ-ում դիտարկվում է 4-րդ չափանիշի ներքո: Ուսումնասիրության արդյունքների համաձայն՝ բուհերի մեծ մասն ունեն սահմանված ժամանակացույց ուսանողներին օժանդակություն և ուղղորդում տրամադրելու նպատակով և վարչական կազմին դիմելու համար: Ուսումնասիրված բոլոր փորձագիտական զեկույցներում փորձագետները դրական են գնահատել, որ սահմանված ժամանակացույ-

ցից դուրս բուհերի աշխատակազմը մշտապես պատրաստ է ուսանողներին տրամադրել խորհրատվություն ու աջակցություն՝ փորձելով լուծում տալ նրանց բարձրաձայնած հարցերին:

Այսպիսով՝ կարելի է եզրակացնել, որ ՀՀ բուհերն, ընդհանուր առմամբ, բավարարում են ՈԱԵՉՈՒ-ի 6-րդ չափորոշչի ու ՀՀ ինստիտուցիոնալ հավատարմագրման 4-րդ չափանիշի պահանջները, իսկ առկա թերությունները էապես չեն վտանգում կրթական միջավայրը:

7. Տեղեկատվության կառավարում

ՈԱԵՉՈՒ-ի 7-րդ չափորոշչով բուհերը պետք է հավաստիացնեն, որ ունեն տվյալների հավաքագրման, վերլուծության ու կառավարման մեխանիզմներ, և, որ վերլուծված տվյալները հիմք են ծառայում որոշումներ կայացնելիս: Ընդ որում՝ այդպիսի տվյալներ կարող են լինել, օրինակ՝ ԳԱՑ-երը, ՊԴ կազմի, ուսանողների, շրջանավարտների, գործատուների մասին տվյալների բազան, կրթական ծրագրերից, բուհի ռեսուրսներից բավարարվածության հարցումները, ուսանողների և/կամ շրջանավարտների ձեռքբերումները և այլն [*ESG, 14*]: Հաշվի առնելով նշվածը՝ ՀՀ-ում բուհերը գնահատելիս ևս դիտարկվում են վերոնշյալ կետերը: Այլ կերպ ասած, դիտարկվում է, թե արդյո՞ք բուհերն ունեն համապատասխան մեխանիզմներ և գործիքներ բուհի գործունեության ու ՄԿԾ-ների արդյունավետության վերաբերյալ տվյալների հավաքագրման ու կառավարման համար: Ուսումնասիրության համաձայն՝ ՀՀ բուհերում տվյալների հավաքագրումն իրականացվում է բուհերի շահակիցների շրջանում անցկացվող հարցումների, ֆոկուս-խմբային քննարկումների, աշխատաշուկայի պահանջների ուսումնասիրությունների, SWOT վերլուծության, պրակտիկայի անցկացման վայրերից ստացվող տեղեկատվության վերլուծության միջոցով, որոնց հիման վրա վերանայվում են ՄԿԾ-ները: Բուհերում ընթացող գործընթացների իրականացումը մշտադիտարկելու ու վերահսկելու նպատակով տեղեկատվություն հավաքագրվում է նաև հաշվետվությունների ձևով: Այդուհանդերձ, փորձագետների գնահատմամբ ուսումնասիրված բուհերում որոշումների կայացման հիմքում հավաքագրված տվյալների վերլուծություններ ունենալը դեռևս շարունակում է մնալ բուհի կառավարման խնդիրներից մեկը: Փորձագետների հիմնական դիտողություններից է նաև գործող մեխանիզմների արդյունավետության գնահատման բացակայությունը:

Այսպիսով՝ կարելի է եզրակացնել, որ ՀՀ բուհերը մասամբ են բավարարում տեղեկատվության կառավարմանն առնչվող ՈԱԵՉՈՒ-ի ու ՀՀ ինստիտուցիոնալ հավատարմագրման պահանջներին:

8. Հանրային տեղեկատվություն

ՈԱԵՉՈՒ-ի 8-րդ չափորոշչով պահաջվում է բուհերից տարբեր հարթակներում ապահովել իրենց գործունեության վերաբերյալ տեղեկատվության հրապարակայնությունն ու թափանցիկությունը: Հաշվի առնելով ՈԱԵՉՈՒ-ի սույն պահանջը՝ հայաստանյան որակի ապահովման համատեքստում ևս կարևորվում են բուհերի գործունեության, կրթական ծառայությունների և ուսանողներին ու շրջանավարտներին առնչվող տեղեկատվության կանոնավոր հրապարակումները: Մասնավորապես, ՀՀ ինստիտուցիոնալ հավատարմագրման 8-րդ չափանիշը պահանջում է բուհերից «իրենց տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու լինել հասարակությանը և պետությանը»: Ընտրված բուհերի ինքնավերլուծությունների ու փորձագիտական զեկույցների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բուհերն ունեն հաշվետվողականության ապահովման քաղաքականություններ, ընթացակարգեր, որտեղ սահմանվում են քաղաքա-

կանության նպատակները, խնդիրները, սկբունքները, հաշվետվություններ ներկայացնելու կարգը: Բուհերը հաշվետվություններ են ներկայացնում նաև պետական մարմիններին (Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Վիճակագրական կոմիտե, Գիտության պետական կոմիտե, Պետական եկամուտների կոմիտե): Այդուհանդերձ, որոշ բուհերում փորձագետների հիմնական դիտողություններից է եղել հաշվետվություններում վերլուծական բաղադրիչի բացակայությունը: Բուհերի գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը հասարակությանը ներկայացնելու նպատակով հիմնականում կիրառվում են պաշտոնական կայքէջերը, սոցիալական հարթակները, բուկլետները, թերթերը, ՁԼՄ-ները, սակայն փորձագետների գնահատմամբ նշված մեխանիզմների արդյունավետության գնահատումներ չեն կատարվել: Կայքերում սովորաբար տեղադրվում են տեղեկատվություններ բուհում գործող փաստաթղթերի, մատուցվող կրթական ծառայությունների, կազմակերպական կառուցվածքի, անձնակազմի, որակի ապահովման, գիտության, ուսանողների, դիմորդների, տեղի ունեցած կամ նախատեսվող միջոցառումների, հայտարարությունների մասին: Ուսումնասիրված բոլոր բուհերում (բացառությամբ ՀԵՀ-ի) հասարակական պատասխանատվություն չափանիշը գնահատվել է բավարար, ինչը վկայում է այն մասին, որ բուհերը հետևողական են իրենց գործունեության հաշվետվողականության ու թափանցիկության ապահովմանն ուղղված հարցերում:

9. Կրթական ծրագրերի մշտադիտարկում և վերանայում

ՈԱԵՁՈՒ-ի 8-րդ չափորոշչով պահանջվում է, որ բուհերը պարբերաբար վերանայեն իրենց կրթական ծրագրերը՝ համոզվելու, արդյո՞ք դրանք ծառայում են իրենց նպատակին, արձագանքում են հանրության ու ուսանողների կարիքներին ու բավարարում են աշխատաշուկայի պահանջներին: Հայաստանյան համատեքստում ևս կարևորվում է կրթական ծրագրերի մշտադիտարկումների իրականացումը, ինչը հնարավորություն է տալիս բացահայտել բուհի կամ ՄԿԾ-ի ուժեղ ու թույլ կողմերը և քայլեր ձեռնարկել վերջիններս չեզոքացնելու ուղղությամբ: ՄԿԾ-ների մշտադիտարկման ու վերանայման կարևորությունն արտացոլված է ՀՀ ինստիտուցիոնալ հավատարմագրման 3-րդ չափանիշի 4-րդ և 5-րդ չափորոշիչներում, որոնց շրջանակներում ուսումնասիրված բուհերն ունեն ՄԿԾ-ների մշտադիտարկումների ու վերանայումների կանոնակարգեր, ընթացակարգեր և այլ փաստաթղթեր: ՄԿԾ-ների որակը բարելավելու նպատակով, բուհերը նաև իրականացնում են բենչմարքինգ՝ բովանդակային առումով համահունչ դարձնելու իրենց ՄԿԾ-ները այլ բուհերի նմանատիպ ՄԿԾ-ների հետ, ինչպես նաև անցկացնում հարցումներ, հանդիպումքննարկումներ, ուսումնասիրում ուսանողների գիտելիքների, կարողությունների ու հմտությունների վերաբերյալ գործատուների արձագանքներն ու հետադարձ կապը, հաշվի առնում հավատարմագրման փորձագետների խորհրդատվությունները: Ուշագրավ է, որ ՄԿԾ-ների վերանայման արդյունքում բուհերն իրականացրել են մի շարք բարելավումներ: Օրինակ՝ որոշ բուհերում հստակեցվել են կրթական վերջնարդյունքները, վերանայվել են դասավանդման, ուսումնառության ու գնահատման մեթոդները, փոփոխություններ են կատարվել ուսումնական պլաններում, վերանայվել է դասավանդվող թեմաների բովանդակությունը և այլն: Սակայն, ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացներում ներգրավված փորձագետների դատողությունները և բուհերին տրամադրված խորհրդատվությունները փաստում են, որ ՄԿԾ-ների վերանայումը հիմնվում է հիմնականում ներքին շահակիցների կարիքների, դասա-

խոսների ունեցած փորձի վրա: Ցածր է վերանայման գործընթացներում արտաքին շահակիցների (գործատուներ, շրջանավարտներ) ներգրավվածությունը: Թեպետ բուհերն իրականացնում են բենչմարքինգ, այդուհանդերձ փորձագետների խորհրդատվություններից ու դատողություններից կարելի է եզրակացնել, որ բենչմարքինգի դերը լիովին չի ընկալվում ինստիտուցիոնալ մակարդակում, ինչն էլ խոչընդոտում է ՄԿԾ-ների վերանայումը կանոնակարգող փաստաթղթերի նպատակային կիրառմանը:

Այսպիսով՝ ՀՀ բուհերը մասամբ են բավարարում ՈԱԵՉՈՒ-ի ու ՀՀ ինստիտուցիոնալ հավատարմագրման պահանջներին, այնինչ ՄԿԾ-ների մշտադիտարկման ու վերանայման աշխատանքները որակի ներքին ապահովման գործընթացների անբաժանելի մասն են:

10. Շրջափուլային որակի արտաքին ապահովում

ՈԱԵՉՈՒ-ի 10-րդ չափորոշչով բուհերը պետք է անցնեն շրջափուլային արտաքին գնահատումներ, ինչը հնարավորություն կտա բուհերին բացահայտելու իրենց գործունեության բարելավման ենթակա ուղղությունները: Ըստ ՀՀ-ում ներկայումս գործող իրավական կարգավորումների՝ բուհերը պետք է անցնեն պարտադիր ինստիտուցիոնալ և կամավոր ծրագրային հավատարմագրման գործընթացներ: ՀՀ ինստիտուցիոնալ հավատարմագրման 10-րդ չափանիշի 5-րդ չափորոշիչը նաև պահանջում է, որ բուհերի որակի ապահովման ներքին համակարգն ապահովի բավարար հիմքեր որակի ապահովման արտաքին գնահատման գործընթացների համար:

Ուսումնասիրված բուհերն արտաքին գնահատման համար հիմք են համարում ինքնավերլուծություններն ու դրանց կից փաստաթղթային փաթեթը: Ուշագրավ է, որ բուհերի ինքնավերլուծությունների մեծ մասում բացակայում է վերլուծական մոտեցումը: Դրանցում ներկայացված տեղեկատվությունները հիմնավորված չեն որակական ու քանակական տվյալներով, ինչն էլ թույլ չի տալիս ամբողջովին բացահայտել բուհերի պոտենցիալը: Ընդորում՝ նշված խնդրին անդրադարձ են կատարել նաև փորձագիտական խմբերը: Սույն հետազոտության արդյունքները նաև փաստում են, որ բուհերն ինքնավերլուծություն իրականացնելիս ոչ միշտ են առաջնորդվել համակարգային և ինստիտուցիոնալ արժեք ներկայացնող փաստաթղթերով (ՈԱՇ, ԿՓԵՀ օգտագործողի ուղեցույց, ՈԱԵՉՈՒ), ինչը նվազեցնում է հավատարմագրման չափանիշների գնահատման օբյեկտիվությունը և, ընդհանուր առմամբ, հավատարամագրման գործընթացի արդյունավետությունը: Ուստի, ՀՀ բուհերը դեռևս աշխատանքներ պետք է տանեն բավարարելու բավարար հիմքեր արտաքին գնահատման գործընթացների համար:

Եզրակացություն

Այսպիսով, ամփոփելով որակի ապահովման եվրոպական և ազգային չափանիշների ուսումնասիրությունը և դրանց կիրառումը բուհերում՝ կարելի է փաստել, որ չափանիշները տեսականորեն համադրելի են (բացառությամբ նախընթաց կրթության ճանաչմանը վերաբերող չափանիշի), և ՀՀ-ում և ԵԲԿՏ-ում որակի ապահովման գործընթացներն ունեն համանման նպատակներ: Սակայն, սույն հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ բուհերի գործունեությունը մասամբ է համապատասխանում ՈԱԵՉՈՒ-ի և ՀՀ որակի ապահովման պահանջներին: Ընդհանուր առմամբ, հոդվածում բացահայտված այսօրինակ խնդիրները խոչընդոտում են բուհերի գործունեության շարունակական բարելավմանը, դրանց ռազմավարական առաջնահերթությունների իրականացմանը և, ընդհանուր առմամբ, բուհի մրցունակության ու վարկանիշի բարձրացմանը ազգային և եվրոպական մակարդակներում:

Գրականության ցանկ

1. Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն: «ՀՀ մասնագիտական կրթության համակարգում որակի ապահովման ուղենիշներ, չափանիշներ և չափորոշիչներ (աշխատանքային նյութեր)»: Եր., 2010, էջ 22:
2. Խաչատրյան Ռ., Մովսիսյան Տ.: «Որակի ապահովման եվրոպական և ազգային չափանիշների համադրման առանձնահատկությունները ՀՀ բարձրագույն կրթության համակարգում»: «Կրթությունը 21-րդ դարում», 1(3), Եր., 2020, էջեր 26, 29, 33:
3. ՈԱԱԿ հավատարմագրման հանձնաժողովի որոշումը ինստիտուցիոնալ հավատարմագրման շնորհման վերաբերյալ որոշումների կայացման քաղաքականությունը հաստատելու մասին, 24.դեկտեմբեր.2020, N35-Լ, 01.մայիս.2022, էջ 2-3:
4. Bollaert, L. “A manual for internal quality assurance in higher education: looking for a new quality in HE in a new world”. EURASHE. Belgium. 2019. p. 199.
5. Standards and Guidelines for Quality Assurance in the European Higher Education Area (ESG). Belgium. 2015. https://www.enqa.eu/wp-content/uploads/2015/11/ESG_2015.pdf
6. ECTS Users’ Guide 2015. http://www.ehea.info/media.ehea.info/file/ECTS_Guide/00/0/ects-users-guide-2015_614000.pdf
7. “The European Higher Education Area - Achieving the Goals”. Communiqué of the Conference of European Ministers Responsible for Higher Education. Bergen. 19-20, May 2005. http://www.ehea.info/media.ehea.info/file/2005_Bergen/52/0/2005_Bergen_Communique_english_580520.pdf
8. “Realising the European Higher Education Area”. Communiqué of the Conference of Ministers responsible for Higher Education. Berlin. 19, September 2003. http://www.ehea.info/Upload/document/ministerial_declarations/2003_Berlin_Communique_English_577284.pdf
9. European University Association. “Graz Declaration 2003 Forward from Berlin: the Role of the Universities”. 2003. p. 9. https://eua.eu/downloads/publications/graz%20declaration%20%20forward%20from%20berlin%20the%20role%20of%20universities%202003%20en%20fr%20de%20es.pdf

THE IMPLEMENTATION OF STANDARDS AND GUIDELINES FOR QUALITY ASSURANCE (ESG) IN THE HEIs OF THE RA

Sargsyan K. N.
PhD in Economics
EUA, Chair of Management
karinesarg@yahoo.com
Movsisyan T. S.
Researcher
BSU, Chair of Education Management and Planning
tatevmovsisyan1907@gmail.com

Abstract

The preconditions for the development, application and improvement of European and national quality assurance criteria, the similarities, differences and peculiarities of aligning European and Armenian quality assurance criteria are discussed in this article. As a result of analyzing the self-assessment and expert panel

reports of the HEIs current state of the application of ESG, one of the key tools of the European Higher Education Area (EHEA), is also revealed in the context of trustworthy awarding of qualifications.

According to the results of the research, there are similarities and differences between national and European quality assurance criteria, quality assurance processes have similar goals in Armenia and in the EHEA, and the activities of the HEIs studied in the article partially comply with the requirements of ESG and ANQA. So, issues revealed as a result of the research hinder the Armenian HEIs to be fully engaged in the EHEA. Therefore, it is necessary to take comprehensive measures to make the quality assurance processes more targeted as well as to bring them in line with the ideology of the Bologna Process.

Keywords. higher education, quality assurance, quality assurance criteria, standards, guidelines, accreditation issues.

Ներկայացվել է՝ 15.04.2022 թ.
Գրախոսվել է՝ 31.05.2022 թ.

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Երիցյան Հ. Ռ.
տնտ.թ., դոցենտ
ՀԵՀ, Կառավարման ամբիոն
yer.hovhannes@yahoo.com

Ամփոփագիր

Համաշխարհային տնտեսության զարգացման գործում ծառայությունների ոլորտը ունի իր առանձնահատուկ դերակատարությունը, տարեցտարի համախառն ներքին արդյունքի կազմում ավելանում է այդ ոլորտի տեսակարար կշիռը: Այդպիսին է նաև իրավիճակը Հայաստանի Հանրապետությունում: Ամբողջ աշխարհում տնտեսության զարգացման կարևորագույն օրինաչափություններից մեկը տնտեսական աճի և ազգային տնտեսություններում ծառայությունների դերի բարձրացման փոխկապվածությունն է: Սա իր արտացոլումն է գտնում ծառայությունների ոլորտում կիրառվող աշխատանքային, նյութական, ֆինանսական ռեսուրսների դերի բարձրացման մեջ: Այս համատեքստում շատ կարևոր է ծառայությունների որակի ապահովման և կառավարման համակարգի ներդրումը: Ծառայությունների ժամանակակից կառավարումը և գործառնությունները վերաբերում են բոլոր գործողություններին, որոնք կազմակերպությունը կատարում է ձեռնարկությունում ծրագրերը պլանավորելու, իրագործելու և վերահսկելու համար: Ծառայությունների որակի մատուցումը սկսվում է այն գիտակցումից, թե որոնք են ծառայության որակի հիմնական տարրերը: Ծառայության որակը չափվել է հաճախորդների բավարարվածության աուդիտի միջոցով, որտեղ հաճախորդները կա՛մ գնահատում են գոհունակությունը շարքային մասշտաբով, կա՛մ բանավոր կարծիք են հայտնում ծառայության իրենց փորձի վերաբերյալ (կամ երկուսի համադրություն): Որակի ապահովումը արտադրված ապրանքների սխալներն ու թերությունները կանխելու և հաճախորդներին ապրանքներ կամ ծառայություններ մատուցելիս խնդիրներից խուսափելու միջոց է:

Հիմնաբառեր. ծառայություններ, որակի կառավարում, ծառայությունների որակի ապահովում, ծառայությունների որակի չափման մեծություններ, որակի միջազգային ստանդարտներ:

Ներածություն

Ժամանակակից համաշխարհային տնտեսությունն անհնար է պատկերացնել առանց ծառայությունների ոլորտի: Ծառայությունները մարդկանց գործունեության արդյունք են, որոնք բավարարում են մարդկանց և հասարակության տարբեր պահանջմունքներ: Այսօր ծառայությունների արտադրությունն ավելի կարևոր է դարձել և առաջ է անցել ապրանքների արտադրությունից: Աշխարհի արդյունաբերապես զարգացած երկրների տնտեսությունների մեջ այսօր առաջնային տեղ է զբաղեցնում ծառայությունների ոլորտը:

Գրականության մեջ ներկայացվում են «ծառայություն» հասկացության բազում սահմանումներ, բայց դեռևս չի ընդունվել բոլորի կողմից ընդունված մի սահմանում: Ֆիլիպ

Կոտլերը սահմանում է ծառայությունը հետևյալ կերպ. «Ծառայությունը ցանկացած միջոցառում է կամ արդյունք, որը մի կողմը կարող է առաջարկել մյուսին և, որը հիմնականում անշոշափելի է և չի հանգեցնում ինչ-որ բանի տիրապետմանը [*Երիցյան, 78-79*]:

Ծառայություններին կարելի է տալ հինգ բնութագրիչ առանձնահատկություններ, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել մարկետինգային ծրագրեր իրականացնելիս: Թվենք այդ առանձնահատկությունները և տանք դրանցից յուրաքանչյուրի բացատրությունը.

- Անշոշափելիությունը,
- Անբաժանելիությունը ծառայության աղբյուրից,
- Որակի փոփոխականությունը,
- Անհարատևությունը,
- Սեփականության բացակայություն:

Ծառայությունների ժամանակակից կառավարումը և գործառնությունները վերաբերում են բոլոր գործողություններին, որոնք կազմակերպությունը կատարում է ձեռնարկությունում ծրագրերը պլանավորելու, նախագծելու, առաքելու, գործելու և վերահսկելու համար: Այն ներառում է այն մարդկանց, ովքեր կատարում են աշխատանքը, գործընթացները, որոնք սահմանում են, թե ինչ աշխատանք է անհրաժեշտ և ինչպես է դա կատարվում և գործիքներ, որոնք թույլ են տալիս և աջակցում են այդ գործողություններին: Դիմումները դիտարկվում են մատչելիությունն ու կատարողականությունն ապահովելու համար՝ համաձայն ծառայությունների մակարդակի համաձայնագրերի կամ ծառայության մակարդակի նպատակների [*Service Quality: Definition, Importance and Implementation*]:

Գործառնությունը պետք է լինի նույնքան արագաշարժ, որքան զարգացումը՝ շարունակական մատակարարման պրակտիկայով և շեշտը դրվի շարունակական կատարելագործման վրա: Ծառայությունների կառավարումը պետք է վերափոխվի՝ աջակցելու այս հարացույցի փոփոխությանը [*9 Practical Methods for Measuring Service Quality*]:

Ծառայությունների որակի մատուցման շատ մոտեցումներ կան, բայց դրանք բոլորը սկսվում են այն գիտակցումից, թե որոնք են ծառայության որակի հիմնական տարրերը, որոնք ներկայացված են գծապատկեր 1-ում:

Հինգ տարրերը ստեղծում են ամբողջական պատկերացում ցանկացած ծառայության միջավայրի վերաբերյալ. նախ շրջակա միջավայրի շոշափելի կողմերը պետք է ճիշտ տեսք ունենան: Օրինակ՝ արագ սննդի կետին անհրաժեշտ է առաջին հերթին մաքուր և հարմարավետ տեսք ունենալ, մինչդեռ հաճախորդին չի ակնարկում, որ մեծ գումարներ են ծախսվել ավելորդ շքեղության վրա:

Միաժամանակ, շատ կարևոր է սպասարկող անձնակազմի ճիշտ արձագանքն ու պատրաստակամությունը՝ լսելու հաճախորդին, հասկանալու վերջինիս պահանջմունքներն ու դրանց լուծում տալը: Դրա հետ մեկտեղ հաճախորդը մատուցվող ծառայության մեջ փնտրում է հուսալիություն և ապահովություն, օրինակ՝ ատամնաբույժի առաջարկած ծառայությունները պետք է լինեն հուսալի և միաժամանակ անվտանգ, կարևոր են բանկային ծառայությունների հուսալիությունն ու ապահովությունը և այլն:

Գծապատկեր 1.



Ծառայությունների որակի չափման մեծությունները

Ծառայությունների որակի չափման մեծությունների մեջ մեծ դեր և նշանակություն ունի զգացմունքայնությունն ու անհատական մոտեցումը: Կազմակերպությունը ծառայությունների որակի չափման մեծությունների առաջին 4 մեծություններում կարող է թերանալ, սակայն սպասարկող անձնակազմի զգացմունքայնությունն ու անհատական մոտեցումը կարող են շտկել իրավիճակը: Օրինակ, եթե մատուցվող սննդի մեջ հաճախորդը հայտնաբերում է օտար մարմին, այս պարագայում բացասական են դրսևորվում ծառայությունների որակի չափման մեծությունների առաջին մեծությունները, այսինքն՝ կազմակերպության ֆիզիկական միջավայրը ճիշտ չի կազմակերպված (մաքրության խնդիր), մատուցվող սնունդը հուսալի ու ապահով-անվտանգ չէ, սակայն սպասարկող անձնակազմի զգացմունքայնության, անհատական մոտեցման արդյունքում խնդիրը կարող է լուծում ստանալ, օրինակ՝ այս պարագայում բարեկիրթ վարքագիծը, ներողություն խնդրելը և փոխարենն անվճար այլ ծառայություններ առաջարկելը կարող է հաճախորդի բացասական վերաբերմունքն ու գնահատականը մեղմել:

Պատմականորեն, ծառայության որակը չափվել է հաճախորդների բավարարվածության աուդիտի միջոցով, որտեղ հաճախորդները կա՛մ գնահատում են գոհունակությունը գրավոր հարցաթերթիկի միջոցով, կա՛մ բանավոր կարծիք են հայտնում ծառայության իրենց փորձի վերաբերյալ (կամ երկուսի համադրություն): Այնուամենայնիվ, ծառայությունների որակի գանահատման արդյունավետ միջոցներից մեկը ստորև ներկայացված հավասարումն է [*Service Quality Measurements: A Review*].

Արժեք = արդյունքներ - սպասում

Այս մոդելը ենթադրում է, որ ծառայության որակը հաճախորդին մատուցած ծառայության արդյունքի և այդ ծառայության վերաբերյալ հաճախորդի սպասումների տարբերությունն է: Ըստ էության, կարիք կա փոփոխելու այս հավասարումը, քանի որ ստացված արդյունքները չափվում են հաճախորդի ընկալումներով, այսինքն՝ այն, ինչ մենք ընկալում ենք որպես արդյունք, իրականում չի կարող լինել իրական արդյունքի ճշգրիտ արտացոլում: Օրինակ՝ ճաշ ուտելու ժամանակը կարող է բավարարել հաճախորդի արտահայտած համբերությունն ու հանդուրժողականությունը, բայց այնպիսի հանգամանքների պատճառով, ինչպիսիք են՝ տրամադրությունը, շտապ նշանակումները այլ վայրում կամ

սովի աստիճանը, հաճախորդին կարող է այդ ժամանակահատվածում չափազանց երկար թվալ: Այսպիսով, հավասարումը փոփոխվում է՝

Արժեք = Ընկալում - Սպասում

Այս հավասարումը կարող է կիրառվել մատնանշված ծառայության որակի բոլոր 5 չափսերի վրա՝ պարզելու համար, թե հաճախորդի արժեքի որ տարրերն են մատուցվում և որտեղ է անհրաժեշտ կատարելագործում: Ծառայությունների որակի ընդհանուր չափումը հավասարության հանրագումարն է բոլոր այն չափսերի համար, որոնք փոփոխվել են հաճախորդների կողմից յուրաքանչյուր չափման համար կարևորությամբ: Ակնհայտ է, որ տարբեր ծառայությունների համար չափի կարևորությունը տարբեր կլինի: Օրինակ՝ բարձրակարգ ռեստորանի հաճախորդները մեծ ուշադրություն կդարձնեն շոշափելի նյութերին, մինչդեռ բժշկի վիրաբուժության ժամանակ նրանք մեծ ուշադրություն կդարձնեն զգացմունքայնության, ապահովության վրա, իսկ գնացքի շահագործողը՝ դրա հուսալիություն վրա: Սա չի նշանակում, որ այլ չափերը կարևոր չեն, պարզապես այնտեղ, որտեղ հաճախորդներն իրենց շեշտ են դնում: Այսպիսով, հավասարումը հետագայում փոփոխվում է՝

Արժեքը = ∑ Կ(Ը-Ս), որտեղ

Կ – ծառայության որակի չափման մեծության կարևորությունն է սպառողի համար,

Ս – սպասումներ,

Ը – ընկալումներ:

Որակի լայն չափանիշը կարող է համարժեք լինել գնահատական պահելու համար, բայց այն չունի բավարար մանրամասնություն՝ բարելավման ջանքերն արդյունավետորեն ուղղորդելու համար: Այս համատեքստում կարևոր է դիտարկել ծառայությունների որակի սահմանները, որոնք ներկայացված են գծապատկեր 2-ում [*GAP Model of Service quality*]:

Գծապատկեր 2.



Ծառայությունների որակի սահմանները

Ծառայությունների որակի կառավարման տեսանկյունից ծառայություն մատուցող կազմակերպության համար կարևոր է ճիշտ բացահայտել և հասկանալ սպառողների սպասումները (սահման 1), որոնց հիման վրա կազմակերպությունը ձևավորելու է իր առաջարկն ըստ հատկանիշների (սահման 2), մատուցի ծառայությունը (սահման 3)՝ սահմանելով անձնակազմի վարքագծի կանոնները (սահման 4): Վերջում շատ կարևոր է, որպեսզի կազմակերպությունը ճիշտ գնահատի սպառողների սպասումների և ծառայության մատուցման վերաբերյալ ընկալումների համամասնությունը (սահման 5):

Գծապատկեր 3.



Ծառայությունների որակի կառավարման փուլերը

Եզրակացություն

Այսպիսով, կազմակերպության կողմից ծառայությունների որակի ապահովման և դրա կառավարման իրականացման համար (գծապատկեր 3, մշակվել է հեղինակի կողմից) անհրաժեշտ է սպառողների պահանջմունքների և սպասումների բացահայտման համակարգ և ճիշտ կանխատեսում: Կանխատեսման հիման վրա, ելնելով սպառողների սպասումներից, կազմակերպությունը պետք է վերափոխի այդ սպասումները ծառայության հատկանիշների, այնուհետև մշակի գործընթացներ և մատուցի ծառայություններն ըստ սահմանված հատկանիշների: Ծառայությունների որակի մատուցման գերազանցության հասնելու համար շատ կարևոր է նաև անձնակազմի վարքագծի և սպասարկման մոտեցումների սահմանումը, քանի որ ծառայությունների մատուցման պարագայում անխուսափելի են մարդկային գործոններն ու հաղորդակցումը: Վերջում շատ կարևոր է, որպեսզի ծառայություններ մատուցող կազմակերպությունը սահմանի որակի կատարման գնահատում և ըստ այդմ իրականացնի հետագա զարգացման միջոցառումներ:

Գրականության ցանկ

1. Երիցյան Հովհաննես, Ծառայությունների մարկետինգի էությունն ու մարկետինգային համալիրը, Գիտական Հոդվածների Ժողովածու, Եվրոպական Համլսարան, 10(02), 2019թ., էջ 70-84,
2. Service Quality: Definition, Importance and Implementation, Indeed, 23.03.2022 https://www.indeed.com/career-advice/career-development/service-quality 9 Practical Methods for Measuring Service Quality, Userlike, 23.03.2022, https://www.userlike.com/en/blog/measuring-service-quality
3. Service Quality Measurements: A Review, Researchgate, 23.03.2022, https://www.researchgate.net/publication/277661334_Service_Quality_Measurements_A_Review
4. GAP Model of Service quality, LAPAAS, 23.03.2022, https://lapaas.com/gap-model-of-service-quality/

PRINCIPLES OF SERVICE QUALITY MANAGEMENT AND EVALUATION

Yeritsyan H. R.
PhD in Economics, Associate Professor
EUA, Chair of Management
yer.hovhannes@yahoo.com

Abstract

The sphere of services has a special role in the development of the world economy, and the share of that sphere in the gross domestic product is increasing year by year, such is the situation in the Republic of Armenia. One of the most important patterns of economic development around the world is the correlation between economic growth and the increasing role of services in national economies. This is reflected in the increasing role of labor, material and financial resources used in the service sector. In this context, the introduction of a quality assurance and management system is very important. Modern service management and operations refer to all the activities that the organization performs to plan, implement and control programs in the enterprise. The quality of service delivery begins with the realization of what the key elements of service quality are. Quality of service is measured by a customer satisfaction audit, where customers either rate satisfaction on a regular basis or express an oral opinion on their service experience (or a combination of both). Quality assurance is a way to prevent mistakes and defects in manufactured products and to avoid problems when delivering products or services to customers.

Keywords. services, quality management, service quality assurance, service quality measurement quantities, international quality standards.

Ներկայացվել է՝ 15.04.2022 թ.
Գրախոսվել է՝ 26.05.2022 թ.

ՀՀ ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԴԻՆԱՄԻԿԱՆ ՎԵՐՋԻՆ ՏԱՍՆԱՄՅԱԿՈՒՄ

Մուրադյան Ա.Կ.
տնտ. թ.
ԵՊՀ, Իջևանի մասնաճյուղ
Ընդհանուր տնտեսագիտության ամբիոն
makartur85@gmail.com

Ամփոփագիր

Տնտեսությունների զարգացման ներկա պայմաններում վարկային համակարգը պետության շարժիչ ուժն է, որի բնականոն գործունեությունը առանցքային ազդեցություն ունի հասարակության ֆինանսական ապահովման տեսանկյունից: Բանկային համակարգը, կատարելով դրամական միջոցների վերաբաշխում, կենտրոնացնում է ազատ դրամական միջոցները, որի արդյունքում ձևավորվում են տնտեսության վարկավորման ֆոնդերը և իրականացվում են կարճաժամկետ ու երկարաժամկետ վարկավորման գործընթացները: Ի սկզբանե բանկերը զբաղվում էին դրամական կապիտալի առուծախով, ընդունում էին ավանդներ և տալիս վարկեր: Հետագայում սկսեցին իրականացնել նաև ավելի բարդ գործողություններ, ինչը նպաստեց նրանց գործառույթների ընդլայնմանը: Այժմ բանկերը ոչ միայն կենտրոնացնում են ազատ դրամական միջոցները, այլև կապիտալի են վերածում հասարակության բոլոր դասակարգերի դրամական խնայողությունները և շահույթ են ստանում ստեղծված հավելյալ արդյունքի վերաբաշխման շնորհիվ: Վարկ տրամադրող տարբեր կազմակերպություններ մի կողմից ապահովում են անհրաժեշտ ֆինանսական միջոցների շարժը տնտեսությունում, մյուս կողմից հասարակության համար ամենավտանգավոր ինստիտուտներից են, քանի որ հասարակության դրամական միջոցների հոսքը հիմնականում կենտրոնանում է այս համակարգում և գերշահույթ է ապահովում դրանց սեփականատերերին: Բանկերն ու վարկային կազմակերպությունները Հայաստանում համարվում են բավականին կայացած կազմակերպություններ, ինչի վառ ապացույցը վերջին տարիներին դրսևորվող արտաքին լուրջ ռիսկերի և ճգնաժամերի պայմաններում վերջիններիս ֆինանսական կայուն ցուցանիշներն են:

Հիմնաբառեր. դեֆոլտ, վարկ, տնտեսական աճ, ֆինանսական ճգնաժամ, ՀՆԱ:

Ներածություն

Վարկային համակարգի դերը հասարակական պահանջմունքների բավարարման գործում բավականին մեծ է և յուրահատուկ աշխարհի տարբեր երկրներում: Շնորհիվ բանկային համակարգի ճկուն գործունեության՝ դրամական միջոցները վերաբաշխվում են տնտեսության տարբեր ոլորտների ու արտադրությունների միջև: Բանկերը կարևոր դեր են խաղում շրջանառության, ծախսերի տնտեսման գործում: Շուկայի զարգացման արդի պայմաններում դրանց դերը ավելի է մեծանում, քանի որ բանկային համակարգի զարգացմամբ է պայմանավորված հասարակության բարեկեցությունն ու պետության ֆինանսկան կայունությունը:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել ՀՀ վարկային համակարգի կայու-

նությունը վերջին ճգնաժամերի ընթացքում, որից ելնելով վերլուծվել է վարկային համակարգի զարգացման միջազգային փորձը, ռուս-ուկրաինական պատերազմով պայմանավորված գլոբալ փոփոխությունները: Համեմատական վերլուծության արդյունքում ներկայացվել է ՀՀ վարկային շուկայի վերջին տարիների զարգացման դինամիկան, ինչի արդյունքում փորձել ենք հասկանալ ի վերջո ի՞նչ դերակատարում ունի վարկային համակարգը հասարակության, տնտեսության և պետության զարգացման գործընթացներում և ինչպես այն արդյունավետ օգտագործել ճգնաժամերը հաղթահարելու տեսանկյունից:

Ժամանակակից վարկային համակարգը ձևավորվել է կապիտալի կենտրոնացման հետևանքով, ինչը նպաստել է բանկային համակարգի առաջացմանը: Վերջիններիս մեծ թիվը պայմանավորված է տնտեսության աշխուժությամբ, հաճախորդների համար ֆինանսական ծառայությունների կարիքներով, օրենսդրական կարգավորումներով [*Куликов и др., 3-24*]: Վարկերի կարևորությունը տնտեսությունում պայմանավորված է կապիտալի շրջանառության առանձնահատկություններով, որոնք են՝ դրամական պահուստների ձևավորումը և դրանց համար լրացուցիչ կարիքների առաջացումը, շրջանառու միջոցների ցիկլի տևողությունը, կանխիկ և անկանխիկ դրամական միջոցների շրջանառության փոխգործակցումը, տնտեսվարող սուբյեկտների կապիտալի տարանջատումը [*Скляровой, 110-111*]: Վարկային համակարգը կառավարման շուկայական սկզբունքների վրա հիմնված քաղաքակիրթ հասարակության ձևավորման կարևորագույն բաղադրիչ է: Այն անցել է զարգացման երկար ճանապարհ և այժմ համախմբող համալիր է ազգային տնտեսական հարաբերություններում [*Юзвович и д., 229*]: Աշխարհի տարբեր երկրներում գործում են վարկային տարբեր համակարգեր: Չինաստանում այն պետական ծրագիր է (սոցիալական-վարկային համակարգ), հիմնված է բալային համակարգի վրա և նպատակ ունի կարգավորելու քաղաքացիների վարքը [*What is China's social credit system?*]: Բարձր միավոր ստացած քաղաքացիների համար ավելի հեշտ է ստանալ վարկեր, անվճար բուժզննում, տարբեր զեղչեր և այլն: Միավոր հանվում է երթևեկության կանոնների խախտման, վատ ապրանքներ վաճառելու կամ վարկի վճարումները չկատարելու դեպքում: Վատ սոցիալական վարկեր ունեցողներին կարող է արգելվել գնացքի կամ ավիաընկերության տոմսեր գնելը և այլն:

Վերլուծելով ՌԴ շուկան, փաստենք, որ ամեն ինչ փոխվեց Ուկրաինայում սկսված պատերազմից հետո: 2022թ. փետրվարին կանխիկի պահանջարկի աճի արդյունքում շրջանառություն ծավալն աճեց 1,4 տրլն ռուբլով: ՌԴ ԿԲ-ն վերաֆինանսավորման տոկոսադրույքը բարձրացրեց 9,5%-ից 20%, որի նպատակն էր բանկերում ավանդների տոկոսադրույքների աճը, ինչը պետք է փոխհատուցի ավանդատուների դևալվացիոն և գնաճային ռիսկերը [*ЦБ повысил ключевую ставку сразу до рекордных 20% годовых*]: 22.03.2022թ. ՌԴ բնակչության միջոցները բանկերում նվազել են 3,5%-ով կամ 1,2 տրլն. ռուբլով (2008թ.՝ 6% կամ 354 մլրդ ռուբլի) [*ЦБ сообщил о сокращении средств россиян в банках в феврале*]: Համաշխարհային ՀՆԱ աճի կանխատեսումը նվազել է մինչեւ 3,5% (0,7%-ով), ԵՄ-ում՝ 3,0%(1,5 %), ԱՄՆ-ում՝ 3,5%(0,2 %) [*Fitch снизило прогноз роста мирового ВВП в 2022 году на 0,7 п.*]: Արժույթի միջազգային հիմնադրամի պնդմամբ, ՌԴ հնարավոր դեֆոլտը համաշխարհային տնտեսությունում լուրջ ռիսկեր չի առաջացնի [*The International Monetary Fund's two top leaders discuss the global economic ramifications of Russia's invasion*]: Այս կարծիքի հետ համաձայնվելը հեշտ չէ, քանի որ ակնհայտ է բացասական ազդեցությունը այդ թվում ԵՄ երկրներին: ՌԴ կապը համաշ-

խարհային ֆինանսական համակարգի հետ գրեթե խզված է: Սառեցվել են արտերկրում պահվող պետական արտարժույթի 300 մլրդ դոլարի պահուստները: Վերջին տարիներին ՌԴ ներկայությունը ՀՀ բանկային համակարգում ունի նվազման միտում և չափավոր ռիսկ է պարունակում [*Fitch Affirms Armenia at 'B+'; Outlook Stable*]: 2022թ. սկզբում ոչ ռեզիդենտներին բաժին է ընկել բանկային համակարգի ավանդների 22%-ը կամ ՀՆԱ 11,7%-ը: Վերլուծենք ՀՀ վարկեր/ՀՆԱ ցուցանշը (տե՛ս, գծապատկեր 1) [*Բանկային համակարգի վարկեր/ՀՆԱ ցուցանիշը*]:

Գծապատկեր 1.



Վարկեր/ՀՆԱ ցուցանիշը և դրա երկարաժամկետ տրենդը

2021թ. ցուցանիշը նվազել է և գտնվում է իր երկարաժամկետ տրենդից ցածր մակարդակում: Զուտ տոկոսային մարժան կազմել է 4%, իրացվելիությունը և ակտիվների որակը կայուն են, չաշխատող վարկերի գործակիցը՝ 1,7%: Ֆինանսական ցիկլի ինդեքսի աճի միտումը պայմանավորված է հիպոտեկային վարկերով և անշարժ գույքի գնաճով (տե՛ս, գծապատկեր 2):

Գծապատկեր 2.



Ֆինանսական ցիկլի ինդեքսը

2021թ. արձանագրվել են որոշակի դրական փոփոխություններ՝ վարկերից կորուստները սկսել են դրսևորել նվազման միտում, ավանդների մասով արձանագրվել է որոշակի աճ, վարկային շուկայում կապիտալի հակացիկլիկ բուֆերը մնացել է անփոփոխ՝ 0%: ՀՀ բանկային համակարգի ակտիվներ/ՀՆԱ և վարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը 2008-2020թթ. ունի հետևյալ տեսքը (տե՛ս, գծապատկեր 3) [*Բանկային համակարգի ակտիվներ/ ՀՆԱ/ վարկեր/ՀՆԱ ցուցանիշները*]:

Գծապատկեր 3.



ՀՀ բանկային համակարգի ակտիվներ/ՀՆԱ և վարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը

Ակտիվներ/ՀՆԱ-ն ունի ավելի մեծ աճի տեմպ, քան վարկեր/ՀՆԱ-ն, ինչը խոսում է բանկային համակարգում ակտիվների կայուն աճի մասին: Վերլուծելով 2016-2021թթ. դրամային վակերի տոկոսադրույքի դինամիկան՝ ակնհայտ է ֆիզ. անձանց տրամադրվող վարկերի մասով վերջին տարիներին տոկոսադրույքների նվազման միտումը, ինչը զսպման մեխանիզմ է և աճի դրական տեմպ է հաղորդում վարկավորման համակարգին (տե՛ս, գծապատկեր 4):

Գծապատկեր 4.



Դրամային վարկերի տոկոսադրույքների դինամիկան 2016-2021 թթ.

Ստորև ՀՀ վարկային համակարգի հաշվեկշռային ցուցանիշները 2010-2022թթ. (տե՛ս, գծապատկեր 5) [*ՀՀ վարկային համակարգի հաշվեկշռային ցուցանիշները*]:

Գծապատկեր 5.



ՀՀ վարկային կազմակերպությունների և բանկերի հիմնական հաշվեկշռային ցուցանիշները

Առաջին հատվածում պատկերված է վարկային կազմակերպությունների ցուցանիշները, ներքևում՝ բանկերինը, որոնց ակտիվների և պարտավորությունների աճի միտումը ավելի հավասարակշռված է, քան վարկային կազմակերպություններինը: Նրանց ընդհանուր ակտիվները 2014թ.-ից անհամեմատ ավելի մեծ տեմպով են աճել, քան պարտավորությունները, ինչը որոշ կազմակերպությունների գերշահույթով աշխատելու վառ ապացույց է: 2022թ. մարտին ՀՀ ԿԲ-ն վերաֆինանսավորման տոկոսադրույքը բարձրացրեց 1.25%-ով (9.25%), ինչը, հաշվի առնելով նաև շուկայում առկա գնաճի տեմպը, պետք է հանգի վարկերի և ավանդների տոկոսների աճին [*ՀՀ ԿԲ, վերաֆինանսավորման տոկոսադրույքի փոփոխության վերաբերյալ*]:

Եզրակացություն

Վերջին ճգնաժամերի ֆոնին, առավել քան երբեք, կարևոր է բանկային ոլորտի կայուն աշխատանքը և վարկային ճկուն համակարգը, ինչը պետք է նպաստի բիզնես ոլորտի զարգացմանն ու տնտեսության կայունությանը: ՌԴ նկատմամբ պատժամիջոցները շուկայում առաջացրել են լուրջ անորոշություն: ԱՄՆ-ում և ԵՄ-ում կանխատեսվում է տնտեսական աճի տեմպերի դանդաղում, իսկ ՌԴ-ում՝ անկում: Գնաճային և ֆինանսական արտաքին անկայունությունը, դրամական փոխանցումների կրճատումը և արտաքին պահանջարկի անկումը, աշխարհաքաղաքական ռիսկերը նպաստում են ՀՀ տնտեսական աճի տեմպի նվազմանը:

Վարկային համակարգի զարգացումը պետք է բացառի գերշահույթի ապահովումը բնակչության հաշվին և այս առումով պատկան մարմինները դեռ շատ անելիքներ ունեն: Ռազմավարական առումով կարևոր են ԿԲ զսպման մեխանիզմները, մրցակցային հավասար պայմանների ստեղծումը, ինչը համակարգի զարգացման կայունության և հասարակության բարեկեցության հիմքն է: Վերջինս անժխտելի դերակատարում ունի տնտեսության և բանկային համակարգի ռազմավարական զարգացման տեսանկյունից, քանի որ բնակչության վճարունակությունն է այն առանցքային հենասյունը, առանց որի արդյունքը կլինի կարճաժամկետ:

Չնայած բոլոր արտաքին ռիսկերին, 2020թ. պատերազմական և կորոնավիրուսային իրավիճակին, բանկային համակարգը փաստացի կարողացավ հաղթահարել ճգնաժամային ազդեցությունը: 2021թ. աճել են համակարգի ընդհանուր իրացվելիության, կապիտալի շահութաբերության և համարժեքության ցուցանիշները: Իրացվելիության ծածկույթի գործակիցը շարունակում է բարձր մնալ նվազագույն շեմից, վարկ/ավանդ ցուցանիշն ունի նվազման միտում, ինչը վկայում է ճգնաժամի հաղթահարման և շահութաբերության մակարդակի վերականգնման մասին:

Գրականության ցանկ

1. Куликов Н.И., Тишина Л.С., Бабенко Е.Ю., Унанян И.Р., Вихляева Е.Ю., Финансово-кредитная система: Учебное пособие Тамбов: Изд-во Тамб. гос. техн. ун-та, 2009. стр 80.
2. Скляровой Ю. М., «Деньги. Кредит. Банки», Издание шестое, Ставрополь 2013, стр 312
3. Юзвович Л. И., Князева Е. Г., Истомина Ю. В., Финансы и кредит, Учебное пособие Екатеринбург 2019, стр 280.
4. What is China's social credit system?, 24.03.2022, https://www.foxnews.com/world/what-is-china-social-credit-system,
5. ЦБ повысил ключевую ставку сразу до рекордных 20% годовых, https://www.rbc.ru/finances/28/02/2022/621c70319a7947458388e7e9?from=from_main_8, 04.03.2022

6. ЦБ сообщил о сокращении средств россиян в банках в феврале, https://www.rbc.ru/finances/21/03/2022/6238d3de9a79478c1341d27a?from=from_main_1, 28.03.2022
7. Fitch снизило прогноз роста мирового ВВП в 2022 году на 0,7 п.,02.04.2022, https://tass.ru/ekonomika/14137525?utm_source=banks.am&utm_medium=referral&utm_campaign=banks.am&utm_referrer
8. The International Monetary Fund's two top leaders discuss the global economic ramifications of Russia's invasion, 23.03.2022 https://foreignpolicy.com/2022/03/23/imf-ukraine-war-russia-economic-impact-georgieva-gopinath/
9. Fitch Affirms Armenia at 'B+'; Outlook Stable, https://www.fitchratings.com/research/sovereigns/fitch-affirms-armenia-at-b-outlook-stable-18-03-2022
10. Բանկային համակարգի վարկեր/ՀՆԱ ցուցանիշը, 01.04.2022, https://www.cba.am/am/SitePages/statfinorg.aspx
11. Բանկային համակարգի ակտիվներ/ ՀՆԱ/ վարկեր/ՀՆԱ ցուցանիշները, 17.03.2022, https://www.cba.am/am/SitePages/statfinorg.aspx
12. ՀՀ վարկային համակարգի հաշվեկշռային ցուցանիշները, 17.03.2022, https://www.cba.am/am/SitePages/statfinorg.aspx
13. ՀՀ ԿԲ, վերաֆինանսավորման տոկոսադրույքի փոփոխության վերաբերյալ, 15.03.2022, https://www.cba.am/AM/News/Pages/news_09-06-21.aspx#sthash.roNZb5Dp.dpbs

DYNAMICS OF THE RA CREDIT SYSTEM MANAGEMENT IN THE LAST DECADE

Muradyan A.K.,
PhD in Economics
YSU, Ijevan Branch
Department of General Economics
makartur85@gmail.com

Abstract

In the current conditions of economic development, the credit system is the driving force of the state, the normal functioning of which has a key impact on the financial security of the society. The banking system centralizes free funds through the redistribution of funds, as a result of which credit funds are formed, short-term and long-term lending processes are implemented. Initially, banks traded in money capital, accepted deposits and issued loans. Later, they began to perform more complex operations, which helped to expand their functions. Now banks not only concentrate free money, but also turn into capital the monetary savings of all classes of the society and profit from the redistribution of the created additional result. Various credit organizations, on the one hand, ensure the movement of the necessary financial resources in the economy, on the other hand, are one of the most dangerous institutions for society, since the cash flows of society are mainly concentrated in this system, providing super profits to their owners. Banks and credit organizations in Armenia are considered fairly established organizations, which is clearly confirmed by the financially stable indicators of the latter in the face of serious external risks and crises of recent years.

Keywords: default, loan, economic growth, financial crisis, GDP.

Ներկայացվել է՝ 07.04.2022 թ.
Գրախոսվել է՝ 23.05.2022 թ.

TIK TOK ՀԱՐԹԱԿԸ ՀՀ-ՈՒՄ՝ ՈՐՊԵՍ ԻՆՏԵՐՆԵՏ ՄԱՐՔԵԹԻՆԳԻ ՆՈՐ ԶԱՐԳԱՑՈՂ ԳՈՐԾԻՔ

Կարապետյան Ե. Ռ.
ասպիրանտ
ԵՀ, Կառավարման ամբիոն
helen_19862006@yahoo.com

Ամփոփագիր

Սույն հոդվածում ուսումնասիրել ենք Tik Tok հարթակը որպես ինտերնետ մարքեթինգի արդիական, արդյունավետ ու նոր զարգացող գործիք: Աշխատության նպատակն է ցույց տալ՝ անցկացվող համեմատական վերլուծության արդյունքում, ինտերնետ մարքեթինգի նոր գործիքի կիրառման արդյունավետության բարձրացման հնարավորությունները ՀՀ-ում՝ ապրանքների ու (կամ) ծառայությունների առաջմղման ու վաճառքների համար: Tik Tok սոցիալական հարթակը՝ որպես ինտերնետ մարքեթինգի նոր զարգացող գործիք, ՀՀ-ում ուսումնասիրվում է առաջին անգամ՝ բացահայտելով թույլ ու ուժեղ կողմերը: Սույն հոդվածում ուսումնասիրվել ու բացահայտվել են թվային տնտեսության զարգացման պայմաններում տվյալ հարթակի հնարավոր առավելությունները և թերությունները, կիրառման փորձը ու արդյունավետությունը ՀՀ-ում՝ ապրանքների ու (կամ) ծառայությունների առաջմղման ու վաճառքների համար: Որպես վերլուծության հիմք վերցրել ենք մի շարք հայաստանյան հայտնի կազմակերպություններ, ինչպես նաև մի շարք հայտնի հայ բլոգերների, ովքեր իրականացնում են ապրանքի ու (կամ) ծառայության, ինչպես նաև սեփական բրենդի առաջմղումը հենց այս հարթակի միջոցով՝ նշելով այն գործիքակազմը, ցուցանիշները, որոնք մշակվել ու կիրառվել են, այդ թվում հեղինակի կողմից: Հեղինակի կողմից մշակվել են առաջարկություններ, որոնք կնպաստեն ՀՀ-ում այս նոր հարթակի զարգացմանը:

Հիմնաբառեր. ինտերնետ մարքեթինգ, սոցիալական մեդիա, Tik Tok, հեշթեգ, կառավարում, արդյունավետություն, թվային տնտեսություն:

Ներածություն

Որպես հետազոտման օբյեկտ ընտրել ենք Tik Tok սոցիալական հարթակը [*Tik Tok*]: Մշակել և ներկայացրել ենք տվյալ գործիքի կիրառման արդյունավետության ցուցանիշները, որոնք, ըստ մեզ, դրական կերպով կանդրադառնան տվյալ սոցիալական հարթակով ապրանքների ու (կամ) ծառայությունների արդյունավետ առաջմղմանը:

Բջջային կոմունիկացիան դարձել է մեր առօրյայի անբաժան մասը: Համաձայն www.worldbank.org կայքի տվյալների՝ Հայաստանի բնակչության 96% ունի ինտերնետի հասանելիություն, իսկ Covid-19 համավարակի պայմաններում վերջինիս արդյունավետ կիրառումն ու անհրաժեշտությունն էլ ավելի մեծացավ:

Ուսումնասիրությունների արդյունքներն արդիական են հատկապես համավարակի պատճառով, քանի որ համաճարակի հետևանքով շատ ոլորտներ անցան առցանց աշխատանքի, և անհրաժեշտ էր նոր մոտեցում ապրանքների ու (կամ) ծառայությունների առաջմղման համար, իսկ Tik Tok սոցիալական հարթակը, բավականին նոր, բայց արդեն արտասահմանում մեծ ճանաչում ձեռքբե-

ած գործիք է, որի կիրառումը ՀՀ-ում, ինչպես ցույց են տալիս մեր հետազոտությունների արդյունքները, դեռ այնքան էլ արդյունավետ ու զարգացած չէ: Ինչպես նշվել էր վերոգրյալում, բացակայում են գիտական հետազոտություններ և վերլուծություններ, որոնք առնչվում են տվյալ հարցի հետ: Հատկանշական է այն հանգամանքը, որ Tik Tok հարթակը, այնուամենայնիվ, ՀՀ-ում լայն կիրառում ունի սկսնակ, և ոչ միայն, բլոգերների մոտ, ովքեր այս հարթակը օգտագործում են զուտ տեն-դենցներին ու չելինջներին (մարտահրավերներին) մասնակցելու համար, ինչպես նաև դիտումների քանակ ապահովելու, իսկ հիմնական գովազդը շարունակում է կատարվել Instagram սոցիալական հարթակում:

Օրինակ Ucom-ը՝ ՀՀ -ում հայտնի պրովայդերը, Tik Tok հարթակում ունի ընդամենը 2 051 հետևորդ, հավանումների թիվը 19.6K է ու ընդամենը ներբեռնված է 13 տեսանյութ [*ucom_official*], իսկ օրինակ Մագա Հարությունյան բլոգերը ունի 407,8K հետևորդ ու 9,5M հավանումներ [*magaharutyunian*]: Բիլայն Արմենիան ունի 1 093 հետևորդ ու 7 017 հավանում [*beeline_armenia*], իսկ պարուհի Վիկտորիա Մարտիրոսյանը 240.9K հետևորդ ու 3.5M հավանումներ [*amaras_vika*]: Համեմատության համար նշենք, որ. օրինակ Բիլայն Ռուսաստանը ունի 52.8K հետևորդ ու 407.7K հավանումներ [*beelinerus*]: Ուզում ենք ընդգծել հայտնի Tik Tok - յան բլոգեր Ռուբեն Եսայանին, ով ունի 82 000 ավել հետևորդ և ներկայացնում է բավական հետաքրքրիր և տարբերվող կոնտենտ [*ruben_yesayan*]:

Tik Tok իրենից ներկայացնում է հատուկ հարթակ, որտեղ ստեղծվում ու դիտվում են բազմաթիվ, բազմաժանր տեսահոլովակներ: Այն ստեղծվել է Չինաստանում 2016 թվականին, իսկ որպես միջազգային սեգմենտ գործարկվել է 2018 թվականից: Այսօր Tik Tok - ից օգտվում են ավելի քան 140 երկրներում 75 լեզուներով [*Business of Apps*]: Առհասարակ, Tik Tok սոցիալական հարթակի մասին խոսելիս՝ մասնագետների կարծիքները բաժանվում են. մի մասն այս հարթակը բնութագրում է որպես բջջային հավելված [*Xu et al. 59*], իսկ մյուս մասը դիտարկում ու բնութագրում է Tik Tok հարթակը որպես սոցիալական ցանց [*Zhou 5*]: Tik Tok սոցիալական հարթակը ՀՀ բավական նոր է զարգանում և ուսումնասիրված չէ ամբողջությամբ գիտնականների, մարքեթոլոգների և այլ հետազոտողների կողմից: Այն առավել մեծ թափ հավաքեց հենց համաճարակի ժամանակ, երբ բնակչության մեծ մասն անցել էր հեռավար աշխատանքի, և մեծ մասն անց էր կացնում տանը: Tik Tok -ի կոնտենտը հիմնականում իրենից ներկայացնում է զվարճալի կարճ տեսահոլովակներ, չելինջներ, ֆլեշմոբեր, պարային տարատեսակ տեսահոլովակներ և ուղիղ եթերներ: Tik Tok-ը կիրառվում է բացառապես բջջային հավելվածի միջոցով: Մեր կողմից կատարված վերլուծությունները ցույց տվեցին, որ Tok Tok հավելվածը 2021 թվականին ամենաշատ ներբեռնված հավելվածն է. զբաղեցնում է 1-ին հորիզոնականը, իսկ 2020 թվականին ներբեռնվել է 850 մլն. անգամ՝ շրջանցելով WhatsApp՝ 600 մլն, ու Facebook՝ 540 մլն., հավելվածները [*Worldwide Download Leaders*]: Համաձայն Tik Tok- ի պաշտոնական տվյալների՝ օգտատերերի 59%-ը կազմում են իգական սեռի ներկայացուցիչները, իսկ 19-ից 29-ը տարեկանները՝ օգտատերերի 35%-ը: Համեմատության համար նշենք, որ մինչև 18 տարեկանները կազմում են 28%-ը: Այս հանգամանքը կարևոր է, երբ առաջմղվող այս կամ այն ապրանքի ու (կամ) ծառայության առաջմղման համար ընտրում ենք այս հարթակ, ձևավորում ենք թիրախային լսարանը: Tik Tok սոցիալական հարթակը ունի մուտք գործելու անխոչընդոտ հնարավորություն, կրում է վիրուսային բնույթ, հեշտ է ստեղծել անձնական կոնտենտ, տալիս է հնարավորություն ունենալ հետևորդներ: Tik Tok հարթակում տեղ

գտած պաշտոնական վիճակագրական տվյալները ցույց տվեցին, որ 2021 թվականի հունվարին մեկ ամսում հարթակը ունեցել է 689 մլն. ակտիվ օգտատեր ամբողջ աշխարհում, ընդ որում Չինաստանը այս վիճակագրության մեջ ներառված չէր: Հարթակում արտացոլված պաշտոնական տվյալների համաձայն՝ օգտատերերն անցկացնում են օրական միջինում 52 րոպե տվյալ հարթակում, օրական միջինում 53 րոպե՝ Instagram-ում և 58.5 րոպե՝ Facebook-ում [Facebook Statistics]: Այս տվյալները շատ կարևոր են մարքեթոլոգների համար, քանի որ, որքան շատ ժամանակ է օգտատերն անցկացնում տվյալ հարթակում, այնքան վերջինս ավելի գրավիչ է գովազդների ցուցադրման և ցուցադրման քանակի ավելացման տեսակետից: Համաձայն Tik Tok -ում տեղ գտած պաշտոնական տվյալների՝ 2017 թվականին հաշվարկվում էր 65 մլն ակտիվ օգտատեր, 2020 թվականին՝ 700 մլն, իսկ 2021՝ 1 մլրդ [*Tik Tok Statistics*]: Այս ամենը մատնանշում է հարթակի շատ արագ զարգացման մասին, որն էլ իր հերթին ևս մեկ անգամ ընդգծում է թեմայի ուսումնասիրության արդիականությունն ու անհրաժեշտությունը: Հատկանշական է նաև այն, որ Facebook սոցիալական հարթակը ժամանակին իրականացրեց հեղաշրջում մարդկային շփման ոլորտում, իսկ Tik Tok հարթակը՝ մարդկային ինքնաարտահայտման: Այս հարթակը, ինչպես արդեն նշել էինք, վայելում է մեծ ճանաչում ՀՀ-ում, նամանավանդ երիտասարդների շրջանում: Համաձայն www.start.io կայքի տվյալների՝ ՀՀ-ում ակտիվ են 120 395 օգտատեր, գերակշռում են 25-34 տարեկան օգտատերերը՝ 29.9%, արական սեռի ներկայացուցիչները կազմում են օգտատերերի 52.3%-ը, իսկ իգականը՝ 47.7%-ը [*Tik Tok Users in Armenia*]: Օրինակ Ռուսաստանի Դաշնությունում՝ համաձայն www.statista.com կայքի, 2021 թվականի հունիսի դրությամբ հարթակի ակտիվ օգտատերերի քանակը կազմում էր 39.5 մլն. օգտատատեր, համաձայն նույն կայքի կատարած վերլուծությունների հիման վրա կանխատեսում են, որ 2025 թվականին օգտատերերի քանակը կկազմի 32.6 մլն: Այս ամենը ևս մեկ անգամ ընգծում է հարթակի ակտիվ զարգացումը:

Մի շարք խոշոր արտասահմանյան կազմակերպություններ կիրառում են Tik Tok հավելվածը՝ ապրանքանիշի վարկանիշն ու ճանաչելիությունն էլ ավելի բաձրացնելու համար: Օրինակ՝ 2020 թվականին Ucom ընկերությունը հայտատարեց մեկնարկ նոր չելինջին, համաձայն որի՝ յուրաքանչյուր հավելվածից օգտվող ցույց էր տալիս իր սպորտային, մարզական կարողությունները տեսահոլովակի միջոցով, ներբեռնում Tik Tok և անպայման գրում էր հեշթեգ #UcomSport: Չելինջի հաղթողին սպասվում էր մրցանակ՝ Canyon SB41BG սպորտային բրասլետ: Այս չելինջի նպատակն էր ավելի շատ մարդկանց ծանոթացնել կազմակերպության ծառայություններին, ավելացնել հետևորդների քանակը, որոնք էլ հետագայում վիրուսային գովազդի միջոցով կտարածեին նոր ծառայությունների մասին տեղեկությունները:

Հաջորդ հետաքրքիր չելինջները Հայաստանում իրականացրեց Բիլայն Արմենիա ընկերությունը. «Շեյքի՛ր ու շահիր» [*Շեյքիր ու շահիր*] և «Եղի՛ր ազատ» խորագրերով [*Եղիր ազատ*]: Ընկերությունը, չելինջի շրջանակներում, առաջարկում էր փաթեթ՝ սոցիալական կայքերից անսահմանափակ օգտվելու հնարավորությամբ. նախապայմանը՝ #beeFree հեշթեգի կիրառումը: Ծառայության իրագործման համար պլանավորվում էր բավական թանկ տեսահոլովակի նկարահանում, սակայն սկսվեց համաճարակը և ամեն ինչ անցավ հեռավարի: Ահա այստեղ գործեց ճիշտ ինտերնետ մարթեքինգի գործիքի կիրառումը, որն առաջարկեց Doping ընկերությունը. նախ նկարահանել բյուջետային տեսահոլովակ՝ բջջային հեռախոսի վրա: Ուղղահայաց ֆորմատը, շատ բնական

միջավայրը, դինամիկ երաժշտությունը և լավ պարողները ստեղծելու էին գերազանց թրեք: Այնուհետև այս ամենը պետք է ստեղծեր շատ մեծ ալիք, նամանավանդ երիտասարդների մոտ, որն էլ արեցին Tik Tok հարթակի միջոցով: Տարբեր օգտատերեր սկսեցին ներբեռնել տարատեսակ տեսահոլովակներ՝ սկզբնական հոլովակը հիմք վերցնելով, նշում էին անում Բիլայն Արմենիան ու տեղադրում հեշթեգ #beeFree և այդ չելինջի սլոգանը՝ «Պայթեցնելով կայքը»: Մյուս հետաքրքիր չելինջը, որ իրականացրեց ընկերությունը, դա «Շեյքի՛ր, պարի՛ր և շահի՛ր» նախաձեռնության մեկնարկն էր, որն իրենից ենթադրում էր հատուկ մշակված պարային շարժումների կրկնօրինակում, տեսահոլովակի նկարահանում՝ #շեյքիրշահիր հեշթեգով: Այս երկու չելինջներն էլ մեծ ալիք բաձրացրեցին հենց Tik Tok հարթակի միջոցով, որովհետև ամբողջությամբ համապատասխանում էին ֆորմատին: Այսպիսով, մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այս երկու չելինջների գործարկման պահին, կազմակերպության առջև դրված էր մեկ նպատակ՝ լայն լսարանին հասցնել նոր ծառայության մասին՝ մատնանշելով նոր ծառայության առավելությունները: Կարծում ենք՝ ընտրվեց հենց Tik Tok հարթակը, քանի որ երկու չելինջների հիմքում ընկած ծառայությունը հենց Z սերնդի համար էր, մասնավորապես, սոցիալական կայքերի անսահմանափակ օգտագործում, իսկ չելինջը, որը ենթադրվում էր պարային շարժումների կրկնօրինակում, առավել տարածված է հենց այդ սերնդի մոտ: Մեր ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ մի շարք հայտնի մարդիկ նկարահանեցին տեսահոլովակներ In Feed գովազդի համար [*beeline_armenia*], մշակվեց հատուկ երաժշտական թրեք, որը նույնպես ընդգծեց չելինջի առանձնահատկությունները: Այս ամենի նպատակը մեկն էր. ներգրավել ավելի մեծ լսարան, բարձրացնել ապրանքանիշի վարկանիշը, ծառայության ճանաչելիությունը:

Այս ամենի հետ մեկտեղ այս հարթակը, ցավոք, ամենաթիրախայինն է, քանի որ չի վերահսկվում պատկան մարմինների կողմից: Օրինակ 2020 թվականին ամբողջ հարթակը հեղեղված էր շատ դաժան տեսահոլովակներով՝ կապված հայ ադրբեջանական պատերազմի հետ: Naked Science -ի տվյալների համաձայն՝ Tik Tok-ը Հայաստանում այդ ժամանակահատվածում արգելափակվել էր, քանի որ Ադրբեջանի կողմից տարածում էին գտել պատերազմից դաժան կադրեր [*ՀՀ-ում Tik Tok հարթակի ժամանակավոր արգելափակման մասին*]: Ինչու՞ սերվերն այդ կադրերը չէր արգելափակել՝ այդպես էլ պարզ չեղավ: Չնայած կառավարության կողմից այդպես էլ տեղեկության հաստատում չեղավ, սակայն այն, որ հավելվածը արգելափակվել էր, դա փաստ էր: Այսօր կատարվում են բազմաթիվ աշխատանքներ այս հարթակում օգտատերի անվտանգության ապահովման ու տվյալների արտահոսքի բացառման համար, մասնավորապես, խիստ վերահսկվում են վտանգավոր չելինջների իրականացումը, ինչպես նաև վերջիններիս ազդեցությունն անչափահասների վրա:

Tik Tok սոցիալական հարթակը մնացած սոցիալական կայքերի նման ունի իր պաշտոնական վիճակագրությունը: Tik Tok-ի առավելություններից կարելի է ընդգծել այն, որ այստեղ կարևոր է կրեատիվ մտածելակերպը ու տաղանդը, այլ ոչ թե սոցիալական դիրքը: Այս հարթակի միջոցով ցանկացած ապրանքանիշ, որն ունի իր պաշտոնական էջը, կարող է հաղորդակցվել իր լսարանի հետ՝ առանց խոչընդոտ: Tik Tok հարթակով առաջմղման եղանակներից ուզում ենք առանձնացնել՝ Hashtag Challenge – այն իրենից ենթադրում է չելինջների 6-օրյա իրականացում՝ յուրօրինակ գործիք է, հատուկ միայն այս հարթակին: Օգտատերը ընտրում է որոշակի երաժշտություն, տեղադրում է հեշթեգ, ձայնագրում է տեսահոլովակ և հավաքում հավանումներ: Ապրանքանիշերն օգտագործում են այս մեթոդը ապրան-

քանիշն առավել հայտնի ու ճանաչելի դարձնելու համար: Այս չելինջների ժամանակ ապրանքանիշը կարող է գնել բաներ կամ հեշթեգը [*Hashtag Challenge*]: Այս գործիքի կիրառումը թույլ է տալիս գրավել լսարանի ուշադրությունը, բացահայտելով ապրանքանիշը՝ օգտատերերի հետ շփման միջոցով: Օրինակ, Կիա ավտոմոբիլային կոնցերնը Ռուսաստանում առաջինն էր, որ տվեց Tik Tok հարթակում Hashtag Challenge - ի մեկնարկին՝ #встилеRIO հեշթեգերով: Ի աջակցություն Rio մակնիշի մեքենայի նոր մոդելի վաճառքի՝ օգտատերերին առաջարկվում էր պարել դինամիկ երգի ներքո՝ օգտագործելով որոշակի մշակված շարժումներ (ժեստեր): Այս չելինջի արդյունքում Կիա ավտոմոբիլային կոնցերնը ունեցավ տեսահոլովակի դիտում՝ 1.2 մլրդ, օգտատերերի ներգրավման գործակցի աճ՝ 13.7%-ով [*Kiarussia Hashtag Challenge*]:

Անհրաժեշտ է ընդգծել, որ աչքի ընկավ նաև ՀՀ Առողջապահության նախարարությունը, ով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (ԿԳՄՍՆ)-ի հետ համատեղ 2021 թվականին հայտարարեց Covid 19 դեմ պատվաստվելու կարևորության թեմայով կարճ հոլովակների մրցույթ՝ հանրապետության ավագ դպրոցների սովորողների շրջանում: Տեսահոլովակները պետք է ունենային այս հարթակին բնորոշ ձևաչափ, 45-60 վայրկյան տևողություն, լինեին հայերեն, չպարունակեին անթույլատրելի արտահայտություններ և տեսարաններ, առանց 6/8 ոճի երաժշտության՝ առանց հեղինակային իրավունքների խախտման [*Պատվաստվիր և կանխարգելիր*]: Առաջին 5 տեսանյութերը, որոնք կհավաքեին ամենաշատ առցանց ձայները (Like), կարժանանային պարգևների, իսկ հաջորդ 10 լավագույնները կստանային ԿԳՄՍՆ-ի և ԱՆ-ի շնորհակալագրերը: Կիրառվեց ինտերնետ մարքեթինգի այս նոր հարթակը, որի նպատակն էր էլ ավելի հասանելի դարձնելու պատվաստանյութի կարևորությունը երիտասարդ սերունդի շրջանակներում:

Բավական հայտնի են Tik Tok-յան երաժշտական թրեքերը. ինտերնետ մարքեթինգի գործիքակազմի այս եղանակը կիրառում են նորաթուխ երգիչները, որոնք ուզում են նախ ձեռք բերել հայտնիություն և ավելի ճանաչելի դարձնել իրենց երգը: Մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մեխանիզմը շատ պարզ է, պրոդյուսերական խումբը կնքում է պայմանագիր հայտնի բլոգերների հետ, որոնք էլ իրենց հերթին նկարահանում են տեսահոլովակ, որով հորդորում են իրենց հետևորդներին կրկնել նմանատիպ տեսահոլովակների նկարահանումը, հեթեգով նշելով երգերի անվանումը: Մի շարք երգիչներ օգտվել են այս հնարքից՝ Սոֆի Մխեյան [*sofimkheyanofficial*], Սիրուշո [*sirushoofficial*], ում երգերը հավաքեցին այդ կարճ ընթացքում բազմաթիվ հավանումներ և դիտումներ ինչպես Tik Tok հարթակում, այնպես էլ Youtube ում:

Նշենք, որ մի շարք խոշոր միջազգային ապրանքանիշեր, ինչպիսիք են՝ Hyundai (1 մլն. հետևորդ) [*hyundai_worldwide*], Samsung (1.5 մլն. հետևորդ) [*samsung*], Coca Cola (190.4 հզր) [*cocacola*] այսօր շատ ակտիվ օգտագործում են հենց Tik Tok հարթակը՝ որպես արդյունավետ ինտերնետ մարքեթինգի նոր ու թրենդային գործիք: Համեմատության համար նշենք, որ օրինակ ռուսաստանյան Hyundai-ին ունի ընդամենը 434.5 հզր հետևորդ Tik Tok հարթակում [*hyudai_russia*], իսկ հայաստանյան ներկայացուցչությունը չունի անգամ պաշտոնական էջ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք ՀՀ-ում զարգացնել Tik Tok հարթակը, քանի որ վերջինիս հնարավորությունները շատ մեծ են, սակայն սրա հետ մեկտեղ կան նաև բազմաթիվ վտանգներ, որոնցից կարող ենք առանձնացնել այն, որ նախ Tik Tok-ը բացարձակ անվտանգ տեղ չէ անչափահասների համար, հաշվի առնելով այն փաստը, որ

գրանցումը և առհասարակ հավելվածից օգտվելը չի ներկայացնում դժվարություն կամ չկան խոչընդոտներ: Հավելվածը թույլ է տալիս նամակ գրել, հետևաբար հեշտությամբ կարող է օգտագործվել հանցագործների կողմից, քանի որ վերջինս չունի անվտանգության այնպիսի խիստ պահանջներ, որոնք պարբերաբար ջնջում են հավանական վտանգավոր հաշիվները: Չնայած կատարվում են աշխատանքներ անվտանգության քաղաքականության շտկման ուղղությամբ: Մյուս ոչ պակաս կարևոր վտանգը դա հոգեբանական ազդեցությունն է, որ կարող են ունենան տարատեսակ չելինջները նամանավանդ երեխաների ու դեռահասների շրջանում: ՀՀ-ում առկա խնդիրներից մեկն այն է, որ այս պահին, ցավոք, Հայաստանը նշված չէ Tik Tok Business Account-ի և Ads Manager-ի սպասարկող երկրների ցանկում [*Placements and Available location*]: Նման սահմանափակումները բացասական են անդրադառնում հարթակի լիարժեք օգտագործմանը, քանի որ սահմանափակվում են հարթակի բոլոր հնարավորություններից օգտվելը: Tik Tok հարթակի արդյունավետության հաշվարկման ժամանակ, առաջարկում ենք ուշադրություն դարձնել վիրտուալ ինտելեկտուալ կապիտալի ինդեքսի ու կայքի որակի ինդեքսի վրա: Նշենք, որ կայքի որակի ինդեքսը, ցուցանիշ է, որն արտացոլում է ինտերնետ-ռեսուրսի, կայքի, պորտալի, օգտակարությունը՝ Yandex որոնողական համակարգի տեսակետից: Որակի հաշվարկը կատարելիս՝ հաշվի ենք առնում լսարանի մեծությունը և օգտատերերի՝ տվյալ կայքից բավարարվածության աստիճանից, օգտատերերի վստահությունից և այլ չափորոշիչներից [*Ваганян, Ваганян, 9 - 11*]: Հաշվարկների համար կիրառում են Yandex որոնողական համակարգի տվյալները, որոնք պարբերաբար թարմացվում են: Այս ամենը կարևորվում է, երբ կատարվում է ընտրություն այս կամ այն սոցիալական հարթակների միջև:

Եզրակացություն

Մեր կողմից կատարված վերուծությունների հիման վրա կարող ենք հստակ ասել, որ այս նոր հարթակն իր զարգացման արագ տեմպերով, գրավում է շուկան և ընդլայնում լսարանը: Այս ամենը թույլ է տալիս հասկանալ այն փաստը, որ անկախ ապրանքանիշից, այս նոր գործիքի փորձարկումն անհրաժեշտ է, առավել ևս, եթե վերջինս ձգտում է ստանալ լսարանի աջակցությունը: Կարծում ենք, որ, եթե անհրաժեշտ է գրավել հետևորդների ուշադրությունը, ապա առաջնահերթ պետք է կիրառել հենց նմանատիպ գործիքներ՝ հումոր, չելինջներ, պարեր՝ այն ամենն, ինչ պետք է լսարանին: Այս ամենի հետ մեկտեղ հարկավոր է պահպանել հարթակի ալգորիթմն ու կանոնները:

Այսպիսով, Tik Tok սոցիալական հարթակը ունի առավելություններ, որոնցից են՝

- անդադար թարգեթինգ, որը կատարվում է ոչ թե թարգեթոլոգների կողմից, այլ ավտոմատ կերպով՝ հաշվի առնելով նախասիրություն, գեոլոկացիա, հետաքրքրությունները, նախկինում հավանած կամ առավել շատ դիտված կոնտենտը: Համաձայն AppAnnie-ի՝ iOS и Google Play խանութներից հավաքագրած տվյալների՝ Tik Tok հարթակը գովազդի միջոցով ստանում է ավելի շատ գումար, քան նույն YouTube, Disney +, Tencent Video և Netflix:
- ուղղահայաց տեսահոլովակների դիտում՝ նմանատիպ տեսահոլովակների դիտման գործակիցը բարձր է, միգուցե դա է պատճառներից մեկը, որ Instagram սոցիալական հարթակը սկսեց ակտիվ գործարկել Instagram Reels ֆունկցիան, որը Tik Tok - ի անալոգն է:
- Tik Tok մուտք գործելու և լսարան հավաքելու պարզությունը և արագությունը:
- անդադար ձգվող ժապավենը, որի արդյունքում օգտատերն ավելի շատ

ժամանակ է անցկացնում տվյալ հարթակում, որը մարքեթինգի տեսակետից շատ կարևոր ցուցանիշ է:

Այս առավելությունների հետ մեկտեղ, վերջինս չունի լայն կիրառում ՀՀ-ում, քանի որ չկան մասնագիտական կիրառման մեթոդներ ու չափորոշիչներ: Քանի որ գերակշիռ մասը կազմում են բլոգերները, ուստի կարելի է ենթադրել, որ այս հարթակից առավել օգտվում են այն օգտատերերը, որոնք փնտրում են զվարճալի, ժամանակակից կոնտենտ և օրինակ ուսուցողական նյութեր գտնել, գրեթե, անհնար է:

Ամփոփելով, կարող ենք միանշանակ ասել, որ Tik Tok -ն այսօր մեր նոր իրականությունն է, հարթակ, որը կարելի է ընդունել կամ մերժել, սակայն այն փաստը, որ վերջինս դեռ երկար է գործարկվելու և զարգանալու, մնում է փաստ:

Գրականության ցանկ

1. Ваганян Оганес, Ваганян Григорий: Виртуальный интеллектуальный капитал (концепция, методология измерения и оценки), Ереван, 2021, 348 с.
2. Xu Li. et al. “Research on the Causes of the “Tik Tok” App Becoming Popular and the Existing Problems” Journal of Advanced Management Science Vol.7, No. 2, 2019-06, p. 52-63. http://www.joams.com/uploadfile/2019/0613/20190613034911476.pdf
3. Zhou Qiyang, “Understanding User Behaviors of Creative Practice on Short Video Sharing Platforms – A Case Study of TikTok and Bilibili”, OhioLink, 2019, 13.april.2022, https://etd.ohiolink.edu/apexprod/rws_etd/send_file/send?accession=ucin155421202112545&disposition=inline.
4. «Եղի՛ր ազատ», Beeline, 10.մարտ.2022, https://www.beeline.am/hy/beefree
5. ՀՀ-ում Tik Tok հարթակի ժամանակավոր արգելափակման մասին, Naked Science, 1.հոկտեմբեր.2020, 1.փետրվար.2022, https://naked-science.ru/article/media/v-armenii-voznikli-pereboi-v-rabote-tik-tok
6. «Շեյքի՛ր, շահի՛ր'», Beeline, 10.մարտ.2022, https://www.beeline.am/hy/shake
7. «Պատվաստվի՛ր և կանխարգելիր» մրցույթ, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, 12.նոյեմբեր.2021, 5.հունվար. 2022, https://escs.am/am/news/10609?fbclid=IwAR2zJbgTckOT8aOXfz6N2EiY5lbsvrugAETUZVY4AXmNqNzp1tfw4IqdTlA
8. Business of Apps, Tik Tok 13.april,2022, https://www.businessofapps.com/data/tik-tok-statistics
9. amaras_vika, Tik Tok, 11.ապրիլ.2022, https://www.tiktok.com/@amaras_vika
10. beeline_armenia, Tik Tok, 11.ապրիլ.2022,. https://www.tiktok.com/@telecom_armenia
11. beelinerus, Tik Tok, 11.ապրիլ.2022, https://www.tiktok.com/@beelinerus
12. cocacola, Tik Tok, 3.փետրվար.2022, https://www.tiktok.com/@cocacola
13. hyundai_russia, Tik Tok, 4.մարտ.2022, https://www.tiktok.com/@hyundai_russia
14. hyunidai_worldwide, Tik Tok, 12.մարտ.2022, https://www.tiktok.com/@hyundai_worldwide
15. magaharutyunian, Tik Tok, 4.մարտ.2022, https://www.tiktok.com/@magaharutyunian
16. ruben_yesayan, Tik Tok, 11.ապրիլ.2022, https://www.tiktok.com/@ruben_yesayan
17. samsung, Tik Tok, 3.մարտ.2022, https://www.tiktok.com/@samsung
18. sirushoofficial, Tik Tok, 12.ապրիլ.2022, https://www.tiktok.com/@sirushoofficial
19. sofimkheyanofficial, Tik Tok, 12.ապրիլ.2022, https://www.tiktok.com/@sofimkheyanofficial
20. ucom_official, Tik Tok, 13.ապրիլ.2022, https://www.tiktok.com/@ucom_official
21. Facebook Statistics, Oberlo, 12.մարտ.2022, https://www.oberlo.com/blog/facebook-statistics

22. Hashtag Challenge, Tik Tok for Business, 3.մարտ.2022, https://www.tiktokforbusinesseurope.com/resources/7-tips-for-an-effective-branded-hashtag-challenge
23. Kiarussia Hashtag Challenge, Tik Tok, 3.april.2022, https://www.tiktok.com/@kiarussia
24. Placements and Available location, Tik Tok, 3.փետրվար.2022, https://ads.tiktok.com/help/article?aid=9579
25. "Tik Tok", Tik Tok, 5.փետրվար.2022, https://www.tiktok.com
26. Tik Tok Statistics, Tik Tok, 5.փետրվար.2022, https://www.businessofapps/data/tik-tok-statistics
27. Tik Tok Users in Armenia, Start.io, 3.մարտ.2022, https://www.start.io/audience/tiktok-users-in-armenia
28. Worldwide Download Leaders 2021, 2020, Apptopia, 30.մարտ.2022, https://blog.apptopia.com/worldwide-us-download-leaders-2021

TIK TOK PLATFORM AS A NEW DEVELOPING FEATURE OF INTERNET MARKETING

Karapetyan Y. R.
Postgraduate Student
EUA, Chair of Management
helen_19862006@yahoo.com

Abstract

In this article, we have explored Tik Tok platform as a modern, successful, and new developing feature of internet marketing. The aim of this work is to show the opportunities to increase the efficiency of using a new internet marketing tool for the promotion and sale of goods and (or) services in the Republic of Armenia due to the comparative analysis. Tik Tok social platform, as a new developing tool for internet marketing, is studied for the first time in Armenia by revealing its strengths and weaknesses. This article studies and reveals the possible advantages and disadvantages of the given platform in the conditions of digital economy development, experience, and efficiency in the promotion and sale of goods and (or) services in the Republic of Armenia. As a basis for analysis a number of well-known Armenian organizations, famous Armenian bloggers, who promote their product and (or) service, as well as their own brand through this platform were used, indicating the tools, and indicators that have been developed and applied also by the author. The author has put forward suggestions that will contribute to the development of this new platform in Armenia.

Keywords*:* internet marketing, social media, Tik Tok, hashtag, management, effectiveness.

Ներկայացվել է՝ 13.04.2022 թ.
Գրախոսվել է՝ 24.05.2022 թ.

A NEW PERSPECTIVE OF TOPSIS METHOD AND EVALUATING IT IN TEHRAN STOCK EXCHANGE

Jahan Biglari A. N.
Researcher
EUA, Chair of Management
ajahanbiglari@yahoo.com

Abstract

Choosing the ideal portfolio for yielding and investing money has been one of the most pressing challenges for managers and investors. There are various methods for rating and weighting that provide varied outcomes. This study aims to evaluate a new perspective of the TOPSIS method in the Iranian capital market and investigate the effectiveness of the TOPSIS method when there are changes in the process of calculating it, like the normalization steps or the distance between each vector to the best one and the worst vector. In this research, the vectors are companies listed on the Tehran Stock Exchange. By applying the techniques of normalizing and distance, this study offers a new way to accommodate and help investors for choosing the best portfolio. For this purpose, four techniques, Linear, Rumina, Standard domain, and Standard deviation, as the most famous normalizing techniques, and three techniques of distance are Euclidean, Manhattan, and Minkowski were combined to provide a better ranking portfolio. All calculations were based on the data of the Tehran stock exchange from the year 2014 to 2020. According to the findings, the best changings to improve the TOPSIS performance are calculating criteria by average mode and standard deviation method as the normalizing method. The portfolio has been constructed with this mode of TOPSIS has more efficient than other ones.

Keywords: MCDM, DM, TOPSIS, Shannon, Rumina, Minkowski.

Introduction

Using various mathematical models, heuristics, and MCDM methodologies, previous researchers have used Decision Matrix (DM) in selection problems for diverse manufacturing facilities. The advantage of MCDM approaches is that they consider both qualitative and quantitative characteristics. Many solution strategies are included in MCDM, including the Simple Additive Weighting (SAW), Weighting Product (WP), Analytic Hierarchy Process (AHP), and Shannon Entropy [*Pashaki Jafari 3*]. A decision matrix, which is a list of values in rows and columns that allows an analyst to systematically identify, assess, and rate the performance of relationships between sets of values and information, is required for this purpose. The matrix is useful for analyzing huge groups of decision criteria and determining their relative importance. The decision matrix has the advantage of being applicable to a wide range of decisions. When you or your team is comparing several options or criteria that need to be limited down to one final pick, it is most effective [*Decision Matrix to Make Tough Choices 1*].

This paper takes another look at TOPSIS for computing the weight of criteria and rank to them. The remainder of this paper is organized as follows. Section one reviews some concepts of this research. The next section determines the weight of criteria with the Shannon entropy technique and collecting data. In Section four, the TOPSIS method with changes in some parts of calculation is applied to a real-world problem. Section five illustrates the result of the real-world problem and compares them, and they comprehensively compared it to the deposit bank and stock market index. The conclusions and suggestions for future research are represented in section six.

Literature review

This section reviews some concepts of this research, TOPSIS method, distance techniques, and normalizing data.

TOPSIS technique

Hwang and Yon invented the term TOPSIS in 1981. The closest distance is the best option for a positive ideal solution, while the farthest distance is the best option for a negative ideal solution, according to this technique. A positive ideal answer has the highest profit and the lowest loss, whereas a negative-ideal reaction has the lowest profit and the highest costs [*Pashaki Jafari 3*]. When the goal is to address a problem of collective decision-making, using a technique is quite beneficial. To apply this strategy, you will need a decision-making matrix with alternatives in the rows and criteria in the columns [*Pashaki Jafari 4*]. The following are the most significant advantages of this technique: (1) Evaluation involves both qualitative and quantitative measures at the same time. (2) A large number of parameters are taken into account. (3) It can be completed swiftly and easily. (4) The utility of the indices evaluated in the solution is increasing (downwardly). (5) Inputs can be changed, and the system's responsiveness can be evaluated as a result. (6) In this technique, prioritization is based on response rationality; as a result, chosen solutions would be the closest to the ideal response and the farthest away from the worst response (s). (7) If certain criteria are cost-related and the goal is to reduce them, while others are profit-related and the goal is to increase profitability, the TOPSIS technique may quickly determine the optimal response, which is a mix of the best possible criteria values. (8) Quantitatively, the output can explain priorities. In prioritization, such amounts are the final weight of alternatives [*Pakdin Amiri et al. 61 – 76*]. The TOPSIS approach can be broken down into seven steps:

Step 1. Construct with **m** alternatives and **n** criteria.

$$DM = \begin{array}{c} A_i \\ A1 \\ \vdots \\ Am \end{array} \begin{array}{c} \begin{array}{ccc} C1 & \dots & Cn \end{array} \\ \begin{pmatrix} a_{11} & \dots & a_{1n} \\ \vdots & \ddots & \vdots \\ a_{m1} & \dots & a_{mn} \end{pmatrix} \end{array} \quad (1)$$

Where ***A = {A1, A2, …, Am}*** is a set of alternatives ***C = {C1, C2, …, Cn}*** is a set of decision-making criteria, and a_{ij} is the score of alternative ***i*** with respect to criterion ***j***

Step 2. Normalizing the decision matrix

Two methods of normalization that have been used to deal with incongruous criteria dimensions are linear normalization and vector normalization.

Vector normalization was incorporated with the original development of the TOPSIS method and is calculated using the following formula:

$$r_{ij} = \frac{x_{ij}}{\sqrt{\sum_{k=1}^{m} x_{kj}^2}} \quad i=1,2,\dots,m, j=1,2,\dots,n \quad (2)$$

In using vector normalization, the non-linear distances between single dimension scores and ratios should produce smoother trade-offs [Pavić and Novoselac].

Step 3. Calculate the weighted normalized decision matrix.

Step 4. Determine the worst alternative (A_w) and the best alternative (A_b)

Where associated with the criteria having a positive impact and negative impact.

Step 5. Calculate the Euclidean distance between the target alternative ***i*** and the worst condition A_w and the distance between the alternative ***i*** and the best condition A_b.

Step 6. Calculate the similarity to the worst condition.

Step 7. Rank the alternatives.

Distance techniques

Machine learning relies heavily on distance metrics. A distance measure is a numerical value that sums together the relative differences between two objects in a problem domain. Rows of data that describe a subject (such as a person, automobile, or property) or an event (such as a purchase, a claim, or a diagnosis) are the most common two objects [*Brownlee 1*].

Euclidean Distance

We will start with the most often used distance measurement, Euclidean distance. It is a measurement of distance that is best described as the length of a segment connecting two places. The distance is determined from the Cartesian coordinates of the points using the Pythagorean Theorem, which is a simple formula. [*Smith 8*].

$$D_{eucl}(p-q) = \sqrt{\sum_{i=1}^{n} (p_i - q_i)^2} \quad (3)$$

Manhattan

The Manhattan distance, also known as the Taxicab distance or City Block distance, is a

calculation that determines the distance between two real-valued vectors. Consider vectors that describe items on a chessboard-like uniform grid. The Manhattan distance is the distance between two vectors if they could only move in the same direction. The distance is calculated without any diagonal movement [*Black 1*].

$$D_{man}(p,q) = \left(\sqrt{\sum_{i=1}^{n} |p_i - q_i|}\right) \quad (4)$$

Minkowski Distance

The Minkowski distance is a more complex measurement than others. It is a metric that can be used in Normed vector space (n-dimensional real space), which implies it can be used in any place where distances may be represented by a vector with a length.

The Minkowski distance formula is illustrated below [*Brownlee 1*]:

$$D_{mink}(p,q,d) = \left(\sqrt{\sum_{i=1}^{n} |p_i - q_i|^d}\right)^{\frac{1}{d}} \quad (5)$$

Normalizing Techniques

In multi-criteria decision-making procedures like AHP and ANP, normalization or non-scaling is a fundamental idea. In MCDM procedures, normalization means no scaling and allows data to be compared using diverse measurement criteria. When you compare two people's height, weight, and age, height is measured in centimeters, weight in kilos, and age is measured in years. Because each criterion is measured on a separate scale, it is difficult to compare them. To normalize implies making anything non-scaled.

Linear

A simple method for normalizing numbers by a Saaty is also known as eigenvector calculation. In this method, it is sufficient to divide each number in a set by the sum of the elements of that set. In this case, the sum of all elements after normalization will be one [*Habibi 1*].

$$n_{ij} = \frac{x_{ij}}{\sum_{i=1}^{m} x_{ij}} \quad (6)$$

Rumina

Rumina is one of the techniques for normalizing the decision matrix. In different methods, there are multi-criteria with positive criteria (benefit) and negative criteria (loss). A normalization method has been proposed in this field called Rumina method. For positive criteria, divide the value of each criterion by the largest value of that criterion. For negative criteria, the smallest value of that criterion is divided by the individual values of each criterion [Habibi 1].

$$n_{ij} = \begin{cases} \dfrac{x_{ij}}{max\ x_{ij}}, C_j > 0 \\ \dfrac{min\ x_{ij}}{x_{ij}}, C_j < 0 \end{cases} \quad (7)$$

Standar Score

Another concept of normalization, also known as standardization, is used in the analysis of artificial neural networks and data envelopment analysis. To standardize an element, you must subtract that element from the mean and divide it by the standard deviation [Mcleod 2].

$$n_{ij} = \frac{X - mean}{S} \quad (8)$$

Min-max feature scaling

Here, to normalize an element, you have to minimize that element and divide it by the range of changes [*Peshawa et al. 2-4*].

$$n_{ij} = \frac{X - min}{max - min} \quad (9)$$

Entropy Shannon

A fundamental concept in the physical sciences, social sciences, and systems is entropy. Entropy represents the amount of assurance obtained from the content of a message. In other words, entropy in information theory is an indicator for measuring uncertainty expressed by a probability distribution [*Azar 8*].

Entropy method is one of the multi-criteria decision-making methods for calculating the weight of criteria. In this method, a criterion-option matrix is required. This method was proposed by Shannon and Weaver in 1974. Entropy expresses the amount of uncertainty in a continuous probability distribution. As a result, uncertainty and information

are interrelated parameters [*Hosseinzadeh Lotfi, Fallahnejad 55*].

Methodology

The present study has combined both types of research, basic and applied, because its purpose is to develop knowledge and use it in the present and, another hand, to form a stock portfolio using an efficient expert system to facilitate investment in securities with appropriate performance and greater returns than the stock market index and bank interest.

Population and Sample

The decision matrix included twenty companies from Tehran Stock Exchange as alternatives, and three criteria consisted of return, reliability, and risk. The companies selected from Tehran Stock Exchange are listed in the Appendix.

Resources

All information in this study is obtained through the financial journals and sites of the Tehran Stock Exchange that are listed below:

- www.tse.ir
  - "tse" stands for Tehran Stock Exchange
- www.tsetmc.com
  - "tsetmc" stands for Tehran Stock Exchange Technology Management company
- www.codal.ir
  - Comprehensive Database of All Listed EPS, DPS, and increment capital of companies
- www.fipiran.com
  - "fipiran" stands for Financial Information Processing of IRAN
- www.seo.ir
  - "seo" stands for Securities and Exchange Organization.

Tools

Microsoft Excel is the software that is used. This research used Excel because it is reliable, accessible, and transparent in the calculation. Operations and collected data are available and clear.

Variables

The independent variables of this study are the return, reliability, and risk of companies.

Assumptions

- Buy stocks of each company on the first of the year and sell them at the end of the year
- The daily stock price of companies used to calculate criteria includes capital increment, DPS, and transaction commission.
- The beginning of the year in the solar calendar is March 21. For example, the solar year 1395 is equivalent to March 21, 2016
- Annual interest on bank deposits is assumed to be 20 percent.

Implementation

This paper examines m alternatives $A_1,\ldots A_m$. Each alternative A_i respects n criteria $x_1,\ldots,x_n$, which are expressed with positive numbers x_{ij}. The criteria $x_1,\ldots,x_k$ are benefit (monotonically increasing preference), and criteria $x_{k+1},\ldots,x_n$ are non-benefit (monotonically decreasing preference).

$\sum_{j=1}^{n} w_j = 1$, w_j is Weights of the criteria x_j

4.1 Initial decision matrix

For a better visibility, the given alternatives, criteria, and their weights are placed in the table1.

Table 1.

CRITERIA	x_1	x_2	…	x_n
Alternatives\weights	w_1	w_2	…	w_n
A_1	x_{11}	x_{12}	…	x_{1n}
A_2	x_{21}	x_{22}	…	x_{2n}
□	□	□	□	□
A_m	x_{m1}	x_{m2}	…	x_{mn}

Decision Matrix

Where $\{w_1, w_2, \ldots, w_n\}$ are weights of criteria $\{x_1, x_2, \ldots, x_n\}$ and $\{A_1, A_2, \ldots, A_m\}$ are alternatives.

$$X = \begin{bmatrix} x_{11} & \cdots & x_{1n} \\ \vdots & \ddots & \vdots \\ x_{m1} & \cdots & x_{mn} \end{bmatrix}$$

The numbers $\boldsymbol{x_{ij}}$ present values of different criteria with different measuring units. First, take into account the given weights $\boldsymbol{w_j}$ of the criteria $\boldsymbol{x_j}$. Second, the measuring numbers $\boldsymbol{x_{ij}}$ of the criteria $\boldsymbol{x_j}$ are replaced with the normalized or relative numbers

$$r_{ij} = \frac{x_{ij}}{\sqrt{\sum_{i=1}^{m} x_{ij}^2}} \qquad (10)$$

$\boldsymbol{r_{ij}}$ belongs to (0, 1). Then, according to the share $\boldsymbol{w_j * x_j}$ of the criteria, the normalized numbers $\boldsymbol{r_{ij}}$ are replaced with the weighted normalized numbers

$$a_{ij} = w_j r_{ij} = w_j \frac{x_{ij}}{\sqrt{\sum_{i=1}^{m} x_{ij}^2}} \qquad (11)$$

$\boldsymbol{a_{ij}}$ belongs to (0, 1). The further data processing uses the weighted normalized decision matrix

$$A = \begin{bmatrix} a_{11} & \cdots & a_{1n} \\ \vdots & \ddots & \vdots \\ a_{m1} & \cdots & a_{mn} \end{bmatrix}$$

If all weights $\boldsymbol{w_j}$ are mutually equal, in which case $\boldsymbol{w_j = 1/n}$, the numbers $\boldsymbol{r_{ij}}$ can be applied in matrix $\boldsymbol{A}$ as the numbers $\boldsymbol{a_{ij}}$ [Pavić, Novoselac 7].

Use TOPSIS method.

Table 2.

Alternative s\Criteria	$\boldsymbol{x_1}$	$\boldsymbol{x_2}$	**…**	$\boldsymbol{x_n}$	$\boldsymbol{d^+}$	$\boldsymbol{d^-}$	$\boldsymbol{D^+}$
A_1	x_{11}	x_{12}	…	x_{1n}	d_1^+	d_1^-	D_1^+
A_2	x_{21}	x_{22}	…	x_{2n}	d_2^+	d_2^-	D_2^+
□	□	□	□	□	□	□	□
A_m	x_{m1}	x_{m2}	…	x_{mn}	d_m^+	d_m^-	D_m^+
A^+	a_1^+	a_2^+	…	a_n^+			
A^-	a_1^-	a_2^-	…	a_n^-			

The normalized decision matrix

The coordinates $\boldsymbol{a_j^+}$ of the positive ideal solution $\boldsymbol{A^+ = (a_1^+\, a_2^+ \ldots a_n^+)}$ are chosen using the below formula:

$$a_j^+ = \begin{cases} \max_i a_{ij} \;\; for\; j = 1,2,,3 \ldots, k \\ \min_i a_{ij} \;\; for\; j = k+1, \ldots, n \end{cases} \qquad (12)$$

If some alternatives $\boldsymbol{A_{i_0}}$ is equal to A^+, then it is obvious that the alternative $\boldsymbol{A_{i_0}}$ is the best solution. If it is not, then we continue the procedure.

The coordinates $\boldsymbol{a_j^-}$ of the negative ideal solution $\boldsymbol{A^- = (a_1^-\, a_2^- \ldots a_n^-)}$ are chosen applying the below formula:

$$a_j^- = \begin{cases} \min_i a_{ij} \; for\; j = 1,2,3, \ldots, k \\ \max_i a_{ij} \; for\; j = k+1, \ldots, n \end{cases} \qquad (13)$$

The numbers d_i^- of the column $\boldsymbol{d_i^-} = (\boldsymbol{d_1^- d_2^- \ldots d_m^-})^{\boldsymbol{T}}$ are the distances from the points A_i to the point A^-, which is calculated by the formula (14):

$$d_i^- = d(A_i, A^-) = \sqrt{\sum_{j=1}^{n} \left(a_{ij} - a_j^-\right)^2} \qquad (14)$$

The numbers D_i^+ of the column $\boldsymbol{D^+} = (\boldsymbol{D_1^+ D_2^+ \ldots D_m^+})^{\boldsymbol{T}}$ are the relative distances of the points $\boldsymbol{A_i}$ respecting the points $\boldsymbol{A^+}$ and $\boldsymbol{A^-}$, which is expressed by the formula (15):

$$D_i^+ = \frac{d_i^-}{d_i^+ + d_i^-} = \frac{d(A_i, A^-)}{d(A_i, A^+) + d(A_i, A^-)} \qquad (15)$$

If $max\{D_1^+, D_2^+, \ldots, D_m^+\} = D_{i_1}^+$ **Then** we accept the alternative A_{i_1} as the best solution.

If $min\{D_1^+, D_2^+, \ldots, D_m^+\} = D_{i_2}^+$ **Then** we accept the alternative A_{i_2} as the worst solution [Pavić, Novoselac 8–12].

Results and Discussion

This section illlustrates the results of the changes applied to the TOPSIS and compares them with each other. The Shannon method has been used for calculating the weight of criteria. Each portfolio constructs with a change that applies to part of TOPSIS; for example, some are into calculating

distance and some to normalizing. These portfolios compare with each other and show results with charts and tables of values. These charts help to find which method has better performance.

Table 3.

Annual Return							
TOPSIS DM Per Year	***Distance***			***Normalization r_{ij}***			
	Euclidean	*Manhattan*	*Minkowski^3*	*Linear*	*Rumina*	*Deviation*	*Domain*
1395	*5.05*	*4.88*	*0.96*	*4.01*	*5.37*	*5.55*	*4.58*
1396	*15.15*	*15.85*	*29.16*	*20.79*	*12.65*	*14.40*	*13.59*
1397	*88.07*	*87.31*	*89.32*	*88.41*	*88.17*	*87.93*	*88.10*
1398	*305.37*	*307.81*	*286.37*	*305.36*	*305.90*	*305.67*	*305.67*
1399	*114.55*	*112.94*	*99.92*	*114.53*	*100.89*	*114.57*	*114.53*

The annual return of each changing to TOPSIS with per year mode

The above table shows the annual return of each distance technique and the normalizing method. The above table shows all results of changes in the TOPSIS method based on per year mode of calculation criteria.

Table 4.

Return After N Years						
DM Per Year	***Distance***					
	Euclidean		*Manhattan*		*Minkowski*	
N	*Capital*	*Profit %*	*Capital*	*Profit %*	*Capital*	*Profit %*
One	*1.05*	*5.05*	*1.05*	*4.88*	*1.01*	*0.96*
Two	*1.21*	*20.96*	*1.22*	*21.50*	*1.30*	*30.39*
Three	*2.27*	*127.49*	*2.28*	*127.59*	*2.47*	*146.85*
Four	*9.22*	*822.16*	*9.28*	*828.13*	*9.54*	*853.77*
Five	*19.79*	*1878.51*	*19.76*	*1876.34*	*19.07*	*1806.81*

Efficiency of changes in distance based on Per Year mode

Table 4 illustrate the return of each distance method after from one to five years. The above table shows the results of changes, after five years the best return belongs to the Euclidean distance method with ***19.79*** times more than from starting to invest.

Table 5.

Return After N Years								
DM Per Year	***Normalized***							
	Linear		*Rumina*		*Deviation*		*Domain*	
N	*Capital*	*Profit %*	*Capital*	*Profit %*	*Capital*	*Profit %*	*Capital*	*Profit %*
One	*1.04*	*4.01*	*1.05*	*5.37*	*1.06*	*5.55*	*1.05*	*4.58*
Two	*1.26*	*25.63*	*1.19*	*18.70*	*1.21*	*20.74*	*1.19*	*18.79*
Three	*2.37*	*136.69*	*2.23*	*123.35*	*2.27*	*126.92*	*2.23*	*123.45*
Four	*9.59*	*859.47*	*9.07*	*806.58*	*9.21*	*820.53*	*9.06*	*806.46*
Five	*20.58*	*1958.37*	*18.21*	*1721.27*	*19.75*	*1875.18*	*19.45*	*1844.59*

Efficiency of changes in normalization based on Per Year mode

The linear distance technique has the best performance among others (see table 5) according to per year mode after N years.

The result of the changes applied to the TOPSIS method when the criteria are calculated with Average mode has been shown below.

Table 6.

Annual Return							
Topsis DM Average	*Distance*			*Normalization r_{ij}*			
	Euclidean	*Manhattan*	*Minkowski^3*	*Linear*	*Rumina*	*Deviation*	*Domain*
1395	*9.80*	*8.19*	*-5.53*	*-1.00*	*10.20*	*10.40*	*10.09*
1396	*19.13*	*18.45*	*23.10*	*21.75*	*17.11*	*18.31*	*18.56*
1397	*82.83*	*81.34*	*76.14*	*78.47*	*86.37*	*84.06*	*83.95*
1398	*283.75*	*283.73*	*227.61*	*278.76*	*299.28*	*299.56*	*299.70*
1399	*123.36*	*124.02*	*117.33*	*122.96*	*123.52*	*126.51*	*126.68*

The annual return of changes in distance and normalization based on Average mode

The above table shows the annual return based on criteria computed according to average mode. The performance of Deviation and Domain is better than the annual return of each distance technique and normalizing method. The above table shows all results of the TOPSIS method after changing.

Table 7.

Return After N Years						
DM Average	***Distance***					
	Euclidean		*Manhattan*		*Minkowski*	
N	*Capital*	*Profit %*	*Capital*	*Profit %*	*Capital*	*Profit %*
One	*1.10*	*9.80*	*1.08*	*8.19*	*0.94*	*-5.53*
Two	*1.31*	*30.80*	*1.28*	*28.16*	*1.16*	*16.28*
Three	*2.39*	*139.14*	*2.32*	*132.40*	*2.05*	*104.83*
Four	*9.81*	*817.68*	*8.92*	*791.78*	*6.71*	*571.05*
Five	*20.50*	*1949.73*	*19.98*	*1897.75*	*14.58*	*1358.39*

Efficiency of changes in distance based on Average mode

Table 7 shows the return of each portfolio after N years; considering the values after five years, the Euclidean distance method has the best performance among others.

The result of the changes applied to the TOPSIS method when the criteria are calculated with average mode. The table below shows the results of the change normalization method of TOPSIS after N years when we worked with the average mode of DM.

Table 8.

Return After N Years								
DM Average	***Normalization***							
	Linear		*Rumina*		*Deviation*		*Domain*	
N	*Capital*	*Profit %*	*Capital*	*Profit %*	*Capital*	*Profit %*	*Capital*	*Profit %*
One	*0.99*	*-1.00*	*1.10*	*10.20*	*1.10*	*10.40*	*1.10*	*10.09*
Two	*1.21*	*20.54*	*1.29*	*29.06*	*1.31*	*30.62*	*1.31*	*30.53*
Three	*2.15*	*115.12*	*2.41*	*140.53*	*2.40*	*140.42*	*2.40*	*140.11*
Four	*8.15*	*714.77*	*9.60*	*860.38*	*9.61*	*860.60*	*9.60*	*859.73*
Five	*18.17*	*1716.63*	*21.47*	*2046.66*	*21.76*	*2075.90*	*21.75*	*2075.50*

Efficiency of changes in normalization based on Average mode

The return of each portfolio after N years can see in table 8. After considering the values in the above tables can understand, Deviation and Domain perform better than others. The return of each one is more than 21.7 times.

Table 9.

Return After Five Years		
Methods	*Per Year*	*Average*
Euclidean	*19.79*	*20.50*
Manhattan	*19.76*	*19.98*
Minkowski	*19.07*	*14.58*
Linear	*20.58*	*18.17*
Rumina	*18.21*	*21.47*
Deviation	*19.75*	*21.76*
Domain	*19.45*	*21.75*

The return of each change to TOPSIS after five years

The above table can see the return of each portfolio after five years. Between distance techniques, Euclidean is better than others. Between Normalizing techniques, Deviation based on the Average mode is better than others. Linear technique based on Per Year has better performance than others. Compared between all methods, Deviation and Domain have better performance than others according to calculate criteria based on Average mode.

Figure 1.



The chart of return of each type of TOPSIS after five years

Figure 1 illustrates the efficiency of each type of TOPSIS after changing some parts of TOPSIS. Also, table 10 recommends the portfolios for 1400 (2020 to 2021) by each type of TOPSIS method according to the average mode of criteria.

Table 10.

The Recommendation Portfolios for 1400							
companies\Criteria Ave	Euclidean	Manhattan	Minkowski	Linear	Rumina	Deviation	Domain
Iran Mineral P.	0.10	0.11	0.24	0.10	0.10	0.10	0.10
Behbahan Cement	0.04	0.05	0.08	0.04	0.04	0.04	0.05
DPI Dadeh pardazi Iran co	0.06	0.06	0.02	0.06	0.06	0.06	0.06
Fanavaran Petr.	0.04	0.05	0.06	0.04	0.04	0.05	0.05
S*North Drilling	0.04	0.04	0.00	0.04	0.04	0.04	0.04
S*IRI Marine Co.	0.03	0.03	0.01	0.03	0.03	0.03	0.03
Butane Group	0.05	0.05	0.04	0.05	0.05	0.05	0.05
Shahroud Sugar	0.07	0.06	0.03	0.07	0.06	0.06	0.06
Yazd Jooshkab	0.06	0.07	0.22	0.07	0.06	0.06	0.06
Sahand Rubber	0.06	0.06	0.03	0.06	0.06	0.06	0.06
Sobhan Pharm.	0.06	0.06	0.04	0.06	0.06	0.06	0.05
Iran Mobil Tele	0.04	0.04	0.01	0.04	0.04	0.04	0.04
Chadormalu	0.05	0.05	0.03	0.05	0.05	0.05	0.05
Iran Khodro	0.05	0.04	0.02	0.05	0.05	0.04	0.04
Iran Mineral P.	0.06	0.06	0.04	0.06	0.06	0.06	0.06
Behbahan Cement	0.05	0.06	0.06	0.05	0.05	0.05	0.05
DPI Dadeh pardazi Iran co	0.04	0.04	0.02	0.04	0.05	0.05	0.05
Fanavaran Petr.	0.01	0.01	0.03	0.01	0.01	0.02	0.02
S*North Drilling	0.04	0.04	0.01	0.04	0.04	0.04	0.04
S*IRI Marine Co.	0.03	0.03	0.01	0.03	0.03	0.03	0.03

The Portfolios are Recommended for 1400 by TOPSIS types

Obviously, based on the result of this research, the best choice is Deviation for1400.

Conclusions

This paper tries to find the best performance of the TOPSIS method if changing some techniques that are used in TOPSIS with other ones. For this purpose, some distance measurement techniques and matrix normalization techniques are used. The decision matrix consists of twenty companies listed on theTehran Stock Exchange as alternatives, and three criteria are Return, Reliability, and Risk. The result of this research is determined in figure1. Between distance techniques, Euclidean is better than others. Between normalizing techniques, Deviation based on Average and Linear based on Per Year mode has better performance than other normalizing techniques. Deviation and Domain have better performance according to the calculation of criteria based on Average mode than other techniques. According to calculated criteria based on Per Year, Linear has better performance than others. The results demonstrate that the TOPSIS method performs better if deviation or domain normalizing methods are used based on Average mode instead of vector-normalizing. But Euclidean distance has the best performance between Manhattan and Minkowski. This research shows that changes in the calculation of TOPSIS have increased it's the efficiency of Tehran Stock Exchange.

The recommendation for more research is to compare this mode of TOPSIS with AHP and other MCDM methods and survey the performance of this method in other markets. change in the number of criteria or weight to criteria by other methods.

References

- Azar, A. "Extending and Developing the Shannon Entropy for Data Process in Content Analysis." *JOURNAL OF HUMANITIES*, vol. 11, no. 37–38, 2001, pp. 1–18, https://www.sid.ir/en/journal/ViewPaper.aspx?id=21699.
- B Paul E. Black, "Manhattan distance", *in Dictionary of Algorithms and Data Structures* [online], Paul E. Black, ed. 11 February 2019. (accessed TODAY) Available from: https://www.nist.gov/dads/HTML/manhattanDistance.html
- Brownlee, Jason. "4 Distance Measures of Machine Learning." *Machine Learning Mastery*, 2020, https://machinelearningmastery.com/distance-measures-for-machine-learning/.
- Lucid Content Team. "How Bas Can Use a Decision Matrix to Make Tough Choices". https://www.lucidchart.com/blog/how-to-make-a-decision-matrix
- Saul Mcleod. "Z-Score: Definition, Calculation and Interpretation". published May 17, 2019, pp.2,https://www.simplypsychology.org/simplypsychology.org-z-score.pdf
- Pashaki, Mohammadbagher, and Seyed Jafari. *An Integerated AHP, TOPSIS and SAW Method for Ranking the Mutual Funds: Evidence of Tehran Stock Exchange*. 2015.
- Pavić, Zlatko, and Vedran Novoselac. "Notes on TOPSIS Method." *International Journal of Research in Engineering and Science*, vol. 1, Jan. 2013, pp. 5–12. https://www.researchgate.net/publication/285886027_Notes_on_TOPSIS_Method
- Peshawa J. Muhammad Ali, Rezhna H. Faraj; "Data Normalization and Standardization: A Technical Report", *Machine Learning Technical Reports*, 2014, 1(1), pp 1-6. https://docs.google.com/document/d/1x0A1nUz1WWtMCZb5oVzF0SVMY7a_58KQulqQVT8LaVA/edit#
- Smith, Karl. "Precalculus: A Functional Approach to Graphing and Problem Solving". *Jones & Bartlett Publishers*, p. 8, ISBN 978-0-7637-5177-7
- Hosseinzadeh Lotfi,F and Fallahnejad, R. "Imprecise Shannon's Entropy and Multi Attribute Decision Making." *Department of Mathematics, Science & Research Branch, Islamic Azad University (IAU), Tehran, Iran, Entropy 2010, 12, 53-62; doi:10.3390/e12010053*

The article is submitted for the first time

Phone number: +989123029115

Company Name	Industry	Symbol
Iran Mineral P.	Production of zinc sheets and ingots	FRVR1
Behbahan Cement	Production of type I, II & V gray cement	SBHN1
DPI Dadeh pardazi Iran co	DPI can be present and act on all fields concerning information and communications technology	DADE1
Fanavaran Petr.	manufacturing, commissioning and extraction of methanol units, acetic acid and carbon monoxide to meet the needs of domestic and export target markets	PFAN1
S*North Drilling	a leading company in oil and gas well drilling	HSHM1
S*IRI Marine Co.	Purchasing, operating, renting, leasing and selling any type of ship and vessel for any purpose, including freight and passenger transport, refueling and the like. Undertaking any activity complementary to the activities subject to paragraph 1 above, such as the construction, operation or rental of port facilities, offshore structures and facilities related to the construction and repair of ships and vessels, and all types of cargo and passenger terminals.	KSHJ1
Butane Group	Production, import and purchase of various installation products, gas appliances, home appliances, parts and raw materials - manufacture and operation of production equipment and machinery - establishment, rent and management of factories in or outside the country - distribution, sale and export of products Above.	BOTA1
Shahroud Sugar	Production of sugar from sugar beet and refining of raw sugar to white sugar and selling them.	SHKR1
Yazd Jooshkab	Manufacturer of cables with rubber and silicone insulation	JOSH1
Sahand Rubber	Rubber liner - Conveyor belt - Roller cover - Rubber parts - Flooring	SHND1
Sobhan Pharm.	Pharmaceutical Holding	DSOB1
Iran Mobil Tele	The biggest mobile operator in the country in both call and mobile internet	HMRZ1
Chadormalu	The subject of the company is: a- Main topics - Exploration and exploitation of iron ore mines and production of concentrate from it and production of pellets, production of iron ore (lamp over), production of steel products b- Sub-topics - installation and commissioning, maintenance, repairs, inspection Technical, service of machinery equipment required by the company	CHML1
Iran Khodro	Establishment, construction and management of factories in any place, inside or outside the country in order to produce and supply all kinds of cars and means of transportation.	IKCO1
Khouz. Steel	The main topics include smelting, casting and rolling operations of ferrous metals and alloy steels to produce standard geometric sections. Sub-topics include supply and production of spare parts, renovation and factory management, business operations, investment in companies related to the subject of the company.	FKHZ1
S*I. N. C. Ind.	Exploration, extraction and exploitation of Iranian copper mines	MSMI1
Azar Refract.	Production of various shaped and amorphous refractory products	NSAZ1
S*Tehran Const.	Mass construction and real estate investments	NSTH1

MAPNA	Construction of power plant equipment and	MAPN1
S*Mellat Bank	1- Opening and maintaining current Gharz al-Hasna deposit accounts, savings and short-term and long-term investment deposit accounts and other similar accounts, and issuing various types of licensed cards and issuing various types of deposit certificates. 2- Granting all kinds of financial and credit facilities to natural and legal persons in the form of current laws of the country	BMLT1

Ներկայացվել է՝ 14.03.2022 թ.
Գրախոսվել է՝ 30.05.2022 թ.

ՌԴ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ ՍԻՐԻԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Մնացականյան Ս. Վ.
ի.գ.թ., դոցենտ
ԵՀ, Իրավագիտության ամբիոն
Մնացականյան Վ. Ս.
ուսանող
ԵՊՖՀ, Միջազգային հարաբերությունների Ֆակուլտետ,
Vahagnmnatsakanyan200@gmail.com

Ամփոփագիր

Սույն հոդվածի շրջանակներում հետազոտվել են Սիրիական հակամարտությունը, դրա պատճառները և ընթացքն ու կարգավորման հեռանկարները, ինչպես նաև Ռուսաստանի Դաշնության ազդեցությունն ու ներգրավվածությունը Սիրիական հակամարտությունում: Աշխատանքի շրջանակներում ուսումնասիրվել ու վերլուծության են ենթարկվել Սիրիական ճգնաժամում Ռուսաստանի ներգրավման պատճառները և վեր են հանվել Սիրիական ճգնաժամի կարգավորման համար Ռուսաստանի քաղաքականության առանձնահատկությունները: Ուսումնասիրությունների հիման վրա կատարվել են համապատասխան եզրահանգումներ ու ներկայացվել են Սիրիական հակամարտության կարգավորման համար նոր մոտեցումներ: Ռուսաստանի ներգրավումը Սիրիական ճգնաժամում պայմանավորված էր Ռուսաստանի Դաշնության աշխարհաքաղաքական նկրտումներով, ինչպես նաև ներկայումս տեղի ունեցող աշխարհաքաղաքական փոփոխություններով: Ներկայումս առկա աշխարհաքաղաքական իրավիճակի և միջազգային իրավահարաբերությունների առանձնահատկությունների վեր հանման տեսանկյունից Սիրիական հակամարտությունը ամփոփում է տարածաշրջանի և աշխարհի գերտերությունների արտաքին քաղաքականությունը, այդ իսկ պատճառով Սիրիական ճգնաժամում Ռուսաստանի ազդեցության ուսումնասիրությունները թույլ կտան պատկերացում կազմել նաև աշխարհաքաղաքական ներկայիս իրողությունների վերաբերյալ: Ի սկզբանե սոցիալական բնույթ ունեցող քաղաքացիական ցույցերը հանգեցրեցին էական փոփոխությունների տարածաշրջանում, որոնք յուրօրինակ դրսևորում ունեցան յուրաքանչյուր պետությունում. եթե Թունիսում և Եգիպտոսում սկզբնավորման դրդապատճառները գրեթե նույնանման էին, ապա Սիրիայում, Լիբիայում և Եմենում «Արաբական Գարունը» հանգեցրեց արյունալի քաղաքացիական պատերազմների, որոնք այդ երկրները կանգնեցրեցին ֆրագմենտացման իրական վտանգի առջև: Ինչպես նաև, «Արաբական Գարունը» ցույց տվեց աշխարհին, որ փափուկ ուժի ներքո քողարկվող ժողովրդավարության բռնի արտահանումը կարող է հանգեցնել հազարավոր զոհերի, ինչպես նաև միլիոնավոր քաղաքացիներ դարձան հումանիտար օգնության կարիքավորներ, որը հանգեցրեց Թուրքիայի և Եվրոպայի պատմության մեջ մեծագույն միգրացիոն ճգնաժամներից մեկին:

Հիմնաբառեր. Սիրիական հակամարտություն, աշխարհաքաղաքականություն, Ռուսաստան, արտաքին քաղաքականություն, ճգնաժամ:

Ներածություն

Թեմայի արդիականությունը. Աշխարհաքաղաքական ներկայիս փոփոխությունների պայմաններում, երբ Արևմուտքի և Ռուսաստանի միջև Ուկրաինական պատերազմի պատճառով ընթանում է հակամարտություն, կարևոր նշանակություն է ձեռք բերում Սիրիական հակամարտությունում Ռուսաստանի դերակատարության ուսումնասիրությունը, քանի որ ԱՄՆ-Ռուսաստան դիմակայությունն առկա է եղել նաև Սիրիայում: Բացի շարադրվածից հարկ ենք համարում նշել, որ Սիրիական ճգնաժամում Ռուսաստանի մասնակցության ուսումնասիրությունը կարևոր նշանակություն ունի նաև Հայաստանի արտաքին քաղաքականության մշակման և կենսագործման ոլորտում: Սիրիական ճգնաժամում Ռուսաստանի մասնակցությունը պայմանավորված էր այն հանգամանքով, որ ՌԴ արտգործնախարար Լավրովը ելույթի ժամանակ խոսել է բազմաբևեռ աշխարհակարգի ձևավորման մասին՝ նշելով, որ Արևմուտքը չի համակերպվում համաշխարհային գործերում դարեր շարունակ ունեցած գերիշխանության կորստի հետ: Ինչպես ՉԺՀ-ն, այնպես էլ Ռուսաստանը պաշտպանում են ՄԱԿ-ի նորմերի պահպանման գաղափարը, հանդես են գալիս պրոտեկցիոնիզմի, առևտրային պատերազմների, միակողմանի պատժամիջոցների, դոլարի ընձեռած հնարավորությունների չարաշահման ամերիկյան քաղաքականության դեմ: Ներկայացված հանգամանքներով էլ պայմանավորված է այն հանգամանքը, որ Ռուսաստանը Սիրիական հակամարտությունում սկսեց ունենալ ակտիվ դերակատարություն, քանի որ Սիրիայում բախվում են աշխարհի գերտերությունների աշխարհաքաղաքական շահերը:

Սույն աշխատանքի նպատակն է վերլուծության ենթարկել Սիրիական ճգնաժամում Ռուսաստանի մասնակցության աշխարհաքաղաքական պատճառները, ինչպես նաև ուսումնասիրել ու քննարկել Սիրիայում Ռուսաստանի դերակատարությունը և վեր հանել Սիրիական ճգնաժամի իրական դրդապատճառները և «Արաբական Գարնան» ազդեցությունը:

Աշխատանքի ուսումնասիրության համար կիրառվել են գիտական ճանաչողության և հետազոտության հետևյալ մեթոդները՝ վերլուծության, ընդհանրացման, պատմական, համեմատական, համակարգակառուցվածքային, կոնտենտ անալիզ և այլն:

2011 թվականի գարնանը Սիրիայում քաղաքացիական առճակատման հենց սկզբից Ռուսաստանը դիվանագիտական աջակցություն ցուցաբերեց Բաշար ալ-Ասադին՝ արգելափակելով (Չինաստանի հետ միասին) ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի արևմտյան և արաբական երկրների հակասիրիական բանաձևերի նախագծերը, ինչը ենթադրում էր Բաշար ալ-Ասադի կառավարության դեմ պատժամիջոցների սահմանումը կամ նույնիսկ ռազմական միջամտությունը: Ռուսաստանը սիրիական կառավարությանն աջակցել է զենքի, ռազմական տեխնիկայի և զինամթերքի մատակարարման, ինչպես նաև մասնագետների վերապատրաստման և ռազմական խորհրդատուների տրամադրման հարցում: 2012 թվականի հունվարի վերջին արևմտյան և արաբական երկրները պատրաստել են ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի՝ 2011 թվականի դեկտեմբերի 15-ի ռուսական բանաձևի այլընտրանքային նախագծը: Ի տարբերություն ռուսականի, այս բանաձևը չի դատապարտում հակամարտության երկու կողմերի բռնությունները և չի բացառում ռազմական միջամտությունը: Ռուսաստանը նշել է, որ չի աջակցի այս նախագծին և կշարունակի պնդել սեփական տարբերակի ընդունումը: Փետրվարի 4-ին Ռուսաստանը և Չինաստանը վետո դրեցին Անվտանգության խորհրդի բանաձևի վրա, որը կոչ էր անում Բաշար ալ-Ասադին կատարել Արաբական լիգայի խա-

ղաղության ծրագիրը: Փետրվարի 7-ին ՌԴ ԱԳ նախարար Ս.Վ.Լավրովը ՌԴ արտաքին հետախուզական ծառայության տնօրեն Միխայիլ Ֆրադկովի հետ հանդիպել է նախագահ Ասադի հետ, որից հետո նրանք հայտնել են, որ նախագահ Ասադը համաձայն է սահմանադրության և ընտրական գործընթացի բարեփոխման անհրաժեշտությանը: Միևնույն ժամանակ, ռուսական կողմը հայտարարեց, որ միայն սիրիական կառավարությունն իրավունք ունի փոխել իր ժողովրդի ճակատագիրը՝ առանց արտաքին միջամտության: Մարտին Լավրովը հեռուստատեսային հարցազրույցում ասաց, որ Սիրիայի ղեկավարությունն անտեսել է Ռուսաստանի նախազգուշացումները և թույլ է տվել «այնքան սխալներ», որոնք երկիրը հասցրել են քաղաքացիական պատերազմի շեմին [*Remarks With Russian Foreign Minister*]: Ապրիլի 16-ին Ռուսաստանի Դաշնության արտաքին գործերի փոխնախարար Միխայիլ Բոգդանովը և այլ ռուս դիվանագետներ հանդիպեցին սիրիական ընդդիմության ներկայացուցիչ Հասան Աբդուլ ալ-Ազիմին՝ «Ժողովրդավարական փոփոխությունների ազգային համակարգող կոմիտե» ընդդիմադիր խմբի ղեկավարին: Միևնույն ժամանակ, 2012 թվականի գարնանը ՄԱԿ-ի և Արաբական երկրների լիգայի հատուկ բանագնաց Քոֆի Անանը մշակեց Սիրիայում խաղաղ կարգավորման ծրագիր, որը, մասնավորապես, նախատեսում էր դադարեցնել զինված բռնությունը բոլոր կողմերից, որոնք գտնվում են հատուկ հսկողության ներքո: ՄԱԿ-ի մեխանիզմը վերաբերվում էր տուժածներին մարդասիրական օգնություն տրամադրելուն և ներսիրիական քաղաքական երկխոսության մեկնարկին: Ռուսաստանի և Չինաստանի պնդմամբ հանվել է պլանը չկատարելու համար Սիրիայի դեմ միջազգային պատժամիջոցներ կիրառելու դրույթը: Ապրիլի 21-ին ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը հավանություն է տվել Սիրիայում դիտորդական առաքելության (UNSMIS) ստեղծմանը և Սիրիայի մոտ 300 անզեն դիտորդների տեղակայմանը: ՄԱԿ-ում Ռուսաստանի ներկայացուցիչ Վիտալի Չուրկինը հայտարարեց խաղաղության ծրագրին Ռուսաստանի աջակցության մասին:

Հուլայում խաղաղ բնակիչների ջարդերից հետո (2012 թ. մայիս) Ռուսաստանի արտգործնախարար Սերգեյ Լավրովը հայտարարեց, որ «կառավարությունն է կրում կատարվածի հիմնական պատասխանատվությունը», և «ցանկացած կառավարություն ցանկացած երկրում պատասխանատու է իր քաղաքացիների անվտանգության համար»: Ռուսական արձագանքը դիտվեց որպես Սիրիայի կառավարության դատապարտում: Սակայն Լավրովը հայտարարեց նաև, որ ապստամբները նույնպես պատասխանատու են կատարվածի համար: Ավելի ուշ, երբ ՄԱԿ-ի կողմից Սիրիայում միջամտելու մասին բանավեճը սրվեց, Ռուսաստանը փոխեց իր դիրքորոշումը՝ հրաժարվելով դատապարտել Ասադին: 2012 թվականի հունիսին Ռուսաստանը մեղադրեց ԱՄՆ-ին երկակի ստանդարտների մեջ՝ ասելով, որ ԱՄՆ-ն զենք է վաճառում Բահրեյնին (որտեղ նաև ներքաղաքական կոնֆլիկտի սրացում է եղել) և միևնույն ժամանակ քննադատում է Ռուսաստանին նախագահ Ասադին՝ զենքով աջակցելու մեջ: Ռուսաստանը նաև ասաց, որ պահանջելով դադարեցնել ռուսական զենքի մատակարարումները Ասադի կառավարությանը՝ ԱՄՆ-ն զենք է մատակարարում ապստամբներին՝ Թուրքիայի միջոցով, ինչը անուղղակիորեն խաթարում է Ռուսաստանի ազգային անվտանգությունը: BBC-ի թղթակից Սթիվ Ռոզենբերգը նշել է, որ Ռուսաստանը տեսնում է սիրիական քաղաքացիական պատերազմի երկու արդյունքներից միայն մեկը. կա՛մ Ասադը կմնա իշխանության ղեկին, որը կապահովի ռուսական ազդեցությունը տարածաշրջանում, կա՛մ արմատական իսլամիստները կհաղթեն, ինչը ահաբեկչական սպառ-

նալիք կստեղծի Ռուսաստանի համար: Հուլիսին Ռուսաստանն ու Չինաստանը վետո դրեցին Սիրիայի վերաբերյալ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բանաձևի վրա, որը կոչ էր անում պատժամիջոցներ կիրառել Բաշար ալ-Ասադի կառավարության դեմ, եթե նա չդադարեցնի ծանր զենք կիրառել բնակչության դեմ: ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Գերմանիայի և Պորտուգալիայի կողմից ներկայացված փաստաթուղթը Մոսկվայում և Պեկինում համարվել է անհավասարակշիռ և բխում է հակամարտող կողմերից միայն մեկի՝ ապստամբների շահերից [*Գրիգորյան 52*]:

Ռուսաստանի ղեկավարությունը ի սկզբանե հստակ դիրքորոշում է ընդունել Սիրիայի հարցում՝ չնայած ԱՄՆ-ի և Եվրոպայի հետ սուր տարաձայնություններին: Հրաժարվելով օգտագործել իր ազդեցությունը նախագահ Ասադի վրա ճնշում գործադրելու համար և կոչ անելով երկու պատերազմող կողմերին աշխատել միասին՝ հասնելու ազգային հաշտեցման՝ Ռուսաստանի ղեկավարությունը վստահ էր, որ ինքը հավասարապես և հավասարակշռված դիրքերից է խոսում: Ռուսաստանի դիրքորոշումը Սիրիայի հարցում որոշվում է աշխարհակարգի վերաբերյալ նրա պատկերացումներով, ըստ որի ուժի կիրառումը պետք է իրականացվի ՄԱԿ-ի վերահսկողության ներքո, իսկ արտաքին միջամտության պատճառով ռեժիմի փոփոխությունն անընդունելի է: Ռուսաստանի ղեկավարությունը «Արաբական Գարունը» համարեց որպես իսլամիստական հեղափոխություն, որտեղ ծայրահեղականներն առաջին պլան են մղվում: Այն վախենում էր Սիրիայում հակամարտության արմատականացումից և դրա տարածումից դեպի այլ երկրներ:

2014 թ. սիրիական զարգացումներին առնչվող մեծ տերությունների վարքագծում փոփոխություն նկատվեց, ինչը հիմնականում պայմանավորված էր երկրի զգալի հատվածում անկանխատեսելի, անվերահսկելի և վտանգավոր իրավիճակով: Դա արտահայտվեց սիրիական հակամարտության մեջ ԱՄՆ-ի և Ռուսաստանի անմիջական ներքաշմամբ: ԱՄՆ-ի և նրա դաշնակից երկրների ռազմաօդային ուժերը 2014 թ. սկսեցին պարբերաբար ավիահարվածներ հասցնել ընդդիմադիր իսլամական ծայրահեղական խմբավորումներին [*A Statement by President Obama*]: Ցամաքում ԱՄՆ-ն սկսեց փնտրել դաշնակիցներ, և ընտրությունը կանգնեց Սիրիայի քրդերի վրա: Սիրիայում իրավիճակը կտրուկ փոխվեց, երբ 2015 թ. սեպտեմբերին այդ երկրի կառավարությունը ընդդիմադիր խմբավորումների դեմ պայքարելու համար ռազմական օգնություն խնդրեց Ռուսաստանից: 2013 թ. մայիսին հանդիպում տեղի ունեցավ ԱՄՆ պետքարտուղար Ջոն Քերիի և ՌԴ արտգործնախարար Սերգեյ Լավրովի միջև: Այդ հանդիպման արդյունքում որոշում կայացվեց բանակցությունների նոր փուլ սկսել Սիրիայի նախագահ Բաշար ալ-Ասադի հետ, որն ուղղված կլինի 2012 թ. ընդունված Սիրիայի հարցերով Ժնևյան կոմյունիկեի իրականացմանը: Այդ կոմյունիկեում նախատեսվում է ստեղծել անցումային իշխանություն՝ բաղկացած ներկա վարչակարգի և ընդդիմության ներկայացուցիչներից, ընդ որում՝ Սիրիայի հասարակության բոլոր շերտերը պետք է ընդգրկված լինեն այսպես կոչված «Ազգային երկխոսության» գործընթացում: Հարկ եղած դեպքում նախատեսվում է վերանայել երկրի Սահմանադրությունը, ինչպես նաև իրավական համակարգը:

2015 թվականի սեպտեմբերին Դաշնային խորհուրդը, ի պատասխան Սիրիայի նախագահ Բաշար ալ-Ասադի խնդրանքի, համաձայնեց ռուսական զինված ուժերի օգտագործմանը Սիրիայում ահաբեկչության դեմ (այսպես կոչված «Իսլամական պետություն») դեմ պայքարում [*Կարապետյան 445*]: 2015 թվականի սեպտեմբերի 30-ին Սիրիայում Ռուսաստանի ռազմաօդային ուժերի ավիացիոն խումբը սկսեց գրոհել հակակառավա-

րական ուժերի թիրախները: Միաժամանակ ԱՄՆ վարչակազմը մեղադրում էր Ռուսաստանին այն բանում, որ հակամարտությանը նրա մասնակցության նպատակը ոչ թե Իսլամական պետության դեմ պայքարն է, այլ Բաշար Ասադին իշխանության պահելուն օգնելը: Ռուսաստանի անմիջական մասնակցությունը պատերազմին՝ Սիրիայում, դարձել է Ռուսաստանի արտաքին քաղաքականության նորագույն պատմության կարևորագույն իրադարձությունը, քանի որ նախկինում երբեք Ռուսաստանի զինված ուժերն անմիջականորեն չեն մասնակցել արաբական երկրների տարածքում ռազմական գործողություններին: Մինչ այս շրջանը Մերձավոր Արևելքի հակամարտություններին Ռուսաստանի ներգրավվածությունը միայն անուղղակի էր: «Իսլամական պետության» դեմ կանխարգելիչ պատերազմ սկսելով՝ Ռուսաստանը միաժամանակ դարձել է Սիրիայում քաղաքացիական պատերազմի և Մերձավոր Արևելքում մրցակից տարածաշրջանային տերությունների աշխարհաքաղաքական առճակատման մասնակիցը [*Գրիգորյան, 153*]: Ռուսաստանի մուտքը սիրիական պատերազմ տեղի ունեցավ ԱՄՆ-ի հետ 2014 թվականին սկսված սուր առճակատման ֆոնին:

Այսպիսով, խոսքը ոչ այնքան երկրում և ընդհանուր առմամբ տարածաշրջանում ազդեցության համար երկու տերությունների մրցակցության, որքան համաշխարհային կարգի նոր հիմքերի ստեղծման մասին է: Սիրիայում Ռուսաստանի Դաշնության ռազմական գործողությունը, որն իրականացվել է սիրիական ուղղությամբ Ռուսաստանի դիվանագիտական ջանքերին զուգահեռ, դիտվում է որպես Ռուսաստանի, որպես մեծ տերության, համաշխարհային ասպարեզում գործելու կարողության փորձություն, որը կարող է վճռականորեն ազդել ռազմական գործողությունների ընթացքի վրա [*Nikolaos Van Dam, Destroying a Nation*]:

Եզրակացություն

Ամփոփելով սույն հոդվածի շրջանակներում իմ կողմից իրականացված ուսումնասիրություններն ու կատարված վերլուծությունները, առանձնացրել եմ ներքոշարադրյալ եզրահանգումները.

1. Սիրական ճգնաժամի առաջացման և հետագա գործընթացների վրա էական ազդեցություն ունեցան արաբական երկրներում ծավալված հեղափոխական շարժումները, ինչպես նաև Մերձավոր Արևելքում տեղի ունեցող աշխարհաքաղաքական գործընթացները: Բացի շարադրվածից, կարծում ենք, որ Սիրիական ճգնաժամի խորացման, և հետագայում, պատերազմի սկզբնավորման համար, էական ազդեցություն ունեցավ Սիրիայում միջազգային հակամարտող կողմերի ներգրավումը, որտեղ բախվեցին գերտերությունների շահերը: Այդ ամենի համար հող հանդիսացան Սիրիական ժողովրդի մեջ առկա անմիասնականության դրսևորումները, ինչը խթանեց գերտերությունների շահերի բախմանը: Այլ կերպ ասած՝ եթե սիրիական ժողովուրդը դրսևորեր միասնական կամք պետական իշխանության ձևավորման ոլորտում, կարծում ենք, գերտերությունների շահերի բախման համար պայմաններ չէին ստեղծվի: Ինչ վերաբերում է «Արաբական Գարնան» բուն պատճառներին, ապա անհրաժեշտ է արձանագրել, որ եթե Թունիսում և Եգիպտոսում հեղափոխության պատճառները գրեթե նույնանման էին, ապա Լիբիայում, Եմենում և Սիրիայում թե՛ ներքին և թե՛ արտաքին պայմաններն ու հիմքերը զգալիորեն տարբեր էին: «Արաբական Գարունը» Մերձավոր Արևելքում հանգեցրեց հետևյալ լրջագույն աշխարհաքաղաքական փոփոխությունների: «Արաբական Գարնանը» հաջորդեցին քաղաքացիական պատերազմները Լիբիայում, Սիրիայում և Եմենում՝ վերջիններիս կանգնեցնելով տրոհման և ֆրագմենտացման իրական հեռանկարի առջև: Տարածաշրջանային քա-

ղաքականության առաջնագծում հայտնվեց Քրդական հարցը, հատկապես, Սիրիայում, որտեղ քաղաքացիական պատերազմի արդյունքներով քրդերն Արևմտյան Քրդստանի (Ռոժավա) ինքնավարություն ստեղծելու հնարավորություն ստացան, ինչը դրդում է Թուրքիային ուղղակի ռազմական միջամտություն իրականացնել Սիրիայում՝ նշված զարգացումը թույլ չտալու համար: Հակառակ դեպքում, երկարատև հեռանկարում այն կարող է վերածվել Թուրքիայի ապակայունացման հիմնական գործոնի, ինչն էլ կարող է հանգեցնել անկանխատեսելի հետևանքների՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Սիրիայի քրդերը սահմանից այն կողմ պայքարող իրենց ցեղակիցների հետ սերտորեն կապված են ոչ միայն արյամբ, այլև՝ քաղաքականապես: Խթանեց Իսրայելի և արաբական երկրների, հատկապես Սաուդյան Արաբիայի ու Ծոցի այլ երկրների (ԱՄԷ, Օման) միջև գործակցությունը, որի հիմնական թիրախն Իրանն ու տարածաշրջանում նրա դաշնակիցներն են՝ Սիրիան, Լիբանանը, Հեզբոլլահը, Պաղեստինյան Համասը, Իրաքում և Բահրեյնում շիական մեծամասնությունները, Եմենի հուսիները: «Արաբական Գարունը» Ռուսաստանի Դաշնությանը «վերադարձրեց» Մերձավոր Արևելք, որտեղ ԽՍՀՄ փլուզումից հետո ԱՄՆ-ն ստանձնել էր միակ գերտերության դերը: Սիրիական ճգնաժամում Մոսկվան դարձավ արտաքին կարևոր ուժերից մեկը, որը պաշտպանեց իշխող վարչակարգն ու հնարավորություն տվեց Բաշար ալ-Ասադին շարունակելու պայքարը:

2015 թ. սեպտեմբերի վերջին ՌԴ-ն ակտիվ օդային գործողություններով զգալի օգնություն ցուցաբերեց Սիրիայի ազգային բանակին ու երկրի իշխանությունների հետ միասին պայքարող մյուս ուժերին՝ իսլամիստների առաջխաղացումը կասեցնելու և աստիճանաբար նրանց գրաված տարածքներն ու քաղաքները Սիրիայի իշխանությունների վերահսկողությանը վերադարձնելու գործում: Սկսվեց սիրիական պատերազմի նոր փուլը, որը նշանավորվեց կառավարական ուժերի հարձակմամբ Սիրիայի հյուսիսից՝ Լաթակիայի լեռնային հյուսիսարևմտյան շրջաններից մինչև Հալեպի մերձակա շրջանները: Մինչև 2016 թ. ընդդիմադիր չափավոր խմբավորումների հետ կնքված զինադադարը հնարավորություն տվեց կառավարական ուժերին կենտրոնացնելու ուժերը «Իսլամական պետության» դեմ պայքարում և ազատագրելու Պալմիրան, Հոմսը, Հալեպը և այլ կարևորագույն շրջաններ: 2015 թ. վերջից ներսիրիական, մասնավորապես ներիշխանական զարգացումներում ևս նկատվեցին փոփոխություններ, որոնք հիմնականում պայմանավորված էին սիրիական հակամարտության ընթացքով՝ Ռուսաստանի ներքաշմամբ և, ընդհանրապես, արտասիրիական ուժային կենտրոնների ներգրավվածության ակտիվացմամբ: Այս իրողությունը որոշ չափով թեթևացրեց սիրիական իշխանությունների դրությունը, որը, Սիրիայում տեղի ունեցող ռազմական գործողությունների վրա կենտրոնանալուց զատ, հնարավորություն տվեց որոշ չափով ուշադրություն դարձնելու նաև ներսիրիական հասարակական, քաղաքական, տնտեսական, ֆինանսական իրավիճակին ու փոխառնչություններին՝ որոշակի փոփոխություններ մտցնելով և նոր խաղի կանոններ սահմանելով արդեն ձևավորված ու ձևավորվող հարաբերություններում:

Գրականության ցանկ

1. Գրիգորյան Ս., Իսլամական պետություն. ակունքներից մինչև խալիֆայության հռչակում, Եր., ԵՊՀ հրատ., 2016, 238 էջ:
2. Գրիգորյան Ս., Իսլամական արմատականությունը Կովկասում (ծայրահեղ արմատական դրսևորումներն ու ներկա միտումները), Երևան, 2017, 125 էջ:
3. Կարապետյան Ռ., Արաբական երկրների նոր և նորագույն պատմություն: Բուհական դասագիրք, Երևան, 2019, 528 էջ:
4. A Statement by President Obama on Syria, 13.03.2022, http://www.whitehouse.gov/blog/2011/04/22/statement-president-obama-syria
5. Remarks With Russian Foreign Minister Sergey Lavrov, 05.03.2022, http://www.state.gov/secretary/remarks/2013/05/209117.htm
6. Nikolaos Van Dam, Destroying a Nation. The Civil War in Syria, I.B. Tauris, London, 2017: 28.03.2022, www.iamsyria.org/death-tolls.html

RUSSIAN FOREIGN MIDDLE EAST POLICY IN THE CONTEXT OF THE SYRIAN CONFLICT

Mnatsakanyan S. V.
PhD in Law, Associate Professor
EUA, Chair of Jurisprudence.
Mnatsakanyan V. S.
Student
YSU, Faculty of International Relations
vahagnmnatsakanyan200@gmail.com

Abstract

This article adresses the Syrian conflict, its causes, process and prospects for settlement, as well as the influence of the Russian Federation and its involvement in the Syrian conflict. The reasons for Russia's involvement in the Syrian crisis, the specifics of Russia's policy for resolving the Syrian crisis have been analyzed. New approaches to the settlement of the Syrian conflict were presented based on the conclusions of the research. Russia's involvement in the Syrian crisis was due to the geopolitical aspirations of the Russian Federation, as well as the current geopolitical shifts. A thorough analysis of the current geopolitical situation and the peculiarities of international legal relations proves that the Syrian conflict the foreign policy of the region, the world superpowers, and therefore the study of Russia's influence in the Syrian crisis will provide an insight into the current geopolitical realities. Initially, civil demonstrations of social nature led to significant changes in the region, which were specific in each country. If in Tunisia and Egypt the motives for the origins were almost the same, in Syria, Libya and Yemen the Arab Spring led to bloody wars, which put those countries in real danger of fragmentation. So the Arab Spring showed the world that the forced export of democracy under soft power could lead to thousands of casualties, need humanitarian aid, and migration crises in Turkish and European history.

Keywords: Syrian conflict, geopolitics, Russia, foreign policy, crisis.

Ներկայացվել է՝ 01.04.2022 թ.
Գրախոսվել է՝ 23.05.2022 թ.

ԵՐԿՈՒ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ ՈՐՊԵՍ ՊԱՂԵՍՏԻՆՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔ

Հովհաննիսյան Ա. Հ.
պ.գ.թ., դոցենտ,
ՀԵՀ ԳՄ, ՇՊՀ
artakh76@mail.ru

Ամփոփագիր

Պաղեստինում բնակվող երկու ժողովուրդների՝ արաբների և հրեաների միջև հարյուր տարուց ավել շարունակվող հակամարտության կարգավորման հարցում եղել են տարբեր մակարդակների բազմաթիվ առաջարկություններ, ծրագրեր, ճանապարհային քարտեզներ, որոնք սակայն չեն կարողացել լուծել հակամարտությունը: Առաջ քաշված ծրագրերի շարքում կարևորվել են անգլիական, ամերիկյան, խորհրդային և արաբական ծրագրերը: Կարգավորման սկզբունքներից մեկն էլ եղել է Պաղեստինում երկու՝ արաբական և հրեական պետությունների ստեղծման հայեցակարգը, որը թերևս ամենաշատ քննարկված տարբերակներից մեկն է: Դա բացատրվում է նախ և առաջ այն հանգամանքով, որ ի սկզբանե և՛ արաբներին, և՛ հրեաներին խոստացվել էր օժանդակություն ազգային պետությունների ստեղծման հարցում: Բացի այդ, ՄԱԿ-ի շրջանակներում ընթացող բազմաբնույթ քննարկումների արդյունքում որոշվեց Պաղեստինում ստեղծել արաբական և հրեական պետություններ: Արաբահրայելական պատերազմը 1948-1949թթ., ինչպես նաև արաբական երկրների դիրքորոշումը փաստացի խանգարեցին Պաղեստինում արաբական պետության ստեղծմանը: Հետագա արաբահրայելական պատերազմները՝ 1967թ և 1973թ., ավելի խորացրեցին հակամարտությունը՝ Պաղեստինում արաբական պետության ստեղծումը դարձնելով քիչ հավանական: Այդուհանդերձ, մերձավորարևելյան խաղաղության գործընթացի կարևորագույն և հիմնարար սկզբունքներից մեկը մնաց Պաղեստինում արաբական պետության ստեղծումը, որը իր դրսևորումը ստացավ նախ 1991թ. Մադրիդի, ապա Օսլոյի 1993 և 1999թթ համաձայնագրերի արդյունքում ինքնավարության ստեղծմամբ՝ հեռանկարում անկախ պետության վերածվելու ակնկալիքով: Չնայած ցայսօր ստեղծված չէ Պաղեստինյան արաբական պետությունը, սակայն հարցը շարունակում է մնալ բանակցային սեղանին:

Հիմնաբառեր. *Պաղեստինի բաժանում, երկու պետությունների ձևավորում, մեծամասնության ծրագիր, փոքրամասնության ծրագիր, ՊԱԿ:*

Ներածություն

Առաջին աշխարհամարտի ընթացքում և արաբները, և հրեաները հույս ունեին Պաղեստինում ստեղծել իրենց անկախ պետությունները: Հրեաները իրենց հույսը կապել էին 1917թ. նոյեմբերի 2-ին Մեծ բրիտանիայի արտաքին գործերի նախարար Բալֆուրի հռչակագրի հետ [*Khalidi,174*], որով աջակցություն էր հայտնվում Պաղեստինում հրեական ժողովրդի համար ազգային օջախ ստեղծելու գաղափարին, ճանաչելով ոչ հրեական համայնքի իրավասությունները Պաղեստինում» [*Jeffries,174*]: Իսկ արաբները հույս էին կապել Մեքքայի շերիֆ Հուսեյնի և անգլիական զոր-

քերի հրամանատար Հենրի Մակմահոնի միջև 1915թ. հոկտեմբերի 24-ին կնքված պայմանագրի հետ [*Binationalism Not Partition, p.647*], որի համաձայն ստեղծվում էր արաբական անկախ թագավորություն՝ Պաղեստինով հանդերձ: Ըստ էության խաբելով 2 կողմին էլ Մեծ բրիտանիան 1920թ. Պաղեստինում հաստատեց իր մանդատը, իսկ ՄԱԿ-ի ԳԱ 1947թ. նոյեմբերի 29-ի որոշումով [*Report To The General Assembly Of The UN*] Պաղեստինը բաժանվեց հրեաների և արաբների միջև, վերջիններս էլ արաբա-իսրայելական պատերազմների պատճառով զրկվեցին իրենց հատկացված տարածքներից:

Ներկայացնել արաբաիսրայելական հակամարտության կարգավորման տարբերակներից մեկը՝ Պաղեստինում երկու պետությունների ստեղծման սկզբունքի հիման վրա, ցույց տալ դրան նպաստող և խոչընդոտող հանգամանքները: Հակամարտության լուծված չլինելու պարագայում, այս սկզբունքի կիրառման ճանապարհով համապարփակ և վերջնական խաղաղության հասնելը շարունակում է մնալ արդիական:

Խնդրո առարկա հարցով զբաղվել են հայ արաբագետներ Ե. Աբգարյանը, Ն. Հովհաննիսյանը, Ռ. Կարապետյանը, Հ. Գրիգորյանը, Շ. Կարամանուկյանը, իսկ օտար հեղինակներից Ե. Պրիմակովը, Օվչիննիկովը, Զվյագելսկայան, Ջ Ձեֆրին, Թ. Ուոլկերը, Խ. Մուհամմադը, Ռ. Սլաթերը, Վ. Խալիդին և այլոք:

Փաստացի, Պաղեստինը՝ հրեաների և արաբների միջև բաժանելու գաղափարը ծագեց բրիտանական մանդատի ժամանակաշրջանում, 1936-1939թթ արաբական ապստամբության ընթացքում, երբ 1936թ բրիտանական կառավարությունը հատուկ հանձնաժողով ուղարկեց Երուսաղեմ՝ լորդ Ռ.Փիլի գլխավորությամբ, որը տեղում իրավիճակը ուսումնասիրելուց հետո խորհուրդ տվեց Պաղեստինը բաժանել 2 պետությունների: Հանձնաժողովի առաջարկներին համապատասխան՝ հրեական պետության տարածքը սահմանափակվում էր Հայֆա-Յաֆա գծից հարավ ընկած հատվածով և Գալիլեայի շրջանի ափամերձ հարթավայրով, բացառությամբ Երուսաղեմի միջանցքի՝ Յաֆա, Լիդա և Ռամլե քաղաքների հետ միասին, որոնք մնում էին բրիտանական մանդատի վերահսկողության տակ: բրիտանական կառավարության հայտարարության մեջ ասվում էր, որ բաժանումը կապահովի արաբներին անկախությամբ, իսկ հրեաներին՝ ազգային օջախով, որը կվերածվի հրեական պետության [*John, Hadawi, 275*]: Նմանօրինակ բաժանումը կտրականապես մերժվեց արաբների կողմից, որոնք համարում էին, որ այդ դեպքում իրենց տարածքների մի մասի վերջնականապես կկորցնեն: Սիոնիստական կոնգրեսը 1937թ Ցյուրիխում լիազորեց Սիոնիստական կազմակերպության ղեկավարությանը բանակցություններ վարել բրիտանական կառավարության հետ հրեական պետության հնարավոր ստեղծման պայմանների շուրջ: 1937թ սեպտեմբերին Ազգերի լիգայի խորհուրդը, քննարկելով այս հարցը, առաջարկեց բրիտանական մանդատային իշխանություններին շարունակել «Պաղեստինի կարգավիճակի ուսումնասիրությունը՝ կենտրոնանալով տարածքի բաժանման տարբերակի վրա [*John, Hadawi, 277*]:

Երկրորդ աշխարհամարտը ձգձգեց գործընթացը, որից հետո 1946թ. ապրիլին ստեղծվեց Պաղեստինի հարցերով զբաղվող անգլո-ամերիկյան կոմիտե, որը մերժեց Պաղեստինի բաժանումը՝ որպես հարցի լուծման ուղի և առաջարկեց տարածքը ՄԱԿ-ի հովանավորության տակ դնելը, մինչև անհանդուրժողականությունը արաբների և հրեաների միջև վերանա» [*Department of State, Anglo-American Committee of Inquiry*]: Սակայն, 1946թ. հոկտեմբերին տրումենը հայտարարեց, որ «հրեական պետության ստեղծումը թույլատրելի է Պաղեստինի այն հատվածում, որը գտնվում է հրեական գաղութաբնակների

տնտեսական և քաղաքական ոլորտում: ԱՄՆ-ը առաջարկեց Պաղեստինը բաժանել արաբական և հրեական ինքնուրույն պետությունների: Անգլիական նախագիծը նախատեսում էր ստեղծել Պաղեստինյան ֆեդերացիա՝ բաղկացած 4 նահանգներից՝ արաբական, հրեական /որն ունենալու էր մասնակի ինքնուրույնություն/ Նեգև և Երուսաղեմ»: [*Roosevelt, 516*] 1947թ. սկզբի տվյալներով Պաղեստինում ապրում էր 1.972.560 մարդ, որից 1.203.780-ը արաբներ էին, 145.060-ը՝ քրիստոնյաներ, 15490-ը՝ դրուզներ և 608.230-ը՝ հրեաներ [*Khalidi, 696*]:

Իր հերթին պաղեստինյան հարցերով ՄԱԿ-ի հատուկ հանձնաժողովը առաջ քաշեց երկու ծրագրեր: Առաջինը՝ «մեծամասնության ծրագիրը» [*Report to The General Assembly By The UN Special Committee on Palestine*] նախատեսում էր Պաղեստինը տնտեսական միասնության պահպանման հիմքի վրա բաժանել արաբական և հրեական ինքնուրույն պետությունների՝ Երուսաղեմը թողնելով միջազգային հսկողության տակ: Երկրորդը՝ «փոքրամասնության ծրագիրը», նախատեսում էր ստեղծել միասնական պաղեստինյան պետություն՝ կազմված 2 ինքնավար մասերից, Երուսաղեմ մայրաքաղաքով:

1947թ ՄԱԿ-ի ԳԱ II նստաշրջանում ձայների մեծամասնությամբ ընդունվեց 181 (II) բանաձեւը, որը նախատեսում էր Պաղեստինի բաժանում՝ արաբական (Պաղեստինի 42,9%-ը), հրեական՝ (տարածքի 56,5%-ը) պետությունների: [*Muhammad, 6-23*] Երուսաղեմը որպես հատուկ տարածքային միավորում՝ corpus separatum ստանում էր միջազգային կարգավիճակ: 1948թ. սեպտեմբերի 11-ին ՄԱԿ-ի 194-րդ բանաձևը կրկին հաստատեց Երուսաղեմի միջազգային կարգվիճակը: [*Պրիմակով, 125*] Բանաձևին կողմ քվեարկեցին 33 երկիր, այդ թվում նաև ԱՄՆ-ը և ԽՍՀՄ-ը, դեմ քվեարկեցին 14 պետություն, իսկ 10-ը՝ այդ թվում նաև Անգլիան, ձեռնպահ մնացին: [*Roosevelt, 13-16*] Առաջարկվող արաբական պետության մեջ ապրում էին 811.000 արաբ և 10.000 հրեա, իսկ հրեական պետության մեջ՝ 499.000 հրեա և 435.000 արաբ [*Muhammad,6-23*]: Երուսաղեմում բնակչության թիվը կազմում էր 205.000 մարդ, որից 105.000-ը արաբ, իսկ 100.000-ը հրեա: Բանաձևը ընդունելու պահին Պաղեստինի հողային տարածքների 93 տոկոսը պատկանում էր արաբներն, և միայն 7 տոկոսը հրեաներին: [*Khalidi, 843*] Այսպիսի պայմաններում արաբները բնականաբար չէին կարող ընդունել Պաղեստինի այսօրինակ բաժանումը:

Հարկ է նշել, որ Պաղեստինի առաջին բաժանումը փաստացի եղավ 1922թ, երբ Անգլիան առանձնացրեց Անդրհորդանանը [*Briscoe, 446*]: Ուստի զարմանալի չէ, որ Իսրայելի շատ ազդեցիկ ուժեր 1947թ. բաժանումը անվանեցին որոշում Արևմտյան Պաղեստինի բաժանման մասին: Իսրայելի կառավարող շրջանակները արեցին հայտարարություններ, «թե արդեն գոյություն ունի Պաղեստինյան արաբական պետություն, որպիսին է Հորդանանը» [*Պրիմակով, 124*]:

Իսրայել պետությունը հռչակվեց 1948 թվականի մայիսի 14-ին, սակայն Պաղեստինի արաբական պետություն այդպես էլ չստեղծվեց: Դրան նպաստեցին նաև հարևան արաբական երկրների եսասիրական շահերը, որոնք իրենց տեսակետներն ունեին պաղեստինցիների համար նախատեսված տարածքների վերաբերյալ, ինչպես նաև Պաղեստինի ազատագրության կազմակերպության քաղաքական ծրագիրը՝ Իսրայելի, որպես հրեաների ազգային միավորման գոյության իրավունքի մերժումը և պայքարը Պաղեստինի ողջ տարածքը վերադարձնելու համար [*The Palestinian National Charter Adopted by the Fourth Palestine National Assembly,393*]: 1967թ. պատերազմից հետո, երբ օկուպացված տարածքներից մի շարք պաղեստինցի առաջնորդներ և մտավորականներ փորձեցին առաջ մղել Պա-

ղեստին պետության պլանը, Արևմտյան ափում և Գազայում, ՊԱԿ-ի ղեկավարությունն անմիջապես մեղադրեց նրանց ազգային շահերը դավաճանելու մեջ [*Walker, 104*]:

Հայ արաբագետներից Գրիգորյանի կարծիքով. «242-րդ բանաձևը կրում էր փոխզիջումային բնույթ, ինչի հետևանքով նրա մեջ դրական երևույթների հետ մեկտեղ առկա էր նաև մի էական թերություն՝ կապված գլխավորապես այն բանի հետ, որ մերձավորարևելյան ճգնաժամի հիմնական բովանդակություն կազմող պաղեստինյան հարցը փոխկապակցված էր միայն պաղեստինցի փախստականների խնդրին, որը բանաձևում պատշաճ լուծում չէր ստացել: Երկրաշրջանի բոլոր պետություններին կոչ անելով ճանաչել 1948-49թթ. պատերազմի հետևանքով ձևավորված սահմանները, բանաձևը առաջ չէր քաշում անկախ պաղեստինյան ապաբական պետության ստեղծման հարցը: Այսպիսով, 242-րդ բանաձևը որոշակիորեն հակասում էր 1947թ. նոյեմբերի 29-ի բանաձևին, որը նախատեսում էր արաբական պետության ստեղծում Պաղեստինում» [*Գրիգորյան, 47*]: Հարկ ենք համարում նշել, որ և 242-րդ և 1973թ. հոկտեմբերի 22-ին ընդունված ՄԱԿ-ի ԱԽ 338-րդ բանաձևերը երկու պետությունների ստեղծման առումով որևէ հստակություն չունեին [*Building for Peace in Middle East: an Israeli-Palestinian Dialogue, 147-148*]:

Սակայն, 1970-ականների կեսերից Պաղեստինյան շարժման մեջ նկատվում են միտումներ Պաղեստինի տարածքի մի մասում ազգային պետություն ստեղծելու հնարավորության ճանաչման ուղղությամբ [*Political programme adopted by the twelfth session of the Palestine National Council, 449*], [*Дмитриев, 223*]:

Արդյունքում 1974թ. հոկտեմբերին ՊԱԿ-ը դարձավ պատմության մեջ առաջին ոչ կառավարական կազմակերպությունը, որը հրավիրվեց որպես Պաղեստինի ժողովրդի ներկայացուցիչ՝ մասնակցելու ՄԱԿ-ի ԳԱ 29-րդ նստաշրջանին, որի քննարկման արդյունքը եղավ 1974թ. նոյեմբերին 3236 (XXIX) բանաձևի ընդունումը, որը ՊԱԿ-ին շնորհեց դիտորդի կարգավիճակ ՄԱԿ-ի բոլոր կազմակերպություններում և ճանաչեց պաղեստինցի արաբների ինքնորոշման իրավունքը: Յ. Արաֆաթը հայտարարեց իր պատրաստակամությունը բարձրացնելու Պաղեստինի դրոշը, թեկուզ միայն Արևմտյան ափին գտնվող Երիքով քաղաքում կամ պաղեստինյան տարածքի որևէ մասում, նույնիսկ եթե դրա լայնությունը 5կմ ոչ ավելի է [*Walker, 1305*]:

1981թ. սեպտեմբերի 1-ին ԱՄՆ-ի նախագահ Ռեյգանի առաջարկած մերձավորարևելյան կարգավորման ծրագիրը ըստ էության մերժում էր 2 պետությունների հայեցակարգը, բայց ճանաչում էր պաղեստինցիների ինքնավարությունը Հորդանանի հետ նրանց ասոցիացիայի որոշակի ձևերի պայմաններում, Իսրայելի կողմից զորքերի որոշակի հետքաշման և միասնական Երուսաղեմի պահպանման պայմաններում [*Овинников, 278*]:

Ծրագիրը քննադատվեց ինչպես արաբների, այնպես էլ Իսրայելի կողմից: Մերձավորարևելյան կարգավորման երկրորդ ծրագիրը առաջ էին քաշել արաբական երկրները, որը մոտ էր երրորդ՝ «Բրեժնևի Ծրագրին» [*Պրիմակով, 360*]: Առաջարկվում էր իսրայելական զորքերի դուրսբերում 1967թ. արաբա-իսրայելական պատերազմի ժամանակ գրաված տարածքներից «Հորդանան գետի արևմտյան ափում և Ղազայում պաղեստինյան արաբական պետության ստեղծում պաղեստինցի փախստականների վերադարձ»:

Պաղեստինի Ազգային խորհրդի 19-րդ նստաշրջանում (1988թ., նոյեմբեր Ալժիր), միակողմանիորեն հռչակվեց Պաղեստին պետությունը Հորդանանի Արևմտյան ափում, Գազայի հատվածում և Երուսաղեմի արաբական մասում (Ալ-Քուդս) [*Political Statement of the 19th Session of the Palestine National Council, 264*]: Միևնույն ժամանակ, Յասեր Արաֆաթը

հրապարակային հայտարարություն արեց Պաղեստինի բաժանման մասին ՄԱԿ-ի ԳԱ 1947թ. 181 և ՄԱԿ-ի ԱԽ 1967թ. 242 բանաձևերի ճանաչման մասին, փաստացի ընդունելով Իսրայելի դուրսբերումը գրավյալ տարածքներից՝ խաղաղության հաստատման դիմաց սկզբունքը [*Wallach, 453*]:

Այս քայլերը կարևոր էին հակամարտության կարգավորումը 2 պետությունների սկզբունքի վրա լուծելու ուղղությամբ: Մադրիդյան խաղաղության կոնֆերանսի (1991թ. հոկտեմբեր) ժամանակ նախատեսվեց արաբական երկրների հետ խաղաղության կնքման համար 1967թ. պատերազմի ժամանակ Իսրայելի կողմից օկուպացված տարածքների փոխանակում և հրեական պետության ճանաչում, ներառյալ նրա հետ դիվանագիտական և այլ հարաբերությունների հաստատում: Պրիմակովի կարծիքով «Արաբական պետությունների և ՊԱԿ-ի համաձայնությունը Մադրիդյան բանաձևին նշանակում էր 1948-1949թթ. առաջին արաբա-իսրայելական պատերազմի արդյունքների ճանաչում, որի արդյունքում ընդլայնվեց Իսրայելի տարածքը» [*Примаков*]:

Իր հերթին Իսրայելը մի քանի փուլ է անցել պաղեստինցի արաբների հետ իր հարաբերությունները կարգավորելու առումով: Պետության գոյության առաջին տասնամյակներում սիոնիստ առաջնորդները հակված էին ընդհանրապես մերժել Պաղեստինի արաբ բնակչությանը ազգային համայնք ունենալու իրավունքը: Իսրայելի վարչապետ Գ.Մեյրը հայտարարում էր, որ Պաղեստինում չկան այնպիսի մարդիկ, ինչպիսին պաղեստինցիներն են [*The Sunday Times*]: Սկսած 1970-ական թթ. փոփոխություններ են նկատվում: Ի. Ռաբինը նշում է, որ 1974 թվականին վարչապետի միջավայրում կարծում էին, որ նա շատ ավելի համակրանքով է վերաբերվում պաղեստինցիներին քան Մեյերը [*Slater, 281*]:

Խաղաղ գործընթացի Պաղեստինա-իսրայելական փակ հանդիպումների շարքը Նորվեգիայի միջնորդությամբ, որոնք անցկացվեցին Օսլոյում 1992 թ վերջից մինչև 1993 թ, ավարտվեցին վարչապետ Ի. Ռաբինի և Յ. Արաֆաթի նամակների փոխանակմամբ: Խաղաղ գործընթացի նպատակը, ինչպես նշված է 1993 թ սեպտեմբերին [*The Israeli-PLO Declaration of Principles*] ստորագրված Սկզբունքների հռչակագրի I հոդվածում, ՄԱԿ ԱԽ 242 և 338 բանաձևերի հիման վրա վերջնական կարգավորման հասնելն էր: 1993թ. սեպտեմբերի 13-ին Իսրայելի արտգործնախարար Շիմոն Պերեսը և ՊԱԿ-ի անդամ Աբու Աբասը Վաշինգտոնում պաշտոնապես վավերացրին Օսլոյում ձեռք բերված համաձայնությունները՝ «Հռչակագիր ժամանակավոր ինքնավարության սկզբունքների մասին» [*The Israel-Palestinian Agreement*]:

Համաձայնագրի նախաբանում ասվում էր. «Իսրայելի կառավարությունը և ՊԱԿ-ը համաձայն են, որ ժամանակն է վերջ դնել հակամարտության և առճակատման տասնամյակներին, ճանաչել միմյանց քաղաքական իրավունքները և ջանալ ապրել խաղաղ համագոյակցության մեջ՝ հասնելու համար վերջնական և համապարփակ խաղաղության պայմանագրի»: [*Declaration of Principles on Interim Self-Government Authority*] Նախատեսվում էր առավելագույնը հնգամյա անցումային փուլ՝ ազատ ընտրությունների արդյունքում ձևավորված պաղեստինյան ինքնակառավարվող իշխանությամբ, որի ավարտին ՄԱԿ-ի ԱԽ-ի 242 և 338-րդ բանաձևերի վրա պետք է ձևավորվեր պաղեստինյան անկախ պետությունը: Ընտրված Խորհրդի իրավասությունները տարածվելու են արմտյան ափի և Ղազայի վրա, բացառությամբ այն տարածքների, որոնց կարգավիճակը որոշվելու է վերջնական կարգավիճակի շուրջ բանակցությունների ժամանակ: Սա նշանակում է, որ Խորհրդի իրավասությունները չեն տարածվում Երուսաղեմի

«ռազմական շրջանների, հրեական բնակիչների և նորակառույցների վրա: Երկու կողմերը հաստատում են, որ արևմտյան ափը և Գազան տարածքային մեկ միություն են, որոնց ինտեգրացիան պետք է պահպանվի ժամանակավոր փուլի ընթացքում:

1994թ. օգոստոսի 24-ին Էրեց վայրում Իսրայելի և ՊԱԿ-ի միջև կնքվեց իշխանության փոխանցման վերաբերյալ համաձայնագիրը «որը հնարավորություն տվեց ՊԱԿ-ին ստանձնելու իրական իշխանություն: 1995թ. սեպտեմբերի 24-ին Վաշինգտոնում կնքվեց այսպես կոչված Օսլոյի 2-րդ համաձայնագիրը, ըստ որի իսրայելական զորքերը դուրս բերվեցին արևմտյան ափի 6 քաղաքներից և 400 գյուղերից: 1999թ. ժամկետը լրանալուց հետո Պաղեստինյան պետություն չստեղծվեց և նոր նախաձեռնություն կապված 2 պետությունների սկզբունքի հետ բանակցային ֆորմատով տեղի ունեցավ 2000թ ԱՄՆ-ի, ԵՄ-ի, ՄԱԿ-ի և Ռուսաստանի նախաձեռնությամբ: Առաջարկվող «Ճանապարհային քարտեզը» սահմանում էր քայլ առ քայլ անկախ Պաղեստինի պետության ստեղծում: Խաղաղության բանակցությունները վերսկսվեցին 2007թ Աննապոլիսում:

Երկու պետությունների ստեղծմանը խանգարում են հետևյալ հանգամանքները.

1. Պաղեստինցի արաբների մեծ մասի համար հակամարտությունը դեռևս ազգային-ազատագրական պայքար էր գաղութատերերի դեմ, ովքեր ապօրինաբար զավթել են պաղեստինյան հողերը:

2. Պաղեստիցի արաբները, հատկապես իսլամ արմատականները չեն ընդունում հրեաների՝ սեփական պետություն ունենալու իրավունքը, չեն ճանաչում Իսրայելի իրավասուբյեկտությունը:

3. Հրեաների մի հատվածի համար բոլոր պաղեստինցիները ահաբեկիչների հանցակիցներ են և հատկապես շեշտում են ծայրահեղ իսլամական խմբավորումների կողմից իրենց պետության համար սպառնացող վտանգը:

4. Ընդունելով տարածքային զիջումների անհրաժեշտությունը՝ իսրայելական հասարակության մեծ մասը վախենում է ապագայում լինել մի պետության կողքին, որը ոչ միայն շատ ավելի թշնամական կլինի Իսրայելի նկատմամբ, քան տարածաշրջանի արաբական շատ այլ պետություններ, այլև չի հրաժարվի նրա ոչնչացման նպատակից:

Ելնելով վերոհիշյալ նկատառումներից, ինչպես նաև այն հանգամանքներից, որ 1967թ. օկուպացված տարածքները այլևս բանակցություններում սակարկության գլխավոր առարկա չեն և փաստացի վերացել է արաբական երկրների հետ պայմանական պատերազմի վտանգը, 2005թ. Ա. Շարոնը առաջ քաշեց միակողմանի անջատման պլան և Գազայից դուրս բերվեց իսրայելական բանակը և հրեական բնակավայրերը: Այս քայլերը թելադրված էին պաղեստինցիներից «անջատվելու անհրաժեշտության նկատառումներով, որպեսզի ազատվեն պաղեստինյան տարածքներում իրավիճակի համար պատասխանատվությունից: Միջազգային հանրության կողմից այս միջոցները դիտվեցին որպես իր տարածքի սահմանները միակողմանիորեն գծելու Իսրայելի ցանկություն, հատկապես, որ «անվտանգության պատի կառուցումը լավագույն միջոցն էր այդ նպատակին հասնելու համար: Միակողմանի անջատման քաղաքականությունը հանգեցրեց իսրայելցիների և պաղեստինցիների հարաբերությունների նոր սրման: Այն տարածքային լուծումներ չտվեց Հորդանան գետի արեւմտյան ափի իսրայելական բնակավայրերի խնդրին, որոնք Արևմտյան ափին և Երուսաղեմում 1949թ մինչև 2000թ 364,000-ից հասել է մինչև 450,000 [*Носенко, 93*]: Պաշտոնապես, իսրայելական բնակավայրերը զբաղեցնում են Հորդանան գետի Արևմտյան ափի մի փոքր մասը՝ տարածքի ընդամենը 1,7%-ը, սա-

կայն բնակավայրերի շուրջ մունիցիպալ գոտիներով, անվտանգության գոտիներով և բնակավայրերը կապող ճանապարհներով, իսրայելական ենթակառուցվածքները, ըստ ՄԱԿ-ի, զբաղեցնում են գրեթե 40%-ը: Դրանով Հորդանան գետի արևմտյան ափի պաղեստինյան բնակչությունը բաժանված է մի քանի մեկուսացված կանտոնների՝ խմբավորված պաղեստինյան գլխավոր քաղաքների շուրջը և շրջապատված անցակետերով: Իսրայելը վերահսկողություն է պահպանում Գազայի և Արևմտյան ափի միջև մարդկանց և ապրանքների տեղաշարժի վրա: Իսրայելական բանակը դեռևս օգտվում է գործողությունների ազատությունից Հորդանան գետի Արևմտյան ափին, ինչպես նաև Գազայում սուր իրավիճակների դեպքում:

2001 թվականից ի վեր գոյացած 100-ից ավելի ապօրինի բնակավայրերից միայն մի փոքր մասն է ապամոնտաժվել, ինչը նշանակում է, որ «Ճանապարհային քարտեզի» և Աննապոլիսի պայմանավորվածությունների հիմնական պայմաններից մեկը չկատարվեց: Վերաբնակիչները, հատկապես երիտասարդ սերունդը, կատաղի դիմադրում են իշխանությունների ցանկացած փորձի՝ կասեցնելու անօրինական բնակավայրերի, այսպես կոչված, ֆորպոստների ստեղծումը, և այս սողացող հողազավթումը աջակցություն է գտնում իշխանության վերին օղակներում: Մյուս կողմից ինքնավարության հաստատումից հետք մոտ 2 տասնամյակ պաղեստինցիները չկարողացան պետականության լուրջ հիմքեր ստեղծել: Պաղեստինի տնտեսության ներկայիս վիճակը շատ ավելի վատ է, քան 15-20 տարի առաջ, բյուջեի 30%-ը արտաքին օգնությունն է, իսկ ինքնավարության բոլոր կառույցներում կոռուպցիայի բարձր մակարդակը բացասաբար է անդրադառնում ողջ իրավիճակի:

Այժմ երկու պետությունների սկզբունքի իրականացման իրական պայմանների բացակայության պայմաններում պաղեստինցիները վերադառնում են հակամարտությունը մեկ պետության սկզբունքի հիման վրա լուծելու գաղափարին: Այս տարբերակը վերջին տասնամյակում աջակցություն է գտել Արևմտյան Եվրոպայի և, ավելի քիչ, ԱՄՆ-ի կողմից: Պաղեստինցիների մոտ դեռևս առկա է երկու պետությունների սկզբունքի գաղափարը, սակայն իրականությունը այլ ուղղությամբ է ընթանում [*The Times*]: Առաջարկներ են արվում Պաղեստինի ինքնավարության լուծարման և տարածքների կառավարումը 1994թ առաջ սխեմայով վերադարձնելու հնարավորության մասին: Նույնիսկ Պաղեստինյան ռազմավարական խումբը՝ գտնվելով Եվրոպայում, և 2008 թ Մեծ բրիտանիայում ներկայացնելով իր մանիֆեստը երկու պետությունների սկզբունքի պաշտպանությամբ, այդ մոտեցումը դիտարկում է ավելի շուտ որպես զգուշացում, եթե Իսրայելը արգելափակի մի պետության ստեղծումը: Անշուշտ տասնամյակների պայքարի արդյունքում պաղեստինցիների հակվածությունը մեկ պետության գաղափարին կարելի է որակել որպես ազգային ողբերգություն, եթե հաշվի առնենք, որ նրանք այդպես էլ չեն ուզում հաշտվել Իսրայելի գոյության հետ, իսկ վերջինս միասնական «երկպետական» գաղափարի առաջմղումը դիտարկում է որպես սպառնալիք հրեա բնակչության գոյության համար: Իսրայելի համար մեկ պետության սկզբունքը նշանակում է սիոնիստական ողջ նախագծի և դրա իրականացման բոլոր արդյունքների մերժում: Նույնիսկ այսօր Իսրայելի համար պետության հրեական բնույթի պահպանումն անհերքելի հրամայական է թվում, քանի որ համոզմունք կա, որ պաղեստինցիների հետ ցանկացած բանակցություն և տարածքային զիջում խորացնում է երկրի անվտանգության խնդիրները: 2006-ի Լիբանանի երկրորդ պատերազմը և 2007-ի ամռանը ՀԱՄԱՍ-ի կողմից ՖԱԹՀ-ի ներկայացուցիչների արտաքսումը Գազա-

յից, նույնպես համարվում են հարավային Լիբանանում Իսրայելի ներկայությունը սահմանափակելու քաղաքականության արդյունք: [*Rubin*] Նրանց տեսանկյունից շատ ավելի խոստումնալից է ստատուս-քվոյի պահպանումը, քանի որ, ինչպես ցույց տվեցին վերջին տասնամյակները, Իսրայելն ուժեղանում է, իսկ պաղեստինցիները՝ ավելի թուլանում:

Մյուս կողմից, ստատուս քվոյի պահպանումը և երկու պետությունների սկզբունքով բանակցային գործընթացի բացակայությունը Իսրայելին հանգեցնում է մեկ պետության կերտման իրականություն: 5-6 տարի հետո արաբները կկազմեն բնակչության մեծամասնությունը կամ առնվազն 40%-ից ոչ պակաս, որի արդյունքում Իսրայելը երկարաժամկետ հեռանկարում չի կարողանա պահպանել իրեն որպես հրեա ժողովրդի պետություն, որտեղ մեծամասնությունը պետք է լինեն հրեաները: Ավելին, Իսրայելը, շարունակելով պահել տարածքները, որտեղ ապրում են միլիոնավոր պաղեստինցիներ, վտանգի տակ է դնում իր միջազգային հեղինակությունը: Իսրայելի օկուպացիոն քաղաքականությունը միջազգային հանրությանը հիմք է տալիս արդարացնելու իր դեմ պաղեստինցիների կողմից կիրառվող բռնությունն ու պայքարի ռազմական միջոցները:

Իսրայելցի հայտնի պատմաբան և քաղաքագետ Ա.Սասերը այս կապակցությամբ նշել է. «Վերջացավ այն իդեալական իրավիճակը, որը մենք ժառանգեցինք 1967թ.-ից հետո, երբ, ինչպես մեզ թվում էր, այնքան ժամանակ ունեինք, որքան ուզում էինք ոչ մի որոշում չընդունելու համար [*The Jerusalem Review*]:

Բ.Նեթանյահուն պաղեստինցիների հետ վերջնական խաղաղ կարգավորումը դիտարկում էր որպես պաղեստինյան տարածքների տնտեսական զարգացմանն աջակցելու շրջանակներում: 2009թ ստանձնելով պաշտոնը՝ Իսրայելի վարչապետը սկզբում չցանկացավ հրապարակայնորեն արտասանել «երկու պետություն երկու ժողովուրդների համար բանաձևը: Միայն ամերիկյան դիվանագիտության և անձամբ նախագահ Օբամայի ճնշման ներքո նա ասաց, որ եթե պաղեստինցիները ճանաչում են Իսրայելը որպես հրեական պետություն, մենք պատրաստ ենք կնքել իրական խաղաղության պայմանագիր, երբ ապառազմականացված Պաղեստին պետությունը գոյություն կունենա հրեական պետության հետ կողք կողքի [*Haaretz*]: Այն նախապայմանները, որոնք դրված էին պաղեստինցիներին չհավասարակշռվեցին Արևմտյան ափի բնակավայրերի հետագա ճակատագրի առնչությամբ Իսրայելի որևէ պարտավորությամբ:

Եզրակացություն

Այս ամենը թույլ է տալիս հանգելու որոշակի եզրահանգումների.

1.Իսրայելի տեսլականի առումով Իսրայելի կառավարության հայտարարած դիրքորոշումը պաղեստինցիների սահմանափակ ինքնավարության տարբերակի կրկնությունն է ցրված և տարածքային առումով կապ չունեցող կանտոններում: Հազիվ թե այն ապահովի հակամարտության երկարաժամկետ կայուն լուծում, քանի որ չի վերացնում պայմանները կամ այն քաղաքականությանը, որոնք հադիսանում են պաղեստինցիների շարունակական դիմադրության պատճառ: Գլխավոր պահանջը կապված պաղեստինցիների ազգային իրավունքների հետ՝ ստեղծելու սեփական անկախ, լիարժեք պետությունը անտեսված են: Իսրայելի արմատական աջ «Իսրայել Բեյթենու» կուսակցության առաջնորդ Ա. Լիբերմանի մեկնաբանությունը, ըստ որի իսրայելցի արաբների կոմպակտ բնակության տարածքները պետք է ներառվեն ապագա Պաղեստին պետության մեջ, իսկ Հորդանան գետի հրեական բնակավայրերը պետք է դրան մաս կազմեն, իրականում ցանկությունների ոլորտից են: Հաշվի առնելով, որ Իսրայելի արաբ քաղաքացիների մեծամասնությունը բացասա-

բար է վերաբերվում իրենց բռնի ուժով պաղեստինյան պետության ինքնիշխանությանը հանձնելու հեռանկարին, դժվար թե իսրայելցի որևէ առողջ քաղաքական գործիչ ձեռնամուխ լինի այդ գաղափարի իրականացմանը: Այս տեսակի էթնիկ զտումները ժամանակակից միջազգային իրավունքում որակվում են որպես մարդկության դեմ ուղղված հանցագործություն:

2. Մերձավոր Արևելքի փորձագիտական շրջանակներում առաջարկվող Հորդանանի հետ Արևմտյան ափի, իսկ Եգիպտոսի հետ Գազայի հատվածի ինտեգրումը լուրջ չէ, քանի որ արաբական երկու երկրներն էլ պատրաստ չեն ստանձնել այդ պատասխանատվությունը: Եգիպտոսի համար, որը երկար տասնամյակներ շարունակ ներքին պայքար է մղում իսլամական արմատական խմբավորումների՝ Մուսուլման եղբայրների դեմ, դա ռիսկային կարող է լինել: Ինչ վերաբերվում է Հորդանանին, ապա վերջինիս սերտ շփումներն ու համագործակցությունը ԱՄՆ-ի հետ գերադասելի են Արևմտյան ափի խնդրահարույց տարածքները կառավարելուց: Հորդանանում, ի տարբերություն 1940-50-ականների, երբ Հաշիմյան դինաստիան ողջ Պաղեստինի իրավատերն էր իրեն համարում, այժմ առաջնորդվում է Հորդանանը Հորդանանն է բանաձևով: Հորդանանում ապրում է գրեթե 2 միլիոն պաղեստինցի, ինչը կազմում է Հորդանանի ողջ բնակչության մոտ մեկ երրորդը: Պետության մեջ լրացուցիչ միլիոնավոր պաղեստինցիների ընդգրկումն անխուսափելիորեն վտանգում է Հորդանանի պետության և ազգային էլիտայի շահերը [*Lynch,47*]:

3. Թվում է, թե այսօր երկու պետությունների սկզբունքը մնում է միակ տարբերակը, որը կարող է հիմք հանդիսանալ պաղեստինա-իսրայելական հակամարտության կարգավորման համար: Դրա իրականացման հեռանկարը մեծապես կախված է միջազգային միջնորդության ակտիվացումից: Իհարկե, այս ճանապարհին շատ լուրջ խոչընդոտներ կան: Ե՛վ Իսրայելում, և՛ պաղեստինյան տարածքներում վերջին տասնամյակում նկատվում է ծայրահեղական ուժերի դիրքերի լուրջ ուժեղացում: 2009 թ փետրվարին Իսրայելի ընտրություններում հաղթեցին աջ կուսակցությունները, որոնցից մի քանիսը լիովին մերժում են պաղեստինյան պետության գաղափարը, իսկ մյուս մասը պատրաստ չէ տարածքային փոխզիջումների: Պաղեստինում, չնայած 2009 թ հունվարին Գազայում ՀԱՄԱՍ-ի դեմ Իսրայելի կոշտ գործողություններին չի նվազել վերջինիս ժողովրդականությունը: Ստացվում է, որ մնալով ամենահավանական տարբերակներից մեկը, երկու պետությունների սկզբունքի իրագործումը այնուամենայնիվ բախվելու է բազմաթիվ երկկողմանի խնդիրների:

Գրականության ցանկ

1. Գրիգորյան Հովհաննես, Սիրիայի ձախբաասական ղեկավարության դիրքորոշումը մերձավորարևելյան ճգնաժամի նկատմամբ 1967-1970 թթ., Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, հ.14, Երևան, 1987, էջ 47:
2. Պրիմակով Եվգենի, Մի դավադրության պատմություն, Երևան, 1987, 360 էջ:
3. Дмитриев Е., Лапутин С., Носенко В., Звягельская И., См. раздел: Палестинское движение сопротивления. Новейшая история арабских стран Азии. 1988. М., Наука. 223 с.; см. также Gresh A. PLO: The Struggle Within. London, 1988.
4. Овинников Ричард, Зигзаги внешней политики США, от Никсона до Рейгана, изд. политической литературы, Москва, 1986. 400 с.
5. Примаков Е.М., Основополагающий конфликт. Россия в глобальной политике. № 3. Май-июнь 2009.

6. Носенко Татьяна, Оккупированные территории и поселенческая политика Израиля: история и некоторые правовые аспекты. Государство Израиль: политика, экономика, общество. М.: ИВ РАН, 2006. 93 с.
7. Briscoe R., The Polish Robbinate and Jewish Emigration To Palestine, From Haven to Conquest, Beirut,1971, p.446.
8. Binationalism Not Partition, From Haven To Conquest, Beirut, 1971, p.647.
9. Building for Peace in Middle East: an Israeli-Palestinian Dialogue, p. 147-148.
10. Haaretz. 14.06.2009 - http//www.haaretz.com
11. Department of State, Anglo-American Committee of Inquiry: Report to The US Government and His Majesty's Government in the UK, Washington,1946.
12. Declaration of Principles on Interim Self-Government Authority, Washington D.C, 13.09.1993.
13. Jeffries J., Analysis of The Balfour Declaration, From Haven to Conquest, p.174.
14. John R., Hadawi S. The Palestine Diary. Volume one 1914-1945. Beirut, 1970. 275 P.
15. Khalidi Walid, From Haven to Conquest. Readings in Zionosm and the Palestine Problem Until 1948, Beirut, 1971,The Institute for Palestine Studies. 914.p.,p.174.
16. Lynch M. Jordan's Identity and Interests. Identity and Foreign Policy in the Middle East / Ed. by Sh. Telhami & M. Barnett. Cornell University Press. 2002. P. 47.
17. Muhammad Z.KH.,Palestine in The UNO, 1948, From Haven To Conquest,pp.6-23.
18. Political programme adopted by the twelfth session of the Palestine National Council. International Documents on Palestine. 1974. Beirut: The Institute for Palestine Studies. Kuwait: The University of Kuwai, 1977. P. 449.
19. Political Statement of the 19th Session of the Palestine National Council, Algiers, 12-15 November 1988. Middle East Contemporary Survey. Eld. by A. Ayalon, H. Shaked. Vol. XII, 1988. San Francisco, 1990. P. 264.
20. Report To The General Assembly Of The UN Special Committee On Palestine, Official Records Of The Second Session of GA, 1947, Supplement # 11.
21. Roosevelt K., The US and Arab World, From Haven To Conquest, Beirut,1971,p.516.
22. Roosevelt K., The Partition of Palestine,A Lesson in Ppressure Politics,The Middle East Journal, II,# 1, 1948, pp.13-16.
23. Rubin B. Time is on my side. Gloria Center Global Research in International Affairs. IDC Herzlia. 28.09.08. http://www.gloriacenter.org/11.01.2022.
24. Slater R., Rabin of Israel. Warrior for Peace. N.Y.: Harper Paperbacks, 1996. P.281-282.
25. The Sunday Times. London. 15.06.1969.
26. The Israeli-PLO Declaration of Principles. Makovsky D. Making Peace with the PLO. Boulder: Westview Press, 1996. Appendix XIV.
27. The Israel-Palestinian Agreement: In the Footsteps of Camp David, Appendix D, International Affairsb Report, Anti-Defamation League, New York, Sept 1993.
28. The Times. 02.03.2009.
29. The Jerusalem Review. A Journal of Foreign Policy. Vol. 1. № 1. 2006-2007. P. 67.
30. The Palestinian National Charter Adopted by the Fourth Palestine National Assembly. 1968. Beirut: The Institute for Palestine Studies - Kuwait: The University of Kuwait, 1971. P. 393.
31. Walker T. A.Growers Arafat: the Biography. London, 2003. P. 104.
32. Wallach John & Janet., Arafat. In the Eyes of the Beholder. London: Mandarin, 1992. P. 453.

THE TWO-STATE CONCEPT AS A PRINCIPLE FOR THE SETTLEMENT OF THE PALESTINIAN CONFLICT

Hovhannisyan A.H.
PhD in History, Associate Professor
EUA, Gyumri Branch, SUSh
artakh76@mail.ru

Abstract

The Arab-Jewish conflict has been going on for over 100 years, but numerous proposals, programs and roadmaps to resolve the conflict between the two peoples living in Palestine have not been able to resolve the conflict. Among the programs put forward were the English, American and Soviet and Arab ones. One of the principles of the settlement was the concept of creating Arab and Jewish states in Palestine, which is probably one of the most discussed options. This is explained, first of all, by the fact that from the very beginning, both Arabs and Jews were promised assistance in creating national states. In addition, as a result of various discussions within the UN, a decision was made to create Arab and Jewish states in Palestine. The Arab-Israeli war of 1948-1949, as well as the position of the Arab states, actually prevented the creation of an Arab state in Palestine. The subsequent Arab-Israeli wars from 1967 to 1973 escalated the conflict making the establishment of an Arab state in Palestine unlikely.

However, one of the most fundamental principles of the Middle East peace process remained the creation of an Arab state in Palestine, which was first proclaimed at the Madrid Conference in 1991 and then in the Oslo Accords of 1993-1999 with the hope of becoming an independent country. Although a Palestinian Arab state has not yet been established, the issue remains open on the negotiating table.

Keywords: Partition of Palestine, two-state formation, majority program, minority program, PLO.

Ներկայացվել է՝ 18.02.2022 թ.
Գրախոսվել է՝ 23.05.2022 թ.

ՀՀ ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սարգսյան Կ. Ն.
տնտ.թ.
ՀԵՀ, Կառավարման ամբիոն
karinesarg@yahoo.com
Գրիգորյան Հ.Հ.
տնտ.թ., դոցենտ
ՀԵՀ, Տնտեսագիտության և ֆինանսների ամբիոն
hovig@mail.ru

Ամփոփագիր

Ցանկացած երկրի կենսաթոշակային համակարգ պետք է լուծի մեկ խնդիր՝ կենսաթոշակառուներին տրամադրել պատշաճ չափի կենսաթոշակներ՝ բավարար կենսամակարդակ և կյանքի պայմաններ ապահովելով վերջիններիս համար, բայց տարբեր հետազոտություններ և ուսումնասիրություններ, համաշխարհային հեղինակավոր կառույցների վերլուծություններ ցույց են տալիս, որ մեր երկրում վերջին 25 տարիների ընթացքում արձանագրված սոցիալ-տնտեսական իրողությունների արդյունքում ձևավորված իրավիճակը հեռու է բավարար լինելուց: Իրավիճակը վատթարացավ Կորոնավիրուսային համավարակի և 44-օրյա պատերազմի հետևանքով և արդյունքում ՀՀ-ն բացի անվտանգային և դիվանագիտական խնդիրներից, կանգնած է նաև լուրջ ժողովրդագրական և սոցիալական խնդիրների առաջ, ինչը հանգեցնում է գործող համակարգի խարխլման:

Սույն հոդվածի շրջանակներում փորձ է արվել ուսումնասիրել ՀՀ-ում գործող կուտակային կենսաթոշակային համակարգը, վերհանել առկա խնդիրները և միջազգային լավագույն փորձի ուսումնասիրության արդյուքնում առաջարկել նոր մոտեցումներ՝ գործող համակարգի բարելավման ուղղությամբ:

Կենսաթոշակային համակարգերը ժամանակակից սոցիալական պետության հիմնասյուներից են: բնակչության ծերացումը, որն առաջացել է ավելի երկար կյանքի տևողության և ծնելիության ցածր մակարդակի պատճառով, շատ երկրներում, այդ թվում մեծ թիվ են կազմում զարգացած երկրները, հանգեցրել է պետական կենսաթոշակային համակարգի ճգնաժամի: Համակարգի կայունության համար անհրաժեշտ են փոփոխություններ՝ հիմնված լավագույն միջազգային փորձի ուսումնասիրության, բնակչության կարիքների և պետական քաղաքականության վրա:

Հիմնաբառեր. կենսաթոշակային համակարգ, բարեփոխում, եկամտաբերություն, կենսաթոշակային ֆոնդ, արդարություն:

Ներածություն

Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է [ՀՀ Սահմանադրություն, 1-ին հոդված], որի սոցիալական քաղաքականությունն ուղղված է մարդու արժանավայել կյանքը և ազատ զարգացումը ապահովող պայմանների ստեղծմանը: Ցանկացած

երկրի նպատակն է ապահովել իր քաղաքացիների բարեկեցիկ կենսամակարդակը: Կենսաթոշակային ապահովությունը հանդիսանում է այդ նպատակին հասնելու կարևորագույն միջոցներից մեկը: Կենսաթոշակային սոցիալական ապահովվածության խնդիրները խիստ արդիական են գրեթե բոլոր երկրներում: Չնայած այն հանգամանքին, որ առաջին կենսաթոշակային համակարգերը ծագել են դեռ 100 տարի առաջ, մինչ այսօր համակարգում առկա են բազմաթիվ խնդիրներ և կենսաթոշակային համակարգի ուսումնասիրությունը և բարելավման ուղիների որոնումը շարունակում են մնալ արդիական:

Հոդվածի նպատակը՝ Հայաստանի Հանրապետությունում կենսաթոշակային ապահովագրության համակարգի կատարելագործման ուղիների առաջադրումն է հարմարեցված ժամանակակից համաշխարհային տնտեսության պահանջներին, հաշվի առնելով միջազգային փորձն ու զարգացման միտումները, կուտակային կենսաթոշակային ապահովագրության համակարգի առավել հրատապ հիմնախնդիրների բացահայտումն ու դրանց լուծմանն ուղղված արդյունավետ ուղղությունների մշակման ելակետային հիմնադրույթների առաջադրումը:

Հետազոտության օբյեկտն է ՀՀ-ի կուտակային կենսաթոշակային համակարգը, իսկ առարկան՝ ՀՀ-ի կենսաթոշակային ապահովագրության համակարգում առկա խնդիրները և զարգացման հեռանկարները:

Հետազոտության ընթացքում կիրառվել են փաստաթղթերի համակարգային ուսումնասիրության, համեմատական վերլուծության, համադրման մեթոդները:

Կենսաթոշակային ապահովագրությունը որպես տարեց քաղաքացիների բարեկեցության ապահովության միջոց, գոյություն ունի աշխարհի բոլոր զարգացած և զարգացող երկրներում: Բայց կենսաթոշակային ապահովագրության վերաբերյալ կատարյալ օրենսդրություն հնարավոր չէ գտնել ոչ մի երկրում: Կենսաթոշակային ապահովագրությունը լինում է կամավոր և պարտադիր [*«Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենք, Հոդված 1*]: Պարտադիր կենսաթոշակային ապահովագրությունը հիմնականում իրականացվում է բյուջեի կամ արտաբյուջետային ֆոնդերի հաշվին, որոնք այս դեպքում հանդես են գալիս որպես ապահովագրող [*«Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենք, Հոդված 3*]: Որպես ապահովադիր կարող են հանդես գալ կազմակերպությունները կամ քաղաքացիները: Այն անձինք, ովքեր ներառվում են պարտադիր կենսաթոշակային ապահովագրության գործընթացի մեջ, համարվում են ապահովագրված: Կամավոր կենսաթոշակային ապահովագրությունը հանդիսանում է կյանքի կուտակային ապահովագրության տեսակներից մեկը, որի գործողության մեխանիզմն այնքան էլ բարդ չէ: Համաձայն պայմանագրի՝ քաղաքացին վճարում է համապատասխան գումար ապահովագրական ընկերությանը, իսկ վերջինս ներդնում է այս միջոցները՝ դրանց ծավալի մեծացման նպատակով: Հաճախորդի՝ կենսաթոշակային տարիքին հասնելուն պես ընկերությունը վճարում է նրան լրացուցիչ կենսաթոշակ: Այսօրվա դրությամբ մշակված են լրացուցիչ կենսաթոշակային ապահովագրության մի շարք ծրագրեր, և հաճախորդն իրավունք ունի ընտրելու այն ծրագիրը, որն առավել մեծ չափով կբավարարի նրա պահանջմունքները: Կենսաթոշակային պայմանագիրը կարող է կնքվել մինչև 99 տարի ժամկետով: Լրացուցիչ կենսաթոշակային ապահովագրության դեպքում կենսաթոշակառուին տրվող գումարները նույնպես կարող են լինել եռամսյակը մեկ, տարեկան և այլն:

Համաձայն Համաշխարհային բանկի կողմից հրապարակված տվյալների ոչ միայն Հայաստանում, այլև ամբողջ աշխարհում ընդհանուր բնակչության մեջ մինչև 15 տարե-

կան բնակչության կշիռը նվազում է, ինչը պայմանավորված է ծնելիության գործակցի նվազմամբ, իսկ ընդհանուր բնակչության մեջ 65 տարեկան և ավելի բարձր տարիքի բնակչության տեսակարար կշիռն ավելանում է, որը պայմանավորված է երկարակեցությամբ [*World Development Indicators, The World Bank*] (տե՛ս Գծապատկեր 1):

Գծապատկեր 1.



ՀՀ-ում և աշխարհում 15-ից ցածր և 65-ից բարձր տարիքի բնակչության տեսակարար կշիռը ընդհանուր բնակչության թվաքանակում

Այս կորերը գնալով մոտենում են, որը հայտնի է խողովակի էֆֆեկտ անվանմամբ և կորերի նման փոփոխությունները նշանակում են բնակչության ծերացում:

Նմանատիպ պատկեր է նաև Հայաստանում, ինչն էլ հանգեցրեց կենսաթոշակային համակարգերի վատթարացմանը: Չնայած կենսաթոշակների ֆինանսավորումը ՀՀ պետական բյուջեի ամենամեծ ծախսային ծրագիրն է, իսկ ՀՀ կառավարությունը շարունակաբար ավելացնում է կենսաթոշակներին ուղղվող միջոցները, սակայն կենսաթոշակների չափերը շարունակում են մնալ ցածր: 2018 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ դրվեց կուտակային կենսաթոշակային համակարգի պարտադիր բաղադրիչը: Համակարգին պարտադիր մասնակցությունը հիմնավորվեց երկրում առկա և կանխատեսվող ժողովրդագրական իրավիճակով:

Ինչպես պարզ է դառնում գծապատկերից Հայաստանը ծերացող երկիր է, իսկ դա նշանակում է, որ տարեցտարի թոշակառուների թվաքանակը աշխատողների թվաքանակի համեմատ ավելանալու է: Արդյունքում աշխատողները շուտով ստիպված են լինելու ապահովելու իրենցից թվով մի քանի անգամ շատ թոշակառուների կենսաթոշակը:

Այն քաղաքացին, ով Հայաստանում որոշ ժամանակահատված կուտակային համակարգի մասնակից է եղել, ապա հեռացել է այլ երկրում մշտական բնակության նպատակով, իր միջոցները տեղափոխել չի կարող. դրանք կշարունակվեն կառավարվել և աճել Հայաստանում: Իսկ 63 տարեկանից սկսած, անկախ բնակության վայրից, տվյալ անձը կարող է տնօրինել այդ միջոցները: Օտարերկրացիների պարագայում, ովքեր աշխատել ու վճարել են եկամտահարկ և կուտակային վճարներ Հայաստանում, ապա այլ երկիր մշտական բնակության մեկնելիս, կարող են տեղափոխել իրենց կուտակած գումարները այլ երկրների ֆոնդեր [*«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենք, Հոդված 7*]:

Հայաստանում անհավասար պայմաններ են ստեղծվել կենսաթոշակ ստացողների միջև: Հիմնական խնդիրը կապված է չգրանցված աշխատողների առկայությամբ, իրականում տրվող և պայմանագրում գրանցված վարձատրության տարբերությամբ, ինչպես նաև գործազրկության բարձր մակարդակով: Արդյունքում բազմաթիվ քաղաքացիներ ամբողջությամբ կամ մասամբ դուրս են մնում այս համակարգից, ինչը նշանակում է, որ կենսաթոշակային տարիքում նրանք չեն ստանա իրենց աշխատանքին ու վարձատրությանը համապատասխան կենսաթոշակ:

Չնայած մեր հանրապետությունում Կուտակային կենսաթոշակների մասին օրենքը ընդունվել է 2010 թվականին, և 2011 թվականից գործել է կամավոր կենսաթոշակային բաղադրիչը, սակայն, ըստ էության, որևէ մեկը կամավոր գումար չի փոխանցել կուտակային հիմնադրամներին: Այդ ինստիտուտը մեր հանրապետությունում չի կայացել: Պատճառները մի քանիսն են, որոնցից կարելի է առանձնացնել՝ ժողովրդի կողմից այդ համակարգի նկատմամբ անվստահությունը, աշխատունակ բնակչության զգալի հատվածի մոտ եկամտի և աշխատավարձի ցածր մակարդակը [*Ա. Բոյաջյան և այլք, 267*]:

Մյուս կողմից մարդիկ հակված են ավելի շատ կենտրոնացած լինել ընթացիկ և կարճաժամկետ սպառման մակարդակների ավելացման վրա, այլ ոչ թե բավարար ռեսուրսներ առանձնացնել երկարաժամկետ սպառման համարժեք մակարդակ ապահովելու համար: Այս խնդիրը առավել բնորոշ է միջինից ցածր զարգացվածություն ունեցող երկրներին [*Stephen Owens, Joseph Killilea, 11*]:

Մասնակիցների թիվը բնականաբար ավելացավ պարտադիր կուտակային համակարգը ներդնելուց հետո: Համակարգին միացած մասնավոր հատվածի աշխատողներն ավելի շատ են, քան պետական կառույցների աշխատողները: Սա բացատրվում է նրանով, որ 2015թ-ից սկսած՝ մասնավոր աշխատաշուկա մտնող քաղաքացիներն այլևս հնարավորություն չունեին համակարգից հրաժարվելու: Արդյունքում նրանք մեխանիկորեն համակարգի մաս են կազմում: 2016թ-ին ՀՀ-ում կենսաթոշակային ֆոնդերի մասնակիցների թիվը կազմում է մոտ 155.000 մարդ, որից 65.000 պետական աշխատակիցներ են, իսկ մնացած 90.000 մասնակիցը մասնավոր սեկտորի ներկայացուցիչներ են: 2017թ-ին կենսաթոշակային կուտակային համակարգի մասնակիցների թիվը կազմում է 175700 մարդ, որից 105000-ը մասնավոր, իսկ 70000-ը պետական աշխատողներ են: 2018թ-ի տվյալներով համակարգի մասնակիցների թիվը կազմում է 207000 մարդ: Հետազոտությունները ցույց են տալիս, որ եթե 2014 թ-ին համակարգն ամբողջությամբ գործարկվեր, ապա պետք է ունենար մոտ 300000 մասնակից: Սակայն քաղաքացիների ընդվզման և օրենքում կատարված փոփոխությունների հաշվին վերջին 3-4 տարիների ընթացքում հնարավոր է եղել ապահովել այդ թվի ընդամենը 60%-ը: Օրենքում կային դրույթներ, որոնք հանրության շրջանում չընդունվեցին և քննարկումների մեծ տեղիք տվե-

ցին: Օրենքի սկզբնական տարբերակում ասվում էր, որ ապահովադրի մահվան դեպքում նրա կուտակած կենսաթոշակային միջոցները ժառանգվում են նրա իրավահաջորդներին կամ շահառուին՝ որին նրանք պայմանագրում նշել են: Այդ կուտակված կենսաթոշակային միջոցները նրանք կանխիկ ստանալու իրավունք չունեին, գումարները կուտակվում էին նրա հիմնադրամի միջոցներին: Եվ եթե այդ մարդն էլ (իրավահաջորդը կամ շահառուն) մինչև 63 տարեկանը մահանա, ապա գումարը կփոխանցվի 1-ին մարդու թոռին և այսպես շարունակ: Ստացվում է այնպես, որ այդ գումարը տասնյակ և միգուցե նաև 100 տարի ոչ ոք չի կարող տնօրինել և օգտագործել: Ի վերջո օրենքը բողոքարկվեց և իրավահաջորդները կարողացան ժառանգված գումարը կանխիկ ստանալ:

Մարդկանց մոտ ցածր մակարդակի է վստահությունը ֆինանսական համակարգի նկատմամբ և ընդհանրապես պետության: Կան ապրանքներ, որոնք տարիների ընթացքում ենթարկվել են թանկացման, ինչ երաշխիք կա, որ 20 տարի անց 10 անգամ չի թանկանա, բայց արդյոք կուտակված գումարները 10 անգամ կավելանան: Որպիսի կենսամակարդակը բարձր լինի, կուտակած գումարը ոչ թե 10 անգամ, այլ 20 անգամ պիտի բարձրանա: Անձի ստացած կենսաթոշակը անգամ բավարար չէ նվազագույն կենսաապահովման համար: Եթե այսօր երիտասարդ սերնդին փորձ էր արվում համոզել, որ ապագայում կունենան բարեկեցիկ ծերություն պարտադիր կամ կամավոր կուտակայինին մասնակից լինելու դեպքում, ապա ինչ պետք է լինի այն մարդկանց պարագայում ովքեր աշխատել են ամբողջ կյանքում և այժմ հայտնվել են նման իրավիճակում, չէ որ այդ մարդիկ տարիներ շարունակ ևս վճարել են տարբերակված վճար, բայց նրանք ստանում են շատ ցածր կենսաթոշակ: Այս խնդրի շուրջ պետք է լուրջ քայլեր ձեռնարկել:

Այստեղ անհրաժեշտ է ընդգծել նաև գործող համակարգի սոցիալական անարդար վերաբերմունքը բարձր և ցածր եկամտային հարկ, նախկինում պարտադիր սոցիալական վճար կատարողների նկատմամբ: Ավելի տրամաբանական կլինի, որ պարտադիր սոցապահովագրության բարձր վճարում կատարողին հատկացվի ավելի բարձր կենսաթոշակ: Այսինքն՝ ակնհայտ կախվածություն դրսևորվի աշխատավարձի, սոցիալական ապահովագրական վճարների և նշանակված կենսաթոշակի միջև: Այս դեպքում պետք է կիրառվի հաշվարկման նոր մոդելի բանաձև, որն անպայմանորեն հաշվի կառնի յուրաքանչյուր թոշակառուի անհատական գործակիցը:

Ինչպես պետական կառավարման համակարգի արդյունավետության բարձր մակարդակով, այնպես էլ կենսաթոշակային համակարգով տարբեր փորձագետների կարծիքով աշխարհի լավագույններից մեկը և Ասիայի լավագույն մոդելը համարվում է Սինգապուրի կենսաթոշակային համակարգը [*Սինգապուրի կենսաթոշակային հիմնադրամի պաշտոնական կայք*]: Այստեղ կենսաթոշակային կուտակային համակարգում սահմանված է վճարման սանդղակ՝ կախված աշխատողի տարիքից, ընդ որում՝ աշխատողը երիտասարդ տարիքում ավելի շատ վճարում է կատարում, քան ավելի մեծ տարիքում, այսպես՝ եթե 20 տարեկանում պահում կատարվում է 20 %-ի չափով, ապա արդեն 50 տարեկանում այն հասնում է 5 %-ի [*Yeo Boon Kiat*]: Սա հիմնավորվում է այն հանգամանքով, որ տարիքի ավելացման հետ մեկտեղ աշխատողի աշխատունակությունը նվազում է:

Հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ ՀՀ-ում առողջապահության ապահովագրության համակարգը դեռ զարգացած չէ, տարիքի ավելացման հետ ավելանում են նաև առողջության պահպանման ծախսերը և կուտակային կենսաթոշակի վճարման չափի

կրճատումը, այս առումով նույնպես դրական էֆֆեկտ կունենա:

Պետության սոցիալական քաղաքականության պատասխանատուների կողմից պետք է քննարկման առարկա դառնա նաև կուտակված միջոցների մի մասի ժամանակից շուտ տնօրինումը որոշակի սոցիալական խմբերի համար, օրինակ հաշմանդամների կամ մահաբեր հիվանդություններ ունեցողների դեպքում, ինչը նույնպես կնպաստի կուտակային կենսաթոշակային համակարգի հանդեպ բնակչության վստահության մեծացմանը:

Եզրակացություն

Այս ամենից պարզ է դառնում, որ համակարգը դեռևս ամբողջությամբ չի գործում և համակարգային ուսումնասիրության, խնդիրների դասակարգման, դրանց լուծումների առաջադրման կարիք ունի: Վերջինիս մեծապես կարող է օգնել միջազգային լավագույն փորձի և մոդելների ուսումնասիրությունն ու տեղայնացումը, այդ թվում՝ Սինգապուրի փորձը և կիրառվող գործիքակազմը: Բարելավման ուղղություններից մեկը պետք է լինի նաև քաղաքացիների շրջանում կուտակային կենսաթոշակային համակարգի արդյունավետ դիրքավորումը, նրանց մոտ համակարգի հանդեպ դրական վերաբերմունքի ձևավորումը:

Գրականության ցանկ

1. Ա. Բոյաջյան, Կ. Պետրոսյան, Ղ. Հարությունյան, Կ. Ռաֆայելյան, «Պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրման հնարավոր ազդեցությունները», Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ, Գիտական տեղեկագիր 2014թ.:
2. ՀՀ Սահմանադրություն, 1-ին հոդված:
3. «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենք, Հոդված 1, ընդունված է 22.12.2010թ.:
4. «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենք, ընդունված է 22.12.2010թ.:
5. «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենք, Հոդված 7, ընդունված է 22.12.2010թ.:
6. Stephen Owens, Joseph Killilea, “Spending Review Paper 2021” Challenges and Strategies for Reforming Publicly Funded Pension Systems, Public Service Pay and Pensions Division Department of Public Expenditure and Reform, July 2021, p11
7. Yeo Boon Kiat, “Regulation of State and Supplementary Pension Schemes in Singapore: Overview”, Allen & Gledhill LLP, UK 2020 https://uk.practicallaw.thomsonreuters.com/w-027-5074?transitionType=Default&contextData=(sc.Default)&firstPage=true#kh_relatedContentOffset
8. The World Bank, World Development Indicators, https://data.worldbank.org/indicator/SP.POP.0014.TO.ZS
9. Սինգապուրի կենսաթոշակային հիմնադրամի պաշտոնական կայք https://www.pensionfundsonline.co.uk/

RA CUMULATIVE PENSION SYSTEM PROBLEMS AND OPPORTUNITIES FOR IMPROVEMENT

Sargsyan K. N.
PhD in Economics
EUA, Chair of Management
karinesarg@yahoo.com
Grigoryan H. H.
PhD in Economics, Associate Professor
EUA, Chair of Economics and Finance
hovig@mail.ru

Abstract

The pension system of any country must solve one problem: to provide pensioners with a proper amount of pensions, a sufficient standard of living, providing living conditions for the latter, but various researches and studies, and analyses of the world-renowned bodies show that in our country over the past 25 years the situation, created as a result of economic realities, is far from being satisfactory.

The situation got worse due to the 44-day war and the Coronavirus Pandemic, as a result of which Armenia, in addition to the security-diplomatic problems, also faces serious demographic and social challenges leading to the collapse of the current system.

Within the framework of this article, an attempt has been made to study the current cumulative pension system in the Republic of Armenia, to identify the existing problems, and as a result of studying international best practices, to offer new approaches to improve the current system.

Pension systems are one of the pillars of a modern welfare state. The aging of the population, caused by a lower life expectancy and low birth rates, has led to a crisis in the state pension system in a number of countries, including a large number of developed countries. For the stability of the system, changes are needed based on the study of the best international experience, the needs of the population, and the state policy.

Keywords: pension system, reform, profitability, pension fund, justice.

Ներկայացվել է՝ 15.04.2022 թ.
Գրախոսվել է՝ 31.05.2022 թ.

GLOBAL BANKING STABILITY UNDER THE COVID-19 CRISIS

Anna Hanisyan
PhD in Economics
EUA, Chair of Economics and Finances
anna.hanisyan@gmail.com

Abstract

The COVID-19 pandemic has become a serious testing for the financial system worldwide, and first of all for the global banking sector stability. Taking into account the fact that because of the pandemic crisis the economic activity worldwide is under threat and there are probable new risks to the global banking system stability, it is of high importance to investigate the impact of this pandemic on the global banking sector stability and to assess its potential recovery signals.

In this article the main COVID-19 pandemic effects on the global banking sector different areas (profitability, non-performing loans, credit risk management, securitization, customer relationship, operational resilience, volatility in stocks) are examined, worldwide taken measures are analyzed, and based on the conclusions and inferences certain recommendations are offered to central banks (the main monetary authorities), as well as to commercial banks, particularly targeted negative impact mitigation strategies are presented and coordinated actions are suggested to provide liquidity to the economy maintaining the banking sector stability.

Keywords: Banking Sector Stability, COVID-19 Pandemic Crisis, Bank Operational Resilience, Credit Risk Management, Non-Performing Loans (NPLs).

Introduction

The COVID-19, which was officially declared a global pandemic by the WHO (World Health Organization) on March 11, 2020, has completely changed the world economy and had an immense impact on most businesses. Although it seems early to measure the overall negative economic effects and consequences of the COVID-19 crisis, its direct or indirect harmful and adverse influence is obvious in many countries and industries, including the banking sector. The main purpose of this article is to investigate the global banking stability under the crisis induced by the novel COVID-19 outbreak, to explore banking strategies implemented all over the world and to offer certain recommendations to help the banking sector to play their crucial role in the economy.

It is not a secret that the banking sector is one of industries which has the greatest impact of the pandemic crisis because of the loan portfolios of banks, as lots of borrowers are confronted with sharp decreases in their revenues, mostly having a difficulty in repaying their obligations when they come due.

The banking system has always been at the «heart» of the crises, but this time the circumstances are different, as today the global economy is facing a crisis related to integral and global health issues. In case of the previous global crises banks were mostly a part of the crisis problem, but nowadays banks are given a huge role in the economy, they are considered to be a part of the problem solution, and this approach makes the strategies adopted by banks of high importance.

The Banking Sector Areas Mostly Impacted by the COVID-19

The global banking sector has entered into the pandemic crisis with stronger capitalization and better liquidity than in case of prior crises [*European Banking Authority 9*], but, however, vulnerabilities and susceptibilities are evident in several areas. The coronavirus pandemic has caused considerable instability and significant fluctuations in global financial markets. A number of banks in different parts of the world still suffer from low profitability, low valuations and high levels of non-performing loans and other assets.

While the full effects are yet to be identified, we can separate the following banking sector areas, which are considered to be more effected by the COVID-19:

- customer relationship;
- profitability;
- operational resilience;
- non-performing loans;
- credit risk management;
- volatility in stocks;
- securitization.

Customer Relationship

The COVID-19 pandemic has accelerated and advanced the digitalization in the banking sector, although the necessity of digital channels, methods and strategies has been crucial in banking even long before the last pandemic had started.

During the tough periods of COVID-19 banks play a key role in slowing down the spread of the pandemic helping their clients to use contemporary digital and remote channels in a better manner. Banks have built new experiences of helping the customers to manage debt, do payments, adjust budgets, and use government programs. In addition to the standard bank responsibilities to be loyal, low cost and productive, in the context of the pandemic crisis the most essential bank responsibilities additionally include transparency, clarity, support for corresponding digital channels and tools, services and new products for customers.

For banks digital servicing is less expensive than mobile phone approaches, but the problem for most banks remains the fact that just few customers use digital channels because they are unfamiliar to them. As a solution commercial banks can use call centers to teach their customers how to use digital methods and channels. To improve efficiency and experience simultaneously, many banks will have to review their general customer experience preferences and priorities.

In this crisis situation the change of consumer behavior is obvious and it should also be considered by banks. During the recent years the banking sector has been modified continuously, being reinvented to meet their clients' possible expectations and the need for reductions in costs [*Marcu 205-223*].

Profitability

Banks can increase their profitability only in case of optimizing their business models to take corresponding measures and to enhance cost efficiency. In this context banks should refocus on longer-term value creating opportunities, decreasing excess capacities in the banking sector. The extent of the impact of a crisis situation depends not only on the intensity of the contraction, but also on the scopes of policy measures adopted in each jurisdiction.

The main profitability indicators of the banking sector [*Owusu, Alhassan 1488-1502*] are:

1. Return on Average Assets (ROAA), which is the ratio between the net income and the average total assets, we can say that it reflects the efficiency of management a lot because it shows how the profit is generated by the bank using its total assets;
2. Return on Average Equity (ROAE), which is the ratio between the net income and the average shareholders' equity, it shows how efficient the shareholders' equity is being used;
3. Cost-to-Income Ratio (CIR), which is the ratio between the operating costs and the operating income, it shows how efficient the bank governs its business.

It is logical that the profitability of a bank is better when the above-mentioned first two indicators (ROAA, ROAE) are higher, while the third one (CIR) is lower.

Development tendencies of the main profitability indicators in the EU banking sector (European Union) are presented in the Table 1[*European Central Bank 2021a, 2021b*].

Table 1.

Profitability indicator	*December 2017*	*December 2018*	*December 2019*	*December 2020*
ROAA	0,77%	0,76%	0,72%	0,42%
ROAE	8,98%	8,71%	8,01%	5,91%
CIR	65,51%	64,09%	61,52%	64,66%

The Main Profitability Indicators in the EU Banking Sector 2017-2020

The data in the Table 1 show that in the EU all main profitability indicators of the banking sector had a progress during the period before the pandemic (from 2017 to the end of 2019). At the same time, it is clearly seen that during the first year of the COVID-19 pandemic ROAE and ROAA had a significant decline, while CIR had an increase.

It should be mentioned that the bank profitability performed much better than many analysts had expected. ROAE in 2020 was less than the cost of equity but, however, it is still above the metric observed after the crisis of 2008 [*McKinsey & Company, The Great Divergence 12*].

Operational Resilience

Maintaining operational resilience while countries all over the world have imposed strict lockdowns has required banks to rely on their continuity plans, but has also required the fast adaptation of those plans as the duration and severity of lockdowns have become definite.

Planning for operational resilience will certainly be a priority for boards of directors and/or top management of banks, and doing so it is essential for them to take into account a number of short-term and longer-term considerations connected with the COVID-19 pandemic. It will also be vital to understand whether the operational resilience achieved was proper, and if not, what lessons should be learnt for the future.

I consider that in this context there are at least three important steps to be taken by banks as financial institutions:

1. improving resilience plans: banks need to update their continuity plans and operational resilience settlements to justify the longer-term challenges and risks that may come with the later scenes of the pandemic response;

2. governing the operational resilience: banks need to have an appropriate governance and control system to manage operational resilience in response to the pandemic crisis, and executive officers of banks should have the responsibility to take steps for strengthening and protecting the bank's resilience;

3. conducting crisis communications: the conduct of effective crisis communications refers to all parties, including bank internal communications, contact with their customers, different stakeholders and, of course, the regulators, besides banks should adapt these communications for different periods and responses to the crisis situation to ensure their operational resilience. By the way, industry-related information sharing is also essential to support the resilience of the wider financial sector.

Non-Performing Loans (NPLs)

As it could be anticipated, the COVID-19 crisis has led to a sharp rise in non-performing loans (NPLs - loans the borrowers of which are not fulfilling their financial obligations to repay in accordance with the contractual agreements) in the global banking sector. Commercial banks have faced a considerable increase in non-performing loans (NPLs) because of the rise in household and company defaults and have been forced to increase their loan loss provisions (LLPs) and allowances.

For example, the statistics of all US banks' non-performing loans is represented in the Figure 1 [*BankRegData, Non-Performing Loans (NPLs) of All US Banks*].

Figure 1.

Quarter	NPL Amount
2019 Q1	100,551,209,000
2019 Q2	95,885,663,000
2019 Q3	95,541,337,000
2019 Q4	95,412,799,000
2020 Q1	102,389,122,000
2020 Q2	118,253,626,000
2020 Q3	127,179,554,000
2020 Q4	128,801,845,000
2021 Q1	122,906,439,000
2021 Q2	109,688,025,000
2021 Q3	102,735,734,000
2021 Q4	99,637,115,000



Non-Performing Loans (NPLs) of All US Banks 2019-2021, billion US dollar

From the Figure 1 it is obvious that the volume of NPLs has increased in 2020, and it is easy to conclude that it is due to the pandemic crisis.

It is not a secret that NPLs negatively affect banks' ability to inject liquidity into the real economy and the continued situation can limit banks' capacities to absorb higher loan losses over time, undermining their ability to credit and support the economic recovery.

The assessment of the extent of the rise in NPLs followed by the COVID-19 pandemic is crucial for the subsequent and relevant bank policy responses to repair balance sheets, to take actions to restore banks' financial soundness and strengthen their resilience.

As responsible institutions, banks ought to remove NPLs from their respective balance sheets as effectively as possible. In my opinion securitization can be a good solution here as it plays a vital role in banks' balance sheet restructuring

Credit Risk Management:

The conditions caused by the COVID-19 crisis have special significance for controlling and mitigating credit risk, that's why banks have adjusted their credit risk management principals and they continue to explore potential new approaches to the crisis challenges.

According to COVID-19 recovery forecasts carried out by the McKinsey Institute in 2020, risk margins overall in the world will primarily exceed the levels already experienced in previous global crises (see the Figure 2) [McKinsey & Company, Global Banking Annual Reviews].

Figure 2.



Estimated Credit Risk Margins (The Cost of Risk/Lending Balance) for 2005–2025, basis points

The COVID-19 crisis has provoked the following essential changes in the credit risk management:

1. the credit worthiness has been changed a lot, in this situation I think it is necessary to analyze and observe the demand shocks and uncover the possible defaults;

2. it has become harder to differentiate the borrowers who pertain to the same sector or even subsector, to my mind here it is important to deepen in the borrowers' business models in order to estimate the resilience to the crisis aroused by the pandemic;

3. the available data are insufficient and lagging, besides they don't automatically enter into the decision-making process, in my opinion alternative and at the same time higher frequency data should be gathered and analyzed to derive the performance trends;

4. there is a need to increase the social responsibility, because customers' preferences have changes, as a way to reach this I can offer shifting to the customer-oriented interaction, making it a preference in a digital transformation;

5. there is a need to newly address the increased quantity of non-performing exposures in the banking system, for which I think it is crucial to elaborate certain solutions specific to the relevant sector.

Volatility in Stocks

In the financial sector the stock markets worldwide were the most affected ones by the pandemic, recording significant losses since the outbreak of the pandemic. One of the main reasons of it can be considered the high level of uncertainty provoked by the pandemic, and it is not a secret that uncertainty is one of the important factors influencing investment decisions.

According to the survey conducted by McKinsey & Company in 2020-2021, banks were trading at about 1 times book value against 3 times for other sectors and 1.3 times for non-bank financial institutions, with 47 % of banks trading on their books for less than the equity, and this undervaluation has remained even after gaining about $1.9 trillion (which is more than 20 %) in market cap in the period covered (see the Figure 3) [McKinsey & Company, Global Banking Annual Review 2021].

The same survey showed that from 599 analyzed financial institutions only 65 had all the gains.

Figure 3.



Change in the Market Capitalization During the Pandemic (February, 2020 - October, 2021)

Banking valuations consider that capital markets are devaluating and discounting an industry which basis for growth and profitability is respectable and resilient but not attractive.

Securitization

The Pandemic crisis has made the securitization an integral component in a bank liquidity risk management. Nowadays liquidity in banks is not limited by the traditional balance sheet liquidity measures, such as cash and marketable securities. It should be emphasized that securitization helps to increase banks' credit supply across different sectors. There is a structural shift in the bank lending function, liquid loans are being financed through

securitization, while illiquid loans - from deposits, changing the risk profiles of commercial banks.

The European Commission has considered the securitization as a vital tool for strengthening the capacity of financial institutions to enhance the quick economic recovery. For the purpose of combatting the economic shocks of the pandemic crisis, in July 2020 the European Commission proposed a Capital Markets Recovery Package, one important element of which refers to amendments to the EU's securitization regime [Council of the European Union, Amendments to Financial Regulation]. The aim of the proposals is to further encourage the use of securitization by commercial banks. It is anticipated that this measure will help to maintain and even foster the lending capacity in the real economy, in particular the lending capacity to SMEs.

Taken Measures to Reduce the Negative Impact of the Pandemic Crisis

All the taken measures can be divided into two large groups:

1. Measures adopted by Governments: The Governments of various countries in the USA, Europe, Latin America and in other parts in the world have taken urgent actions to respond the economic effects and consequences of the health crisis caused by the coronavirus outbreak.

2. Financial Measures: These measures refer to financial supervisors and regulators which have gradually published different and corresponding measures and recommendations to maintain the financial stability.

In order to mitigate the adverse impact of COVID-19 pandemic on companies, individuals and households, most governments around the world have taken steps to increase and boost their liquidity. From all the measures as essential ones can be mentioned the followings:

- public guarantees provided on loans granted by banks; and
- payment moratoriums.

In the scopes of financial measures, the primary global standard setter for the prudential regulation of banks, the Basel Committee on Banking Supervision (BCBS) [Basel Committee on Banking Supervision 1] recommends the regulators to consider risk-mitigating impacts on the bank capital for the following loans:

1. loans for which government guarantees can be given; and
2. loans that are subject to moratoriums.

It can be noticed that the actions to reduce the COVID-19 crisis in many EU countries firstly include different moratoriums on credits. For instance, the Government in Spain has confirmed a moratorium on mortgage payments – for benefiting from this moratorium, debtors in this country have to meet the announced requirements and conditions. Another example is France where the banks have allowed corporations to defer their credit repayments for until 6 months. The banks in Italy have also announced a moratorium on loans to SMEs [Bichi C., Coronavirus and Banking Moratoriums in Some European Countries].

Besides, the European Commission Bank (ECB) developed a set of monetary policy measures to mitigate the impact of the coronavirus pandemic on the EU economy, and launched its €750 billion pandemic emergency purchase program to lower borrowing costs and increase lending in the EU [Weill 818-833].

The below-mentioned Figure 4 [International Finance Corporation 7] represents the strategies adopted by emerging market (EM) banks against the negative effects of the pandemic crisis.

Figure 4.



Strategies Adopted by Emerging Market (EM) Banks in 2020 Against the Negative Effects of the Pandemic Crisis

From the perspective of the banking regulation, the COVID-19 crisis has made regulatory authorities throughout the world make anticyclical capital buffers to support lending to the public. For example, in March 2020 the authorities in Britain have reduced the anticyclical capital buffer rate up to 0% to UK borrowers. As a result of the mentioned measures, the credit capacity of corresponding banks has risen up to £ 190 billion [Bank of England Measures to Respond to the Economic Shock].

However, the taken measures should not reduce the resilience of banks and the reliance in the financial system [Drehmann et al. 5]. Hence, the policy makers are considered to find the relevant balance between keeping banks' credit capacity and banking sector resilience [Lewrick et al. 6].

The COVID-19 pandemic has increased financial sector risks also in the Caucasus and Central Asia (CCA) region, by the way, Georgia and Armenia have the largest banking sectors in the region, with total assets of more than 90 % of GDP [IMF, Managing Financial Sector Risks from the COVID-19 Crisis in the Caucasus and Central Asia]. Central banks in the region have conducted relevant monetary policy to protect the banking sector from the adverse impact of the COVID-19 shock. Most central banks reduced their policy rates suppling additional liquidity into the banking system. Central banks also implied many instruments to enhance lending, including decreasing the reserve requirements, using loan repayment moratoriums, repo arrangements, giving loan guarantees, and lowering the cost of re-financing.

Conclusions and Recommendations

Based on the research and analysis results it can be concluded that unlike many previous crises and shocks, the COVID-19 crisis is not a banking crisis; it can be considered as a crisis of the real economy. Banks have already been and will surely be affected by the pandemic crisis, as they will probably have credit losses, besides the demand for banking services will decrease. But the positive point here is the fact that the global banking sector entered this crisis much better capitalized and is relatively more resilient than it was before.

The analysis reveals that the global banking system has shown resilience and has remained its stability under the COVID-19 crisis, mitigating its wider economic impact. However, I consider that the banking sector still has to be cautious of complacency to secure its future. The acceleration of digitalization trends connected with the pandemic represents some challenges, as well as opportunities for more digital economy. Anyway, despite of the taken measures, low profitability remains a concerning issue, which makes think of further measures to be taken.

To help banks to continue playing their crucial role in economies during and after unusual and difficult periods like the COVID-19 pandemic, to provide more liquidity to banks and to the real economy I offer the following recommendations:

To the main monetary authorities (central banks):

- to continue the conduct of the expansionary monetary policy, particularly in the direction of lowering borrowing costs and increasing lending,
- to relieve the conditions of existing long-run refinancing operations and to launch a number of new ones;
- to ease collateral requirements and standards, expanding the list of assets that banks have the right to accept as collaterals, which will increase the volume of borrowings by commercial banks;
- to mitigate several regulatory provisions in applying of the unlikely-to-pay classification for those borrowers who are using governmental guarantees or moratoriums;
- to make the supervision of banks more flexible regarding to the deadlines, procedures and timelines.

To commercial banks:

- to keep on focusing on their clients and customers' needs and necessities to help them to survive and to recover from the negative impact of the pandemic crisis;
- to adjust their functioning models to keep up effectiveness, productivity, and flexibility;
- to change the risk management thresholds of the bank;
- to organize different online tutorials - financial education courses to familiarize their clients with the use of digital means and channels.

References

1. Basel Committee on Banking Supervision (BCBS), «Measures to Reflect the Impact of COVID-19, Bank for international Settlements», 2020, p. 1.
2. Council of the European Union, «Amendments to Financial Regulation to Facilitate Economic Recovery Post COVID-19», Brussels, November 6, 2020, p. 4.
3. Drehmann M., Farag M., Tarashev N., Tsatsaronis K., «Buffering COVID-19 Losses – the Role of Prudential Policy», BIS Buletin 9, 2020, p. 5.
4. EBA (European Banking Authority), Annual Report 2020, p. 9.
5. International Finance Corporation (IFC), «The Effects of COVID-19 and the Need for Bank Restructuring», June 2021, p. 7.
6. Lewrick U., Schmieder, C., Sobrun, I., Takáts, E., «Releasing Bank Buffers to Cushion the Crisis – a Quantitative Assessment», BIS Bulletin 11, 2020, p. 6.
7. Marcu M. R., «The Impact of the COVID-19 Pandemic on the Banking Sector», SNSPA, 2021, pp. 205-223.
8. McKinsey & Company, «Global Banking Annual Review 2021: The Great Divergence», p. 12.
9. Owusu F. B., Alhassan A. L., «Asset-Liability Management and Bank Profitability: Statistical Cost Accounting Analysis from an Emerging Market», International Journal of Finance & Economics, 2021, Vol. 26, No. 1, pp. 1488-1502.
10. Weill L., «Convergence in Banking Efficiency Across European Countries», J. Int. Financ. Markets, Inst. Money 19 (5), 2009, pp. 818–833.
11. Bank of England, (2020), «Bank of England Measures to Respond to the Economic Shock from COVID-19», 10.april.2022, https://www.bankofengland.co.uk/news/2020/march/boe-measures-to-respondto-the-economic-shock-from-covid-19
12. BankRegData, Non-Performing Loans (NPLs) of All US Banks, 10.april.2022, https://www.bankregdata.com/allAQmet.asp?met=NPL

13. Bichi C., «Coronavirus and Banking Moratoriums in Some European Countries», 2020, 10.april.2022, http://www.opiniibnr.ro/index.php/macroeconomie/380-coronavirusul-simoratoriile-bancare-din-unele-tari-europene
14. ECB (European Central Bank), Official Website (2021a, 2021b), 10.april.2022, https://www.ecb.europa.eu/press/pr/date/2022/html/ecb.pr220217~28ffc75d4c.en.html
15. IMF, «Managing Financial Sector Risks from the COVID-19 Crisis in the Caucasus and Central Asia», March 2022, 10.april.2022, https://www.elibrary.imf.org/view/journals/087/2022/005/article-A001-en.xml
16. McKinsey & Company, Global Banking Annual Reviews, 10.april.2022, https://www.mckinsey.com/industries/financial-services/our-insights/global-banking-annual-review.

Ներկայացվել է՝ 11.04.2022 թ.
Գրախոսվել է՝ 31.05.2022 թ.

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒՂԻՆԵՐԻ ԱՊԱՇՐՋԱՓԱԿՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ԱՊՐԱՆՔԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Խաչիկյան Ս.Վ.
պ.գ.թ., դոցենտ
ՀՊՏՀ, Ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետ
sos.khachikyan@gmail.com
Թորոսյան Ա.Ա.
մագիստրանտ
ՀՊՏՀ, ՏԿ և ՄՏՀ ֆակուլտետ, Մակրոէկոնոմիկայի ամբիոն
aliktorosyan1999@gmail.com

Ամփոփագիր

Հոդվածում ուսումնասիրվել են Արցախյան 44 օրյա պատերազմի արդյունքում կնքված պայմանագրի դրույթներից մեկի՝ հաղորդակցության ուղիների ապաշրջափակման արդյունքում ստեղծվող հնարավորությունները և ՀՀ երկաթուղային ցանցի լիարժեք գործարկման տնտեսական ազդեցությունը: Հետազոտվել են երկաթուղային տրանսպորտի գործունեությունը կարգավորող օրենսդրական դաշտը, այն բնութագրող ցուցանիշների դինամիկան, դրանց հիմնական փոփոխությունների պատճառները և տնտեսական կարևորությունը: Հոդվածում ուսումնասիրվել են հաղորդակցության ուղիների ապաշրջափակման արդյունքում հարակից և տարածաշրջանային երկրների հետ հուսալի, արդյունավետ տրանսպորտային կապ ունենալու, ինչպես նաև «Մետաքսի ճանապարհի» բաղկացուցիչ մաս դառնալու հնարավորությունները: Կատարվել են մի շարք հաշվարկներ հաղորդակցության ուղիների ապաշրջափակման արդյունքում բացվող ուղիների գործարկման, դրանց գների և հեռավորությունների վերաբերյալ: Բոլոր ուսումնասիրությունները և վերլուծությունները իրականացնելիս և հաղորդակցության ուղիների ապաշրջափակման արդյունքում հնարավոր բացվող ճանապարհների ուղղությունները ու քարտեզները ստանալու համար օգտագործվել է ArcGIS ծրագրային փաթեթը: Ուշադրություն է դարձվել բեռնափոխադրման գների կոռելացիոն կապի ուժգնությանը ընդհանուր արտահանման և ներմուծման միջին գների միջև: Ուսումնասիրվել է նաև կոռելացիոն կապի ուժգնությունը բեռնափոխադրման գների առանձին ապրանքախմբերի արտահանման և ներմուծման գների միջև: Հոդվածի վերջում կատարվել են առաջարկություններ կառավարության կողմից առաջիկայում անհրաժեշտ քայլերի ուղղությամբ:

Հիմնաբառեր. Հաղորդակցության ուղիներ, երկաթուղի, տրանսպորտային կապ, «Մետաքսի ճանապարհ»:

Ներածություն

Հայաստանի Հանրապետությունը 2020թ-ի Արցախյան 2-րդ պատերազմից հետո հայտնվեց տրանսպորտային հաղորդակցության ուղիների հետ կապված էական փոփոխությունների իրականացման անհրաժեշտության առաջ: Դա ամրագրվեց քաղաքական հայտարարությամբ, որը նշանակալի փոփոխություններ կարող է առաջացնել նաև ՀՀ տնտեսական համակարգում: Հայտարարությունը կազմված է 9 կետերից, որոնցից 9-րդ կետի բովանդակությունը հետևյալն է.

«Տարածաշրջանի բոլոր տնտեսական և տրանսպորտային կապերն ապաշրջափակվում են: Հայաստանի Հանրապետությունը երաշխավորում է տրանսպորտային կապերի անվտանգությունը [*ՀՀ վարչապետի պաշտոնական կայք*] Ադրբեջանի Հանրապետության արևմտյան շրջանների և Նախիջևանի ինքնավար Հանրապետության միջև՝ երկու ուղղություններով քաղաքացիների, տրանսպորտային միջոցների և ապրանքների անխոչընդոտ տեղաշարժը կազմակերպելու համար»: Հայտնի է, որ խորհրդային տարիներին որպես տրանսպորտային հաղորդակցության միջոց, այդ ուղղությամբ եղել է երկաթուղային հաղորդակցություն: Քանի որ Հայաստանը չունի ուղիղ ելք դեպի ծով և տարածքի մեծ մասը գտնվում է լեռներում, ծովի մակարդակից 1800 մետր բարձրության վրա, տնտեսության համար երկաթուղային տրանսպորտը միշտ ունեցել է բացառիկ նշանակություն՝ տնտեսական կապերի անխափան ապահովման և հանրապետության տնտեսական ու սոցիալական զարգացման համար:

Հայաստանում երկաթուղու կառուցումը կապվում է Անդրկովկասյան երկաթուղու շինարարության հետ, որը սկսվել է 1865 թվականին: 1872 թվականին շահագործման հանձնվեցին Փոթի-Թբիլիսի, 1899 թվականին՝ Թբիլիսի-Ալեքսանդրապոլ երկաթուղիները [*Сагратян, 130*]: 1902 թվականին շահագործման հանձնվեցին Ալեքսանդրապոլ-Ուլուխնի-երևան, 1908 թվականին՝ Ուլուխնի-Ջուլֆա, 1957 թվականին՝ Երևան-Հրազդան, 1963 թվականին՝ Հրազդան-Սևան, 1964 թվականին՝ Անի-Ախթամար, 1976 թվականին՝ Ախթամար-Ծովագյուղ-Շորժա-Զոդ երկաթուղիները: Ըստ էության, կարելի է փաստել, որ խորհրդային ժամանակաշրջանում Հայաստանում ավարտվեց երկաթուղային լիարժեք ցանցի գործարկումը: Դրա հետ մեկտեղ, երկաթգծերի ամբողջ երկայնքով սկսվեց էլեկտրաֆիկացումը: Առաջինը էլեկտրաֆիկացվել են Սանահին-Լենինական, ապա Լենինական-Երևան ուղեմասերը, որոնցով ստեղծվեց Լենինգրադ-Լենինական-Երևան խոշորագույն էլեկտրաֆիկացված գծերից մեկը՝ 3774 կմ երկարությամբ: 1980-1985 թվականներին շահագործման հանձնվեցին երկաթուղու Մասիս-Նուռնուս, Իջևան-Դիլիջան, Հրազդան-Դիլիջան գծահատվածները [*Հայկական Սովետական Հանրագիտարան, 32*]: Ներկայումս Հայկական երկաթգծային ցանցի երկարությունը կազմում է 1410 կմ՝ իր 73 կայաններով, որոնցից 4-ը հարվող են՝ կապելով Հայաստանը Վրաստանի, Ադրբեջանի, Թուրքիայի հետ [*«Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ, 14*]:

ՀՀ-ում երկաթուղային տրանսպորտի գործունեությունը կարգավորող օրենսդրությունը բաղկացած է ՀՀ քաղաքացիական օրենսգրքից, «Տրանսպորտի մասին» ՀՀ օրենքից, «Երկաթուղային տրանսպորտի մասին» ՀՀ օրենքից և այլ իրավական ակտերից: Եթե ՀՀ միջազգային պայմանագրերով սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են երկաթուղային տրանսպորտի մասին ՀՀ օրենսդրությամբ, ապա կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը [*«Տրանսպորտի մասին» ՀՀ օրենք*]: Երկաթուղային տրանսպորտի մասին ՀՀ օրենսդրությամբ կարգավորվում է ՀՀ տարածքում ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտի գործունեության իրավական, կազմակերպական և տնտեսական հարաբերությունները, սահմանում է ոչ ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտի պետական կարգավորման հիմունքները, ինչպես նաև կարգավորում է երկաթուղային տրանսպորտի գործունեություն իրականացնող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի փոխհարաբերությունները պետական կառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ: Երկաթուղային տրանս-

պորտում սակագնային քաղաքականությունը իրականացնում է ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը՝ հիմք ընդունելով երկաթուղային տրանսպորտի կառավարչի ներկայացրած հաշվետությունները: Դրանց դրույքաչափերը սահմանվում են «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ ֆրախտային տարվա երկաթուղային տրասնպորտով բեռների փոխադրման սակագնային քաղաքականության մասին «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ գլխավոր տնօրենի հրամանով [*«Երկաթուղային տրանսպորտի մասին» ՀՀ օրենք*]:

Երկաթուղին Հայաստանի համար մշտապես ունեցել է կարևոր նշանակություն, և ներկայումս ունի զարգացման լուրջ հեռանկարներ: 2000-2020 թթ ժամանակահատվածում երկաթուղային տրանսպորտով փոխադրված բեռների ծավալը աճել է 2.2 անգամ՝ 1423.5 հազար տոննայից հասնելով 3201 հազար տոննա: Սակայն ընդահանուր փոխադրված բեռների ծավալի մեջ երկաթուղով փոխադրված բեռների տեսակարար կշիռը նվազել է՝ 31.8%-ից (2000 թ.) դառնալով 21.6% (2020 թ.): Այսինքն՝ ընդհանուր փոխադրված բեռների ծավալը աճել է ավելի արագ, քան երկաթուղով փոխադրված բեռները: Դրա փոխարեն աճել է ավտոմոբիլային տրանսպորտով փոխադրված բեռների տեսակարար կշիռը՝ 46.3%-ից (2000 թ.) դառնալով 65.7% (2020 թ.):

Ուղևորափոխադրումների դեպքում 2000-2019թթ ժամանակահատվածում երկաթուղով փոխադրված ուղևորների քանակը նվազել է՝ 1.1 միլիոն ուղևորից հասնելով 0.4 միլիոն ուղևորի (ուղևորափոխադրման տվյալների վերլուծության համար ընտրվել է 2019 թվականը, քանի որ 2020 թվականին կորոնավիրուսային համաճարակի պատճառով ուղևորափոխադրված ուղևորների քանակը կտրուկ նվազել է): Երկաթուղով փոխադրված ուղևորների տեսակարար կշիռը ընդհանուր ուղևորափոխադրումների մեջ, ինչպես բեռնափոխադրումների դեպքում, նվազել է՝ 0.8%-ից (2000 թ.) դառնալով 0.2% (2019 թ.): Ինչպես բեռնափոխադրումների, այնպես էլ ուղևորափոխադրումների դեպքում աճել է ավտոմոբիլային տրանսպորտով իրականացված ուղևորափոխադրումների տեսակարար կշիռը՝ 75.7%-ից (2000 թ.) մինչև 81.9% (2019 թ.): Բեռնաշրջանառությունը և ուղևորաշրջանառությունը հաշվարկվում են տարբեր մեթոդաբանության հիման վրա: Երկաթուղային տրանսպորտն ունի երկրորդ ամենամեծ տեսակարար կշիռը ընդհանուր բեռնաշրջանառության մեջ. 2000 թվականին՝ 20.7%, 2020 թվականին՝ 17.9%: 2000 թվականին ընդհանուր ուղևորաշրջանառության մեջ ավտոմոբիլային տրանսպորտի տեսակարար կշիռը եղել է 63.4%, երկաթուղային տրանսպորտինը՝ 2.3%: 2019 թվականին ընդհանուր ուղևորաշրջանառության մեջ ավտոմոբիլային տրանսպորտի տեսակարար կշիռը եղել է 77.8%, երկաթուղային տրանսպորտինը՝ 3% [*Տարեգիրք, 381*]:

Երկաթուղային տրանսպորտը 2020 թվականին մեծամասամբ օգտագործվել է ներհանրապետական բեռնափոխադրումների ժամանակ՝ երկաթուղով փոխադրված բեռների 63.2 տոկոսը: Դրանց 21.7 տոկոսը եղել է ներկրված ապրանքներ, իսկ 15.1 տոկոսը՝ արտահանված: Սակայն 2000 թվականին պատկերը այլ է եղել. ներհանրապետական բեռնափոխադրումների մասնաբաժինը եղել է 23.4 տոկոս, ներկրված ապրանքների մասնաբաժինը՝ 63.2 տոկոս, արտահանված ապրանքների մասնաբաժինը՝ 13.4 տոկոս: Այսինքն 2000-2020 թվականների ընթացքում երկաթուղային տրանսպորտը սկսել է ավելի քիչ օգտագործվել արտաքին առևտրաշրջանառության համար:

Երկաթուղային տրանսպորտով փոխադրված բեռների մեջ ամենամեծ տեսակարար կշիռ ունի գունավոր մետաղական հան-

քաքարը: 2020 թվականին երկաթուղով փոխադրվել է 2003.3 հազար տոննա գունավոր մետաղական հանքաքար, որն ընդհանուր երկաթուղով փոխադրված բեռների 62.3 տոկոսն է: Երկրորդ ամենամեծ տեսակարար կշիռ ունեցող ճյուղը հանքային շինարարական նյութերի փոխադրումներն են: 2020 թվականին երկաթուղով փոխադրվել են 233.2 տոննա հանքային շինարարական նյութեր, որը ընդհանուր երկաթուղային տրանսպորտով փոխադրված բեռների 7.3 տոկոսն է: Երրորդ տեղում հացահատիկի և աղացվող մթերքի փոխադրումներն են. 2020 թվականին երկաթուղով փոխադրվել է 137.9 հազար տոննա բեռ (4.3 տոկոս): 2000 թվականին պատկերը այլ է եղել. Երկաթուղային տրանսպորտով փոխադրված բեռների մեջ հանքային շինարարական նյութերի տեսակարար կշիռը եղել է 15.4 տոկոս, գունավոր մետաղների հանքաքարինը՝ 11.5 տոկոս, հացահատիկ և աղացվող մթերքներինը՝ 2.3 տոկոս:

Գծապատկեր 1.



Երկաթուղային տրանսպորտով փոխադրված բեռների ճյուղային կառուցվածքը 2000 և 2020 թվականներին [ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը, 143]

Գծապատկերի մեջ ներկայացված վիճակագրության համաձայն երկաթուղային ցանցը սպասարկում է հիմնականում հանքարդյունաբերությունը, որը ՀՀ տնտեսության կառուցվածքային փոփոխությունների պարագայում մեծ արդյունավետություն չի ունենա: Հետևաբար անհրաժեշտ է ընդլայնել այդ ցանցի հասանելիությունը դեպի արտաքին աշխարհի տարբեր կենտրոններ: Հաղորդակցության ուղիների ապաշրջափակման դեպքում հնարավորություն կարող է լինել երկաթգծով միանալ ՌԴ երկաթուղային ցանցին: Երևան-Նախիջևան-Բաքու-Մախաչկալա երկաթգծի երկարությունը մինչև ՌԴ սահման կլինի 1174 կիլոմետր, մինչև Մախաչկալա 1400 կիլոմետր, իսկ մինչև Կրասնոդար 2739 կիլոմետր (տես՝ քարտեզ 1):

Քարտեզ 1.

Երևան-Նախիջևան-Բաքու-Ռուսաստան և Երևան-Ղազախ-Բաքու-Ռուսաստան երկաթգծերը

Չնայած նրան, որ ավտոմոբիլային ճանապարհը ՀՀ-ից ՌԴ, որն անցնում է Վրաստանով, ավելի կարճ է, առավել նպատակահարմար է տրանսպորտային կապ իրականացնել երկաթուղով, քան ավտոմոբիլային տրանսպորտով: Նախ քանի որ ավտոմոբիլային ճանապարհներով երթևեկությունը ձմեռային ժամանակաշրջանում շատ հաճախ խափանվում է՝ կապված Ստեփանծմինդա-Լարս ճանապարհահատվածի փակման հետ: Երկրորդ՝ երկաթուղային տրանսպորտն ունի բեռնափոխադրման կամ ուղևորափոխադրման ավելի ցածր ինքնարժեք, քան ավտոմոբիլային տրանսպորտը ինչպես փոքրածավալ բեռների դեպքում, այնպես էլ ամբողջական բեռնափոխադրող մեքենա վարձելու դեպքում: Երևանից մինչև Կրասնոդար փոքրածավալ բեռներ տեղափոխելու արժեքը մեկ տոննայի համար 595.000 ՀՀ դրամ է [*Trans City ընկերության պաշտոնական կայք*], իսկ երկաթուղով մինչև 12 տոննա բեռ տեղափոխելու արժեքը մեկ տոննայի համար՝ մոտավորապես 42.000 դրամ [*«Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ, 16*]: Ամբողջական բեռնատար մեքենա վարձելու դեպքում 22.5 տոննա բեռնատարողունակությամբ ավտոմեքենայով բեռնափոխադրման արժեքը մոտավորապես 43.900 ՀՀ դրամ է (Տեղեկատվությունը ստացվել է «Սպայկա» ընկերությունից հարցման միջոցով), իսկ երկաթուղու դեպքում՝ 28.000 դրամ: Այսինքն՝ փոքրածավալ բեռների համար երկաթուղային տրանսպորտը մոտավորապես 14 անգամ ավելի մատչելի է, քան ավտոմոբիլային տրանսպորտը, իսկ մեծածավալ բեռների համար՝ 1.5 անգամ: Քանի որ ՌԴ-ն ՀՀ-ի գլխավոր առևտրային գործընկերն է (2020 թվականին ընդհանուր արտահանման 26.5, իսկ ներմուծման 35.9 տոկոսը բաժին է ընկնում ՌԴ-ին [*ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը, էջ 143*]), դեպի ՌԴ տրանսպորտային ծախսերի նվազեցումը կնպաստի ինչպես արտահանման ծավալների աճին, այնպես էլ ներմուծվող ապրանքների գների նվազմանը:

Հետպատերազմյան հայտարարության մեջ նշվում է տարածաշրջանի բոլոր տրանսպորտային ուղիների ապաշրջափակման մասին: Սա նշանակում է նաև, հետագայում,

Երևան-Ղազախ-Բաքու-ՌԴ երկաթգծի շահագործման հնարավորություն (տես՝ քարտեզ 2), որի երկարությունը մինչև ՌԴ սահման 1138 կմ է, մինչև Մախաչկալա՝ 1364 կմ, մինչև Կրասնոդար 2467 կմ: Այսինքն՝ Ղազախով անցնող երկաթգիծը 272 կմ-ով ավելի կարճ է, քան Նախիջևանով անցնողը: Նախիջևանով անցնող երկաթգծի շահագործման դեպքում Հայաստանը պետք է կառուցի 1087 կմ երկարությամբ հատված, իսկ Ղազախով շահագործման դեպքում՝ 959 կմ:

Երևան-Նախիջևան-Բաքու-ՌԴ երկաթգծի շահագործումը ոչ միայն այլընտրանք է ավտոմոբիլային տրանսպորտի համար, այլ նաև հնարավորություն է տալիս ծովային տրանսպորտի նոր ուղիներ ունենալ: Քարտեզ 2-ում ներկայացված է Երևան-Թբիլիսի-Փոթի (քարտեզ 2, գծանակար 2) և Երևան-Նախիջևան-Բաքու-Նովոռոսիյսկ ու Տուապսե նավահանգիստներ տանող երկաթգծերը (քարտեզ 2, գծանկար 1):

Քարտեզ 2.

Երևան-Թբիլիսի-Փոթի և Երևան-Նախիջևան-Բաքու-Ռուսաստան երկաթգծերը

Երևանից մինչև վրացական Փոթի նավահանգիստ տանող երկաթգծի երկարությունը 889 կիլոմետր է, մինչև ռուսական Նովոռոսիյսկ նավահանգիստ՝ 3172 կիլոմետր, իսկ Տուապսե նավահնագիստ՝ 2543 կիլոմետր: ծովային բեռնափոխադրումներ իրականացնելիս վրացական նավահանգիստները տնտեսապես ավելի նպատակահարմար են Հայաստանի համար, քան Ռուսական նավահանգիստները: Սակայն Երևան-Նախիջևան-Բաքու-Ռուսաստան երկաթգծի բացումը այլընտրանք է դառնում ՀՀ-ի համար ծովային բեռնափոխադրումներ իրականացնելիս, որի շնորհիվ նվազում է կախվածությունը Վրաստանից: Այսինքն՝ այլընտրանքը նվազեցնում է որևէ երկրի կողմից գերիշխող դիրքի չարաշահման ռիսկի հավանականությունը: Բացի դրանից ռուսական Նովոռոսիյսկի նավահանգստի բեռնափոխադրման հնարավորությունն ավելի մեծ է քան վրացական Փոթիի նավահանգստինը (Նովոռոսիյսկ 213.3 միլիոն տոննա/տարի, Տուապսե՝ 38.5 միլիոն տոննա/տարի [*Федеральное Агентство Морского И Речного Транспорта*], Փոթի՝ 50 միլիոն տոննա

/տարի [*Black Sea Cargo*]: Երևան-Նախիջևան-Բաքու-ՌԴ երկաթգծի գործարկումը հնարավորություն է տալիս ծովային ուղի ունենալ նաև դեպի Կասպից ծով՝ Մախաչկալայի նավահանգստի միջոցով: Կասպից ծովով բեռնափոխադրումներ իրականացնելու հնարավորությունը թույլ կտա տրանսպորտային կապ հաստատել ԵԱՏՄ անդամ պետություններ Ղազախստանի և Ղրղզստանի հետ:

Պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ Երևան-Նախիջևան-Բաքու-ՌԴ երկաթգծի շահագործումը հնարավորություն կտա երկաթուղային կապ ունենալ Հայաստանի գլխավոր գործընկեր երկրներից մյուսի՝ Իրանի հետ (քարտեզ 3, գծանկար 2): Երկաթգծով մինչև Թավրիզ հեռավորությունը կլինի 453 կիլոմետր, իսկ մինչև Թեհրան՝ 1353 կիլոմետր: Իրանի հետ երկաթուղային կապի ստեղծումը հնարավորություն կտա ոչ միայն տնտեսապես ավելի նպատակահարմար և անխափան տրանսպորտային կապ ունենալ Իրանի հետ, այլ նաև Իրաքի, Սիրիայի, ԱՄԷ-ի, Կատարի, Օմարի և Պարսից ծոցի մյուս երկրների հետ: Վերոնշյալ երկրները կարևոր առևտրային նշանակություն ունեն մեր պետության համար: Իրանին է բաժին ընկնում Հայաստանի ընդհանուր արտահանման 3.3 տոկոսը, ներմուծման՝ 5.9 տոկոսը, Իրաքին արտահանման՝ 6.7 տոկոսը, ԱՄԷ-ին արտահանման՝ 2.2 տոկոսը, ներմուծման 0.9 տոկոսը, Սիրիային արտահանման՝ 2.1 տոկոսը, Օմանին արտահանման 0.2 տոկոսը, Կատարին արտահանման՝ 0.1 տոկոսը [*ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը, 143*]: Այսինքն Իրանի հետ երկաթգծի շահագործման շնորհիվ հնարավորություն կլինի երկաթուղով իրականացնել ներկայիս արտահանման 14.6 տոկոսը, իսկ ներմուծման 7 տոկոսը:

Քարտեզ 3.

Թեհրան-Նախիջևան-Երևան-Վրաստան և Թեհրան-Բաքու-Ռուսաստան երկաթգծերը

Իրանի հետ երկաթուղային կապի առկայությունը հնարավորություն կտա ծովային կապ ստեղծել դեպի Հնդկական օվկիանոս, որի առկայությունը հնարավորություն կտա երկաթուղով հաղորդակցվել Հնդկաստանի հետ, որին բաժին է ընկնում Հայաստանի արտահանման 0.1 տոկոսը, իսկ ներմուծման՝ 2.3 տոկոսը: Իրանով է անցնում նաև պատմական «Մետաքսի ճանապարհը», որը նորովի է դիտարկվում Չինաստանի կողմից և հնարա-

վորություն կտա այդ երկրի հետ ունենալ հուսալի և արդյունավետ տրանսպորտային հաղորդակցություն: Չինաստանին է բաժին ընկնում արտահանման 7.3 տոկոսը, իսկ ներմուծման 13.6 տոկոսը [*ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը, 143*]: «Մետաքսի ճանապարհի» վրա հայտնվելը Հայաստանին հնարավորություն է տալիս դառնալ տարանցիկ երկիր Չինաստանի ապրանքաշրջանառության ընթացքում: Չինաստանից դեպի ՌԴ ապրանքների փոխադրման ժամանակ ավելի կարճ ճանապարհ է Ադրբեջանով նոր կառուցվող երկաթգիծը (քարտեզ 3, գծանկար 1), որի երկարությունը 1326 կիլոմետր է:

Այս համատեքստում պետք է դիտարկել նաև Թեհրան-Նախիջևան-Երևան-Փոթի երկաթգծի նպատակահարմարությունը, որի երկարությունը 2223 կիլոմետր է: Քանի որ Չինաստանից դեպի Եվրոպա բեռնափոխադրումների համար մեկ այլ ուղի կարող է լինել Թեհրան-Բաքու-Նախիջևան-Իգդիր երկաթգիծը, որի երկարությունը 1605 կիլոմետր է: Այս պարագայում Հայաստանը և Վրաստանը դուրս են մնում ինչպես Չինաստանից դեպի ՌԴ, այնպես էլ Եվրոպա տանող ճանապարհներից: Հետևաբար, Վրաստանի համար լուրջ խթաններ են առաջանում Աբխազիայով դեպի ՌԴ երկաթգծի գործարկման համար (քարտեզ 4), որի շնորհիվ Վրաստանը և ՀՀ-ն կարող են հայտնվել ինչպես Չինաստանից դեպի Ռուսաստան, այնպես էլ դեպի Եվրոպա ճանապարհների վրա:

Քարտեզ 4.

Երևան-Վրաստան-Աբխազիա-Ռուսաստան երկաթգիծ

Աբխազական երկաթգծի գործարկման դեպքում ՀՀ-ից դեպի ՌԴ երկաթուղային ճանապարհի հեռավորությունը կլինի 931 կիլոմետր, որը 243 կիլոմետրով ավելի կարճ է, քան Նախիջևանով անցնող երկաթգիծը:

Այսպիսով, Երևան-Նախիջևան-Բաքու-ՌԴ երկաթգծի շահագործման դեպքում Հայաստանը տնտեսապես ավելի նպատակահարմար և անխափան տրասնպորտային կապ է ունենում Ռուսաստանի, Ղազախստանի, Ղրղզստանի, Իրանի, Իրաքի, Սիրիայի, ԱՄԷ-ի, Օմանի, Հնդկաստանի, Չինաստանի հետ, այսինքն հնարավորություն է ստեղծվում ավելի արդյունավետ իրականացնել ընդհանուր արտահանման ներկա ծավալների 50.3 տոկոսը, իսկ ներմուծման՝ 49.8 տոկոսը:

Հասկանալու համար, թե ինչքանով է բեռնափոխադրման գների փոփոխությունը ազդում արտահանման և ներմուծման գների վրա, գնահատվել է բեռնափոխադրումների սակագների ինդեքսի, արտահանման ու ներմուծման միջին գների ինդեքսի և առանձին արտադրատեսակների արտահանման և ներմուծման միջին գների ինդեքսների միջև կոռելացիոն կապի ուժգնությունը:

Բեռնափոխադրման սակագների, ներմուծման միջին գների ու առանձին արտադրատեսակների գների ինդեքսների միջև կոռելացիոն կապի գնահատման արդյունքում պարզ դարձավ, որ բեռնափոխադրման սակագների ինդեքսը ուժեղ կոռելացիոն կապ ունի ինչպես ընդհանուր ներմուծման միջին գների ինդեքսի (0.76), այնպես էլ բուսական ծագման արտադրանքի (0.78), հանքահումքային արտադրանքի (0.61), կենդանի կենդանիների (0.73), կոշկեղենի, գլխարկների և հովանոցների (0.45), պատրաստի սննդի արտադրանքի (0.53), թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի ու մետաղների (0.60), կենդանական և բուսական յուղերի (0.65) գների ինդեքսների հետ: Բեռնափոխադրման սակագների, արտահանման միջին գների ու առանձին արտադրատեսակների գների ինդեքսների միջև կոռելացիոն կապի գնահատման արդյունքում պարզ դարձավ, որ բեռնափոխադրումների սակագների ինդեքսը ուժեղ կոռելացիոն կապ ունի կենդանի կենդանիների (0.51), պլաստմաս և դրանցից իրերի (0.50), թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի և մետաղների (0.46), բուսական ծագման արտադրանքի (0.39) գների ինդեքսների հետ: Իսկ ավելի թույլ կոռելացիան կապ ունի ընդհանուր արտահանման գների (0.09), հանքահումքային արտադրանքի (0.08), կաշիի և կաշվե իրերի (0.26), կենդանական և բուսական յուղերի (0.22) գների ինդեքսների հետ:

Եզրակացություն

Կատարված վերլուծությունների և ուսումնասիրությունների արդյունքում կարող ենք կատարել հետևյալ եզրակացությունները.

- Հաղորդակցության ուղիների ապաշրջափակման և ՀՀ երկաթուղային ցանցի լիարժեք գործարկման պարագայում Երևան-Նախիջևան-Բաքու-ՌԴ երկաթգծի շահագործումը հնարավորություն կտա երկաթուղային կապ ունենալ Հայաստանի գլխավոր առևտրային գործընկեր Ռուսաստանի հետ: Երևանից մինչև Կրասնոդար փոքրածավալ բեռների համար երկաթուղով բեռնափոխադրումը ավտոմոբիլայինի համեմատ տնտեսապես ավելի նպատակահարմար է՝ մոտ 14 անգամ, իսկ ամբողջական բեռնատար վարձելու համեմատ՝ 1.5 անգամ: Այդ երկաթուղու առկայությունը Հայաստանին հնարավորություն կտա ունենալ այլընտանքային ծովային ճանապարհ դեպի Սև ծով, ինչպես նաև Կասպից ծով, որով կապ կհաստատվի ԵԱՏՄ երկրներից Ղազախստանի և Ղրղստանի հետ:
- Երևան-Նախիջևան-Բաքու-ՌԴ երկաթգծի շահագործումը հնարավորություն կտա երկաթուղային կապ ունենալ Իրանի հետ, որի միջոցով հնարավորություն կստեղծվի ավելի արդյունավետ բեռնափոխադրում իրականացնել Իրանի, Իրաքի, Սիրիայի, Պարսից ծոցի երկրների, Հնդկաստանի հետ: տրանսպորտային այդ կապի առկայությունը հնարավորություն կստեղծի դառնալ «Մետաքսի ճանապարհի» մի մասը՝ Չինաստանից դեպի Եվրոպա բեռնափոխադրումների ժամանակ:
- Բեռնափոխադրումների սակագների ինդեքսի, արտահանման ու ներմուծման միջին գների ինդեքսի և առանձին արտադրատեսակների արտահանման և ներմուծման միջին գների ինդեքսների միջև կոռելացիոն կապի ուժգնության գնահատման արդյունքում պարզ դարձավ, որ բեռնափոխադրումների գները մեծապես կապված են ինչպես

ընդհանուր արտահանման և ներմուծման, այնպես էլ առանձին ապրանքախմբերի արտահանման և ներմուծման գների հետ: Երևան-Նախիջևան-Բաքու-ՌԴ երկաթգծի շահագործման շնորհիվ կնվազեն բեռնափոխադրման գները, որը հնարավորություն կտա բարձրացնել հայրենական արտադրանքի մրցունակությունը միջազգային շուկաներում: Կնվազեն նաև ինչպես ներմուծվող սպառման ապրանքների, այնպես էլ արտադրական հումքերի ներմուծման գները:

Գրականության ցանկ

1. Հայկական ՍՍՀ Գիտությունների ակադեմիա, Հայկական Սովետական Հանրագիտարան, 3-րդ հատոր, Երևան, 1977 թ., 720 էջ
2. «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ, Տեղեկատվություն Ընդհանուր օգտագործման երկաթուղային տրասպորտի ենթակառուցվածքի վերաբերյալ, 2021 թ., 23 էջ
3. Сагратян А.Т. История железных дорог Закавказ, Ереван, Армения, 1970, 254 стр.
4. «Տրանսպորտի մասին» ՀՀ օրենք, 1998 թ. Փետրվարի 3
5. «Երկաթուղային տրանսպորտի մասին» ՀՀ օրենք, 2007 թ. Նոյեմբերի 28
6. ՀՀՎԿ, Տարեգիրք, 2020 թ., 622 էջ
7. ՀՀՎԿ,ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2020 թվականի հուվար-դեկտեմբերին,323
8. Հայաստանի Հանրապետության վարչապետի, Ադրբեջանի Հանրապետության նախագահի և Ռուսաստանի Դաշնության նախագահի հայտարարությունը, ՀՀ վարչապեսի պաշտոնական կայք, 10 Նոյեմբեր 2020, 3.Մարտ.2022 - https://clck.ru/dYV4q
9. Բեռնափոխադրում Հայաստանից Ռուսաստան, Trans City ընկերության պաշտոնական կայք, 5.Մարտ.2022 - https://clck.ru/dYV5C
10. Порты России, Федеральное Агентство Морского И Речного Транспорта, 5.Մարտ.2022 - https://clck.ru/dYV5q
11. About Company, Black Sea Cargo LLC, 5.Մարտ.2022- https://clck.ru/gdDGU

THE IMPACT OF UNBLOCKING THE COMMUNICATION CHANNELS ON THE TRADE TURNOVER OF THE REPUBLIC OF ARMENIA

Khachikyan S. V.
PhD in Economics, Associate Professor
ASUE, Faculty of Computer Science and Statistics
sos.khachikyan@gmail.com
Torosyan A. A.
MA Student
ASUE, Faculty of RE and IER, Chair of Macroeconomics
aliktorosyan1999@gmail.com

Abstract

The article examines the possibilities created by the unblocking, which is one of the terms of the agreement signed as a result of the 44-day Artsakh-Azerbaijan war and the economic impact of the full operation of the RA railway network. The legislative framework regulating the activity of railway transport, the dynamics of the indicators characterizing it, the reasons for their main changes, and the economic importance were studied. The article explores the possibilities of having a reliable, efficient transport connection with neighboring regional countries as a result of unblocking, as well as becoming an integral

part of the Silk Road. A number of calculations have been made on the operation of the routes opened as a result of the unblocking of the communication channels, their prices and distances. The ArcGIS software package was used to obtain directions and maps of newly opened roads during all surveys and analyses. Attention was paid to the intensity of the correlation between freight prices and total average import prices of total exports. The intensity of the correlation between freight prices, export-import prices, and import prices was also studied. At the end of the article, suggestions are made by the government for the necessary steps in the near future.

Keywords: Communication routes, railway, transport connection, "Silk Road".

Ներկայացվել է՝ 13.04.2022 թ.
Գրախոսվել է՝ 27.04.2022 թ.

ՀՀ ԳԻՆՈՒ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ ՁԵՎԱՎՈՐՎԱԾ ԳՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՆԱԳՈՅԱՑՄԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄԸ

Հարությունյան Ա. Հ.
տնտ.թ., դոցենտ
ՀԱԱՀ, Ագրոբիզնեսի կառավարման և քաղաքականության ամբիոն,
armanhar@list.ru
Աղասարյան Լ. Ա.
տնտ.թ., դոցենտ
ՀԱԱՀ, Ագրոբիզնեսի կառավարման և քաղաքականության ամբիոն,
lusineaghasaryan@mail.ru

Ամփոփագիր

Գների սահմանումը ձեռնարկատիրոջ առջև ծառացող ամենադժվար խնդիրներից մեկն է, որը բիզնեսի վերջնական փուլում ապահովում է հաջողությունը՝ վաճառքի ծավալի ձևավորումը և շահույթի ստացումը:

Ձեռնարկատերը հնարավորություն կունենա շարունակելու և ընդլայնելու իր բիզնեսն այնքան ժամանակ, քանի դեռ սպառողը «համաձայն կլինի» գնել գինին առաջարկվող գնով: Ձեռնարկատիրոջ կողմից գինու համար սահմանված գինը պետք է ապահովի իրացման անհրաժեշտ ծավալ և շահույթի ստացում, իսկ շահույթն անհրաժեշտ է ոչ միայն ընթացիկ ծախսումները փոխհատուցելու, այլև գործունեությունը ընդլայնելու համար:

Տարածում են գտել գնագոյացման տարբեր մոդելներ և ձեռնարկատիրոջ խնդիրներից մեկը դրանցից «ամենաարդյունավետի» ընտրությունն է, որը հնարավորություն կտա մրցակցելու շուկայում և ապահովելու շահույթ:

Գինու շուկան և նաև դրա պետական կարգավորումն առավել խոր ավանդույթներ ունեն Եվրոպական շուկայում, ինչն էլ հաշվի առնելով, առաջնահերթորեն ուսումնասիրվել է այդ շուկայի փորձը՝ արդյունքում առաջարկելով որոշ կառուցակարգեր հայաստանյան գինու շուկայի համար:

Հոդվածի նպատակն է վերլուծել ուսումնասիրվող ժամանակահատվածում գինու փաստացի ձևավորված շուկայական գները, դրանց դինամիկան, փոփոխությունների պատճառները, ուսումնասիրել և բացահայտել գինու գների նկատմամբ սպառողների վերաբերմունքը, պետական կառավարման մարմինների կողմից գների կարգավորմանն ուղղված քայլերը, ինչի հիման վրա հնարավորություն կլինի առաջարկելու խաղողի և գինու գնագոյացման գործընթացի կատարելագործման ուղղությունները:

Հիմնաբառեր. գինի, գնագոյացում, դինամիկա, մոդելներ, հեռանկարներ:

Ներածություն:

Ուսումնասիրվող թեմայի կարևորությունը, ըստ մեզ, կայանում է նրանում, որ գնագոյացման հարցերի կարգավորումը հնարավորություն կտա հայկական գինին դարձնելու առավել մրցունակ՝ դրանից բխող արդյունքնե-

րով: Գինու գինը պայմանավորում է ոչ միայն գործարարի շահույթի մեծությունը, այլև խոսում է նրա արտադրանքի որակի և վարկանիշի մասին: Շուկայում ձևավորված գներն ու դրանց դինամիկան առավել խորքային գործընթացների արտացոլանքն են և դրանց վերլուծությունը կարող է պատկերացում տալ այդ գործընթացների վերաբերյալ, հետևաբար նաև կառավարելի դարձնել դրանք, ինչով էլ պայմանավորված է ուսումնասիրվող թեմայի արդիականությունը: Հետազոտության հիմնական նպատակն է ուսումնասիրել գինու գների միտումները ՀՀ ալկոհոլային խմիչքների շուկայում և դրանց ազդեցությունը գինու սպառողների նախընտրության վրա [Հարությունյան և այլք, 60]: Հետազոտության ընթացքում կիրառվել են վիճակագրական վերլուծության և սոցիոլոգիական հարցումների մեթոդները:

Նախ անդրադառնանք ՀՀ-ում ձևավորված ալկոհոլային խմիչքների սպառողական մանրածախ գներին և դրանց միտումներին: Գինու գներին զուգահեռ ուսումնասիրվել են նաև այլ ալկոհոլային խմիչքների գների միտումները: Գներն ուսումնասիրվել են 2010-2020 թթ. ժամանակահատվածի համար:

Աղյուսակ 1-ում ըստ տարիների բերված թվական տվյալները վկայում են, որ նշված ժամանակահատվածում դիտարկվել է գների աճ՝ բոլոր չորս արտադրատեսակների ուղղությամբ: Գինու գների մասով նկատվել է աճ 85.8 տոկոս՝ 2020թ. 2010թ. համեմատությամբ: Ամենաբարձր գնաճ դիտարկվել է գարեջրի ուղղությամբ՝ գներն աճել են 3.5 անգամ, կոնյակի գներն աճել են 2.9 անգամ, օղու գները՝ 2.8 անգամ: Փաստորեն ամենացածր գնաճ դիտարկվել է գինու գծով:

Աղյուսակ 1.

	2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.	2015թ.	2016թ.	2017թ.	2018թ.	2019թ.	2020թ.
Գինի	1322	1314	1669	1746	1779	1714	1728	2230	2378	2 420	2456
Կոնյակ	3914	4785	5246	5335	5550	5421	5324	11117	11113	11 353	11593
Օղի	1221	1350	1368	1379	1374	1589	1536	2557	2588	2 713	3425
Գարեջուր	305	304	332	361	378	387	393	986	968	996	1092

*Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը, 2010-2020թթ., ՀՀ ԱՎԿ

*Ալկոհոլային խմիչքների միջին սպառողական գները ՀՀ-ում (1 լիտրի գինը, դրամ)**

«Ճիշտ գներ» սահմանելու համար շատ կարևոր է հասկանալու սպառողի նախընտրությունները և սպասելիքները [*Հարությունյան, 123*]: Դրանք գնահատելու համար մեր կողմից իրականացվել է հարցում շուրջ 200 հոգու շրջանակներում, որի արդյունքները կներկայացվեն ստորև:

Նախ ներկայացնենք հարցվողների հիմնական բնութագիրը: Հարցվածների 66%-ը քաղաքաբնակներ են, մնացածը՝ գյուղաբնակներ: Սեռային բաշխումն ունի հետևյալ կառուցվածքը՝ 56%-ը իգական սեռի ներկայացուցիչներ են եղել, 44%-ը՝ արական: Տարիքային բաշխումը եղել է քիչ թե շատ համաչափ:

Հարցվածների 40 տոկոսը նախընտրում են կոնյակը, 38 տոկոսը՝ գինին, 22 տոկոսը՝ այլ սպիրտային խմիչքներ: Եկամտային բաշխվածության տեսանկյունից գերակշռել

են 200-300 հազ. դրամ ամսական ընտանեկան բյուջե ունեցողները:

Ըստ հարցման սպառողները ընտրում են գինին, քանի որ այն համարում են ավելի որակյալ և օգտակար խմիչք: Տեղական գինին նախընտրողները կազմում են մեծամասնություն՝ 65%: Ըստ գույնի գինիների նախընտրությունը ունի հետևյալ բաշխվածությունը՝ 16% սպիտակ գինի, իսկ գերակշիռ մեծամասնությունը՝ 81%, նախընտրում են կարմիր գինի:

Կարևոր է նաև բացահայտել, թե որտեղ են նախընտրում օգտագործել գինին, ինչի արդյունքում գալիս ենք եզրակացության որ գերակշիռ մասը կգերադասի գինին օգտագործել ռեստորանում, մի զգալի մասը (40%) գինին կցանկանա օգտագործել գինու գործարանի համտեսի սրահում կամ մասնագիտացված գինու բարում: Հարցին, թե՝ կնախընտրեն տնակա՞ն թե՞ գործարանային գինի, 81%-ը պատասխանել են, որ կընտրեն գործարանային գինի:

Այն հարցին, թե ինչ գին են պատրաստ վճարելու 1 շիշ որակյալ գինու համար, բացարձակ մեծամասնությունը (75%) նշել են 2500 դրամ և ավել գնային սեգմենտ:

Հարցման արդյունքներն ավելի մանրամասն ներկայացված են գծանկար 1-ում:

Գծանկար 1.



Սպառողների բաշխվածությունը ըստ գինու գնային սանդղակի նախընտրության

Եվրոպական Միությունում գինու շուկայում հավասարակշռություն պահպանելու, մասնավորապես հիմնավորված գներ սահմանելու համար ԵՄ № 822/87 դիրեկտիվում (ղեկավար հրահանգ) յուրաքանչյուր տեսակի սեղանի գինու համար, որը արտադրվում է ԵՄ տարածքում, նախատեսվում է սահմանել «Ուղղորդիչ գին» և «Շեմային գին»՝ որպես ԵՄ խաղողի և գինու շուկայում գնագոյացման կարգավորման հիմք [*Հարությունյան, 14*]:

Սեղանի գինու յուրաքանչյուր տեսակի համար՝ յուրաքանչյուր սեզոնից առաջ, սահմանվում է «Ուղղորդիչ գին»: «Ուղղորդիչ գին» սահմանվում է՝ ելնելով գնասահմանմանը նախորդող վերջին երկու սեզոնների ընթացքում ձևավորված միջին գներից, ինչպես նաև ընթացիկ կոմպանիայի ընթացքում գների մակարդակից:

«Ուղղորդիչ գինը» սահմանելիս հաշվի է առնվում Եվրոպական Միության սահմաններում խաղողագինեգործական շրջաններում տեղակայված շուկաների վիճակը՝ որտեղ իրացվում է այդ շրջաններում արտադրված սեղանի գինու մեծ մասը:

«Շեմային գինը» հիմնված է արտադրության նվազագույն ծախսումներ ունեցող կազմակերպության ինքնարժեքի վրա:

Վերը նշված միջոցառումները կոչված են հավասարակշռություն սահմանելու սեղանի գինու շուկայում, ինչպես նաև ապահովելու նվազագույն գինը այդ գինիների շուկայում, որը հավասար է ուղղորդիչ գնի նվազագույնը 82 %-ին:

Չնայած գինեգործական կազմակերպությունների թվի ավելացմանը և մթերվող խաղողի ծավալների աճին, որի արդյունքում ենթադրվում էր մրցակցության ավելացում խաղող գնողների միջև՝ հետևաբար արդյունավետ գնագոյացում իրացնողի համար, խաղողի գնի թելադրողները շարունակում են մնալ գինեգործարանները: Ընդ որում, եթե գինեգործարաններն այս կամ այն չափով պայմանավորվում են խաղողի գնի վերաբերյալ, խաղողագործները չունեն գնագոյացման վրա ազդելու որևէ լծակ, որի պատճառով խաղողի իրացման գինը ոչ միայն մնում է դեռևս ցածր, այլև այն ուղղակիորեն կախման մեջ չի դրվում խաղողի որակից [*Հարությունյան, Մարգարյան, 495*]:

Այս բացը լրացնելու համար ստորև մեր կողմից առաջարկվել են մի քանի սկզբունքներ, որոնց կիրառումը, ըստ մեզ, հնարավորություն կտա որոշ չափով կարգավորելու վերը նշված խնդիրը:

Խաղողի գնի սահմանումը «Գինու գնի բազմապատկիչի» կիրառմամբ. «Արևմուտքում» խաղողի գինը հաճախ որոշվում է «Գինու գնի բազմապատկիչի»-ի (ԳԳԲ) օգնությամբ: Բազմապատկիչը կապ է հաստատում խաղողի գնի և վաճառվող գինու գնի միջև: Եթե ԳԳԲ-ն սահմանվում է 100, խաղողի մեկ տոննայի գինը սահմանվում է 100 անգամ ավելին՝ մեկ շիշ գինու միջին մանրածախ գնի նկատմամբ: Այսպիսով, եթե գինու մեկ շշի մանրածախ միջին գինը 7 դոլար է, խաղողի գինը սահմանվում է 700 դոլար՝ մեկ տոննայի համար: Իհարկե, տարբեր սորտերի խաղողի և դրանցից ստացվող գինիների համար սահմանվում են տարբեր բազմապատկիչներ: ԳԳԲ-ն սահմանվում է խաղող արտադրողի և այն գնողի համատեղ քննարկումների և համաձայնության արդյունքում, որն ամրագրվում է այդ փոխհարաբերությունները կարգավորող պայմանագրում:

Անդրադառնանք գնային մեկ այլ բազմապատկիչի, որը կապ է հաստատում գինու հնեցման ժամկետի և գնի միջև: Այս մեթոդի դեպքում նախապես ընտրվում է բազիսային գին, և ըստ հնեցման ժամկետի սահմանվում է բազմապատկիչը: Իհարկե, մեր կողմից ներկայացվող բազմապատկիչները յուրաքանչյուր կազմակերպության կամ գինու տեսակի համար կարող են տարբեր լինել: Ուղղակի մենք ցանկանում ենք այստեղ ուշադրությունը սևեռել գինու գնի սահմանման մարքեթինգային բաղադրիչներից մեկի՝ գինու տարիքի վրա: Այսպիսով, ուսումնասիրությունների արդյունքում մեր կողմից արդյունավետ համարվում և առաջարկվում են հետևյալ բազմապատկիչները. 0-2 տարի հնեցված գինու համար՝ 0.75, 2-10 տարի՝ 2.0, 10-25 տարի՝ 5.0, 25-50 տարի՝ 10.0, 50 տարի և ավելի՝ 100.0:

Ըստ գինու որակի կառաջարկենք հետևյալ բազմապատկիչները. ՍԳԽ՝ 0,5, ՄԳԽ՝ 2,0 ԲԳԽ՝ 3.0, ՎԳԽ՝ 5.0, ըստ հումքի և դրանից պատրաստվող գինու յուրահատկության. «աղքատ»՝ 0.5, «արտասովոր»՝ 2,0, «բացառիկ»՝ 3,0 «հազվագյուտ»՝ 5,0:

Խաղողի գնի սահմանում ըստ խաղողի պտուղներում շաքարի պարունակության. Խաղողի գնի սահմանման այս մոտեցումը հավելավճարների և զեղչերի համակարգ է՝ հիմնված խաղողի պտուղներում շաքարի պարունակության վրա: Խաղող արտադրողները և վերամշակողները հանդիպում են ամռան ընթացքում և պայմանավորվում խաղողի մոտակա բերքի գների վերաբերյալ: Պայմանա-

վորված գները հանդիսանում են հիմք (բազիսային գին) յուրաքանչյուր խաղող արտադրողի համար: Շաքարի բազիսային պարունակությունը սահմանվում է ելնելով նախորդ հինգ տարվա միջին ցուցանիշից (յուրաքանչյուր արտադրողի համար առանձին): Կախված, թե ինչ տեսակի գինի է արտադրվում, տարբեր պահանջներ են ներկայացվում խաղողում շաքարի պարունակությանը: Դրանից էլ ելնելով՝ տարբեր վերամշակողներ սահմանում են խաղողում շաքարի պարունակության և գների միջև կապի իրենց սանդղակը: Այս համակարգը նախատեսված է շահագրգռելու խաղող արտադրողներին՝ վերահսկելու խաղողի բերքի որակական հատկանիշները և վերամշակողներին ապահովելու պահանջվող որակի խաղողով:

Գնագոյացում խաղող և գինի արտադրող սուբյեկտների միջև պայմանագրերի կնքման միջոցով. Գինեգործարանները տեխնիկական սորտի խաղող գնող հիմնական օղակն են: Մթերումների ծավալները ուուղղություններն էական ազդեցություն են ունենում խաղողի շուկայական գների վրա: Դրա համար պետք է, որ խաղող արտադրողները սերտ հարաբերություններ ունենան գինեգործական կազմակերպությունների հետ [*Հարությունյան, Մարգարյան, 497*]:

Խոսելով գնագոյացման կարգավորման ուղիների մասին գտնում ենք, որ շուկայական պայմաններում խաղողագինեգործական ենթահամալիրի սուբյեկտների տնտեսական հարաբերությունների սյուներից մեկը՝ այդ թվում նաև գների սահմանումը, պետք է լինեն պայմանագրային հարաբերությունները, ինչը հնարավորություն կտա խուսափելու որոշակի ռիսկերից և ճիշտ պլանավորում իրականացնելու: Մասնավորապես, պայմանագրերի միջոցով պետք է լուծել խաղողի որակին ներկայացվող հարցը: Խաղողի գնումների վերաբերյալ խաղողագործի և գինեգործարանի միջև պայմանագրերը ցանկալի է կնքել երկարատև ժամանակամիջոցի համար՝ 5-10 տարի:

Գնագոյացում «երաշխավորվող» գների հիման վրա. Խաղողագործների շահերը պաշտպանելու, խաղողի գնումների ծավալը երաշխավորելու և գնագոյացմանն ակտիվ միջամտելու համար անհրաժեշտ է ստեղծել խաղողագործների միություններ, որոնք կպաշտպանեն խաղողագործների շահերը:

Այդ միությունների հիմնական գործառույթներից մեկը պետք է կապված լինի խաղողի գնագոյացման հետ: ԱՄՆ-ում և Եվրոպայում գործող այդպիսի կառույցներն ամեն սեզոնի հայտարարում են խաղողի «երաշխավորվող» գները, որպեսզի օգնեն տեղական խաղող արտադրողներին կողմնորոշվելու վերամշակողների հետ պայմանագրեր կնքելիս:

Գները սահմանվում են հաշվի առնելով դրանցից արտադրվող գինիների ինքնարժեքը և ընթացիկ շուկայական գները, ինչպես նաև խաղողի այգիների տարածությունները: Խաղող արտադրողը պետք է ձգտի «երաշխավորվող» գների միջակայքում սահմանել գներ՝ իր արտադրած խաղողի համար:

Եզրակացություն:

Առաջնահերթորեն արվող եզրակացություն այն է, որ գինու գները, ուսումնասիրվող ժամանակահատվածում դրսևորել են համեմատաբար «կայուն վարք», ինչը գինու շուկայի քիչ թե շատ կայունության մասին է խոսում:

Հիմնական եզրահանգումը, որը մենք արեցինք այս փոքր հետազոտության արդյունքում, հետևյալն է՝ սպիրտային խմիչքներ սպառողները դեռևս մեծ հակում ունեն թունդ սպիրտային խմիչքների օգտագործմանը և այս տեսանկյունից գինեգործական կազմակերպությունները պետք է առավել ինտենսիվությամբ առաջ մղեն գինին և առաջիկայում պետք է հանդես գանք որպես գինին նախընտրող հանրություն և ամրապնդենք մեր իմիջը որպես հնագույն գինեգործական երկիր:

Լավատեսական է այն հանգամանքը, որ հայ սպառողների մեծ մասը նախընտրում է հայկական գինին՝ համարելով այն որակյալ և մրցունակ:

Եզրակացնում ենք նաև, որ հայ սպառողը կնախընտրեր խմել գործարանային գինին, համեմատաբար ավելի տրամադրող պայմաններում, ինչը համտեսի սրահն է կամ ռեստորանը:

Ամփոփելով այս ամենը մեկ նախադասության մեջ՝ հայ սպառողը նախընտրում է հայկական, գործարանային արտադրության, կարմիր գինի, հայկական գինին համարում է որակյալ և օգտակար, նախընտրում է այն խմել մասնագիտացված միջավայրում և որակյալ գինու համար պատրաստ է վճարելու մեկ շշի համար 2500 դրամից ավել գումար:

Իհարկե, սպառման ծավալների ավելացման հիմնական գործոններից մեկը կշարունակի մնալ եկամուտների մեծությունը և միայն դրանց ավելացման դեպքում սպառողը կգնի ավելի շատ գինի ու ավելի որակյալ և թանկ գինի:

Ներկա պայմաններում մեծացել է պետության միջամտությունը շուկայական գնագոյացման գործընթացում: Սակայն, ՀՀ դեռևս չունի արդյունավետ փորձ այդ հարցերի կարգավորման գործում, և գները ինչ որ տեղ ունեն տարերայնորեն կազմավորվելու միտում, ինչի համար էլ առաջարկում ենք քայլեր ձեռնարկել Եվրոպական միության փորձը հայկական գինու շուկայում ներդնելու ուղղությամբ, մասնավորապես, կիրառել «ուղղորդիչ գներ», «շեմային գներ», «երաշխավորվող գներ» և «գների բազմապատկիչը», որոնց իմաստը մանրամասն ներկայացված է վերևում:

Գրականության ցանկ

1. Հարությունյան Արման, Մարգարյան Լևոն, «Գնագոյացման մի քանի հարցեր Վայոց ձորի խաղողագործության և գինեգործության ոլորտում», Ագրոգիտություն, N 11-12, Երևան 2005, էջ 493-498
2. Հարությունյան Արման, «Գինու որակի և գնի միջև եղած կապի մարքեթինգային վերլուծությունը (Արենի տեսակի գինու օրինակով)», Ագրոգիտություն, N 1-2, Երևան 2006, էջ 13-16
3. Հարությունյան Արման, «Գին-Որակ հավասարակշռությունը գինու շուկայում (Ռոսենի մոդել)», Ագրոգիտություն, N 3-4, Երևան 2009, էջ 122-125
4. Հարությունյան Արման, Յոն Հանֆ, Լինդա Բիչ, Սոֆիկո Գվանիձե, «Սպառողական պահվածքի վերլուծությունը հայաստանյան գինու շուկայում», Գերմանական խաղողագործության տարեգիրք 2020, Շտուտգարդ, 2020, էջ 58-64
5. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը, 2010-2020թթ., ՀՀ ԱՎԿ:

ANALYSIS OF PRICES IN WINE CONSUMER MARKET OF RA AND IMPROVEMENT OF PRICING MECHANISMS

Harutyunyan A. H.
PhD in Economics, Associate Professor
ANAU, Chair of Agribusiness Management and Policy
armanhar@list.ru
Aghasaryan L. A.
PhD in Economics, Associate Professor
ANAU, Chair of Agribusiness Management and Policy
lusineaghasaryan@mail.ru

Abstract

Pricing is one of the most difficult tasks for an entrepreneur, but it is the one that ensures success in the final stage of the business, formation sales volume and making a profit.

The entrepreneur will have the opportunity to continue expanding his business provided that the consumer "agrees" to buy the wine at the offered price. The price set by the entrepreneur for the wine should ensure the necessary scale of product sale and profit. Profit is indispensable not only to cover current expenses, but also to expand business activity.

Different pricing models have become popular and the entrepreneur's task is to choose the "most effective" one.

The wine market and its state regulation have deeper traditions in the European market and considering that we have prioritized and studied the experience of that market, we have suggested applying some of these models in the Armenian wine market as well.

The purpose of this article is to present the results of the study of the actual market prices of wine during the study period, the dynamics of the prices, the reasons for the changes of the latter, to highlight the attitude of consumers towards wine prices, the measures taken by government agencies to regulate prices, as a result of which it will be possible to provide the directions for improving grape and wine pricing.

Keywords. wine, pricing, dynamics, models, perspectives.

Ներկայացվել է՝ 15.04.2022 թ.
Գրախոսվել է՝ 31.05.2022 թ.

ԷՆԵՐԳԵՏԻԿ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԵՐԿԱ ՄԱԿԱՐԴԱԿԸ

Խուկեյան Զ.Գ.
ասպիրանտ
ՀՊՏՀ, Կառավարման ամբիոն
zaven.khukeyan@gmail.com

Ամփոփագիր

Էներգետիկական համակարգում կարևորագույն ենթակառուցվածքային տարրերից են ոլորտում գործունեություն ծավալող ձեռնարկությունները: Էներգետիկ ընկերությունները կարևոր դեր են խաղում հասարակության կյանքում: Ժամանակակից առօրյան և տնտեսական գործունեությունը անհնարին է դարձել պատկերացնել առանց էլեկտրաէներգիայի անխափան մատակարարման: Այն ուղեկցում և ապահովում է բնակչության կյանքը, արդյունաբերական արտադրությունը, տրանսպորտը: Էներգետիկ ձեռնարկությունների անբավարար զարգացում առանձին շրջաններում, առավել ևս՝ ողջ երկրում, դառնում է տնտեսական աճի իրական արգելակ: Սա հատուկ պահանջներ է դնում էներգետիկ ձեռնարկությունների զարգացման հեռանկարների կառավարման և պլանավորման վրա: Ուստի անհրաժեշտ է մշտապես ուսումնասիրություններ իրականացնել և վեր հանել ոլորտի ձեռնարկություններում առկա խնդիրները, գտնել այն թույլ կողմերն ու կետերը, որոնց բարելավմամբ հնարավոր կլինի ապահովել ամբողջական էներգետիկ համակարգի կայուն և համաչափ զարգացումը: Աշխատանքում ուսումնասիրվել են էլեկտրաէներգիայի մատակարարման ծավալների դինամիկան, արտահանման և ներմուծման դինամիկան և առկա պոտենցիալները: Ներկայացրել ենք ՀՀ էլեկտրաէներգետիկ համակարգում էլեկտրական էներգիայի արտադրության և սպառման մեջ արտադրող կայանների տեսակարար կշիռները՝ արտադրված և մատակարարված էլեկտրական էներգիայի ծավալի կառուցվածքը և կազմը: Առանձնացրել ենք նաև էներգետիկ ձեռնարկություններում կառավարման գործիքների թերությունները պետական և ձեռնարկության մակարդակներում:

Հիմնաբառեր. էլեկտրաէներգիայի արտադրություն, կառավարման գործիքներ, էներգետիկ համակարգի ձեռնարկություններ, էներգետիկ ռազմավարություն, էլեկտրաէներգետիկ արդյունաբերություն, էներգետիկ քաղաքականություն, մրցակցային միջավայր:

Ներածություն

Էներգետիկ ընկերությունները ամենակարևոր ենթակառուցվածքային ձեռնարկություններերից են, որոնք կարևոր դեր են խաղում հասարակության կյանքում: Էլեկտրական էներգիան ուղեկցում և ապահովում է բնակչության կյանքը, արդյունաբերական արտադրությունը, տրանսպորտը: Էներգետիկ ձեռնարկությունների անբավարար զարգացում առանձին շրջաններում, առավել ևս՝ ողջ երկրում դառնում է տնտեսական աճի իրական արգելակ: Սա հատուկ պահանջներ է դնում էներգետիկ ձեռնարկությունների զարգացման հեռանկարների կառավարման և պլանավորման վրա:

Էներգետիկ ձեռնարկությունները երկրի վառելիքաէներգետիկ համալիրի (FEC) հիմքն են, որը իրենից ներկայացնում է համալիր և

զարգացած համակարգ՝ բնական էներգետիկ ռեսուրսների արդյունահանման, դրանց հարստացման, էներգիայի և էներգակիրների շարժական տեսակների վերածելու, փոխանցման և բաշխման, սպառման և ազգային տնտեսության բոլոր ոլորտներում օգտագործման համար:

Նման տարասեռ մասերի միավորումը մեկ ազգային-տնտեսական համալիրի մեջ բացատրվում է դրանց տեխնոլոգիական միասնությամբ, կազմակերպչական հարաբերություններով և տնտեսական փոխկախվածությամբ [*Самсонов, Вяткин, 7*]:

ՀՀ էներգետիկ ռազմավարության համաձայն մինչև 2040 թվականը ընկած ժամանակահատվածի համար վառելիքաէներգետիկ ձեռնարկությունները, կախված հումքային բազայից, բաժանվում են ջերմային էներգիայի ձեռնարկությունների, որոնք աշխատում են վերականգնվող աղբյուրների էներգիայի հիման վրա [*ՀՀ էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագիր*].

Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառը (այսուհետ՝ էներգետիկայի բնագավառ) հանրային ծառայություններ մատուցելու համար էլեկտրական և ջերմային էներգիայի արտադրության (ներառյալ՝ դրանց համակցված արտադրության), էլեկտրական, ջերմային էներգիայի և բնական գազի հաղորդման (փոխադրման), բաշխման ու մատակարարման, էլեկտրաէներգետիկական և բնական գազի ոլորտների համակարգերի օպերատորի, էլեկտրաէներգետիկական շուկայի օպերատորի ծառայության իրականացման, էլեկտրական էներգիայի (հզորության) մեծածախ առևտրի, էլեկտրական էներգիայի և բնական գազի ներկրման և արտահանման գործունեության մեջ ներգրավված տնտեսավարող սուբյեկտների (անկախ դրանց սեփականության ձևից), այդ գործունեությունների իրականացման համար անհրաժեշտ գույքի և էներգետիկական շուկային ծառայություններ մատուցող կառույցների համախումբն է:

Էներգետիկայի բնագավառի բաղկացուցիչ մասերն են՝

ա) էլեկտրաէներգետիկական համակարգը.
բ) ջերմամատակարարման համակարգերը.
գ) գազամատակարարման համակարգը [*ՀՀ օրենքը էներգետիկայի մասին*]:

Էլեկտրաէներգետիկական համակարգը՝ էլեկտրական էներգիայի արտադրության, հաղորդման և բաշխման կայանքների, դրանց կառավարման, պաշտպանության, ավտոմատիկայի և տեղեկատվական սարքավորումների համախումբ է [*ՀՀ էներգետիկ Անվտանգության Ապահովման հայեցակարգը*]:

Էլեկտրաէներգետիկ արդյունաբերությունը հիմք է հանդիսանում տնտեսության գործունեության և կենսաապահովման համար:

Լ.Դ. Գիտելմանի և Բ.Ե. Ռատնիկովայի ուսումնասիրություններում տրված է էներգետիկ ձեռնարկությունների հետևյալ դասակարգումը.

- մրցակցության առկայություն (բացակայություն). ձեռնարկություններ, որոնք գործում են մենաշնորհային (կարգավորվող) շուկայի պայմաններում, մրցակցային (չկարգավորվող) շուկայում գործող ձեռնարկություններ.
- ըստ էներգակիրների տեսակի՝ էլեկտրամատակարարման ձեռնարկություններ, ջերմամատակարարման ձեռնարկություններ, համակցված էներգիա մատակարարող ձեռնարկություններ.
- ձեռնարկության բիզնես գործառույթի համաձայն՝ արտադրող ձեռնարկություններ, ցանցային ընկերություններ, էլեկտրամատակարարման ընկերություններ, էներգետիկ ծառայություններ մատուցող ընկերություններ,

- արդյունաբերության պատկանելություն. հանրային էներգիա, քաղաքային էներգետիկա, արդյունաբերական էներգիա [*Гительман, Ратников, 11-12*]:

Այս աշխատության ուսումնասիրության առարկան ՀՀ-ում գործող էլեկտրաէներգետիկ ձեռնարկություններն են, այսինքն. ձեռնարկություններ, որոնք զբաղվում են ՀՀ-ում էլեկտրաէներգիայի արտադրությամբ և վաճառքով (Աղյուսակ 1).

Աղյուսակ 1.

Էներգետիկ ձեռնարկությունների կատեգորիաներ	Էներգետիկ ձեռնարկությունների անվանումը
Էլեկտրաէներգիա արտադրող ձեռնարկություններ	• <<ՀԱԷԿ>> ՓԲԸ • <<Երևանի ՋԷԿ>> ՓԲԸ • <<ՀՐԱԶՋԷԿ>> ՓԲԸ • <<Միջազգային էներգետիկ կորպորացիա>> ՓԲԸ • << Քոնթուրգլոբալ հիդրո կասկադ>> ՓԲԸ • Փոքր ՀԷԿ-եր, Հողմային էլեկտրակայաններ, Արևային էլեկտրակայաններ
Էլեկտրաէներգիայի վաճառքով զբաղվող ընկերություններ	• <<Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր>> ՓԲԸ • <<Հայաստանի էլեկտրական ցանցեր>> ՓԲԸ • <<Հաշվարկային կենտրոն>> ՓԲԸ • <<Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր>> ՓԲԸ

ՀՀ-ում գործող էներգետիկ ընկերություններ

Ներկայումս ՀՀ-ում գործում են արտադրող հետևյալ ձեռնարկությունները՝ «ՀԱԷԿ» ՓԲԸ, «ԵրևանՋԷԿ» ՓԲԸ-ն, «ՀրազՋԷԿ» ՓԲԸ-ն, որի մեջ մտնում են Հրազդանի ՋԷԿ-ի 4 էներգաբլոկները, և «Հրազդան 5» 5-րդ էներգաբլոկը, որը պատկանում է Գազպրոմ Արմենիա ՓԲԸ-ին և սպասարկում է գազ-էլեկտրաէներգիա փոխանակության ծրագիրը, «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ն, որը շահագործում է Որոտանի ՀԷԿ-երի համալիրը, «Քոնթուր գլոբալ հիդրո կասկադ» ՓԲԸ-ն, որը շահագործում է Սևան-Հրազդան ՀԷԿ-երի համալիրը: Բացի վերոնշյալ խոշոր արտադրող ձեռնարկություններից ՀՀ էներգահամակարգում գործում է նաև 371 փոքր ՀԷԿ-եր, արևային ինքնավար կայաններ և հողմակայաններ:

Բացի արտադրող ձեռնարկություններից էլեկտրաէներգետիկական համակարգում գործում են նաև էլեկտրաէներգիայի բաշխումը և վաճառքը իրականացնող ընկերություններ՝ «Բաձրավոլտ էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն, սպառողներին էլեկտրաէներգիա վաճառող «Հայաստանեի էլեկտրական ցանցեր»

ՓԲԸ-ն, «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ն, «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ն:

Ընդհանուր բաշխիչ ցանցի երկարությունը կազմում է՝ 35 հազ կմ, որը սպասարկում է 985.000 սպառողի:

Հայաստանի էլեկտրաէներգիայի հաղորդման համակարգը պատկանում է «Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր» պետական ընկերությանը: 2016-ին էլեկտրաէներգիայի հաղորդման ցանցում ներգրավված 220 կՎ և 110 կՎ բարձրավոլտ գծերի ընդհանուր երկարությունը կազմել է շուրջ 1,740 կմ (1,323 կմ 220 կՎ և 417 կմ 110 կՎ գծեր), իսկ ենթակայանների քանակը՝ 33 (որից 15-ը 220 կՎ և 18-ը՝ 110 կՎ ենթակայաններ):

Էլեկտրակայանների կողմից արտադրված էլեկտրաէներգիան փոխանցվում է բարձրավոլտ ցանցով և հասնում է սպառողներին բաշխիչ ցանցի միջոցով, որը բաղկացած է 110 - 35 - 6 (10) - 0.4 կՎ գծերից և մալուխներից: Բաշխիչ բաժանորդների թիվը 2016 թ.կազմել է մոտ 985,000, նրանք բոլորը սպասարկվում են մեկ բաժնետիրական ընկերության՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր»-ի կողմից: Բաշխիչ ցանցը բաղկացած է 110 կՎ լարման 2,778 կմ գծերից և 102 ենթակայանից, 35 կՎ լարման 2,307 կմ օդային գծերից և 68 կմ մալուխ և 224 ենթակայաններ և 20,917 կմ օդային և 5,666 կմ մալուխային գծեր և 8,162 ենթակայաններ 6 (10) և 0.4 կՎ լարումներով (Աղյուսակ 2).

Աղյուսակ 2.

110 կՎ ենթակայաններ	102 հատ, սահմանված հզորությունը 4478 ՄՎԱ
35 կՎ ենթակայաններ	224 հատ, դրվածքային հզորությունը 1736 ՄՎԱ
110 կՎ անջատիչներ	159 հատ
35 կՎ անջատիչներ	687 հատ
110 կՎ օդային գծեր	2778,3 կմ
35 կՎ օդային գծեր	2307,12 կմ
35 կՎ մալուխային գծեր	67,67 կմ
6(10) կՎ բաշխիչ կետեր	261 հատ
6(10) կՎ տրանսֆորմատորային ենթակայաններ	8162 հատ, տեղադրված հզորությունը 3200.146 ՄՎԱ
6(10) կՎ օդային գծեր	8254,7 կմ
6(10) կՎ մալուխային գծեր	3310,3 կմ
0,4 կՎ օդային գծեր	12662,6 կմ
0,4 կՎ մալուխային գծեր	2355,6 կմ
110 կՎ հենարաններ	9482 հատ
35 կՎ հենարաններ	12945 հատ
0,4 կՎ հենարաններ	432632 հատ

ՀՀ բաշխիչ ցանցի կառուցվածքը

2020 թվականին ՀՀ էլեկտրաէներգետիկ համակարգի կողմից արտադրված էլեկտրաէներգիայի ծավալները ըստ արտադրող կայանների տեսակների ունի հետևյալ տեսքը: 2020 թվականին արտադրված և հաղորդված էլեկտրաէներգիան կազմում է 213 965.5 մլն դրամ 99.6 տոկոս նախորդ տարվա համեմատ՝ կամ որ նույնն է 7 723.4 մլն կվտ ժ:

2019 թվականին նույն ցուցանիշները կազմել են՝ 214 560.4 մլն դրամ 100.7 տոկոս նախորդ տարվա համեմատ 7 632.3 մլն կվտ ժ: (Աղյուսակ 3)

Աղյուսակ 3.

էլեկտրաէներգիայի արտադրություն, հաղորդում և բաշխում	**Հունվար-դեկտեմբեր, մլն. դրամ**	**Նախորդ տարվա հունվար-դեկտեմբերի նկատմամբ, %**
2020	213 965.5	99.6
2019	214 560.4	97.5
2018	212 876.4	106.5
2017	214 732.1	100.9
2016	212 653.0	102.2
2015	211 867.7	105.5
2014	186 569.3	97.5
2013	214 490.0	102.5
2012	182 791.8	112.8

Էլ.էներգիայի արտադրության ծավալներ դրամական արտահայտությամբ

Աղյուսակ 4-ում արտացոլված են 2011-2020 թվականներին արտադրված էլեկտրաէներգիայի ծավալները ըստ արտադրող կայանների և դրանց վերլուծությունից պարզ է դառնում, որ ՀՀ էլեկտրահամակարգում շուրջ 40 տոկոս արտադրական ծավալների բաժին է ընկնում ջերմաէլեկտրակայաններին: ՋԷԿ-երը որպես հիմնական վառելիք օգտագործում են բնական գազը: Էլեկտրաէներգետիկ արդյունաբերության վառելիքային հաշվեկշռում բնական գազը կազմում է ավելի քան 93%, ինչի արդյունքում արդիական է դառնում այլ էներգակիրների հիման վրա արտադրական հզորությունների զարգացման հարցը:

Աղյուսակ 4.

	Էլեկտրաէներգիայի արտադրության ծավալները մլն կՎտ ժամ	**ՋԷԿ**	**ՀԷԿ**	**ՀԱԷԿ**	**Այլ Աղբյուրներ**
2020	7 723.4	3 165.5	1 778.4	2 756.3	23.2
2019	7 632.3	3 046.9	2 370.9	2 197.8	16.7
2018	7 776.9	3 375.6	2 318.2	2 076.1	7.0
2017	7 762.9	2 871.8	2 269.0	2 619.6	2.6
2016	7 315.2	2 581.5	2 351.4	2 380.5	1.8
2015	7 798.2	2 801.2	2 205.6	2 787.7	3.7
2014	7 750.0	3 288.6	1 992.6	2 464.8	4.0
2013	7 710.0	3 173.1	2 173.4	2 359.7	3.8
2012	8 036.2	3 374.0	2 349.1	2 311.0	2.1
2011	7 432.7	2 371.7	2 510.0	2 548.0	3.0

Էլ.էներգիայի արտադրության ծավալներ բնեղեն արտահայտությամբ մլն կՎտ Ժամ

Գծապատկեր 1.



Արտադրող կայանների տեսակարար կշիռները

Էլեկտրաէներգիայի արտադրված ծավալների օգտագործումը ներկայացված է աղյուսակ 5-ում և գծապատկեր 2-ում, որոնցից պարզ է դառնում հետևյալը, որ առկա է դրական դինամիկա կորուստների նվազեցման ցուցանիշներում՝ շուրջ 12-ից մինչև 7.3 տոկոս նվազում է արձանագրվել, սակայն անգամ նման ցուցանիշը հեռու է նորմայով սահմանված կորուստների թույլատրելի չափից: Սա անշեղորեն կապված է էլեկտրահամակարգում գործող ընկերությունների հիմնական միջոցների չափազանց բարձր մաշվածությունից, քանի որ արտադրող կայանների, բաշխիչ ցանցի, ենթակայանների գերակշիռ մասը գործարկվել է դեռևս ԽՍՀՄ տարիներին: Հաշվի առնելով «ՀԷՑ» ՓԲԸ-ի արտադրատեխնիկական հիմնական միջոցների մաշվածության աստիճանը, Էներգետիկայի գիտահետազոտական ինստիտուտի փորձագետների գնահատմամբ, անհրաժեշտ է առնվազն 30% ենթակայանների կապիտալ վերանորոգում և հիմնական միջոցների փոխարինում՝ 5000 ուժային տրանսֆորմատորներ իրենց չափիչ և բաշխման սարքավորումներով: Կապիտալ վերանորոգման կարիք ունեն նաև օդային և կաբելային գծերի առնվազն 40%-ը: Ենթակա են փոխարինման նաև հին (ինդուկցիոն) հաշվիչները: Էլեկտրաէներգիայի հաշվառման և հսկման ավտոմատացված համակարգի փոխարինումը անհրաժեշտ է տարածել բոլոր լարումների մակարդակների վրա: Խոշորացված գնահատմամբ դա կպահանջի շուրջ 150 մլրդ դրամի ներդրում: Նշված միջոցառումների իրականացումը թույլ կտա իջեցնել փաստացի կորուստները մինչև 4%-ի չափով, իսկ տեխնոլոգիապես անխուսափելի կորուստների չափը՝ մոտեցնել զարգացած երկրների մակարդակին:

Աղյուսակ 5.

	Էլեկտրա-էներգիայի արտադրու-թյան ծավալ-ները մլն կՎտ ժամ	Էլեկտրա-էներգիայի ներմուծում	Էլեկտրա-էներգիայի արտահանում	Արտադրող կայանների սեփական կարիքների համար	Կորուստներ օգտագործման ցանցերում	Օգտակար սպառում
2020	7 723	320	1 333	370	565	5 810
2019	7 632	293	1 251	334	548	5 802
2018	7 777	204	1 627	354	611	5 403
2017	7 763	320	1 440	354	669	5 621
2016	7 315	275	1 229	327	706	5 328
2015	7 798	174	1 424	369	812	5 367
2014	7 750	206	1 314	361	928	5 353
2013	7 710	198	1 226	329	949	5 404
2012	8 036	98	1696	337	981	5 120
2011	7 433	301	1 383	327	904	5 120

Էլ.էներգիայի արտադրության և սպառման ծավալները Մլն կվտ ժամ

Գծապատկեր 2.



Էլեկտրաէներգիայի արտադրությունը և սպառումը ՀՀ-ում 2011-2020թթ

2012 թվականից սկսած նկատվում է ներմուծվող էլեկտրաէներգիայի ծավալների աճ, և միաժամանակ նկատվում է արտահանման ծվալների նվազում: Բայց ՀՀ էլեկտրաէներգետիկ համակարգը այնուամենայնիվ ամբողջապես դրսևորում է ինքնաբավություն և ՀՀ-ն այս համատեքստում համարվում է էլեկտրաէներգիա արտահանող պետություն: Էներգետիկ անվտանգության հայեցակարգով սահմանված է ՀՀ նման շուկայական դիրքի պահպանումը և արտահանման ծավալների ավելացումը, ինչը դրական ազդեցությունը կունենա պետության առևտրային հաշվեկշռի էներգետիկ անվտանգության իրավիճակի և տարածաշրջանային անվտանգության տեսանկյունից: (Գծապատկեր 3)

Գծապատկեր 3.



Էլեկտրաէներգիայի ներմուծումն ու արտահանումը ՀՀ-ում 2011-2020 թթ.

Ցանցերում էլեկտրաէներգիայի կորուստների բարձր մակարդակը պայմանավորված է ցածր լարման ցանցերի մեծ երկարությամբ, բաշխիչ ցանցի բարձր մաշվածության մակարդակով:

Ուստի անհրաժեշտ ենք համարում պետական մակարդակում արդեն իսկ նախանշված ռազմավարական նպատակների իրականացման համար արդիականացման միջոցառումների ժամանակին և պատշաճ իրականացումը:

Ժամանակակից պայմաններում էներգետիկ ձեռնարկությունների կառավարման պրակտիկան հիմնված է կառավարման հետևյալ գործիքների կիրառման վրա՝ բյուջետավորում և վերահսկում; կառավարման հաշվապահական և կորպորատիվ տեղեկատվական և վերլուծական համակարգեր; ռազմավարական պլանավորում: Սակայն, ինչպես ցույց է տալիս տարածաշրջանում էներգետիկ ձեռնարկությունների զարգացման վերլուծությունը, կիրառվող կառավարման գործիքներում կան մի շարք թերություններ, որոնք թույլ չեն տալիս հաջողությամբ զարգանալ:

Էներգետիկ ձեռնարկությունների կառավարման գործիքների հիմնական թերություններն են՝ կառավարման գործընթացի փակ լինելը կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների համար. կառավարման խոշոր վարչական ապարատ՝ մշուշոտ և հատվող պատասխանատվության ոլորտներով. Ձեռնարկության ներքին կազմակերպչական կառուցվածքի փոփոխությունները քաոսային են, թերի. էներգետիկ ձեռնարկությունների գործունեության մասշտաբները տարածվում են Հայաստանի բոլոր շրջաններում, ինչը բարդացնում է ձեռնարկության գործունեության կառավարման գործընթացը, քանի որ. անհրաժեշտ է հաշվի առնել շրջակա միջավայրի տարածաշրջանային առանձնահատկությունները, որտեղ այն գործում է. Փոփոխությունների կառավարման բաժնի բացակայությունը, որը պատասխանատու է ձեռնարկության կառավարման համակարգը շուկայական միջավայրի պայմաններին հարմարեցնելու համար:

ՀՀ Կառավարության մակարդակով օգտագործվում են նաև էներգետիկ ձեռնարկությունների կառավարման գործիքներ, որոնցից հիմնականներն են էլեկտրաէներգիայի արդյունաբերության զարգացման պլանավորումը, էներգետիկ քաղաքականության մշակումն ու իրականացումը: ՀՀ Կառավարության մակարդակով էներգետիկ ձեռնարկությունների զարգացումը որոշող փաստաթղթերը ներառում են.

- ՀՀ Էներգետիկ Անվտանգության Ապահովման հայեցակարգը,
- ՀՀ Էներգախնայողության և Վերականգնվող Էներգետիկայի Ազգային ծրագրի կատարմանն ուղղված ՀՀ Կառավարության Գործողությունների ծրագիր ՀՀ Էներգախնայողության և Վերականգնվող Էներգետիկայի Ազգային ծրագիր,
- ՀՀ էներգետիկ անվտանգություն գործողությունների 2014-2020թթ. ծրագիր,
- ՀՀ էներգետիկ համակարգի երկարաժամկետ (մինչև 2036թ.) զարգացման ուղիները,
- ՀՀ Նախագահի կարգադրություն ՀՀ էներգետիկ անվտանգության ապահովման հայեցակարգը հաստատելու մասին (2013թ.),
- ՀՀ Հիդրոէներգետիկայի Զարգացման հայեցակարգը ՀՀ բնական Պաշարների Կառավարման հայեցակարգը,
- ՀՀ Էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագիր (մինչև 2040թ.),
- ՀՀ Էներգետիկայի զարգացման ռազմավարական ծրագրի (մինչև 2040 թվական) ժամանակացույց,
- ՀՀ օրենքը Էներգետիկայի մասին:

Փաստաթղթերը ՀՀ էներգետիկայի բնագավառի զարգացումը որոշող և ուղղորդող փաստաթղթերն են, որոնց մեջ պետությունը հանձին կառավարության, ներկայացնում է բնագավառի զարգացման հիմնական հայեցակարգային մոտեցումները, անհրաժեշտ միջոցառումները, ներկայացվում է այդ միջոցառումների իրականացման ժամանակացույցը: Փաստաթղթերում նաև ներառված են էներգետիկայի բնագավառի՝ էլեկտրաէներգետիկայի ոլորտում գործունեություն իրականացնող ձեռնարկություններին ներկայացվող պահանջները: Հենց այդ պահանջների, ստանդարտների և պետական ծրագրերի սահմանման միջոցով պետությունը ուղղորդում է ոլորտի զարգացումը գերակա ուղղություններով: Այս փաստաթղթերում հիշատակված և պետության կողմից կիրառվող միջոցները հենց համարվում են ոլորտում պետական կառավարման գործիքներն ու մեխանիզմները:

Էներգետիկ արդյունաբերության համար ֆինանսական ճգնաժամի հիմնական արդ-

յունքներից է էներգետիկ ռեսուրսների ավելի ռացիոնալ օգտագործման շոշափելի անհրաժեշտությունը: Դա հանգեցրեց էներգախնայողության պետական խթաններին՝ էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ազգային ծրագրի ընդունմանը:

Էներգետիկ ձեռնարկությունների համար այս փաստաթղթերի նշանակությունը հսկայական է. Էներգետիկ ընկերությունները պետք է հույսը դնեն իրենց բիզնեսի հաջողության վրա՝ հաշվի առնելով միայն էներգաարդյունավետության պահանջները. շուկայական մյուս ռազմավարությունները դատապարտված կլինեն ձախողման: Միաժամանակ խոստումնալից է էներգետիկ ռեսուրսների ողջ համալիրի՝ էլեկտրաէներգիայի, ջերմության, ջրի և գազի էներգախնայողության զարգացումը:

Գիտական գրականության մեջ մի շարք գիտնականներ իրենց աշխատանքները նվիրել են էներգետիկ ձեռնարկությունների կառավարման գործիքների և մեխանիզմների ձևավորմանը:

Տարբեր գիտնականների էներգետիկ ձեռնարկությունների կառավարման նկարագրված գործիքներն ու մեխանիզմները վերլուծելուց հետո կարելի է նշել, որ բոլոր գործիքներն ու մեխանիզմները նախատեսում են պետության մասնակցությունը էներգետիկ ձեռնարկությունների կառավարմանը: Չնայած էլեկտրաէներգիայի արդյունաբերության բարեփոխմանը, էլեկտրաէներգիայի շուկայի ազատականացմանը, պետության դերը էներգետիկ ձեռնարկությունների կառավարման գործում մեծ է, ինչը պայմանավորված է էներգետիկ ձեռնարկությունների զարգացման համար սոցիալական, տնտեսական և բնապահպանական բարձր նշանակությամբ: հասարակությունը և երկիրը:

Էներգետիկ ձեռնարկությունների զարգացման և կառավարման խնդիրները, դրանց գործունեության ոլորտային առանձնահատկությունները բացահայտված են բազմաթիվ գիտնականների հրապարակումներում:Էներգետիկ ձեռնարկությունների կառավարման և զարգացման պրակտիկայի տեսական և մեթոդական ասպեկտների ընդհանրացման հիման վրա, ձևակերպվում են մրցակցային միջավայրում էներգետիկ ձեռնարկությունների կառավարման գործիքների զարգացման հետևյալ առանձնահատկությունները.

1) Էներգետիկ ձեռնարկությունների կառավարման գործիքներն ապահովում են ձեռնարկության հաջող զարգացումը հետևյալ տեխնոլոգիական գործունեության հետևյալ հատկանիշներով. միաժամանակյա արտադրության գործընթաց և էլեկտրաէներգիայի սպառում, էլեկտրաէներգիա պահեստավորելու անկարողություն, սպառողների անխափան էլեկտրամատակարարման անհրաժեշտությունը. վաճառվող էլեկտրաէներգիայի ծավալը կախված է սպառողներից, էներգետիկ ձեռնարկությունները չեն կարող իրենց պահանջով ավելացնել վաճառվող էլեկտրաէներգիայի ծավալը [*Самсонов, Вяткин, 254*]:

2) Էներգետիկ ձեռնարկությունների կառավարման գործիքներն ապահովում են էներգետիկ ձեռնարկությունների հաջող գործառնական և օպերատիվ կառավարումը. գնահատել էլեկտրաէներգիայի արտադրության ժամային և տարեկան ծավալները, պլանավորել էլեկտրաէներգիայի սպառումը տարվա ընթացքում յուրաքանչյուր ժամի և օրվա համար [*Гительман, 461*]:

3) մրցակցային միջավայրում էներգետիկ ձեռնարկության կառավարման գործիքները լրացուցիչ սպառողական արժեք են ստեղծում ոչ ավանդական և վերականգնվող էներգիայի աղբյուրների կիրառմամբ արտադրվող բարձր տեխնոլոգիական սարքավորումներով արտադրվող էլեկտրաէներգիայի համար: Լրացուցիչ սպառողական արժեքի ստեղծումն անհրաժեշտ է լուծելու այն խնդիրը, որն առաջանում է այն բանի հետևանքով, որ նույն ո-

ռակի և նույն սպառողական արժեքով էլեկտրաէներգիան կարող է արտադրվել տարբեր տեխնոլոգիական մակարդակի էլեկտրակայաններում. ՀԷԿ, ատոմակայաններ, վերականգնվող էներգիայի աղբյուրների օգտագործում և այլն [*Дамбаева, 79*]:

4) մրցակցային միջավայրում էներգետիկ ձեռնարկությունների կառավարման գործիքների զարգացումը հիմնված է հետևյալ ասպեկտների վրա՝ էներգետիկ ձեռնարկությունները գործում են մենաշնորհի և մրցակցության պայմաններում, էներգետիկ ձեռնարկությունների կառավարման անհրաժեշտությունը արդյունաբերության և տարածաշրջանային մակարդակներում [*Козловский, 12*]:

5) էներգետիկ ձեռնարկությունների կառավարման գործիքները հնարավորություն են տալիս ակտիվացնել սպառողի դիրքերը էլեկտրաէներգիայի սպառման կրճատման, էլեկտրաէներգիայի սպառման արդյունավետության բարձրացման հարցում. (փոքր էներգիայի աղբյուրների տեղադրում և շահագործում):

6) մրցակցային միջավայրում էներգետիկ ձեռնարկությունների կառավարման գործիքները երկկողմանի են. մի կողմից, էներգետիկ ձեռնարկությունների կառավարման գործիքներն ապահովում են ձեռնարկության գործունեության հարմարեցումը էլեկտրաէներգիայի շուկայում մրցակցային միջավայրի փոփոխություններին. մյուս կողմից, էներգետիկ ձեռնարկությունների կառավարման գործիքները ձեռնարկությանը թույլ են տալիս ակտիվ դիրք գրավել էլեկտրաէներգիայի շուկայում և ազդել մրցակցային միջավայրի վրա՝ դրանով իսկ հարմարեցնելով այն իր նպատակներին և խնդիրներին:

Ձեռնարկության արտաքին և ներքին միջավայրի պարամետրերը, արդյունաբերության առանձնահատկությունները և տեխնոլոգիական գործընթացի առանձնահատկությունները՝ բոլորը ազդում են ձեռնարկության կառավարման գործիքների ընտրության և դրա օգտագործման արդյունավետության վրա: Հետազոտական աշխատանքում բացահայտված առանձնահատկությունները ուղղակի և անուղղակի ազդեցություն ունեն կառավարման գործիքների ընտրության վրա և թույլ են տալիս մրցակցային միջավայրում ձևավորել արդյունավետ կառավարման գործիքներ էներգետիկ ձեռնարկությունների համար:

Եզրակացություն

Այսպիսով, ՀՀ-ում արտադրվող էլեկտրաէներգիայի ծավալները հիմնականում դրսևորում են կայունություն, սակայն սպառման ծավալներում նկատվում է աճ, ինչը իրենից ենթադրում է արտադրական ծավալների ավելացում, միևնույն ժամանակ, արտահանման տեմպերի անկումը և ներմուծման աճը մտահոգվելու տեղ են տալիս: Ցանցերի և արտադրող հզորությունների բարձր մաշվածություն, հանգեցնում է բաշխիչ ցանցերում նորմայից բարձր էլեկտրաէներգիայի կորուստների, էլեկտրաէներգիայի արժեքի բարձրացմանը, արդյունաբերության և քաղաքաշինության զարգացման դանդաղմանը, և ձեռնարկատիրական գործունեության նվազում: Էներգետիկ ձեռնարկությունների համար մրցակցային միջավայրում կառավարման գործիքների զարգացումը, որը կենտրոնացած է տարածաշրջանի բոլոր սպառողների պահանջարկի բավարարման վրա, կնպաստի էներգետիկ ձեռնարկությունների կայուն զարգացմանը և, որպես հետևանք, ամբողջ տարածաշրջանի տնտեսությանը: Պետության կողմից կառավարման գործիքների ճշգրիտ ընտրությունն ու արդյունավետ կիրառումը անշեղորեն նպաստում է ոլորտում գործունեություն ծավալող ձեռնարկությունների արդյունավետության մակարդակի բարձրացմանը: Էներգետիկայի բնագավառում կառավարման գործիքների զարգացման մակարդակը պետական և ձեռնարկության մակար-

դակով ճշգրիտ որոշելը դրանց առանձնահատկությունը հստակ դասակարգելը և արդյունավետ կիրառությունը էապես կնպաստի ձեռնարկությունների գործունեության արդյունավետության բարձրացմանը, ինչն էլ իր հերթին կբարելավի պետության մակարդակով էներգետիկայի բնագավառի ընդհանուր իրավիճակը, կբարձրացնի երկրի էներգետիկ անվտանգության մակարդակը և կապահովի տնտեսության համաչափ ու շարունակական զարգացում:

Գրականության ցանկ

1. **Гительман Л.Д., Ратников Б.Е**. Энергетический бизнес. Учебник3-е изд., перераб. и доп. М.: Издательство «Дело» АНХ, 2008. 461 с.
2. **Дамбаева Е.Ж**. Электроэнергия как специфический товар. Известия ИГЭА, 2010. №2 (70). с. 78-81
3. **Козловский Д.А**. Управление электроэнергетикой на принципах маркетинга. Автореф.на соискание уч.степени канд.экон.наук. М., 2008, 23 с.
4. **Самсонов В.С., Вяткин М.А.** Экономика предприятий энергетического комплекса. Учеб. для вузов. 2-е изд. Высш.шк., 2003. 416 с.
5. **Самсонов В.С., Вяткин М.А.** Экономика предприятий энергетического комплекса. учеб. М., 2001. 254 с.
6. ՀՀ Էներգետիկ Անվտանգության Ապահովման հայեցակարգը. Երևան 2022 թ. Ապրիլի 17 https://www.energyagency.am/uploads/page/pdfs/%D5%B0%D5%A1%D5%B5%D5%A5%D6%81%D5%A1%D5%AF%D5%A1%D6%80%D5%A3%201.pdf
7. ՀՀ Էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագիր (մինչև 2040թ.) Երևան 2022 ապրիլի 14 https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=149279
8. ՀՀ օրենքը Էներգետիկայի մասին. Երևան 2022 ապրիլի 17 http://www.irtek.am/views/act.aspx?aid=150007

CURRENT SITUATION OF ENERGY ENTERPRISES AND CURRENT LEVEL OF DEVELOPMENT OF MANAGEMENT TOOLS

Khukeyan Z. G.
PHD student
ASUE, Chair of Management
zaven.khukeyan@gmail.com

Abstract

One of the most important infrastructural elements in the energy system is the enterprises operating in the field. Energy companies play an important role in the life of society. Modern day-to-day economic activity has become impossible to imagine without an uninterrupted supply of electricity. It accompanies and ensures the life of the population, industrial production, transport. Insufficient development of energy enterprises in some regions, especially in the whole country, becomes a real obstacle to economic growth. This places special demands on the management and planning of energy enterprise development prospects. Therefore, it is necessary to constantly conduct research, to identify the existing problems in the enterprises of the sector, to find the shortcomings and weak points, by improving which it will be possible to ensure the sustainable, balanced development of the entire energy system. The work explores the dynamics of electricity supply volumes, export-import dynamics, and double potentials. We have presented the specific weights of power plants in terms of production and consumption of energy in the power system of the Republic of

Armenia, identifying the structure and the composition inherent in the volume of electricity supplied. We have also singled out the shortcomings of management tools in energy enterprises at the state-enterprise level.

Keywords: Electricity generation, management tools, energy system enterprises, energy strategy, electric power industry, energy policy, competitive environment.

Ներկայացվել է՝ 15.04.2022 թ.
Գրախոսվել է՝ 31.05.2022 թ.

ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ ԷՆԵՐԳԵՏԻԿ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆ

Խուկեյան Զ.Գ.
ասպիրանտ
ՀՊՏՀ, Կառավարման ամբիոն
zaven.khukeyan@gmail.com

Ամփոփագիր

Էներգետիկ ոլորտի ձեռնարկությունների գործունեության արդյունավետությունը տնտեսության կարևորագույն խնդիրներից է, և այդ ձեռնարկությունների կառավարման և գործունեության արդյունավետության մակարդակից էապես կախված է նաև տնտեսության զարգացվածությունը, տնտեսության մյուս ճյուղերում գործող ձեռնարկությունների վիճակը, երկրի էներգետիկ անվտանգության մակարդակը: Ռազմավարական այս ճյուղում գործունեություն ծավալող ձեռնարկությունների կառավարման արդյունավետության բարձրացման մեջ մեծ դեր ունի կառավարման գործիքների հստակ մշակումը և կիրարկումը: Ձեռնարկությունների կառավարման գործիքների արդյունավետությունը մրցակցային միջավայրում դիտարկված է բիզնես գործընթացների կիրարկման մակարդակից, դրանց կուտակային էֆեկտից, առանձնացված են վերլուծության քանակական և որակական մեթոդաբանական մոտեցումները և կիրառված են աշխատանքի մեջ: Աշխատանքում վերլուծել ենք ՀՀ էներգետիկ ոլորտի ձեռնարկություններում բիզնես գործընթացները, ձեռնարկություններում բիզնես գործընթացների կյանքի ցիկլերը, ինչպես նաև այն, թե տվյալ պահին կյանքի որ ցիկլում է գտնվում նշված բիզնես գործընթացը: Առանձնացված մեթոդաբանությամբ գնահատվել է ձեռնարկությունների ներկա վիճակը և մատնանշվել գործողությունների իրականացման անհրաժեշտ ուղղությունները՝ ձեռնարկությունների կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով, որը շղթայական էֆեկտով կհանգեցնի տնտեսական ակտիվության բարձրացման և էներգետիկ անվտանգության մակարդակի բարձրացմանը:

Հիմնաբառեր. Էներգետիկ ձեռնարկություն, մրցակցային միջավայր, կառավարման գործիքներ, կառավարման արդյունավետություն, չորս եռանկյուններ, բիզնես գործընթացների կյանքի ցիկլեր:

Ներածություն

Ձեռնարկության կառավարման գործիքների զարգացման մակարդակը գնահատելու մեթոդի ընտրությունը կախված է տնտեսվարող սուբյեկտի անհատական բնութագրերից և այն այլընտրանքներից, որոնք պարունակվում են ձեռնարկության զարգացման սցենարի կանխատեսումներում, կախված է կառավարչական բնույթի որոշումներ կայացնելու համար ձեռնարկության վարչական ապարատի կառուցվածքի մասին առկա և բավարար տեղեկատվության ծավալից [Никитчук, Рубин, 40].

Հոդվածում ուսումնասիրության նպատակն է՝ վեր հանել և առաջարկել կառավարման գործիքների արդյունավետության գնահատման համակողմանի մեթոդիկան: Ուսումնասիրության առարկան ձեռնարկության

բիզնես գործընթացներն ու դրանց ընթացքում կիրառվող կառավարման գործիքներն են էներգետիկ ձեռնարկություններում:

Ձեռնարկության կառավարման գործիքների զարգացումը հիմնված է արտադրական ռեսուրսների օգտագործման ինտենսիվացման, անձնակազմի կառավարելիության և ձեռնարկության գործառնական գործունեության արդյունավետության բարձրացման վրա, կառավարչական ազդեցության կատարման ժամանակի կրճատման վրա՝ միաժամանակ բարելավելով կատարված աշխատանքի որակը: Այսպիսով, ձեռնարկության կառավարման արդյունավետության միջոցով հնարավոր է գնահատել կառավարման գործիքների զարգացումը:

Ցանկացած ձեռնարկության կառավարման արդյունավետության գնահատումը ամենադժվար խնդիրն է, քանի որ այն գնահատելու համար անհրաժեշտ է օգտագործել համակարգային և կառուցվածքային մոդելավորում որոշակի գործընթացի կամ օբյեկտի իրական պայմաններում, ինչպես նաև կանխատեսել դրա վիճակը ապագայում արտաքին և ներքին միջավայրի տարբեր փոփոխվող պարամետրերի պայմաններում:

Ձեռնարկությունների կառավարման արդյունավետության գնահատման հարցում կոնսենսուս չկա: Գ.Է. Սլեզինգերը, տնտեսվարող սուբյեկտի կառավարման արդյունավետությունը որոշելիս, հավատարիմ է տեղեկատվական մոտեցմանը, ըստ որի ձեռնարկության կառավարման կառույցների կողմից գեներացված տեղեկատվության սովորական միավորների ծավալը մեկ միավորի համար ընդունվում է որպես արդյունավետության չափանիշ: Այս մոտեցման օգտագործումը անհրաժեշտ է դարձնում գիտության կողմից տեղեկատվության ծավալի հաշվառման հուսալի և հատուկ մեթոդների ընտրությունը, տեղեկատվական մեթոդի համադրությունը աշխատանքի արտադրողականության չափման մոտեցումների հետ [*Воропаева, Аллахвердиев, 43*]:

ԱՄՆ-ում ձեռնարկությունների կառավարման պրակտիկայում լայնորեն տարածված է կառավարման արդյունավետության գնահատումը ստացված շահույթի չափով: Այս դեպքում պետք է հաշվի առնել, որ ձեռնարկության կառավարման արդյունավետ համակարգը ապահովում է ոչ միայն շահույթի և շահութաբերության ցանկալի չափը, այլ նաև առաջացնում է որոշակի սոցիալական էֆեկտ: Չափել և որոշել սոցիալական էֆեկտը հնարավոր չէ, սակայն ձեռնարկության կառավարման համակարգի արդյունավետությունը գնահատելու հարցում նրա դերը մեծ է [*Дьякова, 200*]:

Գիտական հրապարակումներում առանձնանում են ձեռնարկությունների կառավարման արդյունավետության մոդելավորման երկու մոտեցում՝ մեխանիկական և հումանիստական: «Մեխանիկական մոդելը» հիմնված է կազմակերպության որպես սահմանված նպատակների իրականացման մեխանիզմի դիտարկման վրա, որը բաղկացած է արտադրության հիմնական գործոններից՝ աշխատուժից, աշխատանքային ռեսուրսներից, հումքից և նյութերից: Այս մոտեցման տեսական հիմքը կառավարման գիտական դպրոցի աշխատություններն են, որոնց հիմնադիրներն են Ֆ.Թեյլորը և Մ.Վեբերը: Այս մոտեցման հիմնական գաղափարը տեխնիկական և տնտեսական հարաբերությունների և տարբեր արտադրական գործոնների փոխհարաբերությունների վերլուծությունն է: Այս մոտեցման շրջանակներում ձեռնարկության ղեկավարության հիմնական խնդիրն է նպատակներին հասնելու համար օպտիմալ կերպով խմբավորել համակարգի բոլոր մասերը և հասնել առավելագույն արդյունավետության [*Сатдыкова, 14*]:

«Հումանիստական» մոդելը կազմակերպությունը դիտարկում է որպես աշխատանքային կոլեկտիվ, որն արտադրում է ապրանքներ՝ հիմնված աշխատանքի բաժանման, աշխատանքի համագործակցության գաղափարների վրա, ինչպես նաև նախատեսում է, որ արտադրության կենտրոնական գործոնը մարդն է: Մոդելի բաղադրիչներն են հետևյալ պարամետրերը՝ ուշադրություն անձնակազմի նկատմամբ, անձնակազմի մոտիվացիա, հաղորդակցություն, կառավարման որոշումների կայացմանը մասնակցելու հնարավորության ապահովում: Կառավարման սուբյեկտի խնդիրներն են անձնակազմի միջև հարաբերությունների զարգացումը, պլանների և արտադրական առաջադրանքների իրականացման գործընթացների համակարգումը անձնակազմի վրա անձնական ազդեցության միջոցով: Ձեռնարկության կառավարման արդյունավետությունը գնահատելու հիմնական չափանիշը համարվում է կադրերի զարգացման միջոցով աշխատանքի արտադրողականության աճը: Հիմնական գաղափարն այն է, որ եթե անձնակազմի կառավարման բոլոր ներքին գործընթացները պատշաճ կերպով կազմակերպված են, ապա արտադրության և շահույթի համար ձեռնարկության բոլոր նախատեսված նպատակները կատարվում են ժամանակին և նվազագույն գնով [*Никифорова, 95*]:

Ըստ Օ.Վ. Դյակովայի «հումանիստական» և «մեխանիկական» մոդելներն ունեն մեկ հիմք՝ ձեռնարկության նպատակները սահմանված, հայտնի և ընդունված են կառավարման ազդեցության բոլոր մասնակիցների կողմից: Նրանց թերությունը կայանում է նրանում, որ անհրաժեշտ է հաշվի առնել ոչ միայն բաժնետերերի և մենեջերների հետաքրքրությունները, այլև աշխատողների և նրանց ընտանիքների, ձեռնարկության կապալառուների, պետական մարմինների և բոլոր նրանց հետաքրքրությունները, ովքեր շահագրգռված են կազմակերպության գործունեության մեջ [*Дьякова, 201*]:

Ձեռնարկությունների կառավարման խնդիրների վերաբերյալ հրապարակումներում ուշադրություն է դարձվում նաև ձեռնարկության կառավարման համակարգերի արդյունավետության և ձեռնարկության կառավարման գործիքների արդյունավետության գնահատման մեթոդներին:

Այսպիսով, Ռ. Կապլանը և Դ. Նորտոնը առաջարկում են գնահատել ընկերության կառավարման արդյունավետությունը հավասարակշռված գնահատականի միջոցով, որը ներառում է չորս բաղադրիչ՝ ֆինանսներ (YOSE-ի հիմնական կապիտալի վերադարձ), հաճախորդներ (հաճախորդների հավատարմություն, ժամանակակից առաքում), ներքին բիզնես գործընթացներ (գործընթացի որակ, ժամանակի գործընթացի ցիկլ), կադրերի վերապատրաստում և զարգացում (կադրերի հմտություններ և կարողություններ) [*Каплан, Нортон, 34*]:

Գ. Մարկ Բրաունը իր ուսումնասիրության մեջ բացահայտում է ընկերության կառավարման արդյունավետությունը գնահատելու գաղափարը հավասարակշռված գնահատականի միջոցով, որը ներառում է ցուցանիշների վեց խումբ՝ ֆինանսական արդյունավետություն, հաճախորդների գոհունակություն, արտադրանքի/ծառայության որակ, մատակարարի կատարողականություն, տեխնոլոգիական և գործառնական արդյունավետություն, [*Браун, 61*]:

Ֆ.Մ. Ռուսինովը, Լ.Ֆ. Նիկուլինը, Լ.Վ. Ֆատկինը գնահատել են ձեռնարկության արդյունավետությունը ռեսուրս-պոտենցիալ մոտեցման հիման վրա, ըստ որի, համակարգի գործունեության ամբողջական արդյունավետությունը համակարգի ներուժի իրացման ֆունկցիան է. $E = f(N - O) — \max nYn$, որտեղ N-ն համակարգի հնարավորությունների ներուժն է, O-ն համակարգի հնարավորությունների օգտագործման մակարդակը, Yn - կա-

ռիքների բավարարում [*Русинов, Никулин, Фаткин, 289-290*]:

Ըստ Օ.Վ. Դյակովայի ձեռնարկության և դրա կառավարման կառուցվածքի արդյունավետության գնահատումը պետք է իրականացվի ցուցիչների երեք խմբերի միջոցով: Ցուցանիշների առաջին խումբը արտացոլում է կառավարման համակարգի արդյունավետությունը արտադրության ծավալների, կապիտալ ներդրումների, նոր տեխնոլոգիաների ներդրման ժամկետների և կառավարման ծախսերի միջոցով: Ցուցանիշների երկրորդ խումբը արտացոլում է ղեկավար անձնակազմի աշխատանքի ծախսերն ու արդյունքները վարչական ապարատի պահպանման ծախսերի, շենքերի պահպանման ծախսերի և ղեկավար անձնակազմի վերապատրաստման ծախսերի միջոցով: Կազմակերպության կառավարման արդյունավետությունը գնահատելիս կարելի է կիրառել գնահատման որակական և քանակական մեթոդներ: Ավելին, հնարավոր է օգտագործել հսկիչ ապարատի բնութագրերի ռացիոնալացումը՝ աշխատանքի արտադրողականություն, հսկողության հարմարվողականություն, հսկողության արդյունավետությունը, հսկողության հուսալիությունը: Ցուցանիշների երրորդ խումբը արտացոլում է կառավարման կառուցվածքի տեխնիկական և կազմակերպչական մակարդակը և դրա ռացիոնալությունը կառավարելիության չափանիշների, կառավարման սուբյեկտների միջև իրավունքների և պարտականությունների հավասարակշռության, կառավարման գործառույթների կենտրոնացման աստիճանի միջոցով [*Дьякова, 203*]:

Հ.Ջ. Կազնաչեևայի և Ա.Բ. Մարգունովայի գիտական հրապարակման մեջ բացահայտվել են կառավարման գործիքների արդյունավետության գնահատման երկու տարբեր մոտեցումներ: Կառավարման գործիքների արդյունավետության գնահատման առաջին մեթոդը հիմնված է կատարողականի արդյունքների և դրա ծախսերի հարաբերակցության որոշման վրա: Այս մեթոդը թույլ է տալիս գնահատել օգտագործված կառավարման գործիքի արդյունքի համեմատությունը ձեռնարկության տնտեսական գործունեության ցուցանիշներին: Կառավարման գործիքների արդյունավետության գնահատման երկրորդ մեթոդը հիմնված է ձեռնարկության արդյունավետության ընդհանուր գնահատման վրա՝ գործիքի օգտագործումից առաջ և հետո: Այս մեթոդը կիրառելիս պետք է հիշել, որ եթե ձեռնարկության կառավարման համակարգը արդյունավետ է, ապա դրա շրջանակներում օգտագործվող կառավարման գործիքը նույնպես արդյունավետ կլինի [*Казначеева, Моргунов, 49*]:

Այսպիսով, կազմակերպության կառավարման գործիքների օգտագործման կուտակային էֆեկտը սահմանվում է որպես հետևյալ տիպի էֆեկտների հանրագումար.

- տնտեսական (ձեռնարկության կառավարման ծախսերի կրճատում),
- սոցիալական (աշխատակազմի հավատարմության և աշխատանքի մոտիվացիայի բարձրացում),
- մարքեթինգային (շուկայում դիրքերի ամրապնդում, շուկայական մասնաբաժնի աճ),
- տեղեկատվական (ժամանակին և առանց սխալների հաշվետվությունների ստեղծում, խելամիտ կառավարման որոշումների կայացում),
- կազմակերպչական (կադրերի որակավորման բարձրացում, կառավարման որոշումների ընդունման և իրականացման արդյունավետության բարձրացում) [*Казначеева, Моргунов, 49*]:

Օ.Ա. Մամոնովան առաջարկում է գնահատել ձեռնարկության կառավարման համակարգի տնտեսական արդյունավետությունը ներսից՝ վերլուծելով ձեռնարկության ֆինանսական և տնտեսական վիճակը (իրացվելիու-

թյան գործակիցներ, ֆինանսական կայունության գործակիցներ, բիզնեսի ակտիվության գործակիցներ, շահութաբերության գործակիցներ) և արտաքին կողմերը՝ գնահատելով բիզնեսի շուկայական արժեքը: Ձեռնարկության տնտեսական արդյունավետության և ներկայիս կառավարման համակարգի գնահատման այս մոդելը ավելի հարմարեցված է անընդհատ փոփոխվող արտաքին մրցակցային միջավայրի շուկայական պայմաններին [*Мамонова, 353*]:

Նաև ձեռնարկությունների կառավարման համակարգերի արդյունավետության գնահատումը կարող է իրականացվել որակական մեթոդների կիրառմամբ: Օրինակ՝ օգտագործելով Ֆելիքս-Ռիգսի առաջարկած վերլուծության կետային մեթոդը, ըստ որի ձեռնարկության գործունեության վերահսկման համար անհրաժեշտ է ուշադրություն դարձնել մի շարք գործոնների: Յուրաքանչյուր ուղղությամբ տրված վիճակին մոտեցման մակարդակը ցուցանիշ է, որն արտացոլում է նպատակին հասնելու աստիճանը: Այս մոտեցումը հնարավորություն է ընձեռում վերջնական ինդիկատոր ձևավորել՝ փորձագիտական գնահատականների միջոցով կշռելով առանձին չափորոշիչներ: Չափանիշների կազմը որոշվում է փորձագետների կողմից՝ ելնելով կոնկրետ ձեռնարկության գործունեության առանձնահատկություններից [*Виссема Х.*]:

Այսպիսով, կառավարման գործիքների արդյունավետության գնահատման բոլոր ընդհանուր մոտեցումները բաժանվում են չորս խմբի.

1) ըստ սահմանված նպատակների իրագործման աստիճանի,
2) կատարողականի արդյունքների և ծախսերի հարաբերակցությամբ,
3) ըստ ստանդարտին համապատասխանության աստիճանի,
4) ըստ իր մասնակիցների՝ ընթացքից գոհունակության աստիճանի:

Կառավարման արդյունավետությունը գնահատելու նկարագրված մեթոդների առավելությունը ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշների և գործակիցների օգտագործումն է, որոնք բնութագրում են ձեռնարկության արդյունքները և կառավարման համակարգի վիճակը: Այնուամենայնիվ, այս մեթոդները պատշաճ ուշադրություն չեն դարձնում ձեռնարկության բիզնես գործընթացների զարգացմանը, չեն համատեղում ֆինանսական ցուցանիշների գնահատումը և ձեռնարկության բիզնես գործընթացների զարգացման գնահատումը:

Այս թերությունները վերացնելու համար առաջարկվում է կիրառել մրցակցային միջավայրում էներգետիկ ձեռնարկությունների կառավարման գործիքների մշակումը գնահատելու մեթոդաբանություն՝ հիմնված երկու չափանիշների վրա.

- ձեռնարկության կառավարման բիզնես գործընթացների զարգացում. ձեռնարկությունների կառավարման գործընթացի վրա հիմնված մոդելի տեսանկյունից բիզնես գործընթացը ժամանակակից պայմաններում ձեռնարկության կառավարման կարևորագույն գործիքներից մեկն է: Բիզնես գործընթացների հասունության մակարդակը ցույց է տալիս, թե ինչպես է ձեռնարկության գործունեությունը սահմանվում, կառավարվում, վերահսկվում և ինչքանով է արդյունավետ.
- ձեռնարկության տնտեսական արդյունավետությունը. Ձեռնարկության տնտեսական ցուցանիշներն արտացոլում են, թե տնտեսական տեսանկյունից որքան արդյունավետ և արդարացված են այն գործիքները, որոնք օգտագործվում են ձեռնարկությունը մրցակցային միջավայրում կառավարելու համար:

Մրցակցային միջավայրում էներգետիկ ձեռնարկությունների կառավարման գործիքների զարգացման գնահատման տրամաբանական սխեման ներկայացված է Գծապատկեր 1-ում:

Ավելին, առաջարկվող մեթոդաբանությունը հիմնված է օբյեկտների ուսումնասիրության երկու մեթոդի վրա.

- որակական գնահատման մեթոդը հետազոտության մեթոդ է, որը հիմնված է ուսումնասիրված երևույթների և գործընթացների որակական համեմատական բնութագրերի և փորձագիտական գնահատականների վրա [*Савицкая, 16*]: Որակական մեթոդի օգնությամբ իրականացվում է ձեռնարկության բիզնես գործընթացների զարգացման գնահատում.
- գնահատման քանակական մեթոդը հիմնված է քանակական համեմատությունների և տարբեր գործոնների փոփոխությունների նկատմամբ տնտեսական երևույթների զգայունության աստիճանի ուսումնասիրության վրա [*Савицкая, 16*]: Քանակական մեթոդի օգնությամբ իրականացվում է ձեռնարկության գործունեության տնտեսական արդյունքների գնահատում:

Ե. Վ. Մինյաևայի կողմից բացահայտված բիզնես գործընթացների կյանքի ցիկլի փուլերը հարմար են մրցակցային միջավայրում էներգետիկ ձեռնարկության բիզնես գործընթացների զարգացումը գնահատելու համար: Մինյաևայի ուսումնասիրությունը նկարագրում է ձեռնարկության բիզնես գործընթացի կյանքի ցիկլը և կյանքի ցիկլի յուրաքանչյուր փուլի հիմնական բնութագրերը.

1. Գործընթացի սահմանում - մուտքերի, ելքերի, ռեսուրսների նույնականացում, այլ գործընթացների հետ փոխազդեցություն, դրա կարգավորում և ստանդարտացում: Հիմնական նպատակը՝ նոր նպատակների ձեռքբերում և խնդիրների լուծում:
2. Գործընթացի զարգացում - գործընթացի հարմարեցում մրցակցային միջավայրում էներգետիկ ձեռնարկության սպառողների պահանջներին:
3. Գործընթացի կայուն շահագործում.
4. Գործընթացի արդյունավետության նվազեցում՝ գործընթացների արդյունավետության ցուցանիշների նվազում՝ սպառողների դժգոհության պատճառով, ինչը հանդիսանում է դրա վերացման կամ արմատական վերափոխման պատճառ:
5. Գործընթացի լուծարում կամ վերակազմավորում՝ նոր գործընթացի առաջացում, գործընթացի անհրաժեշտության բացակայություն [Миняева, 125-126]:

Գծապատկեր 1.



Էներգետիկ ձեռնարկությունների կառավարման գործիքների մշակումը մրցակցային միջավայրում գնահատելու տրամաբանական սխեմա

Յուրաքանչյուր ձեռնարկություն, իրականացնելով իր գործունեությունը և կառավարելով այն, կարևորում է բազմաթիվ բիզնես գործընթացներ: Ձեռնարկությունների կառա-

վարման գործիքների զարգացումը գնահատելու համար մենք կգնահատենք միայն կառավարման բիզնես գործընթացների որակը, քանի որ այս գործընթացների շրջանակներում տեղի է ունենում ձեռնարկության կառավարման գործիքների ձևավորում:

Որպես գնահատման ենթակա ձեռնարկության հիմնական կառավարման բիզնես գործընթացներ, մենք կընդունենք հետևյալ գործոնները՝ ձեռնարկության վիճակի վերլուծություն, ձեռնարկության զարգացման արտաքին և ներքին միջավայրի գործոններ, մրցակցային միջավայրի գործոններ, ձեռնարկության՝ մրցակցային միջավայրում հնարավոր փոփոխությունների կանխատեսում, ձեռնարկության զարգացման սցենարների մշակում, ձեռնարկության զարգացման համար միջոցառումների պլանավորում, գործողությունների ծրագրի սահմանում, ձեռնարկության ռազմավարության իրականացման համար միջոցառումների կազմակերպում, անձնակազմի մոտիվացիա ձեռնարկության ռազմավարական նպատակներն ու խնդիրները կատարելու համար, մրցակցային միջավայրում ձեռնարկության զարգացման համար հիմնական գործողությունների համակարգում, ձեռնարկության ռազմավարական նպատակների և խնդիրների իրականացման հաշվառում և վերլուծություն, հաշվետվություններ, մրցակցային միջավայրում ռազմավարական նպատակների և խնդիրների իրականացման նկատմամբ վերահսկողություն, ձեռնարկության գործունեության կարգավորում՝ շեղումները վերացնելու, գործողությունների ծրագիրը ճշգրտելու նպատակով:

Հետևյալը նկարագրում է այն հիմնական չափանիշները, որոնցով որոշվում է կառավարման գործընթացների կյանքի ցիկլի փուլը (Աղյուսակ 1):

Փուլ 1. Գործընթացի սահմանում - բիզնես գործընթացի մուտքերի, ելքերի, ռեսուրսների նույնականացում, այլ գործընթացների հետ դրա փոխազդեցություն, բիզնես գործընթացի կարգավորում և ստանդարտացում: Բիզնես գործընթացն ուղղված է նոր նպատակների իրագործմանը և նոր խնդիրների լուծմանը:

Փուլ 2. Գործընթացի զարգացում – այս փուլում գործընթացը հարմարեցված է մրցակցային միջավայրի պահանջներին, բիզնես գործընթացները օպտիմիզացված են, բիզնես գործընթացների կանոնակարգերը թարմացվում են մրցակցային միջավայրի պահանջներին համապատասխան:

Փուլ 3. Գործընթացի կայուն շահագործում - այս փուլում բիզնես գործընթացում դերերի և պարտականությունների բաշխումը հստակորեն սահմանվում և իրականացվում է:

Փուլ 4. Գործընթացի արդյունավետության նվազում - այս փուլում նկատվում է գործընթացների արդյունավետության ցուցանիշների նվազում՝ մրցակցային միջավայրի հետ դրանց անհամապատասխանության պատճառով, ինչով էլ պայմանավորված է դրա լուծարումը կամ վերակազմավորումը:

Փուլ 5. Գործընթացի վերացում կամ վերակազմավորում - այս փուլում ի հայտ է գալիս նոր բիզնես գործընթաց, գոյություն ունեցող բիզնես գործընթացը վերամշակվում է կամ վերացվում:

Աղյուսակ 1.

Կառավարման բիզնես գործընթացի կոնսացիկլը	**Հղման պարամետրեր**	**Միավորներ**
Գործընթացի սահմանում	Բիզնես գործընթացի մուտքերի, արդյունքների, ռեսուրսների նույնականացում, դրա փոխազդեցությունը այլ գործընթացների հետ, բիզնես գործընթացի կարգավորում և ստանդարտացում	2
Գործընթացի զարգացում	Տեղի է ունենում գործընթացի հարմարեցում մեցակցային միջավայրի պահանջներին. բիզնես գործընթացները օպտիմիզացվում են, բիզնես գործընթացների կանոնակարգերը թարմացվում են մրցակցային միջավայրի պահանջներին համապատասխան	3
Գործընթացի կայուն գործարկում	Բիզնես գործընթացում դերերի և պարտականությունների բաշխումը հստակ սահմանված և իրականացվում է	4
Գործընթացի արդյունավետության նվազում	Գործընթացների արդյունավետության և դրա ցուցանիշների նվազում՝ մրցակցային միջավայրի հետ դրանց անհամապատասխանության պատճառով, ինչն էլ պատճառ է հանդիսանում դրա լուծման կամ վերակառուցման	1
Գործընթացի վերակազմավորում	Գործող բիզնես գործընթացի վերակառուցումը, բիզնես գործընթացների կանոնակարգերը վերակառուցվում են միցակցային միջավայրի պահանջներին համապատասխան	3
Վերացման գործընթացը	Բիզնես գործընթացի անհրաժեշտության կորուստ, բիզնես գործընթացի վերացում	0

ԿԲԳ կենսացիկլի փուլի որոշման պարամետրեր, K1 գործակցի հաշվարկ

Բիզնես գործընթացների զարգացումը գնահատելու համար առանձնացվել են դրանց կյանքի ցիկլի հինգ փուլերը: Նկարագրված մեթոդաբանությունը ներառում է ձեռնարկության կառավարման բիզնես գործընթացների գնահատումը նկարագրված չափանիշներին համապատասխանելու համար և կյանքի ցիկլի դրանց փուլի որոշումը: Եթե բիզնես գործընթացը համապատասխանում է կյանքի ցիկլի առաջին փուլին, ապա նշանակվում է 2 միավոր, երկրորդ փուլին՝ 3 միավոր, երրորդ փուլին՝ 4 միավոր, չորրորդ փուլին՝ միավոր, հինգերորդ փուլին՝ 0 միավոր: տրամադրված միավորների քանակը կախված է ձեռնարկության կառավարման բիզնես գործընթացի կյանքի ցիկլի փուլի արդյունավետությունից:

Օգտագործելով կառավարման գործիքների մշակումը գնահատելու էտալոնային մոտեցումը և հիմնվելով բիզնես գործընթացների կյանքի ցիկլի փուլերի վերլուծության վրա, կարելի է որոշել, որ բիզնես գործընթացի

կյանքի ցիկլի երրորդ փուլը կարող է ընդունվել որպես ստանդարտ, որովհետև հենց այս փուլում է, որ բիզնես գործընթացը հաջողությամբ գործում է և բերում առավելագույն արդյունք: Այսպիսով, գնահատվում է կառավարման ինը բիզնես գործընթաց, եթե այդ գործընթացներից յուրաքանչյուրը գտնվում է կյանքի ցիկլի երրորդ փուլում, ապա այս չափանիշի առավելագույն միավորը կլինի 36 միավոր:

Առաջարկվում է տնտեսական ցուցանիշները գնահատել Տ.Վ. Խորոնժևսկայայի կողմից մշակված և հիմնավորված «եռանկյունի» մեթոդով: [Хоронжевская, 98]: Հիմնվելով «եռանկյունի» մեթոդով մոնիտորինգի կառուցման և անցկացման հայեցակարգային մոտեցման, «ոսկե տնտեսական կանոնի» և հիմնավորումների վրա՝ հիմնված ձեռնարկությունների տեսության և պրակտիկայի վրա, Տ.Վ. Խորոնժևսկայան կառուցեց հետևյալ կապը «եռանկյունու» ցուցանիշների աճի տեմպերի դինամիկայի միջև՝ մեծ մեկ և երեք փոքր (Աղյուսակ 2):

Մեծ եռանկյունին դասականորեն կառուցված է ըստ «ոսկե տնտեսական կանոնի», երբ շահույթի աճի տեմպ > եկամուտների աճի տեմպ > ակտիվների աճի տեմպեր >100%:

Փոքր եռանկյունների կառուցումը արտացոլում է հետևյալ հարաբերությունները.

- առաջին փոքր եռանկյունին՝ Եկամուտների աճի տեմպ > սեփական կապիտալի աճի տեմպ > ակտիվների աճի տեմպ > 100%,
- երկրորդ փոքր եռանկյունին՝ զուտ շահույթի աճի տեմպ > Եկամուտների աճի տեմպ > Սեփական կապիտալի աճի տեմպ >100%,
- երրորդ փոքր եռանկյունին՝ Զուտ շահույթի աճի տեմպ > Սեփական կապիտալի աճի տեմպ > Ակտիվների աճի տեմպ >100%:

Աղյուսակ 2.

Փոխկապակցվածություն ձեռնարկության գործունեության ցուցանիշների հետ	**Միավորներ**
Շահույթի աճի տեմպ > եկամուտների աճի տեմպ > ակտիվների աճի տեմպեր >100%	2
Եկամուտների աճի տեմպ > սեփական կապիտալի աճի տեմպ > ակտիվների աճի տեմպ > 100%	1
Զուտ շահույթի աճի տեմպ > Եկամուտների աճի տեմպ > Սեփական կապիտալի աճի տեմպ >100%	1
Զուտ շահույթի աճի տեմպ > Սեփական կապիտալի աճի տեմպ > Ակտիվների աճի տեմպ >100%	1

Ձեռնարկության տնտեսական գործունեության գնահատում, K2 գործակցի հաշվարկ

Որպես մեթոդաբանության մաս, առաջարկվում է վերլուծել այս ցուցանիշների դինամիկան վերջին երեք տարիների ընթացքում և տալ հետևյալ գնահատականները. ենթակա յուրաքանչյուր փոքր եռանկյունու՝ 1 միավոր: Այսպիսով, տնտեսական ցուցանիշների առավելագույն միավորը (K2) 45 միավոր է:

Գնահատման արդյունքները համատեղելով երկու բլոկում՝ ձեռնարկության կառավարման բիզնես գործընթացների զարգացում և ձեռնարկության տնտեսական գործունեության գնահատում, ձևավորվում է մատրիցա,

որի հիման վրա առանձնանում են մրցակցային միջավայրում էներգետիկ ձեռնարկությունների կառավարման գործիքների զարգացման երեք մակարդակ՝ բարձր, միջին և ցածր (տե՛ս Գծանկար 2.):

Գծապատկեր. 2.



Մրցակցային միջավայրում էներգետիկ ձեռնարկությունների կառավարման գործիքների մշակման գնահատման արդյունքներ

Մրցակցային միջավայրում էներգետիկ ձեռնարկությունների կառավարման գործիքների մշակումը գնահատելու առաջարկված մեթոդաբանությունը փորձարկվել է ՀՀ-ում գործող ձեռնարկությունների օրինակով: «ՀԷՑ» ՓԲԸ, «ՀԱԷԿ» ՓԲԸ, «ԲԷՑ» ՓԲԸ, «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ կազմակերպությունների ֆինանսական արդյունքների հիման վրա կիրառելով վերոնշյալ մեթոդաբանությունը ստորև ներկայացնում ենք հաշվարկների արդյունքները (Տե՛ս աղյուսակ 3.):

Աղյուսակ 3.

Կազմակերպության անվանումը	K1	K2	Գնահատական
«ՀԷՑ» ՓԲԸ	28	1	Միջին մակարդակ
«ՀԱԷԿ» ՓԲԸ	17	0	Ցածր մակարդակ
«ԲԷՑ» ՓԲԸ	26	0	Միջին մակարդակ
«Երևանի ՋԷԿ» ՓԲԸ	15	0	Ցածր մակարդակ

Կազմակերպությունների ֆինանսական արդյունքների հաշվարկ

Արդյունքները ներկայացնենք գծապատկերի տեսքով (տե՛ս Գծանկար 3.):

Գծապատկեր 3.



ՀՀ-ում մրցակցային միջավայրում էներգետիկ ձեռնարկությունների կառավարման գործիքների մշակման գնահատման արդյունքները

Գծապատկեր 3-ից հետևում է, որ ՀՀ-ում գործող վերլուծված 4 ձեռնարկություններից 2-ը մրցակցային միջավայրում էներգետիկ ձեռնարկությունների կառավարման գործիքների զարգացման ցածր մակարդակ ունեն, 2-ը ունեն մրցակցային միջավայրում էներգետիկ ձեռնարկությունների կառավարման գործիքների զարգացման միջին մակարդակ:

ՀՀ-ում մրցակցային միջավայրում էներգետիկ ձեռնարկությունների կառավարման

գործիքների զարգացման ցածր մակարդակը պայմանավորված է արտաքին միջավայրի պարամետրերի բարձր դինամիկայով, կորպորատիվ ձեռնարկությունների կառավարման անկատարությունով, ձեռնարկությունների կառավարման կառուցակարգերի ոչ լիարժեք բարեփոխումներով:

Էներգետիկ ձեռնարկությունների համար մրցակցային միջավայրում կառավարման գործիքների զարգացման մակարդակը գնահատելու մշակված մեթոդաբանությունը ունի հետևյալ տարբերակիչ հատկանիշները.

- համատեղում է ձեռնարկության կառավարման բիզնես գործընթացների որակական գնահատումը և ձեռնարկության գործունեության տնտեսական արդյունքների քանակական գնահատումը. Այսպիսով, այն համատեղում է ֆինանսական ցուցանիշների գնահատումը և ձեռնարկության կառավարման բիզնես գործընթացների զարգացման գնահատումը,
- օգտագործում է պարզ մաթեմատիկական ապարատ և հասանելի տվյալներ, որոնք ապահովում են տեղեկատվական զանգվածի պատրաստման բարձր արդյունավետություն և ցածր արժեքը,
- գնահատման արդյունքները պարզ են և հեշտ մեկնաբանելի,
- մրցակցային միջավայրում էներգետիկ ձեռնարկությունների կառավարման գործիքների զարգացման գնահատման հիման վրա բացահայտվում են ձեռնարկության կառավարման գործիքների զարգացման հիմնական խնդիրներն ու ուղղությունները:

Եզրակացություն

Մրցակցային միջավայրում էներգետիկ ձեռնարկությունների կառավարման գործիքների զարգացման գնահատման մեթոդաբանական հիմքերի ուսումնասիրության արդյունքում արվել են հետևյալ եզրակացությունները,

- ՀՀ-ն դրսևորում է էլեկտրաէներգիայի ինքնաբավություն, չնայած ներմուծման տեմպերի աճին: Ցանցերի և արտադրող հզորությունների բարձր մաշվածությունը հանգեցնում է բաշխիչ ցանցերին սպառողների տեխնոլոգիական կապի մերժմանը, գների բեռի ավելացմանը, արդյունաբերական զարգացման տեմպերի զսպմանը, տարածքների զարգացման և ձեռնարկատիրական գործունեության աճի հնարավորությունների սահմանափակմանը,
- կառավարման արդյունավետությունը բարդ, բազմակողմ կատեգորիա է, որն արտացոլում է բազմաթիվ երևույթների և գործոնների առանձնահատկությունները: Կառավարման արդյունավետությունը որոշում է, թե որքանով է ձեռնարկությունը հասնում իր նպատակներին ամենակարճ ժամանակում ամենաբարձր որակական և քանակական ցուցանիշներով և ռեսուրսների նվազագույն ծախսերով,
- մրցակցային միջավայրում էներգետիկ ձեռնարկությունների կառավարման արդյունավետության վրա ազդում են գործոնների հետևյալ խմբերը՝ տեխնոլոգիական, կազմակերպահրավական, սոցիալ-տնտեսական, բնակակլիմայական և բնապահպանական: Հաշվի առնելով արտաքին և ներքին միջավայրի հիմնական գործոնները, թույլ է տալիս համակարգված կերպով բացահայտել մրցակցային միջավայրում էներգետիկ ձեռնարկությունների կառավարման գործիքների մշակման հիմնական ուղղությունները,
- Կառավարման խնդիրների վերաբերյալ հետազոտական աշխատություններում դիտարկվում են ձեռնարկության

կառավարման արդյունավետության գնահատման մեթոդները: Կառավարման արդյունավետության գնահատման նկարագրված մեթոդների առավելությունը ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշների և գործակիցների օգտագործումն է, որոնք բնութագրում են ձեռնարկության արդյունքները և կառավարման համակարգի վիճակը: Այնուամենայնիվ, այս մեթոդները պատշաճ ուշադրություն չեն դարձնում ձեռնարկության բիզնես գործընթացների որակին, չեն համատեղում ֆինանսական կատարողականի գնահատումը և ձեռնարկության բիզնես գործընթացների որակը,

- մրցակցային միջավայրում էներգետիկ ձեռնարկությունների կառավարման գործիքների զարգացման մակարդակը գնահատելու համար առաջարկվում է երկու չափանիշների վրա հիմնված մեթոդաբանություն՝ ձեռնարկության բիզնես գործընթացների զարգացում, ձեռնարկության տնտեսական գործունեության գնահատում: ՀՀ-ում գործող էներգետիկ ձեռնարկությունները մրցակցային միջավայրում ունեն կառավարման գործիքների արդյունավետության ցածր և միջին մակարդակ,
- Հայտնաբերված խնդիրները և մրցակցային միջավայրում էներգետիկ ձեռնարկությունների կառավարման գործիքների զարգացման ցածր մակարդակը կնախորոշում են մրցակցային միջավայրում էներգետիկ ձեռնարկությունների կառավարման գործիքների արդյունավետ զարգացման մեխանիզմի ձևավորման անհրաժեշտությունը:

Գրականության ցանկ

1. **Браун Марк Г.** Сбалансированная система показателей: на маршруте внедрения. Пер. с англ. М.: Альпина Бизнес Букс, 2005, 226 с.
2. **Виссема Х.** Менеджмент в подразделениях фирмы: Пер. с англ. М.:Инфра, 1996.
3. **Воропаева О.В., Аллахвердиева Э.А.** Пути повышения эффективности управления деятельностью предприятия. Вестник КАСУ. 2006. №4. с. 42-43.
4. **Дьякова О.В.** Анализ существующих подходов к оценке эффективности управления строительным предприятием. Инженерный вестник Дона. 2011. Т. 17. №3. с. 199-208.
5. **Казначеева Н.Л. Моргунов А.В.** Оценка эффективности внедрения сбалансированной системы показателей как инструмента стратегического управления предприятием. Вестник Томского государственного университета. Экономика. 2009. №1. с. 48-52.
6. **Каплан Роберт С, Нортон Дейвид П.** Сбалансированная система показателей. От стратегии к действию. 2-е изд., испр. и доп. Пер. с англ. М.: ЗАО «Олимп-Бизнес», 2006. 320 с.
7. **Мамонова О.А**. Модель оценки экономической эффективности системы управления предприятием. Известия Пензенского государственного педагогического университета им. В.Г. Белинского. 2011. № 24. с. 352-356.
8. **Миняева Е.В.** Методы совершенствования бизнес-процессов. Вестник Омского университета. Серия: Экономика. 2010. № 1. с. 125-129.
9. **Никифорова А. О.** Соотношение роста производительности и заработной платы. Общество и экономика. 2008. № 8. с.95.
10. **Русинов Ф.М., Никулин Л.Ф., Фаткин Л.В.** Менеджмент и самоменджмент в системе рыночных отношений: Учебное пособие. М.: ИНФРА, 1996. 296 с.
11. **Савицкая Г.В.** Анализ хозяйственной деятельности предприятия: Учебник. 5-е изд., перераб. и доп. М.: ИНФРА-М, 2009. 536 с.

12. **Сатдыкова Р.Р.** Резервы роста производительности труда управленческого персонала. Экономические проблемы образования и общества: Сб. научных трудов. Под общ. ред. В.А. Якушиной. Уфа: БГУ, 2007. с. 12-17.
13. **Хоронжевская Т.В.** Мониторинг финансовой устойчивости развития предприятий промышленности. Вестник Сибирской государственной автомобильно-дорожной академии. 2010. № 17. с. 97-99.

METHODOLOGY OF EVALUATION OF ENERGY ENTERPRISE MANAGEMENT TOOLS IN COMPETITIVE ENVIRONMENT

Khukeyan Z. G.
PHD student
ASUE, Chair of Management
zaven.khukeyan@gmail.com

Abstract

The efficiency of energy enterprises is one of the most important problems of the economy. The management of these enterprises depends on the level of efficiency of the economy. The development of the economy, the state of other enterprises, functioning in different fields and energy security of the country greatly depend on the efficient management and activity of energy enterprises. The clear development of management tools and their implementation play an important role in increasing the management efficiency of these enterprises, operating in the given strategic branch. The effectiveness of enterprise management tools in a competitive environment is considered from the level of implementation of business processes and also from the perspective of their cumulative effect. Quantitative և qualitative methodological approaches of analysis are distinguished and applied in the work. In the study we have analyzed the business processes in the enterprises of the energy sector of the Republic of Armenia, the life cycles of the business processes in the enterprises, as well as in which life cycle the mentioned business process is at the moment. The current situation of the enterprises has been assessed by a separate methodology; the necessary directions of taking actions to increase the efficiency of enterprise management have been pointed out, which due to a chain reaction will lead to the growth in the economic activity and increase in the level of energy security.

Keywords: Energy enterprise, competitive environment, management tools, management efficiency, four triangles, life cycles of business process.

Ներկայացվել է՝ 15.04.2022թ.
Գրախոսվել է՝ 31.05.2022թ.

ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՆԵՆԱԼՈՒ ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԵՎ ԴՐԱ ԻՐԱՑՄԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Թումասյան Դ.Ա.
ի.գ.թ., դոցենտ
ՀՀ ոստիկանության կրթահամալիր
Քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոն
davidtumasyan@gmail.com

Ամփոփագիր

Սույն հոդվածի շրջանակներում ներկայացվում է դատապարտյալի արտաքին աշխարհի հետ կապը պահելու հիմնական ձևերից մեկը՝ տեսակցությունը, դրա իրավական կարգավորումները և կիրառման հիմնախնդիրները: Ներկայացվել է տեսակցություններին վերաբերող միջազգային և ազգային օրենսդրությունը, դրանց համատեքստում ՀՀ-ում առկա պրակտիկան և որոշ այն մոտեցումները, որոնք հնարավորություն են ընձեռում արդյունավետորեն իրացնել տեսակցության իրավունքը: Տեսակցություններ ունենալու դատապարտյալի իրավունքի իրացումը, մանրամասն կարգավորված լինելով ՀՀ գործող օրենսդրությամբ, ունի ինչպես բարելավման կարիք, այնպես էլ գործնական իրականացման հիմնախնդիրներ: Ընդ որում, գործնական հիմնախնդիրներն ինչպես կազմակերպչական, այնպես էլ ֆինանսական ու ռեսուրսային բնույթի են, ինչի կապակցությամբ հոդվածի եզրափակիչ մասում ներկայացվել են թե՛ օրենսդրական, թե՛ կազմակերպչական բնույթի առաջարկություններ: Հաշվի առնելով, որ դատապարտյալների տեսակցության իրավունքն ուղղակիորեն փոխկապակցված է վերջիններիս երեխաների հիմնարար իրավունքներից՝ ծնողի հետ կանոնավոր շփվելու իրավունքի հետ՝ հատուկ ուշադրություն է դարձվել երեխաների հետ ծնողների, մասնավորապես՝ մայրերի տեսակցության կազմակերպման կարևորությանն ու անհրաժեշտությանն ինչպես դատապարտյալի, այնպես էլ երեխայի իրավունքների համատեքստում: Նման հարցն առավել խնդրահարույց է, երբ երեխան խնամք ու դաստիարակություն է ստանում պետական հաստատությունում: Քննարկվել են նաև տեսազանգերը և հեռախոսազանգերը, մասնավորապես, դրանց կիրառումը կորոնավիրուսային համաճարակի պայմաններում, և դրանց արդյունավետությունն ու հետագա կիրառման հեռանկարները:

Հիմնաբառեր. դատապարտյալ, դատապարտյալների իրավունքներ, տեսակցության իրավունք, կարճատև և երկարատև տեսակցություն, կապ արտաքին աշխարհի հետ, տեսազանգ:

Ներածություն

Տեսակցություններ ունենալը յուրաքանչյուր դատապարտյալի իրավունքն է, այլ ոչ թե արտոնությունը, որը կարող է տրամադրվել պատիժ իրականացնող հիմնարկի կամ մարմնի կողմից: Տեսակցություններ ունենալու դատապարտյալների իրավունքն ամրագրված է թե՛ միջազգային, թե՛ ազգային օրենսդրությունում և դա հանդիսանում է ընտանիքի

և մերձավորների հետ կապ պահպանելու լավագույն միջոցներից մեկը:

Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոնների 37-րդ կետի համաձայն՝ բանտարկյալներին պետք է հնարավորություն տալ ինչպես գրագրության կարգով, այնպես էլ այցելությունների ընթացքում կանոնավոր ընդմիջումով և հարկ եղած վերահսկողության տակ կապ պահպանել իրենց ընտանիքների և անբասիր վարք ունեցող ընկերների հետ:

«Եվրոպական բանտային կանոնների մասին» թիվ (2006)2 ԵԽ հանձնարարականի 24.1 կետն ամրագրում է. «Բանտարկյալներին պետք է թույլատրվի հնարավորինս հաճախ՝ նամակով, հեռախոսով կամ հաղորդակցության այլ ձևերով հաղորդակցվել իրենց ընտանիքների, այլ անձանց և դրսի կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, ինչպես նաև տեսակցել թվարկված անձանց հետ»:

Հիշյալ կանոնների մեկնաբանությունների համաձայն՝ դատապարտյալը պետք է ունենա հնարավորություն արտաքին աշխարհի հետ կապը պահելու և կիրառվող ցանկացած սահմանափակում պետք է հանգամանորեն հիմնավորված և մտածված լինի:

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն՝ դատապարտյալն իրավունք ունի արտաքին աշխարհի հետ հաղորդակցվելու, այդ թվում՝ ունենալու տեսակցություններ: Այս նորմից ակնհայտ է, որ տեսակցություններ ունենալու դատապարտյալների իրավունքը վերաբերում է միայն ազատությունից զրկելու հետ կապված պատիժներին, այսինքն՝ ՀՀ գործող քրեական օրենսգրքի համաձայն՝ կալանքին, կարգապահական գումարտակում պահելուն, ազատազրկմանը և ցմահ ազատազրկմանը:

ՀՀ նոր քրեական օրենսգրքի համաձայն ազատազրկման հետ կապված պատիժներն են կարճաժամկետ ազատազրկումը, կարգապահական գումարտակում պահելը, ազատազրկումը և ցմահ ազատազրկումը: ՀՀ քրեական գործող և նոր օրենսգրքերի համեմատությունը հնարավորություն է տալիս պնդել, որ լոկ ունենք ազատազրկման հետ կապված պատիժների անվանափոխություն:

Տեսակցություններ ունենալու դատապարտյալների իրավունքն իրացվում է կարճատև և երկարատև տեսակցությունների ձևաչափով և տարբեր պատժատեսակների դեպքում դրանք տրամադրվում են տարբեր քանակով և անձանց տարբեր շրջանակի հետ: Հարկ է նշել, որ պաշտպանի հետ դատապարտյալի տեսակցությունները չունեն ո՛չ քանակական, ո՛չ տևողության սահմանափակումներ: Փաստաբանի կամ պաշտպանի հետ տեսակցություններն անցկացվում են կալանավորվածներին պահելու վայրի տեսակցության կամ քննչական գործողություններ կատարելու համար նախատեսված սենյակներում:

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 50-րդ հոդվածի համաձայն՝ կարգապահական գումարտակում դատապարտյալն իրավունք ունի ամսական առնվազն 2 կարճատև տեսակցության, որոնք տրամադրվում են մերձավոր ազգականների հետ, իսկ կարգապահական գումարտակի հրամանատարի թույլտրվությամբ, ինչպես նաև օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև այլ անձանց հետ:

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ կալանքի դատապարտյալին տեսակցություն առհասարակ չի տրամադրվում, բացառությամբ անչափահաս դատապարտյալների, ում տրամադրվում է ամսվա ընթացքում 1 կարճատև տեսակցություն ծնողների կամ այլ օրինական ներկայացուցիչների հետ:

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 92-րդ հոդվածի համաձայն՝ մերձավոր ազգականների կամ այլ անձանց հետ կարճատև տեսակցություն տրամադրվում է ամսվա ըն-

թացքում առնվազն 1 անգամ՝ մինչև չորս ժամ տևողությամբ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Օրինակ՝ տեսակցություն չի տրամադրվում պատժախուց տեղափոխելու դեպքում, որը կիրառվում է մինչև 15 օր, իսկ անչափահաս դատապարտյալի դեպքում՝ մինչև 10 օր ժամկետով: Միայն մերձավոր ազգականների հետ երկարատև տեսակցություն տրամադրվում է երկու ամսվա ընթացքում առնվազն 1 անգամ՝ մինչև երեք օր տևողությամբ: Երկարատև տեսակցություն տրամադրվում է նաև դատապարտյալի հետ ամուսնության մեջ չգտնվող այն անձի հետ, որի հետ դատապարտյալն ունի համատեղ երեխա:

Առանձնապես ծանր հանցագործության համար որոշակի ժամկետով ազատազրկման կամ ցմահ ազատազրկման դատապարտված անձանց տրամադրվում է տարվա ընթացքում առնվազն 6 կարճատև և 2 երկարատև տեսակցություն:

Կարգապահական գումարտակում ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 51-րդ հոդվածի համաձայն, իսկ ազատազրկման դեպքում՝ նույն օրենսգրքի 93-րդ հոդվածի համաձայն՝ օրինապահ վարքագիծ դրսևորելու և օրենքով նախատեսված այլ պարտականություններ կատարելու համար դատապարտյալի նկատմամբ կիրառվող խրախուսանքի միջոցներից է նաև լրացուցիչ կարճատև տեսակցության տրամադրումը կարգապահական գումարտակում պահելու դեպքում (տարեկան լրացուցիչ մինչև երկու կարճատև տեսակցություն) և ազատազրկման դեպքում՝ լրացուցիչ կարճատև կամ երկարատև տեսակցության տրամադրումը (տարեկան լրացուցիչ երկու կարճատև կամ երկու երկարատև տեսակցությունից ոչ ավելի):

ՀՀ օրենսդրությամբ տեսակցությունների համար սահմանված նվազագույն քանակից ավելի տեսակցություն չի տրամադրվում բացասական բնութագրվող, ոչ օրինապահ վարքագիծ դրսևորող, աշխատանքի կամ ուսման նկատմամբ անբարեխիղճ վերաբերմունք ցուցաբերող, տույժ ունեցող դատապարտյալին:

ՀՀ կառավարության 2006թ.-ի օգոստոսի 3-ի N1543-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը, որի 137-րդ կետի համաձայն՝ դատապարտյալին փաստաբանի կամ պաշտպանի, մերձավոր ազգականների, զանգվածային լրատվության միջոցների կամ այլ անձանց հետ տեսակցություն տրամադրվում է ուղղիչ հիմնարկի պետի, իսկ նրա հանձնարարությամբ՝ նաև տեղակալի որոշմամբ՝ օրենքով և նշված կանոնակարգով սահմանված պահանջներին համապատասխան: Դատապարտյալին տեսակցություն տրամադրելու անհրաժեշտ պայման են հանդիսանում դատապարտյալի համաձայնությունը և տեսակցություն հայցող անձի դիմումին կցված՝ վերջինիս անձը հաստատող, իսկ երկարատև տեսակցության համար՝ նաև նախկինում համատեղ բնակվելու իրավունքը, ինչպես նաև երեխայի հետ դատապարտյալի արյունակցական կամ ազգակցական կապը հավաստող փաստաթղթերի առկայությունը:

Փակ, կիսափակ կամ կիսաբաց ուղղիչ հիմնարկում պատիժը կրող դատապարտյալին կարճատև տեսակցություն կարող է թույլատրվել միաժամանակ առավելագույնը 4 չափահաս և 5 անչափահաս անձանց հետ, իսկ երկարատև տեսակցություն՝ առավելագույնը 4 չափահաս անձանց և դատապարտյալի 4 անչափահաս եղբայրների, քույրերի, զավակների և թոռների հետ: Բաց ուղղիչ հիմնարկում պատիժը կրող դատապարտյալին կարճատև կամ երկարատև տեսակցություն տրամադրվում է առանց տեսակցողների թվի սահմանափակման:

Երկարատև տեսակցությունը տրամադրվում, իսկ կարճատև տեսակցությունը տրամադրվում և անցկացվում է աշխատանքային օրերին՝ ժամը 10^{00}-17^{00}-ը ընկած ժամանակահատվածում: Այսինքն, հանգստյան օրերին տեսակցություն չի տրամադրվում:

Ինչպես տեսնում ենք, ՀՀ օրենսդրությունը մանրամասն կարգավորում է ինչպես տեսակցություն ունենալու դատապարտյալի իրավունքը, այնպես էլ՝ կազմակերպչական հիմնախնդիրները, սակայն պատշաճ օրենսդրության առկայությունը դեռ չի վկայում գործնական խնդիրների բացակայության մասին:

ՀՀ կառավարության 2020թ.-ի սեպտեմբերի 11-ի «Կորոնավիրուսային հիվանդությամբ պայմանավորված կարանտին սահմանելու մասին» N 1514-Ն որոշման 1-ին կետով Հայաստանի Հանրապետությունում սահմանվել է կարանտին, ինչի արդյունքում նույն որոշման հավելվածի 15-րդ կետի համաձայն՝ քրեակատարողական հիմնարկներում (այսուհետ՝ ՔԿՀ) արգելվում են տեսակցություններ և այդ որոշումն ուժի մեջ մտելուց՝ 2021թ.-ի փետրվարի 20-ից հետո, տեսակցություններ ունենալու իրավունքը պարբերաբար վերականգնվել և նորից սահմանափակվել է կամ բացառվել՝ կախված ՀՀ-ում կորոնավիրուսի համաճարակային վիճակից: Համաճարակի ընթացքում տեսակցությունները փոխարինվեցին տեսազանգերով, որոնց կիրառման պրակտիկան միանշանակ չէ, սակայն այդ պահին հանդիսացել է ժամանակի հրամայական: Տեսազանգեր տրամադրելը ՀՀ քրեակատարողական գործող օրենսգրքով ամրագրված չէ, սակայն ՀՀ քրեակատարողական օրենսգրքի նախագիծը հատուկ անդրադառնում է արտաքին աշխարհի կապ ապահովելու այդ եղանակին:

ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի կողմից տեսազանգերի գրանցամատյանի ուսումնասիրությամբ պարզվել է, որ ազատությունից զրկված անձինք գրեթե չեն օգտվել տեսազանգի հնարավորությունից, ինչի մասին վկայում է տարբեր ՔԿՀ-ներում տեսազանգերի քանակական ուսումնասիրումը 2020 և 2021 թթ.-ին (Աղյուսակ 1) [*ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի 2021թ.-ի տարեկան հաղորդում, 194*]:

Աղյուսակ 1.

Քրեակատարողական հիմնարկ	**Տեսազանգերի քանակը**	
	2020թ.-ին	**2021թ.-ին**
«Աբովյան»	749	434
«Վարդաշեն»	347	100
«Երևան-Կենտրոն»	311	267
«Գորիս»	245	154
«Արմավիր»	210	122
«Արթիկ»	137	354
«Նուբարաշեն»	137	230
«Վանաձոր»	95	15
«Հրազդան»	92	24
«Դատապարտյալների հիվանդանոց»	88	58
«Սևան»	80	87
«Կոշ»	79	97
Ընդհանուր	2570	1942

Տեսազանգերի քանակը 2020 և 2021թթ.-ին՝ ըստ ՔԿՀ-ների

Այս թվերը վկայում են, որ ի սկզբանե տեսազանգերը, ստեղծված համաճարակային վիճակից և արտաքին աշխարհի հետ կապի այլընտրանքի բացակայությունից, բայց այդ կապի անհրաժեշտությունից ելնելով, դատապարտյալների մոտ ունեին բարձր պահանջարկ, սակայն հետզհետե դրանք կորցրեցին իրենց արդիականությունը, քանի որ չէին կարող փոխարինել անմիջական շփումը և կարճատև էին, իսկ երբեմն ուղեկցվում էին նաև տեխնիկական խոչընդոտներով (ձայնի կամ պատկերի անհետացում և այլն):

Այսինքն, տեսակցությունները շարունակում են մնալ ընտանիքի և արտաքին աշխարհի հետ դատապարտյալի շփման առավել նպատակային միջոցը: Տեսակցությունների առնչությամբ ուսումնասիրություններ իրականացվել են ՀՀ դատախազության և ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի կողմից: Այսպես, ՀՀ գլխավոր դատախազության կողմից անցկացրած ստուգումների արդյունքում ի թիվս օրինականության այլ խախտումների արձանագրվել են նաև տեսակցությունների տրամադրման կարգի խախտումներ, ինչի մասին տեղեկացվել են ինչպես քրեակատարողական վարչության պետը, այնպես էլ ՀՀ արդարադատության նախարարը [*ՀՀ գլխավոր դատախազության տարեկան հաղորդում, 5*]:

Տեսակցություն ունենալու դատապարտյալի իրավունքն իրացնելու համար ՔԿՀ-ում կահավորված են թե՛ կարճատև, թե՛ երկարատև տեսակցությունների համար հատուկ սենյակներ, սակայն մասնավորապես երկարատև տեսակցությունների համար սենյակների թիվը ոչ բոլոր ՔԿՀ-ներում է և ոչ միշտ է բավարար հայցվող տեսակցությունները բավարարելու համար, չնայած բոլոր ՔԿՀ-ներում փաստացի դրանք գործում են: Բացառություն է կազմում միայն «Երևան-Կենտրոն» ՔԿՀ-ը, որտեղ պահվող անձանց երկարատև տեսակցությունները կազմակերպվում են «Նուբարաշեն» ՔԿՀ-ում: Իսկ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ում տեխնիկական աշխատանքներում ներգրավված անձանց երկարատև տեսակցությունների սենյակներն առհասարակ կահավորված են այդ սենյակների համար ոչ համապատասխան, մասնավորապես առկա է մեկտեղանոց մեկ մահճակալ, չկա հեռուստացույց, անգամ հատակն է քանդված [*ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի 2021թ.-ի տարեկան հաղորդում, 188*]:

Բացի այդ, երկարատև տեսակցությունների սենյակները ոչ միշտ է, որ ապահովված են անհրաժեշտ կահավորանքով կամ կցակառույցներով: Օրինակ՝ ՔԿՀ-ների մեծ մասում շարունակում է բացակայել երկարատև տեսակցությունների եկած անձանց, այդ թվում՝ անչափահասների զբոսանքի դուրս գալու հնարավորությունը, ինչը պայմանավորված է երկարատև տեսակցությունների սենյակների առանձնացված զբոսաբակերի բացակայությամբ: Նման զբոսաբակ առկա է միայն «Արմավիր» ՔԿՀ-ում [*ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի 2021թ.-ի տարեկան հաղորդում, 186*]:

Տեսակցությունների հետ կախված հիմնախնդիրներ բարձրաձայնվել էին նաև ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի 2020թ.-ի զեկույցում [*ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի 2020թ.-ի տարեկան հաղորդում, 174*]:

Տարբեր հետազոտություններ ցույց են տվել, որ տեսակցության եկած անձանց արձագանքը տարբեր է տեսակցությունների անցկացման նկատմամբ: Օրինակ՝ ապակու միջոցով տեսակցությունները դատապարտյալների կանայք գնահատել են սարսափելի, իսկ երեխաները՝ զարմանալի կամ վախեցնող [*Murray, 455*]: Կարճատև տեսակցությունների սենյակները, որպես կանոն, անհրապույր են երեխաների համար, ինչից ելնելով տեսակցության ընթացքում երեխաները շատ արագ հոգնում են, տխրում, ինչից ելնելով կարող են

սկսել չարություն անել [*Laing, McCarthy, 12*]: Հետևաբար, դատապարտյալի և իր երեխայի հետ տեսակցությունների համար պետք է կահավորվեն հատուկ սենյակներ, որտեղ կլինեն նաև երեխաների համար նախատեսված պարագաներ, և այդ սենյակը կլինի դատապարտյալների համար նախատեսված տեսակցությունների ընդհանուր կամ միասնական սենյակներից անջատ: Շատ հաճախ բարձրաձայնված խնդիրների լուծումը հնարավոր է լոկ ֆինանսական և կազմակերպչական անհրաժեշտ միջոցառումներ իրականացնելով և հատուկ կարգավորումներ չի պահանջում:

Չնայած կազմակերպչական և համաճարակային բնույթի խոչընդոտների՝ տեսակցություն ունենալու դատապարտյալի իրավունքն առավելագույնս կիրառելը խիստ կարևորվում է ոչ միայն արտաքին աշխարհի հետ շփման, այլ հատկապես ներընտանեկան կապերն ու երեխայի լավագույն շահն ապահովելու համատեքստում: քրեակատարողական իրավահարաբերություններում «ընտանիք» տերմինը պետք է դիտարկել լայն իմաստով, որն իր մեջ է ներառում ոչ միայն ընտանիքի անդամներին, այլ նաև անձանց, ում հետ դատապարտյալի մոտ ձևավորվել են նույնքան սերտ հարաբերություններ, օրինակ՝ համատեղ երեխա ունեցող անձինք:

«Եվրոպական բանտային կանոնների մասին» թիվ (2006) 2 ԵԽ հանձնարարականի 60.4 կետի համաձայն՝ պատիժը չպետք է ներառի ընտանիքի հետ շփման բացարձակ արգելք: Հիշյալ կանոնի մեկնաբանության համաձայն ազատությունից զրկված անձանց պատժախուց տեղափոխելը նրանց չպետք է զրկի ընտանիքի հետ կապ պահպանելու հնարավորությունից: Ավելին, ընտանիքի հետ հաղորդակցվելու ցանկացած սահմանափակում, պետք է կիրառվի այն դեպքում, երբ նմանատիպ հաղորդակցման ժամանակ խախտում է թույլ տրվել: Այս մոտեցումը բխում է համընդհանուր ճանաչում գտած այն սկզբունքից, համաձայն որի՝ հանցագործություն կատարած անձինք ուղարկվում են ՔԿՀ-ներ ոչ թե պատժվելու համար, այլև որպես պատիժ [*Զեկույց Հայաստանի Կառավարությանը Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կանխարգելման Եվրոպական կոմիտեի (CPT) Հայաստան կատարած այցելության վերաբերյալ, 60*]:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածը նախատեսում է անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքը, ինչն իր մեջ ներառում է նաև տեսակցությունների իրավունքը՝ շփման կարևորագույն ձևերից մեկը: Նշված հոդվածի 2-րդ մասով նախատեսվում է պետական մարմինների միջամտությունն այդ իրավունքի իրացմանը, որի դեպքում պետք է սահմանափակումները հասցվեն նվազագույնի:

«Բանտային վարչակազմերի կողմից ցմահ կամ այլ երկարատև ազատազրկման դատապարտված բանտարկյալների ղեկավարման վերաբերյալ» թիվ (2003)23 ԵԽ հանձնարարականի 22-րդ կետի համաձայն՝ պետք է ձեռնարկվեն համապատասխան միջոցներ ընդհատված ընտանեկան կապերի պահպանման նպատակով: Հիշյալ նպատակն իրացնելու համար դատապարտյալների նամակագրությունը, հեռախոսային խոսակցությունները և տեսակցությունները պետք է անցկացվեն հնարավորինս հաճախ՝ պահպանելով գաղտնիության սկզբունքը:

Միաժամանակ անհրաժեշտ է նշել, որ դատապարտյալների տեսակցության իրավունքը ուղղակիորեն փոխկապակցված է վերջիններիս երեխաների հիմնարար իրավունքների հետ, որոնք սահմանված են Երեխաների իրավունքների մասին կոնվենցիայի 9-րդ հոդվածով, որով՝ համապատասխան

պետական մարմինները պետք է ապահովեն երեխայի՝ իր ծնողների հետ կապ պահպանելու իրավունքի իրականացումը, բացառությամբ այն դեպքերի, երբ ծնողի հետ շփումը հակասում է երեխայի լավագույն շահին: Այս համատեքստում դատապարտյալների, մասնավորապես դատապարտյալ կանանց պետք է իրավունք տրամադրել երկարատև տեսակցություն ունենալ իրենց երեխաների հետ, անգամ այն դեպքում, երբ իրանք գտնվում են երեխայի խնամքի և դաստիարակության հաստատություններում: Ավելին, երեխաների հետ տեսակցությունները պետք է իրականացվեն այնքան անգամ, որքան նրանք կցանկանան: Բացի կարճատև և երկարատև տեսակցություններից, դատապարտյալներին պետք է ընձեռնվի նաև համատեղ բնակվելու հնարավորություն, եթե դա չի հակասում երեխայի լավագույն շահին և թույլ է տալիս դատապարտյալի նվազ վտանգավորությունը: Օրինակ, եթե մայրը հոգ է տանում իր անչափահաս որդու կամ դստեր համար, ակտիվորեն պահպանում է երեխայի հետ կապը, իսկ երեխաները ինչ-ինչ պատճառներով չեն կարող գալ տեսակցության, կնոջը կարող է հնարավորություն տրամադրվել տարին առնվազն մեկ անգամ որոշակի ժամկետով, օրինակ՝ յոթ օր տևողությամբ, մեկնել նրանց հետ տեսակցության: Նման հնարավորությունը փոխկապակցված է ոչ թե պատժի կատարման ընթացքում դատապարտյալ կնոջ վարքի, այլ երեխաների նկատմամբ նրա վերաբերմունքի հետ: Այսինքն, այստեղ հաշվի է առնվում այն փաստը, որ «Աբովյան» ՔԿՀ-ում կան մայրեր, ովքեր դրական են բնութագրվում, սակայն անտարբեր են իրենց երեխաների նկատմամբ, ինչը կբացառի նման մոտեցման կիրառումը: Մասնագետներից շատերն այն կարծիքի են, որ դատապարտյալների տեսակցություններն իրենց երեխաների հետ դրական է անդրադառնում երկու կողմի համար էլ: [*Робертсон, 10*], [*Sack, Seidler*], [*Stanton, 87*]: Մասնավորապես, դա կարևորվում է փոքրահասակ երեխաների դեպքում, ովքեր տեսակցության միջոցով համոզվում են, որ ծնողները ողջ են և չեն լքել նրանց:

2000-ական թթ.-ին «Աբովյան» ՔԿՀ-ում կազմակերպվել են տեսակցություններ՝ դատապարտյալ կանանց և նրանց երեխաների հետ, որոնք գտնվում էին պետական հատուկ հաստատություններում: Իհարկե, դա իրագործելիս շատ են եղել տեխնիկական և կազմակերպչական խնդիրներ, բայց միևնույն է, դատապարտյալ կանանց համար դա մեծ իրադարձություն էր, որին նրանք պատրաստվում էին բավական երկար ժամանակ, իսկ դրանից հետո՝ երկար կիսվում էին իրենց տպավորություններով [*Թումասյան, 146*]: Նման տեսակցությունները կարևոր են նաև երեխայի համար, ով գիտակցում է իր՝ ծնողների կողմից չանտեսված լինելը, ինչն ազդում է նրա ինքնագնահատականի, արժեհամակարգի ձևավորման ու զարգացման վրա: Նման մոտեցումն արդյունավետորեն կարող է կիրառվել նաև տղամարդ դատապարտյալների դեպքում:

Հաշվի առնելով երեխաների հետ տեսակցության կարևորությունը՝ անհրաժեշտ է օրենսդրորեն ամրագրել դրույթ՝ ուղղված դատապարտյալի և ազատության մեջ գտնվող երեխաների հետ կապի ապահովմանը: Մասնավորապես, դատապարտյալը, ում երեխան գտնվում է ազատության մեջ, բայց խնամվում և դաստիարակվում է պետական հաստատությունում, երկու ամիսն առնվազն մեկ կարճատև և վեց ամիսն առնվազն մեկ երկարատև տեսակցության իրավունք պետք է ունենա իր երեխաների հետ: Այս տեսակցությունների առավելագույն քանակը պետք է որոշվի ուղղիչ հիմնարկի վարչակազմի կողմից՝ հաշվի առնելով դատապարտյալի բնութագիրը, նրա վարքագիծը, կապը երե-

խայի հետ և ազդեցությունը նրա վրա: Դատապարտյալների և ազատության մեջ, բայց պետական հաստատություններում խնամվող և դաստիարակվող իրենց երեխաների միջև տեսակցությունները պետք է իրականացվեն ուղղիչ հիմնարկի և այն պետական հաստատության կողմից համատեղ, որտեղ խնամվում և դաստիարակվում է երեխան: Տեսակցության ծախսերը ցանկալի է, որ տրամադրի պետությունը, մասնավորապես, եթե դատապարտյալի անձնական հաշվի վրա պահանջվող գումարը բացակայում է: Այս տեսակցությունից առաջ անհրաժեշտության դեպքում կարող է իրականացվել նախապատրաստական աշխատանք սոցիալական աշխատողի, հոգեբանի կամ մանկավարժի կողմից՝ ընդ որում ինչպես երեխայի, այնպես էլ նրա ծնողի հետ:

Նման կարգավորումն ինքնանպատակ չէ, այն մեծ նշանակություն ունի թե՛ դատապարտյալի ուղղման ու վերասոցիալականացման, և թե՛ ընտանիքի և մասնավորապես երեխայի սոցիալական կապերի ամրապնդման համար: Բացի այդ, տեսակցություններն ունեն դաստիարակչական ու կանխարգելիչ ազդեցություն դատապարտյալների երեխաների համար:

Եզրակացություն

Ամփոփելով ՀՀ-ում տեսակցությունների որոշ հիմնախնդիրների ուսումնասիրությունը՝ առաջարկվում է՝

1. բոլոր ՔԿՀ-ներում համահավասար պայմաններ ստեղծել երկարատև տեսակցությունները կազմակերպելու համար՝ միասնական կահավորանք ապահովելով երկարատև տեսակցությունների սենյակներում՝ այն դարձնելով հասանելի նաև հաշմանդամություն ունեցող դատապարտյալների համար, մասնավորապես «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ում,
2. կարճատև տեսակցությունների ընթացքում ապահովել դատապարտյալի անձնական և ընտանեկան կյանքի անձեռնմխելիությունը՝ հաշվի առնելով, որ ՔԿՀ-ներում կարճատև տեսակցությունների սենյակների կառուցվածքը հնարավորություն չի ընձեռում կոնֆիդենցիալության ապահովման համար,
3. տեսազանգերը և հեռախոսազանգերը ցանկալի չէ դիտարկել որպես տեսակցությունների այլընտրանք՝ հաշվի առնելով դրանց կարճատև, ոչ անմիջական, տեխնիկապես խոչընդոտներով իրականացվելու հանգամանքները,
4. վերացնել տեսակցությունների արգելքը կալանք (ՀՀ քրեական նոր օրենսգրքում՝ կարճատև ազատազրկում) պատժատեսակի դեպքում,
5. յուրաքանչյուր ՔԿՀ-ում կարճատև տեսակցությունների համար նախատեսված սենյակներից մեկը կահավորել երեխաների կարիքներին համապատասխան, որպեսզի այդ սենյակներում տրամադրվող տեսակցությունը չհանգեցնի երեխայի իրավունքների և շահերի ոտնահարմանը, նրա վրա չթողնի բացասական հետևանք ու չհակասի նրա լավագույն շահին,
6. հատուկ ամրագրել դատապարտյալների և պետական հաստատություններում խնամվող և դաստիարակվող իրենց երեխաների տեսակցությունների առնչությամբ օրենսդրական կարգավորումներ և ներդնել մեխանիզմներ դրանց պատշաճ կազմակերպման համար:

Գրականության ցանկ

1. Թումասյան Դ. Ազատազրկման դատապարտված կանանց պատժի կրման առանձնահատկությունները ՀՀ-ում: Երևան, 2013:
2. Робертсон О. Влияние на детей тюремного заключения их родителей апрель, Офис Квакеров в ООН, 2010, էջ 10.
3. Laing K., McCarthy P. Risk, Protection and Resilience in the Family Life of Children and Young People with a Parent in Prison: A literature review, 2004.
4. Murray J. The effects of imprisonment on families and children of prisoners in A. Liebling & S. Maruna (eds.) The effects of imprisonment, 2005.
5. Sack W.H., Seidler J. Should children visit their parents in prison?" in Law and Human Behaviour, 1978, Vol. 2.
6. Stanton A. When Mothers go to Jail (Lexington Books), 1980, էջ 87:
7. Զեկույց Հայաստանի Կառավարությանը Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կանխարգելման Եվրոպական կոմիտեի (CPT) Հայաստան կատարած այցելության վերաբերյալ, Ստրասբուրգ, 2010, 15.03.2022, https://www.gov.am/u_files/file/kron/CPT_arm_final.pdf
8. Տարեկան հաղորդում 2021թ.-ի ընթացքում ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին, Երևան, 2022, 15.03.2022, https://www.ombuds.am/images/files/8636c95ac7349cbe5d51ff372cbcd8cc.pdf
9. Տարեկան հաղորդում 2020թ.-ի ընթացքում ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին, Երևան, 2021, 15.03.2022, https://www.ombuds.am/images/files/883f55af65e3c33553139031c7ac0ce6.pdf

THE RIGHT OF THE CONVENTED TO VISITS AND SOME PROBLEMS OF ITS IMPLEMENTATION IN THE REPUBLIC OF ARMENIA

Tumasyan D.A.
PhD in Law, Associate Professor
Educational Complex of the RA Police
Department of Criminal Law and Criminology
davidtumasyan@gmail.com

Abstract

The framework of this article outlines one of the main ways in which the convict keeps in touch with the outside world: vision, its legal regulations, and the challenges of application.

International and national legislation, the current practice in the RA and some approaches that make it possible to effectively exercise the right to a meeting have been introduced. The implementation of the right of a convict to visits, which is regulated in detail by the current legislation of the RA, still has gaps for improvement and the problem of the practical implementation of this right.

At the same time, practical issues are of an organizational, financial and resource relared, so both legislative and organizational proposals are presented in the closing part of the article. Given that the right of convicts to visit is directly related to the fundamental rights of their children, in particular the right to regular contact with parents, special attention has been paid to the importance and necessity of organizing visits of parents, especially mothers, with their children, which was considered in the context of the rights of the convicted person and the child's rights. This issue is even more problematic when the child receives

care and upbringing in a state institution. Videos and telephone calls, particularly those used in coronavirus epidemics, and their effectiveness and prospects for future application have also been discussed.

Keywords. Convict, rights of convicts, right to visits, short-term and long-term visits, contact with the outside world, video call.

Ներկայացվել է՝ 15.04.2022 թ.
Գրախոսվել է՝ 31.05.2022 թ.

ՖՐԱՆՉԱՅԶԻՆԳԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Մարուքյան Գ.Ս.
ի.գ.թ., դոցենտ
ՀՀ Ոստիկանության կրթահամալիր
Քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության ամբիոն
gayanemarukyan@yahoo.com

Ամփոփագիր

Մասնավոր սեփականության առկայությունը հանգեցրեց նրան, որ ստեղծվեցին առանձին տնտեսվարող սուբյեկտներ, որոնց մի մասը ժամանակի ընթացքում իր կայուն դիրքը հաստատեց նոր ձևավորված շուկայական տնտեսությունում: Նման իրավիճակը նպաստեց մրցակցային դաշտի առաջացմանը, որի պայմաններում նորաստեղծ ընկերությունների համար բավական դժվար էր գոյատևելը: Ֆրանչայզինգը բիզնեսի կառուցման այն եզակի ձևերից մեկն է, որը տալիս է կայունություն, իրական հեռանկար և ապահովում ընկերությունների կենսունակությունը: Շատ բազմազան են ֆրանչայզինգային հարաբերությունների ֆլորաները: Այն կարող է կիրառվել տնտեսության ցանկացած ճյուղում՝ սկսած սպասարկման ոլորտից վերջացրած արդյունաբերությամբ: Ֆրանչայզինգը, լինելով բիզնեսի զարգացման լավագույն ձևերից մեկը, կարևոր խթան կարող է հանդիսանալ յուրաքանչյուր երկրի տնտեսության զարգացման համար:

Գիտական հոդվածի շրջանակներում քննարկման առարկա են դարձել ֆրանչայզինգի պայմանագրի իրավական կարգավորման որոշ առանձնահատկություններ, ներկայացվել են տեսության մեջ և պրակտիկայում պայմանագրի այս տեսակին վերաբերող խնդրահարույց իրավակարգավորումները, ինչպես նաև քննարկվել են պայմանագրի կողմերի շուրջ իրականացված իրավակարգավորման ընթացքում տեղ գտած որոշ բացթողումներ:

Կատարված գիտական հետազոտությունների հիման վրա, համադրելով գիտականորեն հիմնավորված մոտեցումներն ու կարծիքները, ներկայացվել են նաև որոշ վերլուծություններ վեր հանված խնդիրների շուրջ:

Հիմնաբառեր. Ֆրանչայզինգի պայմանագիր, պայմանագրի կողմեր, իրավատեր, օգտագործող, մտավոր սեփականություն:

Ներածություն

Ֆրանչայզինգի պայմանագրի իրավական բնույթի ուսումնասիրությունը վերաբերում է պայմանագրի տարրերին, դրանց առանձնահատկությանը և տեսության մեջ առկա մոտեցումների քննարկմանը, ինչպես նաև պրակտիկ խնդիրների վերլուծմանը: Ֆրանչայզինգի պայմանագրի տարրերն են՝ կողմերը, պայմանագրի առարկան, գինը, ձևը և ժամկետը:

Պայմանագրի կողմերն են՝ իրավատերը (ֆրանչայզի) և օգտագործողը (ֆրանչայզեր): Իրավատերն այն անձն է, որին պատկանում են բացառիկ իրավունքները: Օգտագործողն այն անձն է, որին վերապահվում է բացառիկ իրավունքների օգտագործման իրավունքը:

Համալիր թույլտվության պայմանագրով կողմեր կարող են լինել միայն առևտրային կազմակերպությունները և անհատ ձեռնարկատեր քաղաքացիները (ՔՕ 969 հոդվ., կետ 2):

Օգտագործողը պայմանագրի համեմատաբար «թույլ կողմ» է համարվում, քանզի նա, որպես կանոն, քիչ պրոֆեսիոնալ է այն ոլորտում գործելու համար, որի նպատակով կնքվում է պայմանագիրը, իսկ իրավատերը շատ դեպքերում, տնտեսապես հզոր է օգտագործողից, այդ պատճառով Քաղ օր.-ն, օգտագործողի շահերից ելնելով, նախատեսում է իրավատիրոջ կամքը սահմանափակող դրույթներ ինչպես պայմանագրի կնքման, այնպես էլ դրա գործողության ընթացքում [ՔՕ, 975-րդ, 976-րդ, 977-րդ հոդվածներ]:

Հարկ է նշել, որ և՛ իրավատերը, և՛ օգտագործողը հանդիսանում են հատուկ սուբյեկտներ, մասնավորապես՝ զբաղվում են գործարարական գործունեությամբ, հետևաբար, ֆրանչայզինգի պայմանագրով կողմեր չեն կարող լինել պետությունը և ոչ առևտրային կազմակերպությունները: Այս արգելքը գործում է նաև այն դեպքերում, երբ վերոնշյալ սուբյեկտներին Քաղ. օր.-ը թույլ է տալիս զբաղվել գործարարական գործունեությամբ (ՔՕ 51-րդ հոդված, 4-րդ մաս): Համեմատության համար նշենք, որ հարևան երկրներից Վրաստանում [*Civil Code of Georgia*] և Ադրբեջանում ֆրանչայզինգային հարաբերությունների սուբյեկտներ կարող են լինել միայն առևտրային իրավաբանական անձինք: Իրավագետները միանշանակ մոտեցում չունեն սուբյեկտային կազմի վերաբերյալ: Մասնավորապես, նշվում է, որ ֆրանչայզինգի պայմանագիր կնքելու իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակը միայն առևտրային իրավաբանական անձանցով և անհատ գործարարներով սահմանափակելը արդադարացված չէ, քանի որ իրավատերերի որոշակի հատված՝ ի դեմս գիտահետազոտական կենտրոնների, ինստիտուտների և նմանատիպ այլ կառույցների, որոնք ունեն հսկայական գիտական ներուժ և մեծ թվով մտավոր սեփականության օբյեկտներ, զրկված են իրենց «արտադրանքի» առևտրային իրացման համալիր մեխանիզմից: Եվ դա այն դեպքում, երբ ոչ առևտրային կազմակերպություններին հնարավորություն է ընձեռնված զբաղվելու գործարարական գործունեությամբ:

Չհամաձայնելով նման դիրքորոշմանը՝ պետք է արձանագրել, որ ֆրանչայզինգի պայմանագիր կնքելու իրավունքը միայն առևտրային իրավաբանական անձանց և անհատ գործարարներին վերապահելով՝ ընդգծվում է այդ պայմանագրի գործարարական բնույթը: Այսինքն՝ պայմանագիրը կարող է օգտագործվել միմիայն շահույթ ստանալուն ուղղված գործունեությամբ զբաղվելու համար և միմիայն այդպիսի նպատակ (շահույթ ստանալու նպատակ) հետապնդող սուբյեկտների կողմից: Իսկ մնացած դեպքերի համար կարելի է ստեղծել առանձին պայմանագրի տեսակ կամ ֆրանչայզինգի պայմանագրի նոր առանձին ճյուղ:

Պայմանագրի նպատակը հաշվի առնելով՝ պետք է արձանագրել, որ որպես իրավատեր հանդես է գալիս խոշոր կազմակերպությունը, որն ունի բիզնեսի մշակված և փորձարկված մոդել, ինչն արդեն իսկ ենթադրում է իրավունքների համալիրում ներառված օբյեկտների առկայությունը:

Գրականությունում իրավատիրոջ վերաբերյալ հանդիպող կարծիքը, ըստ որի իրավատերը պետք է համապատասխանի ձևական երկու պայմանների՝ լինել գործարար և միաժամանակ ունենալ պայմանագրի առարկան կազմող բացառիկ իրավունքներ, հաշվի չի առնում պայմանագրի նպատակը և տնտեսական բնույթը: Օրինակ Ա.Ա. Իվանովը նշում է, որ իրավատերը պետք է լինի գործարար, ինչը նշանակում է, որ բիզնեսի իրականացման ընթացքում վերջինս օգտագործում է (ի-

ռացնում է) իր բացառիկ իրավունքները: Սակայն օրենքը պարտադիր չի համարում, որ իրավատերը, լինելով գործարարական գործունեության սուբյեկտ ձեռք բերի նաև բացառիկ իրավունքները: Բավարար է, որ նա պայմանագիրը կնքելու պահին օրենքով սահմանված կարգով գրանցված լինի որպես գործարարական գործունեության սուբյեկտ [*Семенова, 44-55*]:

Չհամաձայնելով նման կարծիքի՝ գտնում ենք, որ անձի գործարարական գործունեության սուբյեկտ լինելու և բացառիկ իրավունքների համալիր ունենալու հանգամանքն ինքնին բավարար չէ ֆրանչայզինգային հարաբերությունների մեջ մտնելու և իրավատեր հանդես գալու համար, քանի որ իրավատեր կազմակերպությունը, ինչպես վերը նշվեց, պետք է ունենա բիզնեսի գործող (պատրաստի) մոդել, իսկ վերջինս իրենից ներկայացնում է համալիրում ներառված բացառիկ իրավունքների իրացման արդյունքում ձևավորված հարաբերություն, համակարգ, գործողությունների ամբողջություն, որը թեև օրենսդրորեն չի առանձնացվում և ներառվում ֆրանշիզայում, այդուհանդերձ, վճռական դերակատարում ունի ֆրանչայզինգային հարաբերության ձևավորման և կայացման համար: Իսկ բիզնեսի արդյունավետ կազմակերպման մոդելի հետ անառարկելիորեն կապված է նաև գործարար համբավի առկայությունը և հենց նշված բոլոր հատկանիշների առկայության պարագայում է, որ հնարավոր է դառնում օգտագործել ֆրանչայզինգի պայմանագիրը սպառման նոր շուկայի ձեռքբերման համար' հանդես գալով որպես իրավատեր (ֆրանչայզեր):

Խոսելով ֆրանչայզինգի պայմանագրի առարկայի մասին,պետք է նշել, որ քաղաքացիական իրավունքի գիտության տեսանկյունից դիտարկելու դեպքում այն առավել ընդգրկուն է, քան նախատեսված է իրավունքի աղբյուրներում:

Օրենսդիրը պայմանագրի առարկայի վերաբերյալ դրույթներ նախատեսել է ՔՕ 969-րդ հոդվածում և առանձին օրենքներում, որոնց մասին կնշվի ստորև: Ընդհանուր առմամբ օրենսդրի մոտեցումը հանգում է նրան, որ պայմանագրի առարկան իրավատիրոջ կողմից իրականացվող գործարարական գործունեությունը օգտագործողի կողմից իրականացնելն է՝ իրավատիրոջը պատկանող բացառիկ իրավունքների, դրանց համալիրի օգտագործմամբ: Սակայն, առավել խորը և համապարփակ ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ ֆրանչայզինգի առարկան իրենից չի ներկայացնում բացառապես իրավունքների ամբողջության կամ ինչպես օրենսդրորեն ամրագրված է «համալիրի» օգտագործում: Դրանում ներառված են նաև այնպիսի բաղադրատարրեր, բարիքներ, որոնք ուղղակի կամ անուղղակի նպաստում են բիզնեսի կոնկրետ տեսակի արդյունավետության ապահովմանը: Ավելին, նույն օրենսդիրը ֆրանչայզինգի պայմանագրի առարկան «տարանջատում է» երկու մասի: Մի դեպքում փոխանցման ենթակա գույքի շարքում նշվում է իրավունքների ամբողջությունը (ՔՕ 969-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ), մյուս դեպքում պայմանագրի առարկայում ներառում է նաև առևտրային փորձը, գործարար համբավը (ՔՕ 969-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ): Նշվածը վկայում է, որ ոչ միայն մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքներն են կազմում պայմանագրի առարկան, այլև այնպիսի ոչ նյութական բարիքներ, որոնք որևէ կերպ չեն նյութականացվում (ի տարբերություն մտավոր սեփականության օբյեկտների):

Եվ այսպես ՔՕ 969-րդ հոդվածն ամրագրում է, որ պայմանագրով փոխանցվում են իրավատիրոջը պատկանող բացառիկ իրավունքների համալիրը, ներառյալ' իրավատիրոջ ֆիրմային անվանման, օրենքով պահպանվող առևտրային տեղեկատվության, ինչ-

պես նաև պայմանագրով նախատեսված բացառիկ իրավունքների այլ օբյեկտների՝ ապրանքային նշանի, սպասարկման նշանի և այլնի նկատմամբ իրավունքները: Համալիր թույլտվության պայմանագիրը նախատեսում է իրավատիրոջ բացառիկ իրավունքների, գործարար համբավի և առևտրային փորձի համալիրի որոշակի ծավալի օգտագործում:

Օրենսդրի նման ձևակերպումից ակնհայտ է, որ պայմանագրի առարկան են կազմում ֆիրմային անվանման, օրենքով պահպանվող առևտրային տեղեկատվության, ապրանքային նշանի, սպասարկման նշանի և այլնի նկատմամբ իրավունքների օգտագործումը՝ իրավատիրոջ գործարարական գործունեությունն օգտագործողի կողմից իրականացվելու ժամանակ: Օրենսդիրն իրավացիորեն չի սահմանափակել փոխանցվող իրավունքների շրջանակը և որպես այդպիսին կարող են լինել նաև այլ օբյեկտներ: Պայմանագրի առարկայում կարող են ներառվել սարքավորումների շահագործման փորձը, սպասարկող անձնակազմի վերապատրաստումը, շենքշինությունների, ավտոմեքենաների ձևավորումը (ներքին և արտաքին), բիզնեսը սկսելուց հետո իրավատիրոջ կողմից ցուցաբերվող աջակցությունը, գովազդային, մարկետինգային աջակցությունը և այլն:

Իրավաբանական գրականության մեջ կարծիք է արտահայտվում, որ գործարար համբավը, որը ևս հանդիսանում է պայմանագրի առարկա, այսինքն՝ մտնում է համալիրի մեջ, գործնականում փոխանցվել չի կարող: Նման մոտեցում ունեցողները պատճառաբանում են, որ գործարար համբավը անխզելիորեն կապված է այն անձին ում բնութագրում է [*Сергеев и другие, 736*]: Մեկ այլ մոտեցման համաձայն՝ բացառիկ իրավունքների հետ մեկտեղ գործարար համբավը փոխանցվում է մեխանիկորեն, առանց իրավատիրոջ ցանկության [*Դրմեյան, 75*]:

Կարծում ենք, որ իրավատերը, իր ցանկությամբ օգտագործողի հետ մտնելով պայմանագրային հարաբերությունների մեջ, ի թիվս այլ բացառիկ իրավունքների նրան է փոխանցում իր գործարար համբավը:

Բացառիկ իրավունքների շարքում կան այնպիսիները, առանց որոնց համալիր թույլտվության պայմանագիր, ըստ էության, կնքվել չի կարող: Իրավաբանական գրականության մեջ արտահայտված տեսակետներից մեկի համաձայն՝ ֆրանչայզինգի պայմանագրի առարկան ներառում է պարտադիր և ֆակուլտատիվ (լրացուցիչ) օբյեկտներ: Պարտադիր օբյեկտների շարքում ներառված են իրավատիրոջ ֆիրմային անվանումը (անհատ գործարարի գործարարական անվանումը) և չբացահայտված տեղեկատվությունը: Իսկ որպես լրացուցիչ օբյեկտներ նշվում են ապրանքային և սպասարկման նշանները: Ըստ էության նման դասակարգման հիմքում դրվում է այն սկզբունքը, թե որ օբյեկտների նկատմամբ իրավունքների փոխանցման դեպքում է հնարավոր նշել, որ կողմերը կնքել են ֆրանչայզինգի պայմանագիր կամ պայմանագիրը կհամարվի կնքված [*Стивен Спинелли-мл и другие, 25*]:

Հարկ է նշել, որ ֆրանչայզինգի պայմանագիրը այն միակ պայմանագիրն է, որով հնարավոր է ապահովել ֆիրմային անվանման նկատմամբ իրավունքների փոխանցումը, ՀՀ քաղաքացիական իրավունքի գիտությանը հայտնի որևէ այլ ինստիտուտ չի նախատեսում ֆիրմային անվանման փոխանցման հնարավորություն:

Օրենքով պահպանվող առևտրային տեղեկությունը, որի նկատմամբ իրավունքը ևս ֆրանչայզինգի պայմանագրի առարկան կազմող պարտադիր օբյեկտ է, իրենից ներկայացնում է այնպիսի տեղեկություն, որը երրորդ անձանց անհայտ լինելու ուժով ունի իրական կամ հնարավոր առևտրային արժեք, չկա օրինական հիմքերով այն ազատորեն

ստանալու հնարավորություն և տեղեկություն ունեցողը միջոցներ է ձեռնարկում դրա գաղտնիության պահպանման համար: ՔՕ 141-րդ հոդվածով սահմանված այս պայմանների պահպանման դեպքում տեղեկությունը կհամարվի քաղաքացիական իրավունքի օբյեկտ և կպաշտպանվի օրենքով: Առևտրային տեղեկության նկատմամբ իրավունքի փոխանցումը օգտագործողին հնարավորություն է տալիս օգտագործել այն և ապահովել իր գործունեության նույնացումը իրավատիրոջ գործունեության հետ:

Եզրակացություն

Ասվածից կարելի է գալ այն համոզման, որ առնվազն ֆիրմային անվանման և օրենքով պահպանվող առևտրային տեղեկության օգտագործումը հնարավորություն են տալիս օգտագործողին իր կողմից իրականացվող գործունեությունն առավելագույնս համապատասխանեցնել իրավատիրոջ գործունեության հետ, դրանով իսկ նմանվելով իրավատիրոջը: Ինչպես վերը նշվեց որոշակի տեղեկություն, որը ներառված է ֆրանշիզայում հնարավոր է, որ հատուկ չպահպանվի իրավատիրոջ կողմից, վերջինս միջոցներ չձեռնարկի այդ տեղեկությունը երրորդ անձանցից պահպանելու ուղղությամբ:

Որոշ երկրների, մասնավորապես Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ, պայմանագրով փոխանցվող բացառիկ իրավունքների համալիրի մեջ նշվում է նաև իրավատիրոջ առևտրային անվանումը: Ռուսաստանի Դաշնության օրենսդրությունը չի բացահայտում «առևտրային անվանում» տերմինի բովանդակությունը: Ավելին, մինչև օրս կարգավորված չեն առևտրային անվանման իրավական պահպանության հետ կապված հարաբերությունները [*Civil Code of Russian Federation, Part Two*]:

Ինչ վերաբերում է մտավոր սեփականության այնպիսի օբյեկտների նկատմամբ իրավունքների փոխացմանը ինչպիսիք են աշխարհագրական նշումը, ապրանքի ծագման տեղանունը և երաշխավորված ավանդական արտադրանքի անվանումը, ապա «Աշխարհագրական նշումների մասին» 2010 թվականի օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գրանցված աշխարհագրական նշումը կամ գրանցված ծագման տեղանունը չի կարող դառնալ փոխանցման կամ լիցենզիայի կամ այլ գույքային իրավունքի առարկա: Նշված առանձնահատկությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ նույն օրենքի 12-րդ հոդվածի 6-րդ մասը հնարավորություն է ընձեռում համապատասխան աշխարհագրական գոտում գտնվող ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձի, որը պահպանվող աշխարհագրական նշման կամ պահպանվող ծագման տեղանվան տեխնիկական հատկորոշումների դրույթների համաձայն արտադրում և կամ վերամշակում և կամ պատրաստում է ապրանք կարող է պետական լիազոր մարմին հայտ ներկայացնել՝ դրա օգտագործման իրավունքը ստանալու համար: Նշված հոդվածից հետևում է, որ ինչպես աշխարհագրական նշումը այնպես էլ ծագման տեղանունը օգտագործելու իրավունքը բացարձակ իրավունք չէ և այն կարող է տրամադրվել տվյալ վայրում նույն արտադրանքն արտադրող ցանկացած սուբյեկտի: Ի տարբերություն աշխարհագրական նշման և ապրանքի ծագման տեղանվան՝ երաշխավորված ավանդական արտադրանքի անվանման նկատմամբ բացառիկ իրավունքի փոխանցման վերաբերյալ բացակայում է որևէ արգելք: ՔՕ 1104-րդ հոդվածի 3-րդ մասով հնարավորություն է տրվում մտավոր սեփականության օբյեկտի իրավատիրոջը այլ անձի փոխանցել այդ օբյեկտի նկատմամբ բացառիկ իրավունքը, եթե դա չի հակասում օրենսգրքի և այլ օրենքների պահանջներին:

Ինչպես նշվեց պայմանագրի առարկայում ներառվում են նաև մտավոր սեփականու-

թյան այլ օբյեկտների նկատմամբ օգտագործման իրավունքները:

Մասնավորապես այդպիսիք են գյուտի, օգտակար մոդելի, արդյունաբերական նմուշի նկաւոմամբ իրավունքները, սելեկցիոն նվաճումների նկատմամբ իրավունքները, ինչպես նաև ինտեգրալ միկրոսխեմաների և տոպոլոգիաների նկատմամբ իրավունքները: Նշված բոլոր օբյեկտների նկատմամբ ունեցած օգտագործման իրավունքի տրամադրման կանոնները նախատեսված են առանձին օրենդրական ակտերում:

Թեև մտավոր սեփականության վերոնշյալ օբյեկտների նկատմամբ իրավունքների փոխանցումը (օգտագործման իրավունք տրամադրելը) իրականացվում է լիցենզային պայմանագրերի հիման վրա, այդուհանդերձ, ֆրանչայզինգի պայմանագրի կնքմամբ օգտագործողը արդեն իսկ ստանում է այդ օբյեկտների նկատմամբ օգտագործման իրավունք և հարկ չի առաջանում ևս մեկ անգամ կնքել նոր' լիցենզային պայմանագիր [*Еремин, 5-8*]:

Պայմանագրի գինը վարձատրությունն է, որն օգտագործողը պարտավորվում է վճարել իրավատիրոջը ՔՕ 972-րդ հոդվածով սահմանված կարգով: Ֆրանչայզինգի պայմանագրով օգտագործողը կարող է իրավատիրոջը վարձատրել որոշակի միանվագ կամ պարբերական վճարների, հասույթից մասհանումների, իրավատիրոջ կողմից վաճառքի համար փոխանցված գույքի մեծածախ գնի և հավելագնի տարբերության կամ պայմանագրով նախատեսված այլ ձևով:

Ֆրանչայզինգի պայմանագիրը կնքվում է գրավոր: Պայմանագրի գրավոր ձևը չպահպանելը հանգեցնում է դրա անվավերության: Այդպիսի պայմանագիրն առոչինչ է (Քաղ. Օր. 970 հոդվ., կետ 1):

Ֆրանչայզինգի պայմանագիրը ենթակա է պետական գրանցման: Սրա անհրաժեշտությունը կայանում է նրանում, որ պայմանագրով իր բացառիկ իրավունքները փոխանցելով այլ անձի՝ իրավատերն ինչ-որ առումով սահմանափակում է նաև իր իրավունքները: Նման սահմանափակումն էլ պետք է հայտնի դառնա հանրությանը, որը հնարավոր է պետական գրանցմամբ:

Պայմանագրի առարկան արտոնագրային իրավունքի օբյեկտներն են, ուստի օրենսդիրը պարտադիր է համարել նաև պայմանագրի գրանցումը արտոնագրերի գրանցում իրականացնող համապատասխան պետական մարմնում: Ըստ Քաղ. Օր. 970 հոդվածի 3-րդ կետի՝ «արտոնագրային օրենսդրությամբ պահպանվող օբյեկտի օգտագործման վերաբերյալ համալիր թույլտվության պայմանագիրը ենթակա է գրանցման նաև արտոնագրերի ու ապրանքային նշանների գրանցում իրականացնող լիազորված պետական մարմնում: Այդ պահանջը չպահպանելու դեպքում համալիր թույլտվության պայմանագիրը համարվում է առոչինչ»:

Պայմանագրի էական պայմաններից է ժամկետը: Քաղ. Օր-ից հետևում է, որ այն կարող է կնքվել և որոշակի ժամկետով, և առանց ժամկետի նշման՝ անորոշ ժամկետով:

Գրականության ցանկ

1. Ղարախանյան Գ. Հ., Բեքմեզյան Գ.Հ. և այլոք, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, երրորդ մաս | Դասագիրք բուհերի համար, Խմբագիրներ՝ Տ.Կ. Բարսեղյան, Գ.Հ. Ղարախանյան 4-րդ հրատարակություն (լրացումներով և փոփոխություններով), Երրորդ մաս, ԵՊՀ հրատ., Երևան, 2011, 504 էջ:

2. Դրմեյան Լ. Մ., Համալիր ձեռնարկատիրական գործունեության թույլտվության (ֆրանչայզինգի) պայմանագրի իրավական կարգավորումը Հայաստանի Հանրապետությունում, Երևան, 2012, 373 էջ:
3. А. Еремин, Франчайзинг и договор коммерческой концессии. Теория и практика применения, 2017 г., с. 250.
4. Стивен Спинелли-мл, М. Розенберг Роберт, Берли Сью, франчайзинг: путь к богатству. М. 2007г., с. 384.
5. Сергеев А.П., Толстой Ю.К., Гражданское право. Учебник 2-е изд., перераб. и доп.. Ч. 1, . М. 1997г., с. 600.
6. Семенова А. С. Образовательный франчайзинг: сущность, принципы построения и функционирования сети. Диссертация на соискание ученой степени кандидата экономических наук: Москва, 2002 г., с. 170.
7. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, Ընդունվել է Ազգային ժողովի կողմից 1998 թվականի մայիսի 5-ին// ՀՀՊՏ 1998.08.10/17(50):
8. ГК РА. Закон Азербайджанской Республики от 28.12.1999г. № 779-1Г. Статья 723,
9. Civil Code of Georgia. 2001 by IRIS Georgia., (13.04.2022) // https://www.ilo.org/dyn/natlex/docs/ELECTRONIC/90468/118660/F999089720/GEO90468%20Geo.pdf. Article 607.
10. Civil Code of Russian Federation.Part Two No. 14-FZ of January 26, 1996, (13.04.2022) // https://www.wipo.int/edocs/lexdocs/laws/en/ru/ru083en.pdf

ON SOME CHARACTERISTICS OF THE LEGAL SETTLEMENT OF THE FRANCHESE AGREEMENT

Maruqyan G.S.
PhD in Law, Associate Professor
Educational Complex of Police of the RA
Chair of Civil Law and Civil Procedure
gayanemarukyan@yahoo.com

Abstract

The existence of private property led to the creation of separate economic entities, some of which over time established their stable position in the newly formed market economy. This situation created a competitive environment in which it was quite difficult for start-ups to survive. Franchise is one of the unique ways of building a business that gives stability, a real perspective, ensures the viability of companies. The sphere of franchise relationships is very diverse. It can be used in any sector of the economy, from the service sector to the industry. Franchise, being one of the best forms of business development, can be a stimulus for the development of the economy of any country. In the framework of the scientific article, some features of the legal framework of the agreement were discussed, the problematic legal regulations related to this type of contract were presented in theory, as well as some omissions in the legal regulation of the parties to the contract were discussed. Based on the conducted scientific researches and by combining scientifically grounded approaches and opinions, some analyzes on the identified issues were presented.

Keywords*:* Franchising agreement, parties to the contract, right holder, user, intellectual property.

Ներկայացվել է՝ 18.04.2022 թ.
Գրախոսվել է՝ 20.05.2022 թ.

ԱՆՄԵՂՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՎԱՐԿԱԾԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅՈՒՄ

Հովհաննիսյան Ա. Ա.
հայցորդ
ՀԵՀ, Իրավագիտության ամբիոն
anna.hovhannisyan2210@gmail.com

Ամփոփագիր

Սույն հոդվածը նվիրված է անմեղության կանխավարկածի հիմնահարցերի վերլուծությանն ու հետազոտությանը միջազգային իրավական պրակտիկայում: Հոդվածում փորձ է արվել վեր հանել և ուսումնասիրել անմեղության կանխավարկածն ամրագրող առաջին միջազգային փաստաթղթի (Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի) դրույթները, այնուհետև ուսումնասիրվել են դրանից ոչ պակաս կարևորություն ներկայացնող և դրան հաջորդող այլ միջազգային փաստաթղթերում, ինչպիսիք են՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան և Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը, ամրագրված անմեղության կանխավարկածի վերաբերյալ դրույթները: Փորձ է արվել ուսումնասիրել և հայտնաբերել վերոգրյալ միջազգային փաստաթղթերում ամրագրված անմեղության կանխավարկածի վերաբերյալ դրույթներում առկա նմանություններն ու տարբերությունները: Ըստ էության փորձել ենք մանրամասն ներկայացնել անմեղության կանխավարկածի միջազգային մոդելի ձևավորման և զարգացման ընթացքը, ինչպես նաև դրա միջազգային մոդելի նշանակությունը և կարևորությունը Հայաստանի Հանրապետության համար՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ հենց միջազգային պրակտիկայում առկա անմեղության կանխավարկածը պետք է տեղ գտնի ՀՀ ներպետական օրենսդրությունում: Եվ վերջում՝ վերոգրյալ ուսումնասիրությունների հիման վրա, փորձել ենք համախմբել անմեղության կանխավարկածի վերաբերյալ միջազգային փաստաթղթերից յուրաքանչյուրում առկա, մեր կողմից առավել ընդունելի, ձևակերպումները և դրանց հիման վրա տալ անմեղության կանխավարկածի մեր ձևակերպումը:

Հիմնաբառեր: Անմեղության կանխավարկած, անմեղության կանխավարկածի միջազգային իրավական պրակտիկա, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա, յուրաքանչյուր ոք իրավունք ունի համարվելու անմեղ:

Ներածություն

Անմեղության կանխավարկածի միջազգային իրավական պրակտիկայի ուսումնասիրության կարևորությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ հենց այդ մոդելը պետք է ամրագրվի երկրների ներպետական օրենսդրություններով, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության ներպետական օրենսդրությամբ: Անմեղության կանխավարկածի սահմանադրական սկզբունքի էությունը պետք է համահունչ լինի և բխի միջազգային իրավական կարգավորումների էությունից ու բովանդակությունից:

Հարկ է նաև նշել, որ մարդու իրավունքների պաշտպանությանը միջազգային իրավունքում անգնահատելի մեծ տեղ է տրվում:

Առկա են բազմաթիվ միջազգային հռչակագրեր, դաշնագրեր, կոնվենցիաներ, պայմանագրեր, որոնց հիմնական նպատակը մարդու իրավունքների պաշտպանությունն ու երաշխավորումն է:

Հոդվածի ուսումնասիրության **առարկան՝** անմեղության կանխավարկածի վերաբերյալ դրույթներն են, որոնք ամրագրված են այնպիսի միջազգային փաստաթղթերում, ինչպիսիք են՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան և Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը:

Հոդվածի հետազոտության **օբյեկտն** է անմեղության կանխավարկածի միջազգային մոդելի կիրառման կամ չկիրառման կապակցությամբ առաջացող հասարակական հարաբերություններն ու օրինաչափությունները:

Հոդվածի հետազոտության **նպատակն է** ուսումնասիրել անմեղության կանխավարկածի միջազգային իրավական պրակտիկան՝ հաշվի առնելով անմեղության կանխավարկածը ամրագրող միջազգային նորմերի կարևորությունը:

Վերոնշյալ նպատակին հասնելն ապահովվում է հետևյալ **խնդիրների** լուծմամբ՝

- Ուսումնասիրել անմեղության կանխավարկածի վերաբերյալ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում առկա դրույթները, վեր հանել բնորոշ հատկանիշները;
- Ուսումնասիրել անմեղության կանխավարկածի վերաբերյալ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայում ամրագրված դրույթները, վեր հանել դրա բոլոր հատկանիշները;
- Ուսումնասիրել քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրով ամրագրված անմեղության կանխավարկածի վերաբերյալ դրույթները, վեր հանել դրա բոլոր հատկանիշները;
- Համեմատել վերոգրյալ միջազգային փաստաթղթերում անմեղության կանխավարկածն ամրագրող դրույթներում առկա տարբերություններն ու նմանությունները;
- Համախմբել անմեղության կանխավարկածի վերաբերյալ միջազգային փաստաթղթերից յուրաքանչյուրում առկա մեր կողմից առավել ընդունելի ձևակերպումները և դրանց հիման վրա տալ անմեղության կանխավարկածի մեր ձևակերպումը:

Մարդու իրավունքների միջազգային իրավունքի նպատակն է՝ առաջին հերթին պաշտպանել մարդու կյանքը, արժանապատվությունը, ազատությունը և այլն, իսկ երկրորդը՝ արդար դատաքննության իրավունքի ապահովումն է: Երաշխիքների այս փաթեթը ներառում է մի քանի տարբեր ասպեկտներ և պարունակում է բազմաթիվ իրավունքներ, որոնցում անմեղ համարվելու իրավունքը (կամ անմեղության կանխավարկածը) մարդու շատ կարևոր իրավունք է, որը ճանաչված է որպես միջազգային սովորութային իրավունքի նորմ և ամրագրված է միջազգային իրավական փաստաթղթերից շատերում [*Amnesty International, 125*]:

Անմեղության կանխավարկածի միջազգային իրավական պրակտիկայում կարևոր նշանակություն ունի անգլո-ամերիկյան մոդելը: Անգլո-ամերիկյան մոդելի հիման վրա Ֆրանսիայում ընդունվեց «Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագիրը», որը որոշակի առումով ավելի զարգացրեց այդ մոդելը: Հենց այդ հռչակագրով սահմանված անմեղության կանխավարկածի վերաբերյալ դրույթի հիման վրա էլ ձևավորվեց անմեղու-

թյան կանխավարկածի միջազգային մոդելը: Մասնավորապես՝ առաջին և ամենակարևոր փաստաթուղթը, որն ամրագրեց մարդու իրավունքների, այդ թվում՝ անմեղության կանխավարկածի միջազգային մոդելը «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրն» (այսուհետ նաև՝ Հռչակագիր) է, որն ընդունվել է 1948 թվականի դեկտեմբերի 10-ին: Այն շուրջ 80 կոնվենցիաների և դաշնագրերի համար ոգեշնչման հիմք է հանդիսացել: Այսպես՝ Հռչակագրի 11-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է. *«Հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք իրավունք ունի անմեղ համարվելու մինչև այն պահը, քանի դեռ նրա մեղքը օրինական կարգով չի հաստատվի հրապարակային դատական քննության միջոցով, որի ժամանակ նրան տրվում են պաշտպանության բոլոր հնարավորությունները»* [Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, հոդված 11]:

Հռչակագրում վերոգրյալ սկզբունքին նախորդում է մեկ այլ սկզբունք, որը սերտորեն փոխկապակցված է անմեղության կանխավարկածի հետ: Մասնավորապես 10-րդ հոդվածով սահմանվում է. *«Յուրաքանչյուր ոք իր իրավունքներն ու պարտականությունները ճշտելու և իրեն ներկայացված քրեական մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար լիակատար հավասարության հիմունքով իրավունք ունի այն բանի, որ իր գործը քննվի անկախ և անկողմնակալ դատարանի կողմից հրապարակայնորեն և արդարության բոլոր պահանջների պահպանմամբ»* [*Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, հոդված 10*]*:* Այս սկզբունքը Հռչակագրում ամրագրում է արդար դատաքննության իրավունքը:

Նույն Հռչակագրի 11-րդ հոդվածի ուսումնասիրությունից հետևում է, որ այն նախևառաջ ամրագրում է **յուրաքանչյուր մարդու անմեղ համարվելու իրավունքը:** Այնուհետև սահմանվում է **անձի անմեղ համարվելու ժամանակահատվածը**, մասնավորապես՝ մինչև այն պահը, քանի անձի մեղքը օրենքով նախատեսված կարգով չի հաստատվել հրապարակային դատաքննության միջոցով: Ստացվում է, որ անձը պետք է անմեղ համարվի, մինչև դատարանի կողմից մեղավոր ճանաչվելը, ընդ որում՝ դատարանը անձին պետք է ճանաչի մեղավոր միայն օրենքով նախատեսված կարգով՝ արդար դատաքննության իրավունքի պահպանմամբ, այն է՝ գործը պետք է քննության ենթարկվի անկողմնակալ և անկախ դատարանի կողմից, հրապարակայնորեն, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ: Եվ վերջում սահմանվում է, որ **մեղադրյալին պետք է տրվեն պաշտպանության բոլոր հնարավորությունները**:

«Պաշտպանության բոլոր հնարավորություններ» ասելով կարելի է հասկանալ որոշակի դատավարական գործընթացի շրջանակներում մեղադրյալի և նրա ներկայացուցչի (պաշտպանի) իրավունքների ամբողջությունը, ինչպես նաև բոլոր այլ հնարավորությունները, որոնք ընձեռվում են հանցագործություն կատարելու մեջ կասկածվող (մեղադրվող) բոլոր անձանց ինչպես դատավարական գործընթացի ընթացքում, այնպես էլ դրանից հետո [*Rawlson, 276*]:

Այսպիսով, 1948 թվականի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրով սահմանված անմեղության կանխավարկածի վերլուծության արդյունքում հանգում ենք նրան, որ այն ամենահաջողվածն է լեզվաբանական տեսանկյունից և առավել ադեկվատ կերպով արտացոլում է անմեղության կանխավարկածի բովանդակությունը՝ հիմնված իր անգլո-ամերիկյան մոդելի վրա [*Rawlson, 292*]:

Հաջորդ կարևոր փաստաթուղթը, որն ամրագրել է անմեղության կանխավարկածը, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան(այսուհետ նաև՝ ՄԻԵԿ) է, որն ընդունվել է 1950 թվականի նոյեմբերի

4-ին: ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվում է. *«Յուրաքանչյուր ոք, ով մեղադրվում է քրեական հանցագործություն կատարելու մեջ, համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքին համապատասխան»* [*Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիա, 6-րդ հոդված*]:

Կարծում ենք, որ ՄԻԵԿ-ի կողմից անմեղության կանխավարկածը սահմանվել է ավելի խիստ ձևով, մասնավորապես՝ «յուրաքանչյուր ոք, …, համարվում է անմեղ», մինչդեռ Հռչակագրով սահմանվում է «իրավունք ունի համարվելու անմեղ», այսինքն՝ ՄԻԵԿ-ով խիստ պարտականություն է սահմանվում իրավասու մարմինների համար անձին անմեղ համարելու: Ինչպես իրավացիորեն նշել է Ջ.Պարկերը՝ անդրադառնալով ՄԻԵԿ-ի դրույթին, «… հզոր զենք է… մեղադրյալի նկատմամբ անօրինական գործողությունների դեմ» [*Parker, էջ 117*]:

Սա այլևս իրավունքների և ազատությունների հռչակագիր չէ, այլ օրենսդրական դրույթ, ըստ որի՝ պետությունները պետք է գործեն մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների ապահովման ոլորտում և երկրները, դրանով առաջնորդվելով, պետք է կառուցեն և պլանավորեն իրենց ներքին քաղաքականությունը մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում [*Bayles, 44*]:

Սակայն, այս առումով, կարծում ենք, Կոնվենցիայի թերացումն է նորմի վերջին հատվածի բովանդակությունը, որը հստակորեն չի ամրագրում անձի անմեղ համարվելու ժամանակահատվածը: Սահմանվում է՝ «քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքին համապատասխան», մինչդեռ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում օգտագործվում է «հաստատվել» բառը:

Հարկ ենք համարում նշել նաև, որ ՄԻԵԿ դրույթները լրացվում են Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից: Այսինքն՝ անմեղության կանխավարկածի վերաբերյալ դրույթը մանրամասնեցվում է ՄԻԵԴ որոշումների միջոցով:

Միջազգային իրավունքում առկա հաջորդ կարևոր փաստաթուղթը «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրն» (այսուհետ նաև՝ Դաշնագիր) է, որն ընդունվել է ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի կողմից 1966 թվականին և ուժի մեջ մտել 1976 թվականի մարտի 23-ին: Դաշնագիրը ամրագրում է անձի քաղաքացիական և քաղաքական իրավունքները, այդ թվում՝ արդար դատաքննության և անմեղության կանխավարկածի իրավունքը: Դաշնագրի 14-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվում է. *«Քրեական հանցագործության մեջ յուրաքանչյուր մեղադրվող իրավունք ունի համարվելու անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքով»* [*Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր, 14-րդ հոդված*]: Ինչպես տեսնում ենք Դաշնագիրը որոշակի առումով որդեգրել է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի քաղաքականությունը՝ սահմանելով անմեղ համարվելու անձի իրավունքը, մինչդեռ ՄԻԵԿ-ը սահմանում է անձին անմեղ համարելու պարտականությունը: Սակայն Դաշնագրի վերոգրյալ նորմը կազմված է ավելի լակոնիկ ձևով՝ սահմանելով «քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքով», այսինքն՝ Դաշնագրով չի սահմանվում հրապարակային դատաքննությունը, պաշտպանության բոլոր միջոցների առկայությունը, այլ զուտ տրվել է լակոնիկ և միևնույն ժամանակ բավարար սահմանում, այն է՝ «քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ **օրենքով**»:

Հարկ ենք համարում նշել նաև, որ մեծամասամբ երկրների Սահմանադրությունների հիմքում ընկած է անմեղության կանխավար-

կածի վերաբերյալ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի դրույթը:

Միջազգային իրավունքում, մասնավորապես, ստատուտներում, անմեղ համարվելու իրավունքը սահմանվում է հետևյալ կերպ. «1. Յուրաքանչյուր ոք համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ դատարանի առջև՝ կիրառելի օրենսդրությանը համապատասխան, 2. Մեղադրյալի մեղքն ապացուցելու պարտականությունը դրված է դատախազի վրա, 3. Մեղադրյալին մեղավոր ճանաչելու համար դատարանը ողջամիտ կասկածից դուրս պետք է համոզված լինի մեղադրյալի մեղավորության մեջ» (ՄՔԴ-ի Հռոմի ստատուտի (կանոնադրության) 66-րդ հոդված) [*Rome Statute of the International Criminal Court*]:

Անմեղ համարվելու իրավունքը սովորաբար դիտարկում են արդար դատաքննության հետ մեկտեղ կամ դրա չափանիշների լույսի ներքո: Այս առումով, Amnesty International-ը գտնում է, որ յուրաքանչյուր անձ ունի անմեղ համարվելու իրավունք և համարվում է անմեղ, բացառությամբ այն դեպքերի, քանի դեռ չի դատապարտվել օրենքի համաձայն այն դատավարության ընթացքում, որը բավարարում է արդար դատաքննության առնվազն սահմանված նվազագույն պահանջները [*Amnesty International, 125*]: Վերջինս ոչ կառավարական կազմակերպություն է (NGO), որը պաշտպանում է մարդու իրավունքներն ամբողջ աշխարհում սկսած 1961 թվականից [*Who we are, what we do*]:

Համաձայն Մարդու իրավունքների կոմիտեի (HRC)՝ համար 32 Ընդհանուր մեկնաբանությունում (*General Comment*) առկա պարզաբանման, արդար դատաքննությունը պետք է համապատասխանի բազմաթիվ պահանջների, որոնց թվում է [*CCPR General Comment No.32; Amnesty International (2014)*]՝ անմեղ համարվելու իրավունքը, դատարանի առջև հավասարությունը, իրավասու, արդար, անաչառ և օրենքի հիման վրա ստեղծված դատարանի իրավունք, արդար և հրապարակային լսումների իրավունք, սեփական անձի դեմ ցուցմունքներ տալու կամ մեղքը խոստովանելուն ուղղված հարկադրանքի բացակայության իրավունք, դատարանում ներկա գտնվելու և գործողությունները վիճարկելու իրավունք և այլն:

Ինչպես սահմանում է Մարդու իրավունքների կոմիտեն, անմեղ համարվելու իրավունքը համարվում է միջազգային սովորութային իրավունքի նորմ, և հետևաբար այն կիրառվում է բոլոր ժամանակներում և բոլոր հանգամանքներում [*CCPR General Comment No.29; CCPR General Comment No.32*]: Այլ կերպ ասած, անմեղ համարվելու իրավունքը կիրառվում է քրեական դատավարության բոլոր փուլերում, նույնիսկ նախքան կասկածյալներին հանցանքի մեջ մեղադրանք առաջադրելը, քանի դեռ վերջնական վճռաբեկ բողոքից հետո դատվածությունը չի հաստատվել [*Amnesty International (2014), էջ 125*]: քրեական հետապնդման մարմինները պարտավոր են ապահովել այս իրավունքի իրացումը կասկածյալների, մեղադրյալների կողմից:

Եզրակացություն

Այսպիսով՝ ողջ վերոգրյալի հիման վրա կարող ենք կատարել հետևյալ եզրահանգումները.

1. Անմեղության կանխավարկածի միջազգային մոդելի ձևավորման համար հիմք է հանդիսացել դրա անգլո-ամերիկյան մոդելի և վերջինիս լույսի ներքո Ֆրանսիայի «Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագիրը»:

2. Միջազգային իրավական պրակտիկայի շուանակում անհրաժեշտ առանձնացնել անմեղության կանխավարկածի «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում» տեղ գտած դրույթը, որը անձի անմեղ համարվելը սահմանում է որպես իրավունք, և բավականաչափ մանրամասն սահմանում անձի

անմեղ համարվելու ժամանակահատվածը: Մասնավորապես՝ անձը անմեղ է համարվում, քանի դեռ նրան դատարանը չի ճանաչել մեղավոր օրենքով սահմանված կարգով՝ արդար դատաքննության իրավունքի պահպանմամբ, այն է՝ գործը պետք է քննվի անկողմնակալ և անկախ դատարանի կողմից, հրապարակայնորեն, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ: Անմեղության կանխավարկածի հենց այս մոդելն էլ հիմնականում տեղ է գտել տարբեր երկրների Սահմանադրություններով:

3. Ինչ վերաբերում է ՄԻԵԿ-ին և Դաշնագրին, ապա դրանք առավել լակոնիկ և հստակ են բնութագրել անմեղության կանխավարկածի էությունը: Սակայն Դաշնագրում ամրագրվում է անձի անմեղ համարվելու **իրավունքը** (այնպես, ինչպես Հռչակագրում), իսկ ՄԻԵԿ-ով սահմանվում է անձին անմեղ համարելու **պարտականություն:**

4. Հռչակագրում, ՄԻԵԿ-ում և Դաշնագրում ամրագրված դրույթները կազմում են անմեղության կանխավարկածի միջազգային մոդելը, որից շեղումները անթույլատրելի են, և որը պարտադիր է բոլոր պետությունների համար:

5. Ընդ որում հնարավոր չէ առանձնացնել վերոգրյալ միջազգային իրավական փաստաթղթերից որևէ մեկը և սահմանել որպես անմեղության կանխավարկածի միջազգային իրավական պրակտիկայի միասնական մոդել, որովհետև դրանք հենց իրենց միասնության մեջ են համարվում միջազգային մոդել:

6. Միևնույն ժամանակ չի կարելի խոսել անմեղության կանխավարկածի միջազգային մոդելի ամբողջական ամրագրման մասին, քանի որ ժամանակի ընթացքում՝ հասարակական հարաբերությունների ընթացքին զուգահեռ, զարգանում և փոփոխման է ենթարկվում նաև անմեղության կանխավարկածի միջազգային մոդելը: Այդ փոփոխությունները և զարգացումները կարող են տեղի ունենալ, օրինակ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից ընդունված որոշումների միջոցով:

7. Քննարկված միջազգային փաստաթղթերի վավերացումից հետո բոլոր պետությունները ստանձնում են պարտականություն իրենց Սահմանադրություններում մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները ամրագրել առանձին գլխով, որոնցում իր ուրույն տեղը պետք է ունենա անմեղության կանխավարկածը: Հենց այդպես էլ արել է ՀՀ սահմանադիրը, որը Սահմանադրության 2-րդ գլուխը ամբողջությամբ նվիրել է մարդու իրավունքներին, իսկ 66-րդ հոդվածը անմեղության կանխավարկածին:

8. Անմեղության կանխավարկածը սերտորեն փոխկապակցված է արդար դատաքննության իրավունքի հետ, և կարելի է նույնիսկ այն դասել արդար դատաքննության իրավունքի տարրերի շարքին: Օրինակ՝ կարծում ենք, որ հենց այդպիսի մոտեցում է ցուցաբերել ՄԻԵԿ-ը, որը անմեղության կանխավարկածը ամրագրել է արդար դատաքննությանը վերաբերող նորմում: Մինչդեռ Հռչակագիրը առանձնացրել է անմեղության կանխավարկածը որպես մարդու յուրահատուկ իրավունք, որը սերտորեն փոխկապակցված է արդար դատաքննության իրավունքի հետ: Մեր կողմից ավելի ընդունելի է Հռչակագրի մոտեցումը, քանի որ կարծում ենք, որ այն սերտորեն կապված է արդար դատաքննության իրավունքի հետ և բխում է դրանից, սակայն ինքն ինքնուրույն մեղադրյալի յուրահատուկ իրավունքներից մեկն է, որի միջոցով ապահովվում է մեղադրյալի պաշտպանության իրավունքի իրացումը:

Ամփոփելով և հաշվի առնելով անմեղության կանխավարկածի միջազգային իրավական կարգավորման պրակտիկան, քննարկված միջազգային փաստաթղթերում մեր կողմից առանձնացված թերությունները և առավելությունները, «անմեղության կանխավար-

կած» եզրույթն անհրաժեշտ է ընկալել հետևյալ ձևակերպմամբ. *հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք համարվում է անմեղ մինչ այն պահը, քանի դեռ նրա մեղքը ապացուցված չէ օրենքով՝ արդար դատաքննության տարրերի պահպանմամբ իրականացվող դատաքննության միջոցով, որի ժամանակ նրան տրվում են պաշտպանության բոլոր հնարավորությունները:*

Գրականության ցանկ

1. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, ընդունվել և հռչակվել է ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 1948 թվականի դեկտեմբերի 10-ի 217 Ա (III) բանաձևի համաձայն:
2. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիա, 4-ը նոյեմբերի, 1950 թ., Հռոմ:
3. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր, ընդունվել է ՄԱԿ-Ի Գլխավոր Ասամբլեայի 1966 թվականի դեկտեմբերի 16-ի 2200 Ա (XXI) բանաձևով:
4. CCPR General Comment No.29 (CCPR/C/21/Rev.1/Add.11); 31 August 2001; էջ 8.
5. CCPR General Comment No.32 (CCPR/C/GC/32) 23 August 2007; էջ 18.
6. Rome Statute of the International Criminal Court, 18/6/2020; էջ 65.
7. Amnesty International (2014), Fair Trial; էջ 276.
8. Bayles M. D. Principles of law. A normative analysis; էջ 455.
9. Parker J.L. Justice and Due process of law. – Mas., N.Y., 1983.
10. Rawlson J.M. A Theory of Justice; 30.09.1999; էջ 560.
11. Who we are, what we do, Amnesty International, (23.03.22), https://www.amnesty.org/en/

PROBLEMS OF PRESUMPTION OF INNOCENCE IN INTERNATIONAL LEGAL PRACTICE

Hovhannisyan A.A.
Researcher
EUA, Chair of Law
anna.hovhannisyan2210@gmail.com

Abstract

This article is devoted to the analysis and research of the problems of presumption of innocence in international legal practice. The article attempts to highlight and explore the provisions of the first international document (the Universal Declaration of Human Rights) enshrining the presumption of innocence, then the provisions on the presumption of innocence enshrined in other not less important international documents, such as the European Convention for the Protection of Human Rights and Fundamental Freedoms and the International Covenant on Civil and Political Rights, were studied. An attempt has been made to study and discover similarities and differences in the provisions on the presumption of innocence enshrined in the above-mentioned international documents. In fact, we have made an attempt to present in detail the course of formation and development of the international model of the presumption of innocence, as well as the significance and importance of its international model for the Republic of Armenia, taking into account the fact that the presumption of innocence existing in international practice should find place in the domestic legislation of the Republic of Armenia. And in the end, based on the above research, we have tried to unite the most acceptable formulations in each of the international

documents regarding the presumption of innocence and on their basis to give our own formulation of the presumption of innocence.

Keywords: Presumption of innocence, the international legal practice of presumption of innocence, Universal Declaration of Human Rights, European Convention on Human Rights, everyone has the right to be considered innocent.

Ներկայացվել է՝ 02.04.2022 թ.
Գրախոսվել է՝ 20.05.2022 թ.

ՄԻԵԴ ՎՃԻՌՆԵՐԻ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Առաքելյան Ա. Հ.
ասպիրանտ
ՀՀ ՊԿԱ, Իրավագիտության ամբիոն
arpinearakelyan.h@gmail.com

Ամփոփագիր

Այս հոդվածի շրջանակներում վեր է հանվում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների գիտագործնական և գիտատեսական նշանակության բովանդակային ծանրաբեռնվածությունը, ինչը հեղինակի կողմից ներկայացվում է եռատարր կառուցվածքով՝

- *Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռները՝ որպես մարդու իրավունքների գիտության հետագա զարգացման դոկտրինների գեներատորներ,*
- *Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռները՝ որպես կոնվենցիոն համակարգի և մարդու իրավունքների պաշտպանության ոլորտի իրավաքաղաքական ռազմավարության հեռանկարային զարգացման ուղենիշներ,*
- *Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռները՝ որպես խնդրո առարկա իրավական հարցի առնչությամբ միջազգային-իրավական միտումների, միջազգային իրավական փաստաթղթերում ամրագրված սկզբունքների, երբեմն նաև եվրոպական երկրների լավագույն փորձի ամփոփումներ:*

Հաջորդիվ ինքնուրույն ուսումնասիրության են ենթարկվում բոլոր երեք տարրերը՝ ներկայացնելով ՄԻԵԴ վճիռների գիտագործնական և գիտատեսական նշանակության բովանդակությունը ՄԻԵԴ պրակտիկայի վերլուծության լույսի ներքո: Արդյունքում գալիս ենք այն եզրահանգման, որ Եվրոպական դատարանի վճիռներն իրենց բնույթով ավելին են քան կոնվենցիոն դրույթների «պաշտոնական» մեկնաբանությունները, ունեն շատ հստակ արտահայտված գիտագործնական բնույթ և հանդիսանում են խնդրո առարկա իրավական հարցի առնչությամբ միջազգային իրավական միտումների, միջազգային իրավական փաստաթղթերում ամրագրված սկզբունքների, երբեմն նաև Եվրոպական երկրների լավագույն փորձի ամփոփումներ:

Հիմնաբառեր. ՄԻԵԴ վճիռներ, մարդու իրավունքների գիտության զարգացում, միազգային-իրավական միտումներ:

Ներածություն

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան կամ ՄԻԵԴ) վճիռների բնութագրիչ հատկանիշների շարքում ՄԻԵԴ վճիռների գիտագործնական և գիտատեսական նշանակությունը յուրահատուկ տեղ ունի: Սա պայմանավորված է այն հանգամանքով, որ Եվրոպական դատարանի վճիռներն անհատական գանգատների հիման վրա գործը լուծող դատական ակտ լինելուց բացի շատ հաճախ հանդես են գալիս որպես կոնկրետ գործով կիրառման ենթակա կոնվենցիոն դրույթների առնչությամբ գիտական մոտեցումների, դոկտրինների, միջազգային լավագույն փորձի և այլնի ամփոփումներ, արժեքավոր իրա-

վահամեմատական վերլուծություններ, որոնք հիմք են ծառայում բազմաթիվ պետություններում իրավունքի զարգացման և ներպետական իրավական համակարգերի կատարելագործման համար: Այս հոդվածի շրջանակներում փորձ է արվել վեր հանել Եվրոպական դատարանի վճիռների գիտագործնական և գիտատեսական նշանակության բովանդակային ծանրաբեռնվածությունը: Ընտրված թեմայի արդիականությունը պայմանավորված է Եվրոպական դատարանի պրակտիկայում օրեցօր արծարծվող նոր իրավահարաբերություններով, որոնց վերաբերյալ իրավական գնահատականներ ձևավորելով, ՄԻԵԴ-ը նպաստում է մարդու իրավունքների գիտության բնագավառում նոր մոտեցումների և դոկտրինների ձևավորմանը:

Մեր համոզմամբ՝ Եվրոպական դատարանի վճիռների գիտագործնական/գիտատեսական հատկանիշի իմացաբանական ծանրաբեռնվածությունը շատ ընդգրկուն է, հետևապես առավել մասնավորեցված հետազոտության իրականացման համար վերջինիս բովանդակությունը պայմանականորեն կարելի է բաժանել երեք բաղադրիչի: Դրանք են՝

- Եվրոպական դատարանի վճիռները՝ որպես մարդու իրավունքների գիտության հետագա զարգացման դոկտրինների գեներատորներ,
- Եվրոպական դատարանի վճիռները՝ որպես կոնվենցիոն համակարգի և ԵԽ մարդու իրավունքների պաշտպանության ոլորտի իրավաքաղաքական ռազմավարության հեռանկարային զարգացման ուղենիշներ,
- Եվրոպական դատարանի վճիռները՝ որպես խնդրո առարկա իրավական հարցի առնչությամբ միջազգային-իրավական միտումների, միջազգային իրավական փաստաթղթերում ամրագրված սկզբունքների, երբեմն նաև եվրոպական երկրների լավագույն փորձի ամփոփումներ:

Եվրոպական դատարանի վճիռները՝ որպես մարդու իրավունքների գիտության հետագա զարգացման դոկտրինների գեներատորներ: Այս բաղադրիչի քննարկման շրջանակներում թերևս լավագույն օրինակներից մեկը հայեցողության ազատության սահմանների միջազգային-իրավական դոկտրինն է, որի վերաբերյալ առաջին ձևակերպումները դրսևորվել են Մարդու իրավունքի եվրոպական դատարանի վճիռներում: Եվրոպական դատարանի կողմից այս դոկտրինն ամենից հաճախ արծարծվում է այն վճիռներում, որոնք առնչվում են պետության կողմից Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով (այսուհետ՝ Կոնվենցիա) երաշխավորված իրավունքների սահմանափակմանը և անհրաժեշտություն է առաջանում գնահատել կիրառված սահմանափակման համաչափությունը [*Greer, 20*]:

Եվրոպական դատարանի առաքելությունն է Կոնվենցիայով ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանությունն իրականացնել մի կողմից հաշվի առնելով պետությունների ինքնիշխանությունը, մյուս կողմից՝ ամրագրված իրավունքների համընդհանուր բնույթը, և վերջապես երրորդ կողմից՝ կոնվենցիայի անդամ պետությունների առանձնահատկությունները: Նշված «եռանկյունու» սահմաններում արդյունավետ գործունեություն իրականացնելու և Կոնվենցիայի պաշտպանի իր առաքելությունը պատշաճ իրականացնելու համար Եվրոպական դատարանը կիրառության մեջ է դրել և տասնամյակներ շարունակ արդյունավետ կերպով կիրառում է մի շարք իրավական գործիքներ ու սկզբունքներ [*Կոստանյան, 56*]: Դրանցից մեկն էլ հայեցողության ազատության սահմանների սկզբունքն է, որի հիմնական բովանդակությունը հանգում է հետևյալին՝ Կոնվենցիայով նախատեսված որոշակի հիմքերի

և պայմանների առկայության դեպքում պետությունը պետք է օժտված լինի որոշակի հայեցողությամբ՝ կիրառելու որոշակի սահմանափակումներ կամ ձեռնպահ մնալու որոշակի պարտականությունների կատարումից:

Հայեցողության ազատության սահմանների նախատեսումը հնարավորություն է տալիս ազգային դատարաններին ապահովել ներպետական մակարդակում գործերի քննության արդյունավետությունը, քանի որ ազգային մարմինները, ի համեմատություն միջազգային կազմակերպությունների և ատյանների, գտնվում են շատ ավելի շահեկան դրության մեջ իրավիճակը և դրանից բխող կոնկրետ սահմանափակումների անհրաժեշտությունը գնահատելիս [*Ludi v. Suisse գործով ՄԻԵԴ վճիռ*]: Հետևաբար, որոշումներ ընդունելիս պետությունները պետք է օժտված լինեն որոշակի ինքնուրույնությամբ, ինչը միաժամանակ չպետք է դուրս գա Կոնվենցիայի շրջանակներից: Այնուամենայնիվ, պետությունների հայեցողության ազատության սահմաններն ու ծավալը նույնը չեն բոլոր դեպքերում: Կախված խնդրո առարկա հարցի բնույթից՝ պետության հայեցողության ազատության սահմանները կարող են լինել լայն կամ սահմանափակ: Օրինակ, բոլոր այն դեպքերում, երբ հարցը վերաբերում է որոշակի առումով խնդրահարույց հարաբերությունների, ինչպես օրինակ՝ հղիության ընդհատումն է կամ անձի սեփականության իրավունքի արդարացված սահմանափակումը [*Leach, 160-161*], պետություններն օժտված են հայեցողության ավելի լայն ազատությամբ և փոխարենը ՄԻԵԴ-ը ճանաչում է պետության հայեցողական ազատության խիստ սահմանափակվածությունը, օրինակ՝ Sunday Times գործով արդարադատության համակարգի հեղինակությանն առնչվող արտահայտությունները Կոնվենցիայի 10-րդ հոդվածով երաշխավորված արտահայտվելու ազատության շրջանակներում պաշտպանության ենթակա չդիտարկելով:

Հայեցողության ազատության դոկտրինի վերաբերյալ վերը նշված տեսական մոտեցումներն իրենց գործնական դրսևորումներն են ստացել Եվրոպական դատարանի մի շարք վճիռներում՝ նպաստելով մարդու իրավունքների գիտության հետագա զարգացմանը:

Եվրոպական դատարանի վճիռները՝ որպես կոնվենցիոն համակարգի և ԵԽ մարմինների մարդու իրավունքների պաշտպանության ոլորտի իրավաքաղաքական ռազմավարության հեռանկարային զարգացման ուղենիշներ: Եվրոպական դատարանի դատազորությունը տարածվում է այն բոլոր հարցերի վրա, որոնք վերաբերում են Կոնվենցիայի և նրան կից Արձանագրությունների դրույթների մեկնաբանմանն ու կիրառմանը: Կոնվենցիայի ընդունումից ի վեր հասարակական հարաբերությունների մեծ տեմպով զարգացումը պայմանավորում է Եվրոպական դատարանի կողմից կոնվենցիոն դրույթները մեկնաբանելիս առավել շրջահայաց և համընդգրկուն մոտեցում դրսևորելու անհրաժեշտությունը: Սրանով պայմանավորված՝ Եվրոպական դատարանը հաճախ շատ ավելի շահեկան դիրքերից է կարողանում գնահատել այս կամ այն հարցի առնչությամբ միասնական եվրոպական համաձայնության առկայությունը կամ բացակայությունը, վեր հանել և մատնանշել մարդու իրավունքների պաշտպանության ոլորտի հեռանկարային զարգացման ուղիները: Վերոշարադրյալը Եվրոպական դատարանի պրակտիկայում լավագույնս դրսևորվել է որպես օրինակ էկոլոգիական իրավունքներին առնչվող գործերով:

Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի տեքստի մշակման և ընդունման տարիներին շրջակա միջավայրը դեռևս հռչակված չէր որպես հատուկ իրավական պաշտպանության կարիք ունեցող արժեք: Կոնվենցիայի հիմնական նպատակն էր սահմանել իրավական կանոնների մի համա-

կարգ, որն ուղղված է պետության ոտնձգություններից պաշտպանելու անհատի հիմնական իրավունքներն ու ազատությունները, ժողովրդավարական արժեքները: Այդ ժամանակաշրջանում անհատի իրավունքների ավանդական հասկացությունը բոլորովին կապված չէր էկոհամակարգի հավասարակշռության, մթնոլորտային օդի մաքրության, շրջակա միջավայրի գլոբալ կամ տարածքային հիմնախնդիրների լուծման հետ: Եվ հենց այդ պատճառով էլ տևական ժամանակ Կոնվենցիան ընդհանրապես չէր անդրադառնում բնապահպանական խնդիրներին, Եվրոպական դատարանն էլ իր հերթին նույնիսկ չէր փորձում որևէ կապ տեսնել Կոնվենցիայով սահմանված իրավունքների և շրջակա միջավայրի պահպանության միջև [*Գեղամյան, 212*]:

Սկզբնական ժամանակահատվածում ոչ Հանձնաժողովը և ոչ Եվրոպական դատարանը նույնիսկ չէին փորձում որևէ կերպ աղերսներ գտնել էկոլոգիական իրավունքների և Կոնվենցիայով սահմանված հիմնական իրավունքների ու ազատությունների միջև: Ավելին, X and Y v. Germany գործով Եվրոպական հանձնաժողովն ուղղակիորեն ամրագրել է, որ շրջակա բնական միջավայրի պահպանության հետ կապված իրավունքները, որպես այդպիսին, ընդգրկված չեն Կոնվենցիայով պաշտպանվող ու երաշխավորվող իրավունքների շարքում: Իրավիճակը փոխվեց 1995 թվականից հետո, երբ Եվրոպական դատարանը սկսեց բնապահպանական իրավունքները և հատկապես առողջ և անվտանգ շրջակա միջավայրի իրավունքը դիտարկել Կոնվենցիայի 2-րդ հոդվածով երաշխավորվող կյանքի իրավունքին [*L.C.B. v. the United Kingdom գործով ՄԻԵԴ վճիռ*], 3-րդ հոդվածով ամրագրված խոշտանգումների, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի արգելքին [Jalloh v Germany գործով ՄԻԵԴ Մեծ պալատի վճիռ], [*Kudła v. Poland գործով ՄԻԵԴ Մեծ պալատի վճիռ*], [*Mouisel v. France գործով ՄԻԵԴ վճիռ*], 8-րդ հոդվածով երաշխավորվող անձնական և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքին [*Brânduşe v. Romania գործով ՄԻԵԴ վճիռ*], [*Hatton and Others v. the United Kingdom գործով ՄԻԵԴ վճիռ*], [*Cordella et al. v. Italy գործով ՄԻԵԴ վճիռ*], Կոնվենցիային կից թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով երաշխավորվող սեփականության պաշտպանության իրավունքին [*Depalle v. France գործով ՄԻԵԴ վճիռ*], [*Brosset-Triboulet and Others v. France գործով ՄԻԵԴ վճիռ*] սերտորեն կապված իրավահարաբերությունների համատեքստում: Այսօր արդեն Եվրոպական դատարանի վճիռներում զարգացած տրամաբանության և իրավաընկալման շնորհիվ ոչ միայն արդյունավետ կերպով երաշխավորվում և պաշտպանվում են էկոլոգիական իրավունքները, այլ ավելին, 2021 թվականի սեպտեմբերից Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի նախաձեռնությամբ մեկնարկել են Եվրոպական կոնվենցիային կից նոր արձանագրության մշակման աշխատանքները, որով նախատեսվում է լրացնել Եվրոպական կոնվենցիայի բովանդակությունը՝ ուղղակիորեն ամրագրելով առողջ շրջակա միջավայրի իրավունքը [*ԵԽԽՎ բանաձև*]: Ահա այս մեկ օրինակը ակնհայտորեն վկայում է Եվրոպական դատարանի բացառիկ դերի ու վերջինիս կողմից կայացվող վճիռների իրավական ազդեցության մասին:

Եվրոպական դատարանի վճիռները՝ որպես խնդրո առարկա իրավական հարցի առնչությամբ միջազգային իրավական միտումների, միջազգային իրավական փաստաթղթերում ամրագրված սկզբունքների, երբեմն նաև Եվրոպական երկրների լավագույն փորձի ամփոփումներ: Եվրոպական դատարանի վճիռների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հաճախ վճռում արտացոլվող կիրառելի իրավական կարգավորումնե-

ը, չսահմանափակվելով կիրառելի ներպետական օրենսդրությամբ, ընդգրկում են նաև համապատասխան միջազգային փաստաթղթերը, պրակտիկան երբեմն նաև Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների համեմատական իրավունքը: Այս ճանապարհով Եվրոպական դատարանն ապահովում է իր առջև բարձրացված իրավական հարցի վերաբերյալ բազմավեկտոր և համընդգրկուն դիրքորոշման արտահայտումն իր վճռում:

Որպես օրինակ դիտարկենք Հայաստանի Հանրապետության վերաբերյալ կայացված վճիռներից մի քանիսը: Այսպես, *«Նիկոլյանն ընդդեմ Հայաստանի»* գործով գնահատելու համար թե արդյոք խախտվել են դիմումատուի՝ անգործունակ ճանաչված անձի արդար դատաքննության և անձնական ու ընտանեկան կյանքը հարգելու իրավունքները, Եվրոպական դատարանը, inter alia, հարցը դիտարկել է նաև Միավորված ազգերի կազմակերպության 2006թ. «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի կարգավորումների, 1999 թվականի փետրվարի 23-ին Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի կողմից ընդունված «Չափահաս անգործունակ անձանց իրավական պաշտպանության վերաբերյալ սկզբունքների մասին» թիվ R(99) 4 հանձնարարականի, վերջինիս բացատրական հուշագրի և քսան եվրոպական երկրների իրավական համակարգերի համեմատական վերլուծության վրա:

Մեկ այլ՝ *«Աշոտ Հարությունյանն ընդդեմ Հայաստանի»* գործով 2010 թվականի հունիսի 10-ի վճռով Եվրոպական դատարանն արձանագրել է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 3րդ հոդվածով երաշխավորվող խոշտանգումների արգելքի խախտում առ այն, որ դիմումատուին քրեակատարողական հիմնարկում անհրաժեշտ բժշկական օգնություն չի ցուցաբերվել: Նման եզրահանգման գալու համար Եվրոպական դատարանը համակարգային ուսումնասիրության առարկա է դարձրել ինչպես ՀՀ ներպետական օրենսդրության վերաբերելի կարգավորումները, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունում քրեակատարողական հիմնարկներում առողջապահական ծառայությունների համարժեքության, բժշկական օգնությունից օգտվելու հնարավորության և այլնի առնչությամբ Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեի (ԽԿԿ) 3-րդ ընդհանուր զեկույցի շրջանակներում արված դիտարկումները, 2002 թվականին Հայաստան կատարած այցելության վերաբերյալ ԽԿԿ-ի զեկույցը:

Եզրակացություն

Ասվածը ևս մեկ անգամ ապացուցում է, որ Եվրոպական դատարանի վճիռներն իրենց բնույթով ավելին են քան Կոնվենցիոն դրույթների «պաշտոնական» մեկնաբանություններ, ունեն շատ հստակ արտահայտված գիտագործնական բնույթ և հանդես են գալիս որպես որպես խնդրո առարկա իրավական խնդրի առնչությամբ միջազգային իրավական միտումների, միջազգային իրավական փաստաթղթերում ամրագրված սկզբունքների, երբեմն նաև Եվրոպական երկրների լավագույն փորձի ամփոփումներ:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Գ. Կոտանյան** «Պետության հայեցողությունը և դրա սահմանները Եվրոպական կոնվենցիոն կարգավորման պայմաններում», Մենագրություն, ՀՀ ԳԱԱ հրատարակչություն, Երևան, 2017թ., 141 էջ:

2. **Steven Greer**, “The margin of appreciation: interpretation and discretion under the European Convention on Human Rights” Reader in Law, University of Bristol, United Kingdom, Council of Europe publishing. 2000, 60 pages
3. **Philip Leach** “Taking a Case to the European Court of Human Rights”, 4th edition, Oxford University Press, Oxford 2018, 619 pages
4. **Օլիմպիա Գեղամյան** «Էկոլոգիական իրավունքները Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռներում», ԵՊՀ, ԵՊՀ Իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորա-դասախոսական կազմի գիտաժողովի նյութեր, 2016թ. http://ysu.am/files/20Olimpia_Geghamyan.pdf
5. ՄԻԵԴ Պալատի վճիռը Ludi v. Suisse գործով, գանգատ թիվ 12433/86
6. ՄԻԵԴ Պալատի վճիռը L.C.B. v. the United Kingdom գործով, գանգատ թիվ 23413/94
7. ՄԻԵԴ Պալատի վճիռը Depalle v. France գործով, գանգատ թիվ 34044/02
8. ՄԻԵԴ Պալատի վճիռը Brosset-Triboulet and Others v. France գործով, գանգատ թիվ 34078/02
9. ՄԻԵԴ Պալատի վճիռը Mouisel v. France գործով, գանգատ թիվ 67263/01
10. ՄԻԵԴ Պալատի վճիռը Brânduşe v. Romania գործով, գանգատ թիվ 6586/03
11. ՄԻԵԴ Պալատի վճիռը Hatton and Others v. the United Kingdom գործով, գանգատ թիվ 36022/97
12. ՄԻԵԴ Պալատի վճիռը Cordella et al. v. Italy գործով, գանգատներ թիվ 54414/13 և 54264/15
13. ՄԻԵԴ Մեծ պալատի վճիռը Jalloh v Germany գործով, գանգատ թիվ 54810/00
14. ՄԻԵԴ Մեծ պալատի վճիռը Kudła v. Poland գործով, գանգատ թիվ 30210/96
15. Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի (ԵԽԽՎ) կողմից առաջարկվող բանաձևի նախագիծը, 31.05.2022թ. https://assembly.coe.int/nw/xml/XRef/Xref-XML2HTML-en.asp?fileid=29409&lang=en

SCIENTIFIC-PRACTICAL AND SCIENTIFIC-THEORETICAL SIGNIFICANCE OF THE JUDGMENTS OF THE ECTHR

Arakelyan A.H.
Postgraduate student
PAARA, Chair of Law
arpinearakelyan.h@gmail.com

Abstract

Within the framework of this article, the content inclusion of the scientific-practical and scientific-theoretical significance of the decisions of the European Court is revealed, which from the author's perspective seems to be a three-component construction In particular:

1. Judgments of the European Court as generators of doctrines for the further development of human rights science

2. Judgments of the European Court as guidelines for the perspective development of the Convention և CoE's legal-political strategy in the field of human rights protection;

3. Judgments of the European Court as summaries of international legal trends wnd principles enshrined in international legal instruments, and sometimes summaries of best practices in European countries.

Further, all three elements are subject to independent research, thus presenting the scientific-practical and scientific-theoretical significance of the decisions of the ECtHR under the light of an analysis of the practice of the ECtHR. As a result, we conclude that the judgments of the European Court are more than

"formal" interpretations of the provisions of the Convention, have a very clear scientific-practical nature, act as a matter of international legal tendencies, principles enshrined in international legal documents and sometimes are also summaries of the best practices of European countries.

Keywords: decisions of the ECtHR, development of human rights science, international legal development trends.

Ներկայացվել է՝ 12.04.2022 թ.
Գրախոսվել է՝ 20.05.2022 թ.

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԵՎՈՐ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Հակոբյան Դ.
հայցորդ
Արցախի պետական համալսարան
d.hakobyan2018@gmail.com

Ամփոփագիր

Հոդվածում փորձ է արվել ներկայացնել սահմանադրական կարգի հիմունքների, որպես Արցախի Հանրապետության սահմանադրական կարևոր ինստիտուտի նշանակությունն ու բովանդակությունը, այն զուգահեռելով առաջադեմ երկրների սահմանադրական պրակտիկայի հետ: Փորձ է արվել նաև պարզել «հասարակական կարգ» և «սահմանադրական կարգ» հասկացությունների հարաբերակցությունը և սահմանադրություններում այդ ձևակերպումների ամրագրման նպատակահարմարությունը: Նշված հասկացությունների պրակտիկ գործածության (սահմանադրություններում ամրագրելու) հարցերը մեծ հետաքրքրություն են ներկայացնում հատկապես հետխորհրդային երկրներում:

Առանձնակի կարևորվում է նաև Սահամանադրությամբ «Սահմանադրական կարգի հիմունքները» գլխի նորմերի իրավաբանական ուժի և այդ համատեքստում Սահմանադրության մյուս դրույթների նկատմամբ ավելի բարձր իրավաբանական ուժ ունենալու հանգամանքը:

Կարծում ենք, որ սահմանադրական կարգի հիմունքների ներքին կառուցվածքը, դրանց հստակեցումն ու ամրագրումը, այդ բաժնի նորմերի ամբողջականությունը կարևոր երաշխիք են ներսահմանադրական համակարգային խնդիրների լուծման համար: Արցախի Հանրապետության պարագայում, որպես անցումային ժամանակահատվածում ու կայացման փուլում գտնվող երկրի համար, հատկապես կարևոր է սահմանադրաիրավական ինստիտուտների ու նորմերի ճիշտ ամրագրման հրամայականը:

Հոդվածում եզրահանգում է արվել սահմանադրական կարգի սահմանադրաիրավական ամրագրման նպատակի, հասարակական հարաբերությունների հատուկ կարգավորիչի և որպես Սահմանադրությամբ ամրագրվող բոլոր ինստիտուտների համար ելակետային նշանակություն ունենալու իրավական արժեքի վերաբերյալ:

Հիմնաբառեր. սահմանադրություն, կարգ, սահմանադրական կարգ, հասարակական կարգ, սահմանադրական կարգի հիմունքներ, հասարակություն, պետություն, իրավաբանական ուժ:

Ներածություն

Արցախի Հանրապետության Սահմանադրությամբ «Սահմանադրական կարգի հիմունքները» գլխի նորմերի միջոցով ընդհանուր գծերով կարգավորվում են հասարակական այնպիսի հարաբարերություններ, որոնք կապված են քաղաքական, տնտեսական, սոցիալական և հոգևոր ոլորտների հետ: Այդ նորմերն արտահայտում են Արցախի Հանրապետության հասարակության և պետության հիմնական բնութագրիչ գծերը: Այսպես, Սահմանադրության 163-րդ հոդվածի համաձայն

փոփոխման ենթակա չեն՝ 1-4-րդ, ինչպես նաև 163-րդ հոդվածները, որով պայմանավորված հիշյալ գլխի իրավանորմերը ձեռք են բերում հիմնարար նշանակություն: Սահմանադրական այս ինստիտուտը ստեղծում է իրավական հիմք հասարակության բոլոր ուժերի համախմբման, պետության, ժողովրդի, հասարակության, յուրաքանչյուր քաղաքացու և մարդու միջև մշտական փոխհարաբերությունների ապահովման համար:

Սույն գիտական հոդվածի հետազոտության առարկան են կազմում սահմանադրական կարգի հիմունքները ամրագրող Արցախի Հանրապետության սահմանադրական նորմերը, ինչպես նաև առաջադեմ երկրների սահմանադրական պրակտիկան:

Սույն գիտական հոդվածի հետազոտության օբյեկտը այնպիսի հասարակական հարաբերություններն են, որոնք կազմում են Արցախի Հանրապետության քաղաքական, տնտեսական, սոցիալական և հոգևոր հիմքերը:

Ուսումնասիրել Արցախի Հանրապետության սահմանադրական կարգի հիմունքները՝ որպես սահմանադրաիրավական կարևորագույն ինստիտուտներից մեկը:

Ներկա ժամանակաշրջանում սահմանադրական իրավունքի գիտությունը սկսել է ակտիվ հետազոտել սահմանադրական կարգի հիմունքների հետ կապված հարցերը: Առաջին հերթին դա պայմանավորված է նշված ինստիտուտի դերով և նշանակությամբ: Սույնով փորձ է արվում բացահայտել սահմանադրական կարգի հիմունքների հասկացությունը և էությունը, ինչպես նաև այն դիտարկել որպես սահմանադրական կարևորագույն ինստիտուտի:

Հարկ է ընդգծել, որ պետությունում սահմանադրության առկայությունն ինքնին հիմք չէ տվյալ պետությունը սահմանադրական համարելու համար: Սահմանադրական պետությունն առաջին հերթին բնութագրվում է նրանով, որ դրանում ապահովված է պետության ենթարկվելը իրավունքին: Սակայն որպեսզի պետությունն ամբողջությամբ ենթարկվի իրավունքին, անհրաժեշտ է որ դա ապահովված լինի որոշակի գործուն իրավական երաշխիքներով: Ցանկանում ենք ընդգծել, որ այդ երաշխիքներն իրենց ամբողջության մեջ հենց կազմում են սահմանադրական կարգը: Ուստի փորձենք պարզել, թե ինչով է բնութագրվում Արցախի Հանրապետության սահմանադրության սահմանադրական կարգի հիմունքները որպես պետա-իրավական կարևորագույն ինստիտուտի:

Սահմանադրական կարգի հիմունքները, որպես կարևոր և հիմնարար սահմանադրաիրավական ինստիտուտ, կազմում են Արցախի Հանրապետության Սահմանադրության բովանդակային հիմքը: Հետևելով արտասահմանյան երկրների դրական փորձին, Արցախի Հանրապետության Սահմանադրության 1-ին գլուխն ամրագրել է սահմանադրական կարգի հիմունքները, որում արտացոլված են պետության ժողովրդավարական բնույթը, պետական իշխանության կազմակերպման և իրականացման մեխանիզմները, հասարակության քաղաքական, տնտեսական և սոցիալական հարաբերությունների ընդհանուր սկզբունքները, սահմանադրական մյուս ինստիտուտների գործունեության երաշխիքների մեխանիզմը և այլն: «Սահմանադրական կարգի հիմունքները» գլխի նորմերով կարգավորվում են այնպիսի հասարակական հարաբերություններ, որոնք կազմում են Արցախի Հանրապետության քաղաքական, տնտեսական, սոցիալական և հոգևոր հիմքերը: Դրանք արտացոլում են արցախյան հասարակության և պետության կարևոր առանձնահատկությունները:

Արցախի Հանրապետության Սահմանադրությամբ «Սահմանադրական կարգի հիմունքները» գլխի նորմերի ավելի բարձր

(Սահմանադրության մյուս գլուխների իրավանորմերի համեմատ) իրավաբանական ուժի վերաբերյալ դրույթ ամրագրված չէ: Սակայն հարկ է նկատել, որ ինչպես արդեն նշեցինք այդ նորմերի միջոցով ընդհանուր գծերով կարգավորվում են հասարակական այնպիսի հարաբարերություններ, որոնք կապված են քաղաքական, տնտեսական, սոցիալական և հոգևոր ոլորտների հետ: Այդ նորմերն արտահայտում են Արցախի Հանրապետության հասարակության և պետության հիմնական բնութագրիչ գծերը: Այսպես, Սահմանադրության 163-րդ հոդվածի համաձայն փոփոխման ենթակա չեն՝ 1-4-րդ, ինչպես նաև 163-րդ հոդվածները, որով պայմանավորված հիշյալ գլխի իրավանորմերը ձեռք են բերում հիմնարար նշանակություն: Սահմանադրական այս ինստիտուտը ստեղծում է իրավական հիմք հասարակության բոլոր ուժերի համախմբման, պետության, ժողովրդի, հասարակության, յուրաքանչյուր քաղաքացու և մարդու միջև մշտական փոխհարաբերությունների ապահովման համար: Պետք է նկատել, որ որոշ երկրների սահմանադրություններում սահմանադրական կարգի հիմունքները գլխում ամփոփված նորմերը, ի համեմատ սահմանադրության մյուս նորմերի, հստակ ամրագրված են որպես ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող: Օրինակ՝ Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության 16-րդ հոդված:

Այսպես, Սահմանադրության առաջին հոդվածի համաձայն՝ Արցախի Հանրապետությունն ինքնիշխան, ժողովրդավարական, իրավական, սոցիալական պետություն է: Երկրորդ հոդվածն ամրագրում է իշխանության ժողովրդին պատկանելու գաղափարը, երրորդ հոդվածի առաջին մասը մարդուն հռչակում է որպես բարձրագույն արժեք: Նույն հոդվածի երկրորդ մասով սահմանվում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգման ու պաշտպանության գործում հանրային իշխանության պարտականությունը: Սահմանադրության չորրորդ հոդվածը սահմանում է պետական իշխանության իրականացման սահմադրական սկզբունքը, որի համաձայն պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման ու հավասարակշռման հիման վրա: Սահմանադրական կարգի հիմունքները, գլխի այս և մյուս իրավանորմերի վերլուծությունը հիմք է տալիս պնդելու, որ սահմանադրական կարգի հիմունքները գլխի նորմերը հանդիսանում են անկյունաքարային, իրավական կարևոր կողմնորոշիչ հասարակական կյանքի բազմակողմ զարգացման և փոխակերպման, ժամանակակից ժողովրդավարական պետության կերտման, պետական և հասարակական կյանքի կառավարման բնագավառում պետության գործունեության ընդհանուր սկզբունքների, մեթոդների կատարելագործման, ինչպես նաև ներպետական կազմակերպակառուցվածքային մոտեցումների հարցում [Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի դրույթները, 124-125, 228-229]:

Արցախի Հանրապետության Սահմանադրությունում «սահմանադրական կարգի հիմունքները» գլխի ամրագրմամբ ոչ միայն պահպանվում է որոշ գաղափարների առաջնահերթությունը (օր. Ժողովրդաիշխանության, իշխանությունների տարանջատման), այլև որոշակի համակարգային մոտեցում է ցուցաբերվում սահմանադրության ընդհանուր նյութի նկատմամբ: Խոսքը վերաբերվում է հասարակության քաղաքական, տնտեսական և սոցիալական հիմքերը սահմանող սահմանադրական նորմերի համախմբմանը սահմանադրության առանձին կառուցվածքային մասերում (գլուխ, բաժին):

Հարկ է նկատել, որ թեև ժամանակակից ոչ բոլոր սահմանադրություններն ունեն պետության և հասարակության բնութագրիչ

գծերն ամրագրող սահմանադրական առանձին մասեր կամ կառուցվածքային ինստիտուտներ, որոշ երկրների սահմանադրություններում առկա են առանձին գլուխներ, որոնք թեկուզ ունեն տարբեր անվանումներ, սակայն ներառում են նմանատիպ հասարակական հարաբերություններ կարգավորող նորմեր: Օրինակ. «Պետության քաղաքական, տնտեսական և սոցիալական հիմքերը»՝ Կուբայի 1976 թվականի Սահմանադրություն, «Քաղաքականությունը», «Տնտեսությունը», «Մշակույթը»՝ ՉԺԴ Հանրապետության 1972 թվականի Սահմանադրություն, «Հասարակությունը և պետությունը»՝ Լիտվայի 1992 թվականի Սահմանադրություն, «Տնտեսական և ֆինանսական կարգը»՝ բրազիլիայի 1988 թվականի Սահմանադրություն: Առանձին դեպքերում հասարակական հիմնարար հարաբերություններն ամրագրող սահմանադրական նորմեր բովանդակող սահմանադրական ինստիտուտները կրում են «Ընդհանուր դրույթներ», երբեմն «Հիմնարար դրույթներ» կամ «Հիմնական սկզբունքներ» անվանումները (օր. Իսպանիայի 1978 թվականի Սահմանադրություն, Հունաստանի 1975 թվականի Սահմանադրություն, Իտալիայի 1947 թվականի Սահմանադրություն) [Чиркин, 128-135], [*Конституции буржуазных государств, 124-126, 276-278, 340*]: «Սահմանադրական կարգ» հասկացությանը ուղղակի ձևակերպմամբ հանդիպում ենք Գերմանիայի Դաշնության 1949 թվականի Սահմանադրությունում: Նման ձևակերպում առկա է Սահմանդրության 2-րդ հոդվածում, որտեղ ամրագրված է յուրաքանչյուրի ազատ զարգացումը, եթե դրանով չի ոտնահարվում սահմանադրական կարգը, 9-րդ հոդվածի 2-րդ մասում, որտեղ արգելվում է այնպիսի միավորումների ստեղծումը, որոնց նպատակը և խնդիրները հակասում են քրեական օրենսդրությանը կամ ուղղված են սահմադրական կարգի դեմ կամ էլ ժողովուրդների փոխըմբռնման գաղափարին և այլն:

Արցախի Հանրապետության պարագայում, որպես հետխորհրդային տարածքի վրա ձևավորված պետության, հետաքրքրական են հենց հետխորհրդային երկրների սահմանադրություններում ամրագրված մոտեցումները:

Այսպես, ԱՊՀ կազմակերպության անդամ երկրների սահմանադրություններում առկա են համապատասխան գլուխներ կամ բաժիններ, որոնք ամրագրում են հասարակական կյանքի հիմնական գծերը, թեև երբեմն «սահմանադրական կարգ» ձևակերպման ուղղակի ամրագրում բացակայում է: Այսպես օրինակ, Վրաստանի Հանրապետության 1995 թվականի, Ղազախստանի Հանրապետության 1995 թվականի, Ուկրաինայի Հանրապետության 1996 թվականի սահամադրություններն ունեն «Ընդհանուր դրույթներ» վերտառությամբ համապատասխան գլուխներ: Իսկ Հայաստանի Հանրապետության 1995 թվականի, Բելոռուսի Հանրապետության 1996 թվականի, Տաջիկստանի Հանրապետության 1994 թվականի և Թուրքմենստանի Հանրապետության 1995 թվականի սահմանադրություններն ամրագրել են հասարակության և պետության հիմնական կառուցակարգերը, սոցիալական հարաբերությունների հիմնարար համակարգը և դրանց գործունեության սկզբունքները սահմանող «Սահմանադրական կարգի հիմունքները» գլուխը: Հիշատակված որոշ պետությունների կողմից սահմանադրական (հասարակական) կարգ տերմինի գործածումից հրաժարվելը, մեր կարծիքով, հավանաբար պայմանավորված է Խորհրդային միության փլուզումից հետո հետխորհրդային տարածքում «կարգ» տերմինի հանդեպ հայեցակարգային բացասական վերաբերմունքով: Այս, ինչպես նաև «հասարակական կարգ» բառակապակցությունը 90-ական թվականների իրավական գրականությունում առաջարկվում էր հանել սահմա-

նադրական իրավունքի հայեցակարգային գործիքակազմից: Դա հիմնավորվում էր նրանով, որ «հասարակական կարգ» հասկացությունն օգտագործվել է տոտալիտար սոցիալիզմի տեսությունում և պրակտիկայում, որտեղ այն «ազգայնացվեց» և որի պարագայում, ըստ երևույթին, բացառվել է քաղաքացիական հասարակության գոյությունը [*Баглай М.В. Конституционное право России: Учебник. М., 1997. էջ. 6*]: Հարկ է նկատել, որ Խորհրդային Միության 1936 թվականի Սահմանադրությունում հաջողվել է իրավաբանորեն ամրագրել հասարակական կարգին (կառուցակարգին) նվիրված դրույթներ [*Ржевский, 38*]: Դրա հետ միաժամանակ անցյալ դարի 60-70-ական թթ. «հասարակական մեխանիզմ» հասկացությունը և դրա մեկնաբանությունը իրավական գիտության մեջ ձեռք բերեց որոշակի քննադատական ուղղվածություն: Նկատվեց այդ հասկացության որոշակի արհեստականություն, քանի որ այն չէր ընդգրկում հասարակական և պետական ինստիտուտները, մատնանշվեց այդ հասկացության անհամապատասխանությունը հասկացությունների գիտական դասակարգմանը: Միաժամանակ, առաջարկվեց գիտական հետազոտություններում օգտագործել որոշ հեղինակների կողմից առավել ընդունելի «հասարակական-քաղաքական կարգ», «հասարակական կարգ» հասկացությունները [*Кутафин, 6-8*], [*Уманский, 78*]: Այս ամենը հիմք ընդունելով փորձենք պարզել «հասարակական կարգ» և «սահմանադրական կարգ» հասկացությունների հարաբերակցությունը և սահմանադրություններում այդ ձևակերպումների ամրագրման նպատակահարմարությունը:

«Կարգ», այդ թվում «հասարակական կարգ» հասկացությունները չունեն իմաստային առումով որևէ բացասական ընկալում, «խնդիրը կայանում է նրանում, թե սահմանադրական իրավունքում ինչպես են այդ հասկացություններն օգտագործվում, և դրա հետ կապված, ինչպիսի մեթոդներ, ձևակերպումներ և մոտեցումներ են կիրառվում» [*Чиркин, 32*]: Իրենց ժողովրդավարական հռչակած երկրների սահմանադրություններում առկա են «կարգ» բառի օգտագործման մի շարք դեպքեր (օր. բրազիլիայի սահմանադրության 7-րդ բաժինը կրում է «տնտեսական և ֆինանսական կարգի մասին», 8-րդը «սոցիալական կարգի մասին» անվանումները): Առանձին դեպքերում օգտագործվում է նաև «հասարակություն» տերմինը: Այսպես Պորտուգալիայի Հանրապետության սահմանադրության 2-րդ մասը կրում է «հասարակության տնտեսական կազմակերպումը» անվանումը: «Հասարակական կարգի հիմունքներ» տերմինը ներկայումս օգտագործվում է արտասահմանյան երկրների սահմանադրական իրավունքի վերաբերյալ մի շարք դասագրքերում: Հետխորհրդային երկրների Սահմանադրություններում «հասարակական կարգ» հասկացության փոխարինումը «սահմանադրական կարգ» հասկացությամբ, ըստ երևույթին պայմանավորված է, ոչ թե «հասարակական կարգ» հասկացության «քաղաքացիական հասարակություն» հասկացության փոխարինմամբ, ինչպես նշում է Չիրկինը, այլ մեր գնահատմամբ, ինչպես նշեցինք վերևում՝ փորձ է արվում հեռանալ խորհրդային ժամանակաշրջանի տոտալիտար սոցիալիզմի հասարակական-քաղաքական համակարգից: Այդ առումով Արցախի Հանրապետությունը հետևելով պետությունների առաջավոր փորձին, սահմանադրության մեջ ամրագրեց սահմանադրական կարգ ձևակերպումը: Միևնույն ժամանակ, փորձելով համադրել «սահմանադարական կարգ» հասկացության վերաբերյալ գրականության մեջ առկա սահմանումները, պետք է նկատել, որ այդ հասկացության սահմանման համար կարևոր նշանակություն ունեն սոցիալական բազային արժեքները: Այդ արժեքներն իրավունքի, սոցիալական և

պատմական արդարության, ժողովրդավարության և ժողովրդաիշխանության արժեքներն են: Սակայն, առաջին հերթին, սահմանադրական կարգն իրենից ներկայացնում է բարձրագույն արժեքի մարմնավորում: Արցախի Հանրապետության Սահմանադրությունում այդպիսի բարձրագույն արժեք է հանդիսանում մարդը:

Եզրակացություն

Վերոգրյալի հիման վրա կարող ենք եզրահանգել, որ ընդհանուր գծերով, իրավաբանական գրականության մեջ առկա ձևակերպումներն ու մոտեցումները հանգում են հետևյալին. սահմանադրական կարգը՝ «կարգ է, որի ժամանակ պահպանվում են մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, իսկ պետությունը գործում է համաձայն սահմանադրության» [*Баглай М.В. Конституционное право Российской Федерации. М., 1999. էջ. 98*], «դա պետության կազմակերպման ձև կամ միջոց է, որն ապահովում է պետության ենթարկվելն իրավունքին և բնութագրում է նրան որպես սահմանադրական պետություն» [*Козлова Е. И., Кутафин О.Е. Конституционное право России: Учебник. М., 1999. էջ. 76*]: Հայրենական սահմանադրական իրավունքի գիտության մեջ տրվում է սահմանադրական կարգ հասկացության հետևյալ սահմանումը՝ «սահմանադրական կարգը ժողովրդավարության սկզբունքներին համահունչ՝ հանրային իշխանության կողմից մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների երաշխավորումն ու պահպանումն է» [*ՀՀ սահմանադրական իրավունք, Գիրք առաջին, խմբ. Ն. Այվազյանի, Եր. 2016 թ., էջ 107*]: Նշված սահմանումները հիմք ընդունելով, կարող ենք ասել, որ սահմանադրական կարգը՝ պետության ժողովրդավարական, իրավական բնույթը, մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների պահպանումն ամրագրող սահմանադրական ինստիտուտ է: «Սահմանադրական կարգ» հասկացությունն իր մեջ ներառում է հասարակական հարաբերությունների ամբողջ համակարգը (քաղաքական, սոցիալական, տնտեսական, գաղափարախոսական և այլն), որոնք ձևավորվում են հասարակության և պետության ներսում, և որոնք կարգավորվում են իրավունքի տարբեր ճյուղերի նորմերով: Արցախի Հանրապետության Սահմանադրության 1-ին՝ «Սահմանադրական կարգի հիմունքները» գլուխը հանդիսանում է սահմանադրական ինստիտուտ, որն ամրագրում է ոչ թե սահմադրական կարգն ամբողջությամբ, այլ դրա հիմունքներն ու սկզբունքները: Անկասկած, իրավական նորմերի աստիճանային համակարգում առաջնային տեղն ու դերը պատկանում են սահմանադրության նորմերին, սակայն պետք է ընդունել որ սահմանադրական կարգի հիմունքները, որպես ինքնուրույն և միջճյուղային իրավական ինստիտուտ, իր կարգավորման առարկայի ծավալով թերևս նմանատիպը չունի իրավական համակարգում: Հետևաբար, եթե պետության Հիմնական օրենքն իրավունքի համակարգում զբաղեցնում է առաջնային տեղ, ապա սահմանադրական կարգի հիմունքները օրինաչափորեն ծառայում են որպես «սահմանադրություն» սահմանադրության համար, դրանով իսկ հանդիսանալով իրավական այն չափորոշիչը, որը հիմք ընդունելով անհրաժեշտ է գնահատել սահմանադրության բուն տեքստը:

Այսպիսով, կարող են ընդհանրացնել, որ Արցախի Հանրապետության սահմանադրական կարգի հիմունքները, որպես սահմանադրական ինստիտուտ, սահմանադրության համակարգված և հիմնարար նորմեր են, որոնք ամրագրում են ժողովրդավարական արժեքների և գաղափարների վրա հիմնված արցախյան հասարակության և պետության՝ քաղաքական, տնտեսական, սոցիալական և գաղափարախոսական հիմնադրույթները: Դրա-

նով իսկ, նշված դրույթներն հանդիսանում են Արցախի Հանրապետության կայացման այն ուղենիշը, որն հնարավորություն կտա տեղ զբաղեցնել զարգացած և ժողովրդավարական պետությունների կողքին:

«Սահմանադրական կարգի հիմունքները» գլուխը հանդիսանում է Արցախի Հանրապետության Սահմանադրության բովանդակային հիմքը: Թեկուզ որոշ երկրների Սահմանադրություններում նույնանուն գլուխ ուղղակիորեն ամրագրված չէ, սակայն կառուցվածքային տարր հանդիսացող գլուխները բովանդակային առումով բովանդակում են նմանատիպ հասարակական հարաբերությունները կարգավորող նորմեր:

Հետխորհրդային և արտասահմանյան երկրների Սահմանադրություններում օգտագործվող «սահմանադրական կարգ» և «հասարակական կարգ» հասկացությունների միջև սկզբունքային և բովանդակային տարբերություններ առկա չեն:

«Սահմանադրական կարգի հիմունքները» գլխի նորմերով կարգավորվում են այնպիսի հասարակական հարաբերություններ, որոնք կազմում են Արցախի Հանրապետության քաղաքական, տնտեսական, սոցիալական և հոգևոր հիմքերը: Դրանք արտացոլում են արցախյան հասարակության և պետության կարևոր առանձնահատկությունները:

Գրականության ցանկ

1. ՀՀ սահմանադրական իրավունք, Գիրք առաջին, խմբ. Ն. Այվազյանի, Եր. 2016 թ., էջ 416:
2. Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի դրույթները և դրանց իրացման հիմնական ուղղությունները Հայաստանի Հանրապետությունում (գիտագործնական հետազոտություն), Երևան, 2015, էջ 238:
3. Баглай М.В. Конституционное право России: Учебник. М., 1997. էջ . 832:
4. Баглай М.В. Конституционное право Российской Федерации. М., 1999. էջ . 832:
5. Козлова Е. И., Кутафин О.Е. Конституционное право России: Учебник. М., 1999. էջ 565:
6. Кутафин О.Е. Конституционные основы общественного строя и политики СССР. М., 1985. էջ 288,
7. Ржевский В.А. Общественный строй развитого социализма: Конституционное содержание, структура, регулирование. М., 1983. էջ . 247:
8. Уманский Я.Н. Советское государственное право. М., 1970. էջ . 448:
9. Чиркин В. Е. Конституционное право: Россия и зарубежный опыт. М.1998, 448 с.

FUNDAMENTALS OF THE CONSTITUTIONAL PROCEDURE OF THE REPUBLIC OF ARTSAKH AS A CONSTITUTIONAL IMPORTANT INSTITUTE

Hakobyan D.
Researcher
The Artsakh State University
d.hakobyan2018@gmail.com

Abstract

The article is aimed to present the meaning and the content of the principles of constitutional order as a possible constitutional institution of the Republic of Artsakh, paralleling it with the constitutional practice of advanced countries. Attempts have also been made to find out the ratio of the concepts of "public order" and "constitutional order" and the convenience of enshrining these formulations in constitutions. Issues

about the practical use of these concepts (enshrining in constitutions) are of great interest, especially in the Middle East.

The fundamentals of the Constitutional Order, the legal force of the norms of the chapter and the higher legal force over other provisions of the Constitution in that context are also of particular importance.

We consider that the internal structure of the foundations of the constitutional order, their clarification and reservation of the foundations of the Constitutional Order, the comprehension of the norms of that department can be a guarantee for the solution of intra-constitutional systemic problems. In the case of the Republic of Artsakh, as a country in transition and in the process of formation, the mandate to reinforcement constitutional institutions and norms is especially important.

In the article the conclusions are made about the purpose of the constitutional enshrinement of the constitutional order as a special regulator of the public order and emphasized the legal value of its initial significance is made for all the institutions enshrined in the Constitution.

Keywords: constitution, order, constitutional order, public order, basics of constitutional order, society, state, legal force.

Ներկայացվել է՝ 15.04.2022 թ.
Գրախոսվել է՝ 31.05.2022 թ.

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՆՐՈՒՅԹԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Նադոյան Ա. Ա.
հ.գ.թ. դոցենտ
ՀԵՀ, Հոգեբանության ամբիոն
a.nadoyan@mail.ru
Վարդանյան Ա. Գ.
մագիստրոս
ԵՊՀ, Ընդհանուր հոգեբանության ամբիոն
vardanyan_aida3@mail.ru

Ամփոփագիր

Մերօրյա տեխնոլոգիական առաջընթացի աշխարհը թույլ է տալիս մանիպուլյատորներին հետևողականորեն զարգացնել տեղեկատվական ենթակառուցվածքները և ագիտացիոն-քարոզչական գործողություններ վարելու հմտությունները: Ներգործություններին չտրվելը որոշակի ունակություններ, հոգեկան ամրություն և վարքի կայունություն է ենթադրում:

Ներկա ժամանակներում մեդիաները գրեթե աննկատ կերպով փոխում են մարդկանց կենսական դիրքորոշումները, կատարում են սոցիալական հանրության հայացքների արմատական փոփոխություններ՝ մարդու գիտակցության վրա համալիր ներգործության տարատեսակ տեխնոլոգիաների՝ որպես վարքի կառավարման և նրանց անհատական ու զանգվածային գիտակցության վրա ազդեցության միջոցների շնորհիվ:

Մարդկային գիտակցությունը կառավարող այդ միջոցներից մեկը, որը կոչվում է նաև «սև տեխնոլոգիա», մանիպուլյացիան է: Հանրույթի մանիպուլյացիան այժմ հանդիսանում է քաղաքական, տնտեսական, սոցիալական և գաղափարական ոլորտներում փոխհարաբերությունների կարգավորման նախընտրելի և շահավետ միջոցներից մեկը, որը միտված է հասարակության անդամների շահերի համաձայնեցմանը՝ օգտագործելով սոցիալապես ընդունված նորմերն ու արժեքները: Այսօրինակ իրողությունների պայմաններում տեղեկատվության սպառողները զրկվում են իրականությունն ընկալելու և քննադատելու հնարավորությունից, ինչի արդյունքում միանգամայն հեշտանում է «ամբոխի գիտակցության» մանիպուլյացիոն կառավարումը:

Այսօր իշխանությունը հանրության վրա իրականացնում է թաքնված ազդեցության գործառույթ, և հիմնականում մեդիայի միջոցով, որը ժամանակակից հասարակության կյանքում հանդիսանում է կարծիք ձևավորող ինստիտուտ: Օժտված լինելով մենաշնորհային կարողությամբ՝ ԶԼՄ-ները իրականացնում են հանրույթի կառավարման այնպիսի ռազմավարություններ, որոնց միջոցով ձևավորվում են իրենց կողմից կառավարելի վարքագծեր, պատկերացումներ և տրամադրություններ: Հենվելով առկա իրողությունների վրա՝ կարելի է հաստատապես պնդել, որ առաջ քաշած այս հիմնախնդիրը խիստ օրակարգային է:

Հիմնաբառեր. Հանրույթ, մեդիա, ներգործություն, մանիպուլյացիա, անվտանգություն, ժամանակակից աշխարհ:

Ներածություն

Հանրույթի գիտակցության մանիպուլյացիան՝ որպես գիտական կատեգորիա, ի հայտ է եկել դեռևս 20-րդ դարի երկրորդ կեսին, չնայած որ այս երևույթը գրեթե բոլոր ժամանակներում էլ եղել է արդիական: «Մանիպուլյացիա» տերմինը ծագել է լատիներեն manipulus բառից, որը ի սկզբանե դրական իմաստով է ընկալվել, այն է՝ «կառավարել», «օգնություն ցույց տալ»: Ժամանակակից գրականությունում «մանիպուլյացիա» ասելով հասկացվում է վարքը կառավարելու ունակություն՝ մարդու գիտակցության և հոգեկան աշխարհի վրա նպատակաուղղված ազդեցություն գործելով: Մանիպուլյացիան այժմ ընկալվում է որպես «մարդկանց վրա ներգործելու, մարդկանց կամ առարկաները հմտությամբ և գաղտնի կերպով կառավարելու ակտ՝ առանձնակի նվաստացուցիչ ենթատեքստով»: Ժամանակի ընթացքում «մանիպուլյացիա» տերմինը քաղաքական բառարանում փոխարինեց նախկինում գերակշռող «մաքիավելիզմ» տերմինին:

Ըստ Շիլլերի՝ «Մանիպուլյացիայի հաջողությունը երաշխավորված է, եթե մանիպուլյացիայի ենթարկվողը հավատում է, որ կատարվող բոլոր իրադարձությունները բնական են և անխուսափելի: Այլ կերպ ասած՝ մանիպուլյացիայի համար անհրաժեշտ է կեղծ իրականություն, որում դրա ներկայությունը նկատելի չի լինի» [*Шиллер, 15*]:

Այսպիսով, տեղեկատվական մանիպուլյացիայի գործընթացը միտված է ինչ-որ մեկին մասամբ կամ ամբողջությամբ մոլորության մեջ գցելու՝ տրամադրելով տեղեկատվության խեղաթյուրված ենթատեքստ: Մանիպուլյացիան հոգեբանական ազդեցության այն տեսակն է, որով մանիպուլյատորի հմտություններն օգտագործվում են հասցեատիրոջ նպատակները, ցանկությունները, մտադրությունները կամ վերաբերմունքը որևէ երևույթի հանդեպ հոգեբանորեն վերափոխելու համար: Սա հոգեբանական այնպիսի ազդեցություն է, որն ուղղված է այլ անձի գործունեության ուղղությունը փոխելուն, և դա այնքան հմտորեն է կատարվում, որ նրա կողմից աննկատ է մնում [*Mikheev, Nestik, 5*]:

Հասարակական կարծիքի ձևավորման և, առհասարակ, կառավարման համակարգում մանիպուլյացիոն գործոնների ազդեցությունը հսկայական է: Ժամանակակից աշխարհում գոյություն ունեն հասարակական լայն շերտերի գիտակցության վրա ազդելու առավել նուրբ հնարքներ, որոնք միշտ չէ, որ տեսանելի են և գիտակցվում են հանրության կողմից [*de Saussure, Schulz, 15*]:

Մանիպուլյացիոն կառավարումը ներառում է և՛ միջանձնային, և՛ զանգվածային մանիպուլյացիայի տեսակները: Առաջինի դեպքում մանիպուլյացիա իրականացնողը դիմում է այնպիսի հնարների, որոնք գործում են միջանձնային մակարդակում: Երկրորդի դեպքում արդեն կիրառվում են քաղաքական մանիպուլյացիոն տեխնոլոգիաները: Միջանձնային հաղորդակցությունը զանգվածայինից տարբերվում է նրանով, որ «անհատական շփման ընթացքում ըմբռնման էֆեկտը ավելի ուժեղանում է խոսողի ձայնի հնչողության, միմիկաների, ժեստերի հաշվին, որոնք բացառապես ուղղված են զրուցակցին» [*Зверинцев, 173*]: Մանիպուլյացիոն գործոնների կիրառումը ուսումնասիրելիս հարկ է նաև անդրադառնալ այդ հնարներն օգտագործող սուբյեկտի անձնային հատկանիշներին: Օրինակ՝ ամերիկացի հոգեբան և հոգեթերապևտ Է. Շոսթրոմը պնդում էր, որ մանիպուլյացիայից միայն օբյեկտը չի տուժում, այլ նաև այն կիրառող սուբյեկտը: Նա գտնում էր, որ «մանիպուլյացիան կյանքի կեղծ փիլիսոփայությունն է, որը միտված է շահագործելու և վերահսկելու ինչպես ինքդ քեզ, այնպես էլ ուրիշներին» [*Шостром, 28*]:

Որպեսզի հանրույթի վրա ներգործությունը ծառայի իր հիմնական նպատակին, անհրաժեշտ է ուսումնասիրել տվյալ հանրույթին՝ որպես ներգործման օբյեկտ: Հանրույթը սոցիալական սուբյեկտ է, որը քաղաքացիների այնպիսի համախումբ է, ովքեր կապված են ընդհանուր տեղեկատվությամբ և կարծիքներով: Այն իշխանությունների ցանկացած որոշման իրականացնողն է համարվում: Հանրույթը, որի նկատմամբ իրականացվում է արտաքին ներգործություն, գիտակցական և անգիտակցական մակարդակներով դրա նկատմամբ ցուցաբերում է որոշակի ընտրողականություն, որը պայմանավորված է դրանում ընդգրկված անհատների ներաշխարհի բնութագրիչ գործոններով: Հանրույթի գիտակցության մանիպուլյացիայի համար նախ պետք է ուսումնասիրել նրա թույլ կողմերը, որոնք կարող են առաջացնել վախի զգացողություն և հանրությանը շանտաժի ենթարկել՝ այդ փորձի կրկնության հնարավորությամբ:

Այսօր զանգվածային լրատվամիջոցներն արդի հասարակությունների կառավարման հիմնական միջոցներից են դարձել: Զանգվածային կարծիքի, ընկալումների և վարքի վրա ներազդման ընթացքում գործի են դրվում հատուկ մշակված այնպիսի ռազմավարություններ, մարտավարություններ և ներազդման զինանոց, որոնք միտված են նպաստելու այդ ներազդման արդյունավետությանը: Նապոլեոնը հատուկ ուշադրություն էր դարձնում մամուլին և, կաշառելով դրանք, կիրառում էր մի շարք ապատեղեկացման հնարքներ: Պատերազմների ժամանակ գրված նապոլեոնյան ուղերձները հայտնի են իրենց մանիպուլյատիվ ոճով: Հայտնի է Նապոլեոնի այն ասույթը, որ «չորս թերթ կարող է թշնամուն ավելի մեծ վնաս պատճառել, քան 100 հազարանոց բանակը»:

Ըստ ֆրանսիացի հայտնի հետազոտող Ռ.Դեբրեի՝ արդի զանգվածային լրատվամիջոցները կատարում են այն գործառույթները, որոնք միջնադարյան Եվրոպայում իրականացնում էր եկեղեցին, սակայն հասարակության գիտակցությունում նախկին սրբերին փոխարինել են այսպես կոչված «աստղերը» և «կուռքերը», ու մարդիկ կուրորեն հավատում են ԶԼՄ-ով տարածվող գաղափարներին և մտքերին [*Debray, 11*]:

ԶԼՄ-ի կողմից հանրույթի վրա իրականացվող ներազդման արդյունավետության կարևոր նախապայմաններից է այն փաստի գիտակցումը, որ զանգվածային վարքն ու հոգեբանությունը մեծապես տարբերվում են անհատականից, անձնական կարծիքից, մի շարք դիրքորոշումներից ու կողմնորոշումներից: Հմտորեն վերահսկելով լրատվամիջոցները, հնարավոր է վերահսկել հասարակական գիտակցությունը, կարծիքը, միտքն ու վարքը: Այսպիսով կարող ենք գալ մի եզրահանգման, որ ինֆորմացիոն հոգեբանական մանիպուլյացիան իրականացվում է հանրույթի բարոյահոգեբանական վիճակի վրա ներգործությունների հաշվին՝ զանգվածային հաղորդակցության, տեղեկատվության ու քարոզչության միջոցներով, որի արդյունքում տեղի է ունենում հոգեվիճակի գաղափարախոսական մշակում, հետևաբար, նաև հասարակական կարծիքի ձևավորում:

Ժամանակակից աշխարհում ԶԼՄ-ի կողմից մարդկանց մտածելակերպի, հոգեվիճակի և վարքի վրա ազդելու բազմապիսի հնարավորությունները լուրջ մարտահրավեր են հանդիսանում հանրույթի համար: Այդ մարտահրավերները որոշ պարագաներում վերածվում են լուրջ սպառնալիքների որոշակի պետության ազգային և տեղեկատվական անվտանգության տեսանկյունից: Միջազգային զարգացումների միտումները (միջազգային ինստիտուտների գոյությունը, նոր աշխարհաքաղաքական ընկալումները, հակամարտությունների գլոբալ բնույթը և միջազգային փոխհարաբերություններում համընդհանուր հասարակական կարծիքի նշանակու-

թյունը, ինչպես նաև գլոբալացումը և հեռահաղորդակցության զարգացումները) այն հիմքն են հանդիսացել, որը հնարավորություն է տվել ինֆորմացիոն հոգեբանական պայքարն իրականացնել համընդհանուր մասշտաբներով՝ այդ ներազդեցությունը տարածելով նաև միջազգային հանրության վրա:

Ցանկացած սոցիալական ներգործություն միջնորդավորվում է ընկալողի անձնական փորձով, ներաշխարհով, նրա նպատակներով, խառնվածքով և այլն: Կարելի է ասել, որ սոցիալական ընկալումը՝ որպես իմացական գործընթաց, իրենից ներկայացնում է զգայարանների վրա արտաքին ներգործությունների ակտիվ ազդեցություն: Հոգեբանական անվտանգությունը հիմնված է անձի, սոցիալական խմբի և հասարակության համար պաշտպանական դիրքորոշումների վրա, որոնց ձևավորման հիմքն են բնության որոշակի օրինաչափությունները:

Տեղեկատվական-հոգեբանական պայքարի տեսանկյունից՝ կայունությունն արտաքին ներգործության հետևանքով առաջացած տագնապներին, արտաքին մարտահրավերներին հակազդող ներքին դիրքորոշումների ամբողջությունն է, որը ապահովում է հավասարակշռության մակարդակը:

Տեղեկատվական-հոգեբանական պայքարում էական է ոչ միայն ներքին դիրքորոշումները, այլ նաև արտաքին միջավայրի հետ կապված գործոնների համակարգը: Արտաքին գործոնների ազդեցության ներքո ներքին կայունությունն ապահովող գործոնները կարող են դինամիկ փոփոխությունների ենթարկվել. տեղեկատվական-հոգեբանական պայքարի ընթացքում կարևոր է դրանց պաշարի մեծացումը: Այսպիսով կարող ենք եզրակացնել, որ անվտանգությունը դինամիկ գործընթաց է, քանի որ ժամանակի յուրաքանչյուր պահի մարդը գործ ունի նոր տեսակի վտանգի հետ: Մասնագիտական գրականության վերլուծությունները ցույց են տալիս, որ կենսագործունեության անբարենպաստ պայմաններում ապրողների հոգեբանական անվտանգության բնութագրերը գտնվում են դինամիկ փոփոխության վիճակում:

Հոգեբանական անվտանգությունն առանձնակի հետաքրքիր է՝ կապված «արտակարգ իրավիճակներում մարդու հոգեկանի պաշարների համախմբված կենտրոնացման հետ: Անվտանգության պահանջմունքի իրացումը՝ որպես անհատի ամբողջականության պահպանում, իր մեջ ներառում է ներկայով բավարարվելու զգացումը, ապագայի հանդեպ վստահություն ունենալը և պաշտպանվածության զգացողությունը շրջակա միջավայրի, արժեքների ու հետաքրքրությունների նկատմամբ» [*Журавлев, Тарабрина, 160*]:

Հոգեբանական անվտանգության կամ պաշտպանվածության մեխանիզմները գործիքներ են, որոնք մարդու կողմից օգտագործվում են տագնապային, վտանգավոր և արտակարգ իրավիճակներում՝ պաշտպանվելու համար [*Анасов, Лепский, 7*]: Արտակարգ իրավիճակներում արդյունավետ կարող են գործել այն մարդիկ, ովքեր ունեն կայուն նյարդային համակարգ, առավել ադեկվատ են ու հավասարակշռված: Նյարդային համակարգի թույլ տիպով մարդիկ գործունեության ընթացքում աստիճանաբար ձեռք են բերում կոմպենսատոր հնարավորություններ, որոնք բարձրացնում են արտաքին գրգռիչների հանդեպ զգայունությունը, զգուշավորությունը և նպաստում այլ հնարավորությունների ձևավորմանը [*Ломов, 346*]:

Տեղեկատվական-հոգեբանական անվտանգությունը սերտորեն կապված է «տեղեկատվական գործոնների փոխազդեցությունների հետ, երբ հոգետրավմատիկ տեղեկատվության ազդեցության ներքո առաջանում են դիսֆունկցիոնալ սոցիալական վիճակներ և անհատի կյանքի գործունեության խաթարումներ (փսիխոսոմատիկ խանգարումներ): Տեղեկատվական ներգործությանը բնորոշ է

դիսթրեսի վայրկենական առաջացումը, հոգեկան խեղումները, կաթվածը, մի շարք փսիխոսոմատիկ խանգարումները և այլն: Ի տարբերություն անվտանգության մյուս տեսակների՝ տեղեկատվական-հոգեբանական անվտանգության ճյուղի ուսումնասիրման հարցը օրակարգային է:

Հոդվածի արդիականությունը պայմանավորող հիմնական գործոններն են ներկա ժամանակաշրջանում ստեղծված և տիրող իրավիճակները, երբ լայնամասշտաբ տեղեկատվական աղբյուրների տարածմանը զուգընթաց, դժվարանում է հավաստի տվյալների տարբերակումը խեղաթյուրված ինֆորմացիայից: Մեր հանրապետությունում այսօր դա օրհասական և մտահոգություն առաջացնող խնդիր է, քանի որ առկա է մեդիագրագիտության պակաս, որի հետևանքով անհատը դառնում է բավական խոցելի տեղեկատվական մանիպուլյացիայի նկատմամբ: Գործնականում հաստատված է, որ որքան ավելի շատ են տեղեկացված մարդիկ, այնքան բարդ է նրանց մանիպուլյացիայի ենթարկելը: Մարդկանց մեծամասնությունը չունի անաչառ քննադատական մտածողություն, չի կարողանում վերլուծել և քննադատել, հետևաբար ավելի հեշտությամբ է տրվում մանիպուլյացիոն ներգործություններին: Ուստի, կարելի է ենթադրել, որ տարատեսակ ներգործություններից պաշտպանվելու համար նախ և առաջ անհրաժեշտ է ունենալ բարձր ինքնագիտակցություն, ռեֆլեքսիվություն, բարձր ինքնագնահատական և քննադատական մտածողություն:

Աշխատանքի նպատակն է բացահայտել տեղեկատվական հոգեբանական ներգործության հետևանքները հանրույթի վրա: Աշխատանքի հետազոտական մասի նպատակն է բացահայտել տեղեկատվական հոգեբանական ներգործության հետևանքները հանրույթի գիտակցության վրա և դրա ու տագնապայնության աստիճանի միջև կապը, ինչպես նաև տեսականորեն ուսումնասիրել այդ ամենին հետևող վարքը, փսիխոսոմատիկ խանգարումները:

Վերջին տասնամյակներում ՀՀ-ում տեղի ունեցած սոցիալ-տնտեսական, քաղաքական փոփոխությունները, հարևանների հետ հարաբերությունների լարվածությունը, գործազրկության բարձր մակարդակն ու բազմաթիվ այլ մարտահրավերներ հանդիսանում են լուրջ սպառնալիքներ՝ ազգաբնակչության լայն զանգվածների հոգեբանական անվտանգության ապահովվածության առումով:

Անձի հոգեբանական անվտանգությունը բարդ, ինտեգրատիվ հասկացություն է, որի բովանդակությունը դժվար է միանշանակ բնութագրել: Գոյություն ունեն այդ ֆենոմենի ուսումնասիրմանն ուղղված մի շարք մոտեցումներ, տեսակետներ, որոնք էլ ավելի են բարդացնում հետազոտության ռազմավարության ընտրությունը: Ինֆորմացիոն հոգեբանական անվտանգության սահմանման բազմազանությունը, նրա մեկնաբանման ոչ միանշանակ լինելը հանգեցնում են անձի հոգեբանական անվտանգության խնդրի, հասկացության աղճատման:

Մեր կողմից ծրագրված հետազոտության շրջանակում առաջադրված խնդիրներից են ուսումնասիրել ու համակարգել հիմնախնդրին վերաբերող համապատասխան մասնագիտական գրականության մեջ առկա մոտեցումները, հետազոտել մասնակիցների տագնապայնության աստիճանը և հարցաթերթի միջոցով պարզել տեղեկատվական ներգործության ազդեցությունը:

Հետազոտության իրականացման համար կիրառվել են առցանց հարցազրույցի, հարցաթերթիկի մեթոդները և տագնապի գնահատման Համիլթոնի սանդղակը, լրատվական աղբյուրներից տեսահոլովակների դիտման և տվյալների կոնտենտ վերլուծության մեթոդները, ինչպես նաև գիտական և տեղեկատվական գրականության տեսական վեր-

լուծության մեթոդը: Հետազոտության օբյեկտ են հանդիսացել բարձրագույն կրթություն ունեցող երիտասարդները:

Արագ զարգացող և փոփոխվող աշխարհում հանրույթը գտնվում է տեղեկատվական անվերջ հոսքի մեջ, ուստի առաջանում են բազմատեսակ խոչընդոտներ՝ իրականությունը ինքնին ընկալելու, այն ապատեղեկատվությունից տարբերակելու ճանապարհին, որը իր հերթին հանգեցնում է տեղեկատվական հոգեբանական անվտանգությանն առնչվող մի շարք խնդիրների: Ուսումնասիրելով բարձրագույն կրթություն ունեցող երիտասարդների՝ տեղեկատվական ներգործությունների հանդեպ խոցելիության աստիճանը և դրան նպաստող գործոնները, առաջարկում ենք բարձրագույն ուսումնական հաստատություններում ներառել կարճաժամկետ մեդիագրագիտության դասընթացներ, քննադատողական մտածելակերպը զարգացնող և անձի հաղորդակցման հմտությունները բարելավող թրեյնինգներ:

Հետազոտության հարցվողները եղել են շատ տարբեր մասնագիտությունների տեր երիտասարդներ: Մասնակցել են ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ Արցախում և սփյուռքում բնակվողներ: 150 հարցվողներից 75-ը կազմել են տղամարդիկ, 75-ը՝ կանայք: Հարցադրումը միտված էր բացահայտելու ինչպես հոգեբանական, այնպես էլ ֆիզիկական որոշակի հատկանիշներ, որոնք էական նշանակություն ունեին ներգործության և տագնապայնության կապը բացահայտելու համար:

Ըստ ստացված արդյունքների՝ հարցվողների մեծամասնությունը առողջ ապրելակերպ չէր վարում: Մարդու ֆիզիկական և հոգեբանական ամրության վիճակները փոխկապակցված են, հետևաբար նաև առողջ ապրելակերպ վարելով է պայմանավորված նրա՝ անվտանգության վրա ազդեցության չափը և սթրեսադիմացկունությունը: Ըստ Մասլոուի, առողջական խնդիրներով անձը շատ բան իր համար համարում է անհնարին՝ սահմանափակելով իրեն շարունակաբար փոփոխվող իրականության մեջ, ինչի հետևանքով թուլանում են նրա հոգեբանական անվտանգությունը, նրա կայունությունն ու ապահովությունը: Ուստի կարող ենք եզրակացնել, որ այս խումբն առավել խոցելի կարող է համարվել: Հետազոտության արդյունքներն ուսումնասիրելով՝ առանձնացրել ենք այն մասնակիցների տվյալները, որոնք ըստ մեր հարցադրումի վերլուծությունների համարվում են առավել խոցելի և թիրախային խումբ տեղեկատվական ներգործությունների նկատմամբ:

Այսպիսով, պարզ դարձավ, որ հարցվողների մեծամասնությունը՝ 67 մարդ, առողջ ապրելակերպ չէր վարում, որոնցից 19 հոգու մոտ գրանցվել է «ուժգին» տագնապայնության աստիճան, իսկ 23-ի մոտ՝ «շատ ուժգին»:

Որևէ փաստի վերաբերյալ ինֆորմացիա ստանալիս սեփական կարծիքը աստիճանաբար էր փոխում 17 հոգի, վերլուծություններ անելու ընթացքում՝ 125 հոգի, որոնցից մեծամասնության տագնապայնությունը գրանցել է «միջին» ցուցանիշ, կտրուկ էր փոխում 7 հոգի, որոնցից 6-ի տագնապայնությունը զբաղեցրել է «շատ բարձր» ցուցանիշի սանդղակը:

Այն հարցին, թե ինչն է առավել կարևոր, հարցվողներից 63 հոգի նշել են, որ տեղեկատվությունը, և որոնցից 11-ի մոտ գրանցվել է տագնապայնության «ուժգին» մակարդակ: 84 հոգու համար առավել կարևոր էր այն փաստը, թե ով է դա ներկայացնում:

Տեղեկատվությունը ստանալիս սեփական կարծիքը, տեսակետը տվյալ անձի կամ երևույթի վերաբերյալ հաճախ էին փոխում 48 հոգի, որոնցից տագնապայնության «ուժգին» ցուցանիշ են գրանցել 10 հոգի և «շատ ուժգին»՝ 21 հոգի:

Մասնակիցներից 51 հոգի նշել է, որ վստահելի ինֆորմացիոն աղբյուրներից հաճախ է հիասթափվում, որոնցից 10-ի մոտ գրանցվել է տագնապայնության «բարձր», իսկ 21-ի մոտ «շատ բարձր» ցուցանիշ:

Որևէ աղբյուրից ինֆորմացիա ստանալուց առաջ (ՋԼՄ, միջավայրի զրույցներ, հեռախոսազանգ) 94 հոգի նշել է, որ առաջանում են լարվածություն, տագնապ, որոնցից 20-ի մոտ գրանցվել է տագնապայնության «ուժգին» մակարդակ, իսկ 26-ի մոտ՝ «շատ ուժգին»:

Ինֆորմացիայի աղբյուրի հետ առնչվելուց առաջ 105 հոգի ունենում էր դրանից խուսափելու, այն նախապես մերժելու կամ դրան չհավատալու ցանկություն, որոնցից 22-ի մոտ գրանցվել է տագնապայնության «ուժգին» մակարդակ, իսկ «շատ ուժգին» մակարդակ՝ 26 հոգու մոտ:

Հետազոտության մասնակիցները նշել են, որ ավելի տագնապում են այն տեղեկություններից, որոնք քննարկվում են իրենց շրջապատում՝ 82 մարդ, որոնցից 13-ի մոտ տագնապայնության աստիճանը գրանցել է «ուժգին» ցուցանիշ, իսկ 17-ի մոտ՝ «շատ ուժգին»: Նշվել է, որ ավելի քիչ տագնապ է առաջանում հեռուստացույցով լսած պաշտոնական լուրերից՝ 62 մարդ, որոնցից 12-ի մոտ գրանցվել է «ուժգին», իսկ 14-ի մոտ՝ տագնապայնության «շատ ուժգին» մակարդակ:

Մասնակիցներից 70 հոգի նշել է, որ տեղեկատվություն ստանալիս ունենում է խաբված, մանիպուլացված լինելու զգացում, որոնցից տագնապայնության շատ ուժգին աստիճան գրանցվել է 21 հոգու մոտ:

42 հոգի պատասխանել է, որ ունենում է իր հանդեպ անարդարացի վերաբերմունքի զգացում, որոնցից տագնապայնության «շատ ուժգին» արդյունքների ցանկում են հայտնվել 10 հոգի: 38-ը նշել է, որ ունենում է անօգնականության զգացում, որոնցից 11-ը գրանցել են «շատ ուժգին» տագնապայնության արդյունքներ:

Հետազոտության արդյունքում պարզեցինք նաև, որ մասնակիցներից 78 հոգի շատ հաճախ է ունենում ինֆորմացիոն աղբյուրներից կտրվելու կամ դրանցից ազատվելու ցանկություն, որոնցից 44 հոգու մոտ գրանցվել է տագնապայնության «ուժգին ցուցանիշ», իսկ 23-ի մոտ՝ «շատ ուժգին»:

Մասնակիցներից 44 հոգի նշել են, որ լինում են դեպքեր, որ ստիպված են լինում ընդունել որևէ տեղեկատվություն հարկադրված, այլ ելք չունենալով կամ վախից ելնելով, որոնցից տագնապայնության «ուժգին» ցուցանիշ են գրանցել 17 հոգի, իսկ «շատ ուժգին» աստիճան ունեցել է 16 մարդ:

Մասնակիցներից 78-ը նշել են, որ այդ իրավիճակներում ունենում են անաշխատունակության զգացում, որոնցից 25-ի մոտ գրանցվել է տագնապայնության «ուժգին» մակարդակ, իսկ 25-ի մոտ՝ «շատ ուժգին»:

Հետազոտության արդյունքները համեմատական կարգով ցույց տալու համար ներկայացնում ենք աղյուսակ (տես աղյուսակ 1).

Տագնապայնության աստիճան	Առողջ ապրելակերպ չէր վարում	Կարծիքը կտրուկ էր փոխում	Կարծիքը հաճախ էր փոխում	Վստահելի աղբյուրներից անճախ էր հիասթափվում	Ինֆորմացիա ստանալուց առաջ տագնապում էր	Ինֆորմացիոն աղբյուրի հետ առնչվելուց խուսափում էր	Շրջապատում քննարկվող տեղեկություններից տագնապում էր	Հեռուստացույցով լսած պաշտոնական լուրերից տագնապում էր	Ինֆորմացիոն աղբյուրներից ազատվելու ցանկություն էր ունենում	Տեղեկատվությունն ընդունում էր հարկադրված կամ վախից ելնելով	Այդ իրավիճակներում անաշխատունակության զգացում էր ունենում
	67	7	48	51	94	105	82	62	78	44	78
Ուժգին	19	1	10	10	20	22	13	12	44	17	25
Շատ ուժգին	23	6	21	21	26	26	17	14	23	16	25

Եզրակացություն

Հետազոտության արդյունքում հանգել ենք այն եզրակացության, որ անձի տագնապայնության և տեղեկատվական ներգործության աստիճանները սերտ փոխկապակցված են: Տեղեկատվական հոգեբանական ներգործությունները իրականացվում են հանրույթի բարոյահոգեբանական վիճակի վրա ներազդման հաշվին՝ զանգվածային հաղորդակցության, տեղեկատվության ու քարոզչության միջոցներով, որի արդյունքում ձևավորվող հասարակական կարծիքը և հոգեվիճակի մշակվող գաղափարախոսությունը կախված է այնպիսի գործոնից, ինչպիսին է տագնապայնության մակարդակը:

Տեղեկատվական ներգործությունների նկատմամբ ավելի խոցելի համարվող մասնակիցների խմբում գերակշռում էին տագնապայնության բարձր մակարդակները: Տեղեկատվական աղբյուրներից ինֆորմացիա ստանալիս մարդկանց զգալի մասին բնորոշ էին լարվածությունը, անհանգստության զգացումը, մտահոգվածությունը և վատ սպասելիքները: Ճնշող մեծամասնությունը ինֆորմացիայի աղբյուրի հետ առնչվելուց առաջ ունենում էր դրանից խուսափելու, այն նախապես մերժելու կամ դրան չհավատալու ցանկություն:

Այսպիսով՝ տեղեկատվական հոգեբանական անվտանգության լիարժեքությունը պայմանավորված է անձնային մի շարք գործոնների համարժեքությամբ, ինչպիսիք են նյարդահոգեկան կայունությունը, հուզականությունը, տագնապայնությունը, ադեկվատ ինքնագնահատականը, վարքի վերահսկողությունը:

Գրականության ցանկ

1. Debray Régis, Cours de mediologie generale. Paris, Gallimard, 1991, 395 p.
2. de Saussure Louis, Schulz Peter, Manipulation and Ideologies in the Twentieth Century: Discourse, Language, Mind. Amsterdam, «John Benjamins Publishing Company», 2005, 329 p.
3. Mikheev Evgeny, Nestik Tim, Disinformation in social networks: current state and perspective research directions. Moscow, Social psychology and society, 2018.
4. Анасов Виктор, Лепский Владимир, Исходные посылки проблематики информационно-психологической безопасности. Проблемы информационно-психологической безопасности. Москва, Институт психологии РАН, 1996, 100 стр.
5. Журавлев Анатолий, Тарабрина Надежда, Проблемы психологической безопасности. Москва, “Институт психологии РАН”, 2012, 440 стр.
6. Зверинцев Андрей, Коммуникационный менеджмент. Рабочая книга менеджера PR. Санкт-Петербург, Союз, 1997, 159 стр.
7. Ломов Борис, Методологические и теоретические проблемы психологии. Москва, Наука, 1984, 443 стр.
8. Шиллер Герберт, Манипуляторы сознанием, Москва, Мысль, 1980, 325 стр.
9. Шостром Эверетт, Анти-Карнеги, или Человек-манипулятор. Минск, Полифакт, 1992, 128 стр.

INFORMATION PSYCHOLOGICAL EFFECTS ON PUBLIC PSYCHOLOGICAL SECURITY

Nadoyan A. A.
PhD in Psychology, Associate Professor
EUA, Chair of Psychology
a.nadoyan@mail.ru
Vardanyan A. G.
Master
YSU, Chair of General Psychology
vardanyan_aida3@mail.ru

Abstract

Today's world of technological advancement allows manipulators to retrospectively develop the information infrastructures, agitation and propaganda skills. The resistance to influences implies certain abilities, mental strength and stability of behavior.

Nowadays, the media changes people's vital attitudes almost imperceptibly, radically altering the views of social society due to various technologies of complex influence on human consciousness such as behavior management, means of influencing their individual and mass consciousness.

One of those means of governing human consciousness, also called "black technology", is manipulation. Manipulation of society is currently one of the preferred, profitable means of normalizing relations in the political, economic, social and ideological spheres, aimed at reconciling the interests of members of society, using socially accepted norms and values. In the conditions of such realities the consumers of information are deprived of the opportunity to perceive or criticize reality, as a result, the manipulation of "crowd consciousness" becomes much easier.

Today, the government carries out the function of hidden influence on the society and mainly through the media, which is an opinion-forming institution in the life of modern society. With a monopoly power, the media implements community management strategies that shape the behaviors, perceptions, and moods under their control. Based on the existing realities, it can be said with certainty that this issue is on the agenda.

Keywords. Society, media, influence, manipulation, security, modern world.

Ներկայացվել է՝ 11.04.2022 թ.
Գրախոսվել է՝ 27.05.2022 թ.

ԱԶԳԱԿՑԱԿԱՆ, ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ, ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԿԱՊԵՐ ԱՐՏԱՀԱՅՏՈՂ ՀԱՍԿԱՑՈՒՅԹՆԵՐԻ ՓՈԽԱԲԵՐԱԿԱՆ ԵՎ ԴԱՐՁՎԱԾՔԱՅԻՆ ԿԻՐԱՌՈՒՄՆԵՐԸ (ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ, ՇԵՔՍՊԻՐ, ԱՅԼ ԽՈՍՈՒՅԹՆԵՐ)

Գևորգյան Գ.Ա.
բ.գ.թ., պրոֆեսոր
ԵՊՀ, Թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոն
mar.travel@mail.ru

Ամփոփագիր

Հոդվածում ներկայացված ազգակցական, բարեկամական և ամուսնական կապեր արտահայտող հասկացություններում ցույց է տրված, որ դրանցով ձևավորվել են այլաբանական արտահայտություններ, դարձվածքներ, որոնք ունեն թե՛ աքեփիպային, թե՛ ժամանակակից իմաստավորումներ, ինչպես նաև էպիդիգմատիկ կապերի միջոցով հարուցված նորակազմություններ:

Ազգակցական, բարեկամական ու ամուսնական կապեր ցույց տվող հասկացությունների համակողմանի ճանաչման համար հարկավոր է ճանաչել, նախ, դրանց արքետիպային ձևերը՝ իրենց համապատասխան նշանակություններով, որից հետո առավել հստակ են երևում դրանց հետագա կիրառումները, փոխակերպումներն ու լրացուցիչ առնշանակությունները՝ կախված «ժամանակի ոգուց» և տվյալ երկի համատեքստից: Մասնավորապես, նկատի են առնվում նշյալ հասկացությունների շեքսպիրյան կիրառումները (փոխաբերության, դարձվածքի ձևով), որոնք, Աստվածաշնչից հետո, կարելի է ասել, երկրորդն են նմանօրինակ կիրառումների առումով: Քանի որ Աստվածաշնչում բազմաթիվ են նման կապեր արտահայտող հասկացությունները՝ իրենց արքետիպային նշանակություններով, ուստի նպատակահարմար է ընտրել Աստվածաշնչի գրքերից որևէ մեկը և այդ գրքից քաղել միայն որոշ հասկացություններ: Այսպիսով, որպես արքետիպային հասկացությունների աղբյուր, ընտրվել է «Գիրք առակաց»-ը և այնտեղ հանդիպող մի քանի առանցքային հասկացությունները, մասնավորապես, այնպիսիք, որոնք կազմում են դարձվածքներ թե՛ անգլերենում և թե՛ հայերենում:

Հիմնաբառեր. Շեքսպիր, Աստվածաշունչ, ազգակցական, ամուսնական, բարեկամական կապեր, դարձվածքներ, առնշանակություններ:

Ներածություն

Ազգակցական, բարեկամական ու ամուսնական կապեր ցույց տվող հասկացությունների գլխավոր առանձնահատկությունն այն է, որ դրանք առնչվում են անմիջապես մարդ հասկացության և մարդկային հասարակության հետ: Ո՞վ է մարդ արարածը, որտեղի՞ց է գալիս ու ու՞ր է գնում, ինչպիսի՞ն է նրա հասարակական-սոցիալական կյանքի կառուցվածքը. ահա հարցեր, որ առնչվում են ազգակցական, բարեկամական և ամուսնական կապեր արտահայտող անվանումների կամ հասկացությունների հետ: Իսկ դրանք բազմաթիվ են (*հայր, մայր, ընտանիք, որդի, դուստր, հարս, փեսա, թոռ, ծոռ, կին, ամուսին, հորաքույր, մորաքույր, հորեղբայր, մորեղբայր, քույր, եղբայր, քրոջորդի, եղբորորդի, հորեղբոր կին, քեռակին, զոքանչ, աներ, խնամի, ընկեր, բարեկամ*

և այլն) և ընդգրկում են ողջ հասարակությունն իր բոլոր կապերով, որոնք, բնականաբար ունեն մարդաբանական, ազգաբանական, պատմամշակութային, սոցիալական, իրավական, բարոյաբանական, բժշկագիտական, հոգեբանական և այլ նշանակություններ:

Ըստ Աստվածաշնչի՝ մարդը ծագում է աստվածների Աստծուց, արարված է նրա կողմից և կրում է նրա պատկերը, ինչպես և ասվում է ծննդոցում. "And God said, Let us make man in our image, offer our likeness: and let them have dominion over the fish of the sea… And God blessed them, and God said unto them, Be fruitful, and multiply, and replenisth the earth, and subdue it…'' [*Genesis 1:26-28*]:

«Աստուած ասաց. «Մարդ ստեղծենք մեր կերպարանքով ու նմանությամբ, նա թող իշխի ծովի ձկների, վրայ... Աստուած օրհնեց նրանց ու ասաց. «Աճեցէ՛ք, բազմացէ՛ք, լցրէ՛ք երկիրը, տիրեցէ՛ք դրան...»» [*Ծնն. 1:26-28*]:

Ինչպես և վկայում են աստվածաշնչյան այս և հետագա մեջբերումները, նման աճումն ու բազմացումը տեղի է ունենում ոչ թե քաոսային, անկանոն եղանակով, այլ ստեղծվում է մարդկանց տրված բարոյաբանական և իրավական ընկալումների վրա: Հասարակական հիերարխիայում յուրաքանչյուրը գրավում է իր համապատասխան տեղը, ինչպես որ մարդաբանական կառույցում յուրաքանչյուր ոք ունի իրեն հատկացված տեղը: Հայտնի է, օրինակ, որ մարդաբանական կառույցում գլուխը համարվում է վերինը և առաջնայինը, ճակատը՝ պատվականագույնը, սիրտը՝ կյանքի աղբյուրը և այլն: Ըստ Աստվածաշնչի՝ ամենապատվականագույնն են ծնողները՝ հայրը և մայրը (Եկեղեցին նրանց անվանում է երկրորդ աստվածներ), այսուհետև՝ որդիները, որդիների մեջ՝ ավագ որդին, դուստրերը և այլն: Այստեղ դեր է խաղում արյունը, որպես ազգակցական մերձավորության աստիճանը որոշող գործոն:

Այն, որ կրոնադիցաբանական, բանահյուսական և ժողովրդախոսակցական բնույթի տեքստերում-խոսույթներում արտահայտված ենք տեսնում ազգակցական, բարեկամական և ամուսնական կապերի արտահայտությունները՝ տրված մարդակազմական պատկերացումների միջոցով, փաստարկվում է վերն ասվածը՝ մարդու մարմնամասերը համօրինակ են դիտվում ազգակիցների հետ՝ ըստ հարազատության և պատվի աստիճանների: Օրինակ, հաճախ կինն իր ամուսնուն անվանում է «գլուխ»՝ «*Դու ես իմ գլուխը*», կամ «*Դու ես իմ գլխի տերը*». Իսկ իր սիրեցյալին, որդուն կամ դստերը կարող է ասել՝ «*Դու իմ սիրտն ես*», «*Դու ես իմ սրտի տերը*» և այլն: Ազգականը շատ մոտիկ ազգականին կարող է ասել՝ «*Ճակատիս վրա տեղ ունես*» կամ «*Դու իմ ճակատը բաց ես անում*», այսինքն՝ քո շնորհիվ ճակատս բաց, հպարտ եմ քայլում: Սա մի երևույթ է, երբ տեղի է ունենում հասկացույթների փոխարկում՝ միտքը արտահայտվում է փոխաբերաբար կամ փոխանվանաբար, որոնցով էլ կազմվում են շատ դարձվածքներ:

Անգլերեն ու հայերեն ասացվածքները, թևավոր խոսքերը, որ նույնպես համարվում են դարձվածքներ, «ընկեր» կամ «բարեկամ» հասկացույթների կիրառմամբ, ցույց են տալիս, թե որքան շատ են բարեկամական հարաբերությունների տեսակները և դրանց բնութագրումները:

Օրինակ.

Company in distress makes trouble less - «Ընկերովի մահը հարսանիք է»,

A faithful friend is the medicine of life - «Հավատարիմ ընկերը կյանքի բալասան է» և այլն [Ալավերդյան, 222]:

Որպես բազմանշանակ բառեր՝ հասկացույթները ձևավորում են այլաբանական արտահայտությունների, դարձվածքների տարբեր տեսակներ, որոնք կարող են ունենալ թե՛ աքետիպային, թե՛ ժամանակակից իմաստավորումներ [*Кунин, 215*], ինչպես նաև էպիդիգ-

մատիկ կապերի միջոցով ստեղծված նորակազմություններ [*Шмелев, 114*]:

Ազգակցական, բարեկամական ու ամուսնական կապեր ցույց տվող հասկացությունների համակողմանի ճանաչման համար հարկավոր է, ուրեմն, ճանաչել, նախ, նրա արքետիպային ձևերը՝ իրենց համապատասխան նշանակություններով, որից հետո առավել հստակ են երևում դրանց հետագա կիրառումները, փոխակերպումներն ու հավելյալ նշանակությունները՝ կախված «ժամանակի ոգուց» և տվյալ երկրի համատեքստից:

Քանի որ Աստվածաշնչում բազմաթիվ են նման կապեր արտահայտող հասկացությունները՝ իրենց արքետիպային նշանակություններով, ուստի նպատակահարմար է այդ բազմաքանակության մեջ ընտրություն կատարել՝ ընտրել Աստվածաշնչի գրքերից որևէ մեկը և այդ գրքից քաղել միայն որոշ հասկացություններ, որովհետև անհնարին է անդրադառնալ բոլոր հասկացություններին, առավել ևս ողջ Սուրբ Գրքին: Ուստի, որպես արքետիպային հասկացությունների աղբյուր, ընտրվել է «Գիրք առակյաց»-ը և այնտեղ հանդիպող մի քանի առանցքային հասկացությունները, մասնավորապես՝ այնպիսիք, որոնք կազմում են դարձվածքներ՝ թե՛ անգլերենում և թե՛ արևմտահայերենում (երկուսն էլ՝ եբրայական կանոնից).

Hear, my son, your father's instruction, and reject not your mother's teaching, for they are a fair garland for your head, and pendants for your neck [*Proverbs, 1:8-9*].

«Որդեակ իմ, քու հօրդ խրատին մտիկ ըրէ ու քու մօրդ օրէնքը մի՛ մերժեր. Քանզի անոնք քու գլուխդ՝ շնորհած պսակ և քու պարանոցիդ մանեակներ պիտի ըլլան» [*Առակ. 1:8-9*]:

Որդի, հայր, մայր, ահա այն եռամիասնությունը, որի մեջ հորը և մորը վերապահված է խրատելու, դաստիարակելու շնորհը, իսկ որդուն, իր հորը և մորը անսալով, իր գլխի վրա շնորհների պսակներ և պարանոցին՝ մանյակներ կրելու արժանավորությունը: Այստեղ «գործում» է, ըստ էության, դարձվածքը, որն ասում է՝ «Քո հոր խրատը և քո մոր օրենքը, եթե նրանց անսաս, քո գլխին՝ շնորհների պսակ ու քո պարանոցին՝ մանյակներ պիտի լինեն»:

Հաջորդը ևս դարձվածք է, ընդ որում՝ կազմախոսական: «Գլխավոր հերոսը» կրկին «որդին» է՝ «որդյակ»ը փաղաքշական ձևով.

My son, if sinners entice you, do not consent [*Proverbs, 1:10*].

«Որդեակ իմ եթե մեղավորները քեզ գլխէ հանել ուզեն, դուն անոնց հաւանութիւն մի՛ տար» [*Առակ. 1:10*]:

«Գլխե հանել» նշանակում է առաջնորդությունից զրկել: Ուշագրավ է, որ գրական արևելահայերենը ուրիշ կերպ է.

«Որդեակ, թող քեզ չխաբեն ամբարիշտ մարդիկ...»:

Շատ պարբերություններ ուղղված են «որդուն, որ նա լսի իր հորն ու մորը և ժառանգի օրհնութիւն».

Let thy fountain be blessed: and rejoice with the wife of thy youth. And hind, a graceful doe [*Proverbs, 5:18-19*].

«Քու աղբիւրդ օրհնեալ ըլլայ. եւ քու երիտասարդութեանդ կնոջը հետ ուրախ եղիր» [*Առակ. 5:18*]:

Որդուն ուղղված խոսք, թե՝ «Քու աղբիւրդ օրհնեալ ըլլայ», փոխաբերություն է, քանի որ այդ աղբյուրը հենց որդու կինն է, «կնքեալ ու փրկեալ», ինչպես ասվում է «Երգ Երգոցում» [*Երգ երգոց, 4:12*]:

Առակաց 7-րդ գլխում անձնավորում են իմաստությունը և հանճարը՝ հանդես գալով իբրև ազգակցական-բարեկամական հասկացություններ՝ «քույր» և «բարեկամ»:

My son, keep my word’s and treasure up my commandments with you. Keep my commandments and live, keep my teachings as the apple of your eye. Bind them on your fingers, write them on the table of your heart. Say to wisdom, ‘You are my sister; and call insight your intimate friend, to preserve you from the loose woman, from the adventures with her smooth words [*Proverbs, 7:1-5*].

«Որդիա՛կ իմ, պահէ իմ խօսքերս ու իմ պատուիրանքներս քու քովդ ծածկէ: Իմ պա-

տուիրանքներս պահէ որպէզի ապրիս ու իմ օրենքիս քու աչքերուդ բիբին պէս նայե՛ : Զանոնք մատերուդ վրայ կապէ, զանոնք սրտիդ տախտակին վրայ գրէ»:

Իմաստութեանն ըսէ. «Դուն իմ քոյրս ես» ու հանճարը «բարեկամ» կոչէ, որպէս զի քեզ օտար կնոջմէն, շողոքորթութեամբ խօսող օտար կնոջմէն, պահեն» [*Առակ. 7:1-5*]:

Աստվածաշունչը, որպես տարատեսակ հասկացոյթների գործուն շտեմարան, չի կարող բնութագրվել նույնիսկ բազմահատոր ուսումնասիրություններով: Այնուամենայնիվ, բերենք փոխաբերությունների և դարձվածքների մի քանի ցայտուն օրինակներ ևս, որոնցում հիմնիմաստային կամ առանցքային են ազգակցական, ամուսնական, բարեկամական կամ ընկերային կապեր ցույց տվող բառերը.

1) Therefore shall a man leave his father and his mother, and shall leave unto his Wife: and they shall be one flesh [*Genesis, 2:24*].

«Մորս համար մարդը կ՞թողէ իր հայրը և իր մայրը, և կ՞յարի իր կնոջը և մեկ մարմին կ՞լինի» [*Ծնն., 2:24*]:

2) And he said, What hast thou done? the voice of thy brother's blood crieth unto me from the ground [*Genesis, 4:10*].

«Եվ նա ասաց.- Ի՞նչ ես արել. Քո եղբօր արիւնի ձայնը երկրիցը հիմա բողոքում է դեպի ինձ» [*Ծնն. 8:10*]:

3) A virtous woman is a crown to her husband…[*Prover, 12:4*]

«Առաքինի կինը իր մարդու պսակն է...» [*Առակ, 12:4*]

4) A foolish son the calamity of his father: and the contentions of a wife are a continual dropping [*Prover, 19:13*].

«Անմիտ տղան տրտմութիւն է իր հօր համար, կնոջ վեճերը շարունակող կաթկաթոց է» [*Առակ, 19:13*]:

5) Iron sharpeneth iron; so a man sharpeneth the countenance of his friend. [*Prov. 27:17*]

«Երկաթը երկաթով է սրվում, և մարդս սրում է իր ընկերի երեսը» [*Առակ, 27:17*]:

Ազգակցական, բարեկամական և ամուսնական կապեր ցույց տվող աստվածաշնչյան հասկացոյթները և դրանց ներթափանցումները միայն Շեքսպիրի ստեղծագործության մեջ, արդեն իսկ անսպառ նյութ է: Բացի կառուցվածքաիմաստային, լեզվական, բանասիրական ուսումնասիրություններից, արդի շրջանում ակտուալ են դառնում դարձվածքային պատկերների կառուցման տիպաբանական մեթոդը, «դարձվածքային պատկերների կառուցման առանձնահատկությունների ուսումնասիրությունը ցեղակից և ոչ ցեղակից լեզուներում [Եզեկյան 205]», քննարկվում են «իրենց պատկերային-իդիոմատիկ բնույթով նույնական կամ գրեթե նույնական դարձվածային միավորների առաջացման օրինաչափությունները» և տիպաբանական ընդհանրությունները [*Բադիկյան, 110*]:

Հետազոտության նյութը ակտուալ է դառնում աստվածաշնչյան հասկացոյթների և դրանց մի գործուն մասի՝ ազգակցական, բարեկամական և ամուսնական հասկացոյթների ներթափանցումն ու զարգացումը գեղարվեստական գրականության մեջ: Մասնավորապես, նկատի են առնվում նշյալ հասկացոյթների Շեքսպիրյան կիրառումները, որոնք, Աստվածաշնչից հետո, կարելի է ասել, երկրորդն են նմանօրինակ կիրառումների առումով: Շեքսպիրը, պետք է ասել, առաջինն է համաշխարհային գրականության մեջ, ով աստվածաշնչյան ազգակցական, բարեկամական և ամուսնական կապերը քննարկել է այդպես դրամատիկորեն՝ ցույց տալով «աստվածայինի շարժումը» մարդկային կյանքի ու կենցաղի մեջ: Նույն այդ աստվածաշնչյան հասկացոյթները՝ հայր-որդի, հայր-դուստր, մայր-որդի, եղբայր-քույր, հարս-փեսա, կին-ամուսին և այլն, նրա դրամաներում («Համլետ», «Օթելլո», «Լիր արքա», երևում և գործում են հախուռն զգացմունքայնությամբ, անկեղծությամբ և, կարելի է ասել, հավատավորի նվիրվածությամբ: «Լիր արքա» ողբերգու-

թյունում խարդավանքի մեջ ներքաշված Գլոստերն ասում է.

Earl Closter. These late eclipses in the sun and moon portend no good to us: though the wisdom of nature can reason it thus and thus, yet nature finds itself scourged by the sequent effects: love cools, friendship falls off, brothers divide: in cities mutinies, in countries discord, in palaces treason, and the bond erakttwixit son and father. This villain of mine comes under the prediction: there's son against father: the king falls from bias of nature; there's father against child [*Act I, Sc II, 442*].

Գլոստեր. «Արևի և լուսնի այս վերջին խավարումները ոչ մի լավ բան չեն գուշակում մեզ համար: Որքան էլ գիտունները այս կամ այն կերպ մեկնաբանեն բնության խորհրդավորությունը, այուամենայնիվ, բնությունը իրեն խարազանված է զգում դրանց հաճախակի արդյունքներով. սերը սառչում է, բարեկամությունը նվազում, եղբայրները պառակտվում են. քաղաքներում խռովություններ, գյուղերում գժտություններ. պալատներում մատնություն. հոր և զավակի միջև կապը խզվում է: Այս իմ սրիկա որդին այդ գուշակության ազդեցությամբ է գործում, որդին զինվում է հոր դեմ, թագավորը շեղվում է բնական ընթացքից. Հայրը զավակի դեմ է ելնում» [*Արար I, տեսարան II, 479*]:

Եզրակացություն

Շեքսպիրյան ողբերգություններից մեկն էլ սա է՝ եղբայրները պառակտվում են, հոր և որդու միջև կապը խզվում է և այլն: Նշյալ հասկցոյթները (այն կրող անձինք) հանդես են գալիս նոր, կարծես ավելի չար ձևերով. մի նոր երանգավորումով, որը կապ ունի ինչպես հեղինակի հայեցակերպի, այնպես էլ «Ժամանակի ոգու հետ»: «Հոր և զավակի միջև կապը խզվում է», «Հայրը զավակի դեմ է ելնում»՝ սրանք հենց հասկացոյթներով կազմված դարձվածքներ են: Նշյալ դարձվածքներում, ինչպես տեսնում ենք, Ա. Ի. Սմեռնիցկու տարբերակմամբ, տարբեր են բառակապակցական-կառուցվածքային տիպերը, որը կապված է առանցքային բառի կամ բառաքերականական կենտրոնի առանձնացման հետ [*Смирницкий, 145*]:

Այդպիսիք շատ են ինչպես բնագրում, այնպես էլ հայերեն թարգմանություններում: Շատ են նաև կազմախոսական ԴՄ-ները՝ արտահայտված ազգակցական հասկացոյթների և մարմնամասերի զուգորդումներով. ինչպիսին է, օրինակ, Լիր արքայի խոսքը՝ ուղղված ֆրանսիական արքային և իր դստերը՝ Կորդելիային.

King Lear. Thou hast her, France: let her be thine, for we/ have no such a daughter, nor shall ever see/ That face of hers again [Act.I, sc I, p.439].

Լիր, «Տար, ֆրանսիացի, քոնն է, մենք չունենք այդպիսի աղջիկ, ոչ էլ ուզում ենք (այդ աղջկա) երեսը տեսնել»: Այդօրինակ կազմախոսական ԴՄ-ները, կազմված «երես», «բերան», «աչքեր», «լեզու» հասկացոյթներով և ազգակցական, բարեկամական ու ամուսնական կապեր արտահայտող բառերով, իբրև արքետիպային հենք ունեն աստվածաշնչյան օրինակները, բայց որոնք արդեն նոր ձևերով ու նորանոր երանգավորումներով են հանդես գալիս շեքսպիրյան տեքստերում:

Գրականության ցանկ

1. Աստվածաշունչ, Մայր Աթոռ, էջ 217-223, 2004, 1795 էջ:
2. Բադիկյան Խ. Դարձվածային ոճաբանություն, Երևան, 2000, 207 էջ:
3. Եզեկյան Լ. Հայոց լեզվի ոճագիտություն, Երևան, 2003, 376 էջ:
4. Շեքսպիր Վ. Երկեր, Երևանի համալսարան, 1991, 767 էջ:
5. Ալավերդյան Ա. «Բարեկամ» հասկացոյթի վերլուծությունը անգլերենում և հայերենում միջմշակութային տեսանկյունից, «Աստղիկ», Ե., Սահակ Պարթև, 2012-2013, էջ 217-223:

6. The Complete Works of Shakespeare, vol. 4 by W. Shakespeare, CreateSpace Independent Publishing Platform, 2017, 226 էջ :
7. The Holy Bible, New York, 1952, 1246 էջ :
8. Кунин А. Фразеология современного английского языка. М., 1972, 289 էջ :
9. Смирницкий А.И. Лексикология английского языка, МГУ, 1998, 260 էջ :
10. Шмелев Д. Слово и образ, М., 1964, 119 էջ :

CONCEPTS EXPRESSING KINSHIP, MATRIMONIAL BONDS, AS A SOURCE OF PHRASEOLOGICAL UNITS WITH SPECIAL REFERENCE TO THE BIBLE AND SHAKESPEARE AND OTHER DISCURSES

Gevorgyan G.A.
PhD in Philology, Professor
YSU, Chair of Translation Theory and Practice
mar.travel@mail.ru

Abstract

The article deals with the concepts expressing kinship and matrimonial bonds, which in their turn form numerous metaphorical expressions and phraseological units having both archetypal and contemporary meanings, as well as new coinages by means of epidigmatic bonds. To comprehend the concepts of expressing kinship and matrimonial bonds, one should first of all reveal their archetypal forms with their corresponding meanings should be revealed in order to make their further transformations and connotative meanings noticeable depending on "the spirit of the time" and the context of the work. In particular the usage of such concepts in Shakespeare's works has been highlighted which take the second place after the Bible.

Since the concepts expressing such connotations are abundant in the Bible, it was considered expedient to choose one of the books in the Bible and adduce examples from that book. Thus, as a source of archetypal concepts "The Book of Proverbs" has been selected, especially those which form phraseological units both in English and in Armenian.

Keywords*:* concepts, kinship, matrimonial, metaphor, Shakespeare, Bible, archetype.

Ընդունվել է տպագրության՝ 12.04.2022 թ.
Գրախոսվել է՝ 23.05.2022 թ.

ՏԵՂԱՇԱՐԺԵՐ ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԲԱՐԲԱՌԻ ՁԱՅՆԱՎՈՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Բոցինյան Մ. Ս.
ասպիրանտ
ԵՊՀ, Հայոց լեզվի պատմության ամբիոն
mariana.botsinyan@ysumail.am

Ամփոփագիր

Նոր Նախիջևանի բարբառը շուրջ հարյուր տարի ուսումնասիրության չի ենթարկվել: Բարբառի միակ և վերջին ուսումնասիրողը եղել է Հրաչյա Աճառյանը:

Մեր հետազոտությունը համեմատական վերլուծությունների մեթոդով ներկայացնում է Նոր Նախիջևանի բարբառի ձայնավորների արդի լեզվավիճակը: Աշխատանքում քննության են առնվել Հ. Աճառյանի ներկայացրած դիտարկումները՝ համալրված նոր օրինակներով և դրանցից բխող օրինաչափություններով:

Մեր ուսումնասիրությունները վկայում են, որ լեզվական արդի փուլում երկբարբառային արտասանություն ունեցող ձայնավորները վերածվել են պարզ ձայնավորների, ուստի Նոր Նախիջևանի բարբառը ներկայումս ունի վեց ձայնավոր հնչյուն՝ ա, է, ը, ի, ու, օ:

Ներկայացրել ենք նաև հնչյունափոխության նորահայտ դեպքեր, որոնք օրինաչափ հնչյունափոխության մասին վկայել չեն կարող նաև այսօր: Նկատել ենք, որ բարբառում առավել լայն տարածում է գտել առնմանման հետևանքով առաջացած ա>ու հնչյունափոխությունը, օրինակ՝ անուշացնել> անուշցունէլ:

Հ.Աճառյանի նկատած բացառիկ ա>ի հնչյունափոխության այլ դեպքեր ենք հայտնաբերել, որոնք ինչպես նախկինում, այնպես էլ այժմ, մեծ տարածում չունեն: Դրանք են՝ ատակել>ադիգէլ (գործերից ազատվել), բերանքսիվայր> պէրինքսիվար:

Ե>Է հնչյունափոխության օրինաչափությունից շեղվող նոր օրինակներ ենք վկայել՝ եղանակ>յէղանագ, երեխայ>յէրէխա:

Հանդիպում են հնչյունափոխության այնպիսի դեպքեր, որոնք Աճառյանը չէր համարում օրինաչափ, սակայն այսօր կարող ենք վկայել հակառակը: Օրինակ՝ լայն տարածում գտած ե>ը հնչյունափոխությունը՝ համբերել>համփըրել:

Նկատել ենք, որ ներկայումս լայն կիրառություն են գտել բառասկզբի է և ը հնչյունները: Վերացել են քմայնացած ձայնավորները:

Հիմնաբառեր. Նոր Նախիջևանի բարբառ, ենթաբարբառներ, ձայնավորներ, երկբարբառներ, հնչյունափոխություն, օրինաչափություններ, տեղաշարժեր:

Ներածություն

Նոր Նախիջևանի բարբառը հայերենի ԿԸ ճյուղի բարբառներից է: Այն լիարժեք ուսումնասիրության է ենթարկել Հ. Աճառյանը իր «Քննութիւն Նոր-Նախիջեւանի (Խրիմի) բարբառի» աշխատության մեջ: Լեզվաբանը Նոր Նախիջևանի բարբառի համար առանձնացնում է 38 հնչյուն՝ 8 ձայնավոր *(ա, ը, է, ի, օ, ու, էօ, իւ)*, 30 բաղաձայն *(բ, բ’, փ, գ, գ’, ք, դ, դ’, թ, ձ, ձ’, ց, ջ, ջ’, չ, զ, ժ, ս, շ, յ, ռ, ր, լ, մ,*

ն, վ, ֆ, հ, ղ, խ) [*Աճառեան, 24*]: Այնուհետև Հ. Աճառյանն ավելացնում է, որ ձայնավորների հնչման մեջ առանձին նկատելու բան չկա. հայ բարբառների սովորական հնչումը պահում են, իսկ էօ և իւ հնչյունները շատ քիչ են գործածվում. հանդիպում են միայն որոշ թուրքական փոխառությունների և բնիկ հայերեն մի քանի բառերի մեջ: Թուրքերենում կան շատ բառեր, որոնք պարունակում են էօ, իւ հնչյունները, սակայն Նոր-Նախիջևանի բարբառին անցնելով՝ վերջիններս վերածվում են է, օ, ի, ու հնչյունների (եօ>է, օ, իսկ իւ>ի, ու), օրինակ՝ թրք. ofke>օքա (վրէժ, ոխ): Սակայն Աճառյանը նկատում է, որ իւ և էօ հնչյունները ժամանակի ընթացքում ջնջվել են («էօ ձայնը բոլորովին վերացաւ, իսկ իւ-ը իր գոյությունը պահում է դեռ հինգ բառի մեջ՝ միւլիւզ (սնանկ), լիւլէ (ծխամորճ), սիւլիւք (տզրուկ), լիւգեն (սանձ), թիւթիւն (ծխածոտ): Աճառյանը նկատում է նաև, որ «իւ ձայնաւորը գտնւում է մէծ մասամբ լ-ի մօտ (առաջ կամ յետոյ), բայց երևոյթը ընդհանուր չէ, որովհետև ունինք նաև բիլբիլ (սոխակ), փուսգուլ կամ փիսգիլ (ծոպ), որոնց մեջ թրք. ü թէև լ-ի մօտ, փոխուած է սակայն ի կամ ու: Ուրեմն իւ ձայնի պահպանութեան ամէնից զօրաւոր յէնարանն է լ ձայնը: Նկատենք նաև, թէ ռուսերէն լեզուն էլ զուրկ է էօ, իւ ձայնաւորներից և այս բանը նպաստաւոր հանգամանք է յիշեալ ձայնաւորների կորստեան համար Նոր-Նախիջևանի բարբառում» (Աճառեան Հ., էջ 25):

Նոր Նախիջևանի բարբառը ցայսօր որևէ նոր ուսումնասիրության չի ենթարկվել, սակայն լեզուն քարացած երևույթ չէ. ժամանակի ընթացքում լեզվական նորմերը և օրինաչափությունները փոխվում են: Այդ փոփոխությունները հատկապես արձանագրվում են հայերենի բարբառներում, որոնք շարունակում են պահպանել իրենց գոյությունը հայրենիքի սահմաններից դուրս: Նոր Նախիջևանի բաբառի ձայնավորիների վերաբերյալ որոշ փաստեր արձանագրվել են Կ. Ջալաշյանի վերջերս լույս տեսած «Նոր Նախիջևանի բարբառի բացատրական բառարան»-ի ներածական հատվածում, որտեղ հեղինակը համառոտ կերպով տալիս է Նոր Նախիջևանի բարբառի և ենթաբարբառների արդի լեզվավիճակի ընդհանուր բնութագիրը: Վերջինս արձանագրում է, որ Նոր Նախիջևանի բարբառը ներկայումս ունի վեց ձայնավոր հնչյուն՝ *ա, է, ը, ի, ու, օ,* որոնք արտասանվում են գրականի նման: *Ե* և *է, ո* և *օ* հնչյունները նույնացել են և արտասանվում են *է* և *օ* [Ջալաշյան, 9]: Այս դիտարկումը և մեր հետազոտությունները բարբառակիրների շրջանում վկայում են, որ Հ. Աճառյանի ներկայացրած երկբարբառային արտասանություն ունեցող ձայնավորները ներկայումս վերածվել են պարզ ձայնավորների (օրինակ՝ հնում՝ թյություն, այժմ՝ Նոր Նախիջևանում՝ թիթին, Սալայում՝ թիթուն, Չալդըրում՝ թութուն և այլն): Այսպիսով՝ Նոր Նախիջևանի բարբառը, Չալդըրի, Թոփթիի, Մեծ Սալայի, Սուլթան Սալայի խոսվածքները ներկայումս ունեն վեց ձայնավոր հնչյուն՝ *ա, է, ը, ի, ու, օ:*

Սույն աշխատանքում զուգադրական համեմատությունների մեթոդով քննության ենք առել Նոր Նախիջևանի բարբառի ձայնավորական համակարգը՝ ցույց տալու, թե ինչ տեղաշարժեր են գրանցվել այնտեղ լեզվական արդի փուլում:

Հայտնի է, որ հայերենի բարբառների մեծ մասի ձայնավորների օրինաչափ փոփոխություններ չեն նկատվում, ինչը չենք կարող ասել Նոր Նախիջևանի բարբառի մասին: Քանի որ Հ. Աճառյանը լեզվաբանության ամենակարևոր բաժինը համարում է հնչյունաբանությունը, իր «Քննութիւն Նոր-Նախիջեւանի (Խրիմի) բարբառի» աշխատության մեջ ամենայն մանրամասնությամբ ներկայացրել է Նոր Նախիջևանի բարբառի, Չալդըրի, Թոփտիի և մնացյալ բնակավայրերի խոսվածքի հնչյունական հատկանիշները, հնչյունափո-

խության բոլոր դեպքերը՝ ընդհանուր-օրինաչափ և մասնավոր: Յուրաքանչյուր կանոնի համար գրեթե միշտ գտել է բոլոր օրինակները և բացառությունները: Մասնավոր դեպքերի համար լեզվաբանը տվել է տրամաբանական բացատրություններ, անհրաժեշտության դեպքում ստուգաբանել յուրաքանչյուր բառ, անգամ եթե վերջինս եղել է որևէ լեզվից փոխառություն: Ուստի մեր ուսումնասիրության մեջ ավելորդ ենք համարել մանրամասնորեն անդրադարձ կատարել հնչյունափոխության օրինաչափ և մասնավոր այն դեպքերին, որոնք լեզվի արդի փուլում որևէ փոփոխություն չեն կրել: Սույն հոդվածում ներկայացված օրինակները հիմնականում հայտնաբերվել են մեր կատարած հետազոտությունների շնորհիվ:

Սույն հոդվածում ներկայացված օրինակները հիմնականում մեր կատարած բարբառագիտական հետազոտությունների շնորհիվ են հայտնաբերվել: Յուրաքանչյուր օրինակ համեմատել ենք Գ. Ջալաշյանի բառարանում վկայված լեզվական փաստերի հետ և ըստ անհրաժեշտության օրինակների կողքին՝ փակագծերի մեջ, նշել ենք բառի կամ բառաձևի բացատրությունը:

Արդ անդրադառնանք ձայնավորների հնչյունափոխության դեպքերին և հիմնականում նրանց, որոնք վկայված չեն Հ. Աճառյանի ուսումնասիրության մեջ կամ էլ վկայված են, սակայն կրել են որոշ փոփոխություններ, կամ նոր օրինակներ ի հայտ չեն եկել:

Ժամանակակից հայերենում գործուն և կենսունակ է հիմնականում դիրքային հնչյունափոխությունը: Նոր Նախիջևանի բարբառում, սակայն, գործուն է նաև փոխազդեցական հնչյունափոխությունը, մասնավորապես՝ առնմանումը: Բերենք օրինակներ.

ա>ու. Նոր Նախիջևանի բարբառում միջնավանկի *ա* ձայնավորը, *ը*-ի վերածվելով, դառնում է *ու*, եթե նախորդ կամ հաջորդ վանկում առկա է *ու* հնչյունը: Հ. Աճառյանը ներկայացնում է այս կանոնին համապատասխանող բոլոր օրինակները, որոնք գործածական էին իր ժամանակ՝ արձանագրելով, որ ուրիշ օրինակ և բացառություն չկա: Դրանք են՝ *արտասուք>արտըսուք>արտուսուք, օր հասարակ>հորսուգ,* որից մակբայաբար՝ **հորսագու>հորսըգու> հորսուգու* (այժմ՝ կեսօրին), *ցուցանել>ցուցընէլ>ցուցունէլ, բրբ. շուլալել>*շուլըլէլ>շուլուլէլ, օտարցնել> օտրըրցունէլ>օտուրցունէլ* (օտար մարդ կարծելով՝ վախենալ): [Աճառեան, 38]: Լեզվական արդի փուլում Հ. Աճառյանի արձանագրած հիշյալ կանոնը առավել լայն տարածում է գտել, և մեր ուսումնասիրությունների ընթացքում հայտնաբերել ենք նոր օրինակներ՝ *անուշացնել> անուշցունէլ, անցանելու>անցունէլու* (որ կարելի է անցկացնել), *հարսնացու>հարսունցու //հարսունծու* և այլն:

ա>ի. Հ. Աճառյանը գրում է, որ այս հնչյունափոխությունը հանդիպում է միայն *ծիծեռնակ* բառի մեջ՝ *ձըձէռնիք* [*Աճառեան*]: Մեր ուսումնասիրությունների ընթացքում ի հայտ են եկել ա>ի հնչյունափոխության այլ դեպքեր, որոնք ինչպես նախկինում, այնպես էլ այժմ մեծ տարածում չունեն: Դրանք են՝ *ադիգէլ* (գործերից ազատվել, ազատ ժամանակ ունենալ), *բերանքսիվայր>բէրինքսիվար//պէրինքսիվար, պէրինքծիվար, թիբդիր* (պարսկերենից փոխառություն է, որ բնիկ լեզվում *թափդիր* ձևն ունի. նշանակում է ձեռնարկում, միջոց): Սակայն *թիբդիր* բառի մեջ հավանաբար առկա է առնմանում (երկրորդ *ի*-ի ազդեցությամբ է ա>ի):

Այնուամենայնիվ, հնչյունափոխության այս դեպքերը օրինաչափ հնչյունափոխության մասին չեն կարող վկայել նաև այսօր:

Ե>Է. ե հնչյունը բառասկզբում՝ բազմավանկ բառերի մեջ դառնում է *է (ելակ>էլաք, եփեւէն>էդէվէն, երազահան>էրաձհանա* և այլն):

Հ. Աճառյանը նշում է, որ միակ բացառությունը *եպիսկոպոս* բառն է, որը պահել է գրա-

կան արտասանությունը *(յէբիսգօբօս)* [Աճառեան]: Մեր կողմից հավելենք բացառությունների շարքում *եղանակ>յէղանագ, երեխայ>յէրէխա* բառերը, որոնք այժմ նույնպես պահպանում են *ե* հնչյունի գրական արտասանությունը:

Օտար փոխառությունները (հիմնականում թուրքերեն) նույնպես բնիկ լեզվի բառասկզբի յէ-ն պահպանում են, ինչպես՝ յէթմիշ (թուրք. յոթանասուն), յէլէք (թուրք. տղամարդու բամբակե վերնազգեստ՝ առանց թևի), յէլփէզէն (թուրք. յէլփէզէն-հովհար) և այլն:

Կան նաև մի քանի բարբառային բառեր, որոնք բազմավանկ են, սակայն բառասկզբի դիրքում արտասանվում են յէ (այստեղ, ինչպես և վերը ներկայացված փոխառությունների պարագայում, հնչյունափոխություն առկա չէ). յէզնա (մեծ քրոջ, հորաքրոջ կամ մորաքրոջ ամուսին), յէլխը (//յըլխի-ձիերի երամակ), յէլխվան (ժամացույցի մաս), յէնդռալ//էնդռալ (գեներալ):

Ե>ը հնչյունափոխությունը նույնպես Հ. Աճառյանը չի համարում օրինաչափ և բերում է միայն երկու օրինակ՝ *պճէղ>բջըղ, հրէշտակ>հրըշտակ,* սակայն յուրաքանչյուրի դեպքում բացատրում է, որ դրանք կապված են հենց տվյալ բառի յուրահատկության հետ [Աճառեան, 43]: Ներկայումս հնչյունափոխության այս դեպքը առավել տարածված է, և կարելի է ասել՝ օրինաչափ: Բերենք օրինակներ՝ *համբերել>համփրրել, ճեղքել> ջըխքել//ջըխկել, շըմփագ (շեմ>շըմ.)* և այլն:

Հնչյունափոխական այս երևույթը Հ. Աճառյանը նկատում է նաև խ-ի և որևէ բաղաձայնի (խ-ին անմիջապես հաջորդող) առկայության դեպքում, սակայն գրում է, որ այստեղ ե-ն սղվելով դառնում է ը, ինչպես՝ խեղդել>խըխթէլ//խըխտէլ, ճեղք>ճէխք>ջըխք, սեղմել>սըխմէլ: Այս կանոնից շեղվում են մեղք>մէխք և մեղադրել>մէխթրէլ, մէխտրէլ բառերը:

Որպես բառասկզբի **ե>ա** հնչյունափոխության դեպք՝ Հ. Աճառյանը բերում է եղբայր>ախպար ձևը, և հավելում, որ հնչյունափոխական այս երևույթը նոր չէ. այն հատուկ է ԿԸ ճյուղի շատ բարբառների և գալիս է հին հայերենից (հմմտ. եղագ>աղագ, երասանակ>առասան և այլն):

Մեր ուսումնասիրությունների ընթացքում նույնպես չի հանդիպել որևէ այլ բառ, որտեղ առկա է հնչյունափոխության այս դեպքը: Հանդիպել է միայն բառասկզբի դիրքում է>օ հնչյունափոխության դեպք օքուռդի թուրք. փոխառության մեջ, որ նշանակում է բարձրաձայն լաց (բնիկ լեզվում՝ էքուռդի):

Է հնչյունի հետ կապված՝ Հ. Աճառյանը գրում է, որ բառասկզբում այն քիչ է պատահում, եղած սակավաթիվ բառերն էլ ջնջված են նոր բարբառներում: Նոր Նախիջևանի բարբառում մնացել է միայն *էշ* բառը, սակայն դա էլ, հաճախ ջնջվելով, փոխարինվում է *էշաք, էշէք* թուրքերեն տարբերակներով [Աճառեան, 44]: Բառամիջի և բառավերջի *է*-ն, առանց բացառության, պահպանվում է, ինչպես՝ *ամէն>ամէն, մէջ>մէջ, անէ>անէ* և այլն: Փաստենք, որ ներկայումս Նոր Նախիջևանի բարբառում բառասկզբի *է* հնչյունը բավականին լայն կիրառություն ունի (հատկապես փոխառյալ բառերի դեպքում), օրինակ՝ *էգուն, էթէռնիք, էլամա, էման, էմէգ, էսլընալ* և այլն:

Ը հնչյունը բոլոր դիրքերում պահպանվում է: Բառասկզբի դիրքում՝ Հ. Աճառյանը բերում է իր հավաքագրած բոլոր օրինակները՝ *ընկեր>ընգէր, ընկոյզ>ընգուզ, ընտրել>հընդրել* [Աճառեան, 45]: Ամենայն հավանականությամբ ինչպես *է*-ով, այնպես էլ *ը*-ով սկսվող բառերը հետագայում են լայն տարածում գտել: Ներկայացնենք *ը*-ով սկսվող բառերի օրինակներ՝ *յաղթել>ըխթէլ//ըխտէլ, ընկեր>ընգէր* (ուսուցիչ), *ընտանիք>ընդանիք, ըռռագ* (ձկնորսական ցանց) և այլն: Մեր քննությունը ցույց է տվել, որ բարբառում միավանկ բառերի սկզբնային *ռ*-ից առաջ շրթնային որևէ

տարրի հավելում այլևս չկա: Ինչ վերաբերում է քմայնացած ձայնավորներին, ապա դրանք առհասարակ վերացել են բարբառից՝ *դուռ>փուռ, դուրս>փուս, զրուցել>զուրուցէլ, ջուր>ճուր, փուն>փուն* և այլն:

Եզրակացություն

Նոր Նախիջևանի բարբառում և ենթաբարբառներում ձայնավորները կրել են ամենատարբեր փոփոխություններ՝ դրսևորելով թե՛ հնչյունափոխական յուրահատկություններ և թե՛ նոր օրինաչափ դեպքեր: Սույն հոդվածում զուգադրահամեմատական վերլուծությունների մեթոդով ներկայացված է Նոր Նախիջևանի բարբառի ձայնավորների արդի լեզվավիճակը՝ իր կրած փոփոխություններով և ի հայտ եկած նոր օրինաչափություններով, որոնց հանգել ենք սեփական դիտարկումներից ելնելով:

Մեր հետազոտությունը վկայում է, որ լեզվական արդի փուլում երկբարբառային արտասանություն ունեցող ձայնավորները վերածվել են պարզ ձայնավորների, ուստի փոխվում է Հ. Աճառյանի ներկայացրած պատկերը և ձայնավորների շարքից դուրս են մնում երկբարբառային արտասանություն ունեցողները: Ներկայացրել ենք նաև հնչյունափոխության նորահայտ դեպքեր, որոնք դիտարկել ենք իբրև բացառություններ և ոչ թե օրինաչափություններ: Հանդիպում են հնչյունափոխության այնպիսի դեպքեր, որոնք Հ. Աճառյանը չէր համարում օրինաչափ, սակայն այսօր կարող ենք վկայել հակառակը:

Գրականության ցանկ

1. Աճառեան Հրաչյա: Քննութիւն Նոր-Նախիջևանի (Խրիմի) բարբառի, ապակետիպ: Երևան, 1925:
2. Ջալաշյան Կևորգ: Նոր Նախիջևանի բարբառի բացատրական բառարան: Դոնի Ռոստով, 2018:

SHIFTS IN THE VOWELSYSTEM OF THE NEW NAKHICHEVAN DIALECT

Botsinyan M. S.,
Postgrauduate student
YSU, Department of History of Armenian Language
mariana.botsinyan@ysumail.am

Abstract

New Nakhichevan dialect hasn't been studied for nearly hundred years.

Hrachya Acharyan was the only researcher of the dialect. Our research is based on the comparative analysis and represents the modern language form of the vowels of the New Nakhichevan dialect. This research offers new examples and patterns to the observations made by H. Acharyan have been completed with new examples and patterns in this study. Our research proves that modern language level of the vowels has diphtongs turned to simple vowels and that's why New Nakhichevan dialect currently has six vowels: a, e, [ը], u, i, o. The article also adresses the new cases of sound changes which can't be testified today. Change ա>ու Acharyan, which weren't common both then and now. Such as [adigel], [beransivar]. Here are common examples of this case such as: [yeghanag], [yerekha].

There are some sound changes, which Acharyan doesn't admit in formal, but here there are vice versa definitions of this case. Some more examples of this case, such as: hamprel. We noticed the sound changes at the beginning of the word [է] and [ը]. Actually faded sounds disappeared.

Keywords: The New Nakhichevan dialect, subdialect, vowels, consonants, sound change, patterns, changes.

Ներկայացվել է՝ 12.04.2022 թ.
Գրախոսվել է՝ 24.05.2022 թ.

Simonyan A. A.
PhD student
YSU, Chair of English for Cross-Cultural Communication
ani-simonyan-94@mail.ru

Abstract

In our era of new digital technology it is almost impossible to imagine media communication without various means offered by advanced technology which has transformed public speaking by offering videoconferencing and multimedia presentations. One of the main characteristics of contemporary communication is multimediality allowing the use of various media at the same time. Every user is free to share his/her ideas with hundreds and thousands of people without outside control. Media platforms can be used to address any problem enabling information transmission without special and temporal boundaries. Social media sites have transformed the traditional online behavior restricted to merely sending and receiving message. Users of contemporary media perform numerous actions in addition to sending, receiving, editing and sharing information. Communication in the 21st century is interactive, mobile and abundant. Public communication on media platforms is characterized by specific features in relation with punctuation, spelling, vocabulary, grammar, etc. The research is based on the thorough analyses of two cases taken from social media (Twitter) and TED.com to illustrate the interaction between public communication and media.

Keywords: public communication, multimediality, digital technology, social networking sites, sender-receiver, interactive user, netizen.

The **object** of the study is the interrelation between public communication and media.

The **topicality** of the paper is determined by the fact that modern media can boast a variety of new means of communication which change the traditional way of sending and receiving information and the role people have in relation with a certain piece of information. Thus, this paper **aims** at revealing the use, effects and advantages of contemporary media as compared to the earliest traditional forms and at detecting media platforms, opportunities of spreading information, peculiarities of multimodal language and techniques of effective communication. The paper also highlights the factors that contribute to the enhancement of meaning and provides examples that are meticulously discussed through **Case Study and Qualitative Analysis** to discover how information is handled, sent and received today. The methods are chosen according to the degree of efficiency as the analysis will be more revealing and easy to perceive if illustrated on specific examples.

Modern communication and new user roles

Public communication is the act of speaking, rendering information and delivering a presentation or lecture to audiences in an organized, structured and deliberate manner to inform, influence, persuade or entertain them. It is about understanding, planning, realizing and assessing successful communication campaigns in relation to public service. It aims not only at informing but also convincing, motivating, entertaining, relationship building and encouraging open dialogue which serves public interest. These goals are generally achieved with the help of modes of persuasion and rhetoric strategies or appeals used in multimedia forms.

Cambridge Dictionary [*2021*] defines the term *media* (the plural of *medium*) as the amalgamation of the Internet, magazines, television, newspapers, etc. In the past media was perceived as communication means represented via different institutions and organizations such as the press, TV, advertising, cinema, photography. However the 21st century has

introduced a whole new realm of communication-cyberspace. The internet with its enormous and infinite possibilities has changed the way people send and receive information. Video chats, blogs, various social networking sites such as the Twitter, Instagram, Facebook, etc. have given everyone the opportunity to communicate publicly and influence public opinion. This opportunity is used by audiences from all walks of life - politics, business, fashion, etc. The concept of audience is essential to media studies as it is the group of people that profoundly influence mass communication, intersecting and overlaying all issues connected with communication theories [*Zhao 132*].

These days there has been a shift from *audiences* to *users* and from *consumers* to *producers*. As a result, the passive receivers of the past have gained a new active identity. The way information is handled is also different. People can share or receive information as well as discuss and comment on ideas in the comment or feedback sections, debates and challenge opinions. It is claimed that today's audiences or *netizens* are not only the receivers but also the spreaders of information [*Zhao 133*].

In the new era of digital technology the users can be selective due to the overabundance of media platforms. Also, they can circulate and distribute information after consuming it. The overwhelming use of personally owned devices has turned people to interactive users. Our screens have become very small, varied and immersive. As McQuail sees it, the audience encompasses all of the following roles: seeker, consultant, conversationalist, interlocutor, respondent, browser [*McQuail 1-11*].

Speaking about contemporary media, Amit Schejter and Noam Tirosh claim that the terms *new* and *social* are typically used to distinguish modern media from the traditional ones [*Schejter, Tirosh 283*]. However, they claim that these terms do not help to distinguish contemporary media from those which existed previously. The mentioned authors believe that the word *contemporary* does not only refer to the date of appearance of new forms of media. They distinguish four main characteristics that help us understand the nature of contemporary media: **mobility, interactivity, abundance** and **multimediality**. The so-called *new media* are mobile and interactive. In addition, they provide an opportunity to access and deliver infinite amounts of data. They also enable the user to express ideas in various ways (images, moving images, sounds, designs, infographics, written words) which can be used simultaneously. Among the mentioned characteristics, multimediality plays an important role in the realization of social functions of public communication/discourse. The term *multimediality* can be defined as a combination or amalgamation of all technologies or communication forms [*Deuze 212*]. However, Schejter and Tirosh see it as an opportunity of an individual to use several or all varieties of expression at once according to their preferences [*Schejter, Tirosh 19*]. Multimediality empowers the user. Being one of the characteristics of contemporary media, multimediality influences the users' ability to send messages rich in information. This characteristic is the result of the development of technologies and their digitization enabling users to transmit sound, image, text, etc. Multimediality refers to the nature of the message. However, media industries view multimediality as the possibility to send more content to less people. Contemporary media is more effectively compared with the 20th century media as it is socially more productive owing to the ability to convey more and richer information. In addition, today the media are (are considered to have) a constant presence in communication.

Before digital media, the type of mass communication called electronic media, was represented by the radio, TV and the telephone. When we compare the radio and telephone with the TV, we can say that the radio and telephone used to transfer sound or voice, while the TV provided more opportunities of conveying rich messages in different modes - sound, image, video, etc. Through electronic media only large corporations had the capability of sharing information and creating messages. As already mentioned, the radio and the telephone used sound as their main and only medium. With the introduction of the TV, people witnessed the creation of colorful moving pictures. Nevertheless, it was only with the introduction of the Internet that people started interpersonal, group and mass communication using words, sounds, pictures and moving pictures at the same time through multimediated modes of communication.

Social media sites contain information about all the spheres of human life. Posts can be about everything and anything starting from people's emotions, opinions, desires and feelings to personal, public and global issues, health, weather, musical taste, political inclination, etc. Posts serve as a platform for public communication giving every individual an opportunity to share his/her ideas with a great number of people called *followers*. The posts can turn to love confessions, warnings, calls to start a movement, a rebellion or join a project, volunteer or donate money. Social networking sites are available to people from all layers of society on any topic of public interest. For example, recent posts by both public figures and ordinary people, as well as official news by authorized institutions, most regularly turn to the topic of COVID-19 outbreak, vaccination and anti-vaccination campaigns.

The variety of modes and media provide the users (public figures and individuals) with great freedom to express their opinion, and in social networking sites mostly no one controls the content of the message. Therefore, texts in social sites can be described by:

- Punctuation mistakes, lack of punctuation or overuse of certain punctuation marks - several exclamation marks following each other (*!!!*) or hashtags after each word (*#peace#for#Armenia*).
- Wrong grammar, double negation (*I didn't have nobody*).
- Abbreviations (*DM, TTYL, IDK, JK*).
- Spelling errors (*carry* instead of *care*, *basicly* instead of *basically*, *agressive* instead of *aggressive*, *their-there-they're*).
- Special coloring to catch attention, for example, red exclamation marks (*!!!*).

Social networking sites can boast an incredible use of modes. Facebook, Instagram, Twitter and other commonly used networking sites are seen as efficient means of public communication enabling users to deliver their messages to large masses through posts, stories, videos, etc. Social media sites, especially the Twitter, are widely used by political leaders, government departments and important public figures during various campaigns to inform people about their actions. Besides posting ordinary messages, pictures and videos people have an opportunity to show their emotions through emoticons or GIFs on Facebook and Instagram. On Twitter, on the other hand, people use the hashtag (#) to emphasize the words which bear essential message or to draw the attention of people and organizations connected with the information shared in a particular post to allow cross-referencing of content. All of the above mentioned sites are used for various purposes: advertisements, political campaigns, general awareness, chatting, public health, sharing personal opinion and current news. On Twitter one can find hundreds of political leaders, famous artists, influencers who share their ideas or a piece of information as a text, in combination with a picture or a video, hashtag and other symbols. The name *Twitter* itself means short and high sounds made by a bird and it is known that birds in the past were associated with news. Pigeons, for instance, were used to pass messages to people at a distance. Posts on Twitter are called *tweets*.

At this point we shall discuss one of the US President Biden's recent tweets on his actions in the framework of his *Build Back Better Agenda*. He added the video of his speech with subtitles to the tweet.

Figure 1.



Social media, as a means to inform and influence the audience

The President's *Build Back Better Agenda* is an ambitious plan for working families. It is about creating jobs, cutting taxes and lowering costs. It is expected that the wealthy and large corporations will pay their fair share. The agenda includes lower health care costs, lower housing and child care costs, lower higher education and drug costs. In this particular speech and tweet the President informs the US public that they have discovered 500 companies which haven't paid any taxes to the country at the same time earning more than 40 billion dollars each. According to the president, the taxes will go up for rich business people only and working families making less than 400.000$ will not be influenced. The President uses all the three components of public communication – ethos, pathos, logos. The fact that he presents the information on the US president's official account in the framework of his *Build Back Agenda* fills the audience with confidence that whatever is written or spoken is firmly grounded on real facts. The president is an authority figure who has the right and the responsibility to care for average people (ethos). To make the information more realistic and reliable, the president uses logos – facts and figures (500 companies, 40.billion $, 1 trillion $). Finally, the repetition of facts, the hint at injustice which emerged from earning so much money during the pandemic and paying no taxes to the government is an appeal to average workers' emotions which is to fill them with the wish to act and to change the unfair situation (pathos). The subtitles contribute to the better perception of the language used in the speech increasing the power of mass influence. They let the audience hear and read the information at the same time. When speaking the president uses simultaneous gestures to make his words more impressive and memorable.

A new form of communication or speech delivery has emerged as a result of the interaction between public speaking and contemporary media – the Ted Talk. These talks are globally broadcast conferences. This format has attracted more people and hence has a larger audience due to the fact that the listener's presence can be physical or virtual. This particular format of delivering speeches to millions of people all over the world on Ted.com or YouTube can boast a wide range of modes used in

each video. There are some which are of particular interest to us. The video which is going to be discussed is chosen from the educational section where the speakers themselves are not seen talking on the stage but sharing information with the help of an educational and at the same time scientific cartoons which thoroughly observe the problem, give explanation and reveal facts. All of this is enhanced by the impressive video and subtitles we see on the screen. In this video we will pay particular attention to the linguistic mode with the aim of revealing its impact on public communication. As soon as the video starts *TED Ed LessonsWorthSharing* appears on our screens in red and black bold letters. *TED* is a signal word which fills the viewer or the listener with confidence that the piece of information shared in the video is reliable, fresh, interesting and helpful as the project has a very good reputation all over the world.

The talk is on vaccination and it aims at giving some clarifications about modern vaccines. As we have recently experienced several severe outbreaks of COVID19, vaccines have been invented to fight the disease and stop its further spread. The new vaccines have evoked suspicion in people as they seem to be invented in haste and lack essential information on their consequences on human health. The process used to take pretty long in the past and the effects could be seen only after several decades. The authors of the video aim at giving detailed information on the composition of modern vaccines whose main component is *mRNA*. The video starts with a quote by Jeffrey Kluger: *Vaccines save lives; fear endangers them*. The video contains a number of semiotic signs such as words and images which have their great contribution to the smooth delivery of information. One of the main semiotic signs or signal words is the term *mRNA* which regularly appears on the screen being represented as a baseball player who fights diseases on the containers of vaccines. Among the key signal words are *vaccine, virus, protein, viral, immune response, cell, infection and spike.* Another sign is the injector which represents the three stages of the development of new vaccines - research, test, production. The information seems quite logical, reliable and scientifically trustworthy due to the terms used, medical images and animation shown throughout the video, the speaker's voice, careful poses and stresses.

Figure 2.

Contemporary media: Multimodality in TED.com

YouTube is a platform allowing people to give speeches. Broadcasting or the YouTube are also viewed as having nothing to do with public discourse as there is no real audience. However, every speech that manages to educate or attract the attention of a number of people can be considered public communication.

With modern technology, multimedia presentations can consist of video clips, sound effects, animation, laser pointers, remote control clickers and endless bullet points, all of which contribute to the presentation and reshape the traditional views on public communication. Public speakers can use the system of audience response. For a larger group, however, the speaker may turn to the help of loudspeakers or microphones as public address system.

Conclusion

Contemporary media and multimediality have radically changed public communication. The exchange of information has become more efficient and interactive. The relevant use of various opportunities offered by media platforms can contribute to the process of communication by enhancing the message and leaving a long-lasting effect on the target audience. Contemporary media is distinguished by mobility, interactivity, abundance and multimediality. This means the new media are not only mobile and interactive but also provide an opportunity to access and deliver infinite amounts of data and enable people, involved in public communication, to express ideas in various ways (images, sounds, designs, infographics, written words). Multimediality, the amalgamation of all technologies or communication forms, plays an important role in the realization of public communication/discourse. It is an opportunity to use several or all varieties of expression together according to preferences to communicate with the public. Multimediality, one of the major characteristics of contemporary public communication, is the result of the development of technologies and is socially more productive owing to the ability to convey more and richer information. Today it is a constant presence in public communication.

References

1. Deuze Mark. The Web and its Journalism: Considering the Consequences of Different Types of Newsmedia Online.Sage Publications, Vol. 5(2).2003. pp.203-230.
2. McQuail, D. Audience analysis. Thousand Oaks. London: Sage, 1997, 1-11.
3. Shjeter Amit, Tirosh Noam. Much Discourse about Justice. Contemporary Media Policy in the Age of Abundance, Mobility, Interactivity, and Multimediality. Researchgate, Palgrave Macmillan 2016, pp.1-127.
4. Tirosh, N. & Shjeter, A. Social Media New and Old in the Al-‘Arkeeb Conflict: A Case Study, London: The Information Society 28, 2012, pp. 304-315.
5. Zhao, T. Analysis of the Concept of Audience in the Digital Age. London: Atlantis Press: School of Economics, 2018, pp.132-137 https://dx.doi.org/10.2991/erss-18.2019.26
6. Cambridge Dictionary, 14.January.2022, https://dictionary.cambridge.org/dictionary/english/media

Source of Language Data

1. Twitter (2020). Retrieved October 10, 2020 from https://twitter.com/POTUS/status/1447253928077320196?t=OfMRGicDiXjRjhKTQdvTSg&s=19
2. Ted Talks (2021). Retrieved July 30, 2021 from https://ed.ted.com/lessons/how-the-covid-19-vaccines-were-created-so-quickly-kaitlyn-sadtler-and-elizabeth-wayne?lesson_collection=how-things-work#review

Ներկայացվել է՝ 14.04.2022 թ.
Գրախոսվել է՝ 22.05.2022 թ.

ՀԵՌՈՒՍՏԱՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ԼԵԶՎԱԳՈՐԾԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ջաբաղյան Ն. Դ.
ասպիրանտ
ԵՊՀ, Թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոն
narejab@gmail.com

Ամփոփագիր

Սույն ուսումնասիրության ուշադրության կենտրոնում հեռուստատեսային հարցազրույցների վերլուծությունն է, որի նպատակը վերջիններիս գործաբանական և լեզվաբանական առանձնահատկությունների վերհանումն է: Հարցազրույցի, որպես ժանրի, լեզվական իրացումը որոշվում է բառային և քերականական (ձևաբանական և շարահյուսական) միջոցների ամբողջությամբ:

Լեզվական գործիքների ընտրությունը կախված է զրույցի հաղորդակցական նպատակներից և որոշվում է ըստ հարցազրույցի իրավիճակի, առարկայի և երբեմն էլ՝ կոնկրետ պահի: Հարկ է նշել, որ հեռուստադիտողը, ընթերցողը կամ ռադիոլսողը (լսարանը) կարող է հավատալ խոսողի խոսքի ճշմարտացիությանը և ընդունել նրա կարծիքը, որն էլ հենց հանդիսանում է լրագրողի հիմնական նպատակը՝ հասնել իր առջև դրված նպատակին մտաշահարկման (մանիպուլյացիայի) օգնությամբ: Լրատվամիջոցների ներունակությունների վերլուծությունը թույլ է տալիս ասել, որ հարցազրույցի ժանրը, պրագմատիկ առումով, բացի տեղեկություն փոխանցելուց իրականացնում է ևս մեկ գործառույթ. այն է՝ խոսքի միջոցով ազդեցություն գործելը:

Ժամանակակից հեռուստատեսային հարցազրույցը հիբրիդային (խառը), խոսակցական-լրագրողական ժանր է, որը բնութագրվում է իր ազատ ոճով, արտահայտչամիջոցներով հարուստ ճկուն լեզվով, որը ներառում է և՛ խոսակցական լեզվի տարրեր, և՛ գիտական ոճի հատկանիշներ: Խոսքի ընթացքում խոսակցական և ժարգոնային բառապաշարը նպաստում է մտքի լիարժեք ընկալմանը՝ թույլ տալով հաղթահարել հաղորդակցման հոգեբանական խոչընդոտները:

Հիմնաբառեր. հեռուստահարցազրույց, գործաբանական վերլուծություն, խոսքային իրավիճակ, հարցազրուցավար, հարցվող, մտաշահարկում, բառապաշարային և քերականական միջոցներ:

Ներածություն

Հոդվածի շրջանակներում փորձ է արվում ներկայացնել լեզվաբանական և գործաբանական մոտեցումների դերը հեռուստահարցազրույցների վերլուծության գործընթացում, ինչպես նաև ընդգծել լեզվի և հաղորդակցության փոխկապակցվածությունը: Ուստի, այս աշխատանքի նպատակն է լույս սփռել հեռուստատեսային հարցազրույցների ինչպես լեզվական, այնպես էլ գործաբանական առանձնահատկությունների վրա:

Այս հետազոտության հիմքում ընկած է ընդհանուր առմամբ հեռուստահարցազրույցների գործընթացի վրա ազդող լեզվական և արտալեզվական գործոնների ուսումնասիրությունը: Հոդվածում փորձ է արվում բացատ-

րել, թե ինչպես են հարցազրուցավարն ու հարցվողը իրականացնում իրենց հաղորդակցական նպատակները: Հարցազրույցի ազդեցությունը հեռուստադիտողի վրա որոշվում է հաղորդակցական-գործաբանական կողմնորոշմամբ: Դա կախված է ոչ միայն պատասխանողից, այլև մշակութային և խոսքային իրավիճակի առանձնահատկություններից:

Գործաբանական տեսակետից հարցազրուցավարը կարող է ունենալ ոչ միայն ուղղակիորեն ակնհայտ, այլև ծածուկ նպատակներ: Անհնար է անտեսել հարցազրույցի անկանխատեսելիությունը, որը մշտապես զգոն է պահում թե՛ հաղորդավարին, թե՛ զրուցակցին: Մինչդեռ լեզվաբանական տեսանկյունից մասնակիցները կարող են դիմել բազմաթիվ լեզվական հնարների, մեթոդների, կարող են օգտագործել տարբեր գործիքներ՝ հարցազրույցի ընթացքում իրենց առջև դրված նպատակներն իրականացնելու համար: Հետևյալ հետազոտությունը կենտրոնանում է նաև լեզվական միջոցների վրա, որոնք օգտագործվում են հանդիսատեսի վրա ազդեցություն կամ տպավորություն գործելու համար:

Այս հետազոտության նպատակն է նաև հասկանալ, թե որ գործառական ոճին են պատկանում հատկապես հեռուստատեսային հարցազրույցները, քանի որ այս հարցի շուրջ դեռ շատ քննարկումներ և հակասություններ կան:

Լեզուն որպես հարցազրույցի հիմնական գործիք

Հարցազրույցի գործընթացը տեղի է ունենում հիմնականում խոսքի միջոցով, և, հետևաբար, լեզուն այն միջոցը կամ գործիքն է, որով աշխատում են հարցազրույցի մասնակիցները:

Լեզուն մտքերի կամ գաղափարների արտահայտչամիջոց է, որի շնորհիվ մարդուն հաղորդակցվելու հնարավորություն է ընձեռնվում, այսինքն՝ եթե կա հաղորդակցման նպատակ, լեզվի առկայությունը դառնում է պարտադիր: Քուիրկը գտնում է, որ լեզուն «մարդկային արտահայտման գործիք է՝ ձայնալարերի ստեղծած հնչյունների միջոցով» [*Quirk, 42*]:

Լեզուն կարող է դիտվել որպես մարդկային այլ գործունեությունների հիմք. այն կարող է դիտվել ինչպես մարդկային մտքերի, այնպես էլ մարդու զգացմունքների և գաղափարների արտահայտման միջոց: Այն օգնում է մարդկանց հաստատել և պահպանել սոցիալական կապեր և հարաբերություններ, ինչպես նաև իրականացնել հաղորդակցություն:

Հաղորդակցման նպատակը հասկանալու համար ամենակիրառելի մոտեցումը գործաբանական վերլուծությունն է: Գործաբանությունը զբաղվում է արտահայտած մտքերի և խոսքի իմաստների վերծանմամբ, որոնք, հնարավոր է, խոսողի կողմից ուղղակիորեն չեն հնչում: Այն վերլուծում է լեզվակիր անհատների միջև հարաբերությունները, դրանց կիրառումը հաղորդակցական-գործաբանական տիրույթում, որոնք էլ կապված են հաղորդակցական ակտի նպատակից և սպասելիքներից:

Այստեղ լեզուն դիտարկվում է որպես միջոց, որն օգտագործվում է մարդու կողմից իր գործունեության ընթացքում, ուսումնասիրվում է նշանների ազդեցությունը իրական խոսքային իրավիճակներում՝ կենտրոնանալով դրանց և օգտագործողների միջև հարաբերությունների ուսումնասիրության վրա: Արտալեզվական գործոնները, ինչպիսիք են՝ խոսողի մտադրությունը, խոսքի արտահայտման պայմանները, խոսողի և հասցեատիրոջ միջև սոցիալական հարաբերությունները, օգնում են հասկանալ լեզվական գործունեության ամբողջական նպատակները [*Малюга, 11-17*]:

Այս մոտեցումը թույլ է տալիս հասկանալ խոսքի ընդհանուր համատեքստը և, հետևաբար, նպաստում է իմաստի վերծանմանը և խոսողի մտադրության բացահայտմանը:

Հետաքրքրական է, որ համատեքստը և համապատասխան լեզվի կիրառումը միմյանցից անկախ չեն, այլ ընդհակառակը, միշտ սերտորեն կապված են իրար: Հարկ է ընդգծել, որ լեզվի և համատեքստի միջև փոխազդեցությունն էական դեր է կատարում հատկապես հեռուստահարցազրույցների ընթացքում:

Լեզվի օգտագործումը մշտական գործընթաց է և ակտիվ ազդեցություն ունի այն միջավայրի վրա, որտեղ իրականացվում է հաղորդակցական գործընթացը: Ըստ այդմ, որոշակի հաղորդակցական կամ ներազդման նպատակի հասնելու համար կիրառվում են տարբեր լեզվական գործիքներ և միջոցներ: Հաղորդակցությունը կարող է դիտվել որպես լեզվի և համատեքստի միջև գոյություն ունեցող պատճառահետևանքային կապ, և այս երկու հասկացությունների փախազդեցությունը մեկը մյուսի վրա ակնհայտ է:

Հարցազրույցի ժանրային առանձնահատկությունները. Մտաշահարկման դերը հարցազրույցների ընթացքում

Հարցազրույցները հանրային զրույցի ձև են և համարվում են լրագրողական արվեստի որոշակի դրսևորում: Հատկապես քաղաքական հարցազրույցները ճիշտ հասկանալու համար շատ հաճախ կատարվում է դրանց գործաբանական վերլուծություն, որը կենտրոնանում է խոսքային իրավիճակում և որոշակի պայմաններում լեզվի ձևավորման և ընկալման վրա: Օրինակ՝ գործաբանական մոտեցման միջոցով կարելի է վերծանել լրագրողների ծածկագրված նպատակները: Հարցազրուցավարները իրենց հարցերը զգուշությամբ և շատ հաճախ դիտավորյալ կազմում են այնպես, որ քաղաքական գործիչները հայտնվեն լարված իրավիճակում, որպեսզի ուղղակիորեն տան լրագրողի ակնկալած պատասխանը, կամ հարցերից խուսափեն և տան անուղղակի պատասխաններ: Այնուամենայնիվ, խուսափողական և անուղղակի պատասխանների դեպքում էլ լրագրողը հասնում է իր առջև դրված նպատակին, քանի որ հարցվողը իր վարքագծով արդեն իսկ ցույց է տալիս իր իրական միտքը:

Ինչպես արդեն նշել ենք, հարցազրույցները, որքան էլ որ լինեն նախապես պլանավորված, անկանխատեսելի են: Միևնույն ժամանակ, հարցազրույցի կարևոր խնդիրն է ապահովել հարցվողի տեղեկատվական և հաղորդակցական նպատակների փոխանցման ճշգրտությունը: Հեռուստատեսային հարցազրույցը տեղեկատվական լրատվամիջոցների բովանդակության սպառողին (հեռուստադիտողին) թույլ է տալիս կարծիքը, լուրը, տեղեկությունը ստանալ բառացիորեն «առաջին ձեռքից», ուղիղ եթերում լսել և տեսնել հարցազրույցի մասնակիցներին [*Van Dijk, 20-24*]:

Լեզուն, որպես կանոն, օգտագործվում է որոշակի նպատակի համար, նույնիսկ եթե այն առաջին հայացքից ակնհայտ չէ: Խոսողի կողմից այս կամ այն լեզվական միջոցի գիտակցված օգտագործումը անկասկած մեծացնում է լսարանի գիտակցության վրա ազդելու հնարավորությունները: «Հավանաբար, լեզվի ստեղծման պահից այն օգտագործվել է ազդեցություն գործելու և շահարկելու նպատակով» [*Иссерс, 71*]: Այս առումով գիտական ոլորտներում բազմաթիվ հետազոտություններ են իրականացվում խոսքի ազդեցության վերաբերյալ: Նման հետազոտական աշխատանքներ կարելի է հանդիպել այնպիսի գիտությունների շրջանակներում, ինչպիսիք են հոգեբանությունը, քաղաքագիտությունը, հաղորդակցության տեսությունը, հանրալեզվաբանությունը, հոգելեզվաբանությունը և այլն: Գիտնականներն ակտիվ ուսումնասիրություններ են կատարում խոսքային ազդեցության այնպիսի հարցերի շուրջ, ինչպիսիք են՝ հաղորդակցական գործիքների ճանաչողական հիմքը, իրականացման մեխանիզմները,

խոսքի մանիպուլյացիայի (մտաշահարկման) մարտավարությունը և հնարները և այլն:

Շատ հեղինակավոր գիտնականներ անդրադարձել են լեզվական մանիպուլյացիայի (մտաշահարկման) հասկացությանը: Դեռևս խորհրդային ժամանակներում զանգվածային հաղորդակցության ոլորտում խոսքի ազդեցության վերաբերյալ իրենց տեսակետն են հայտնել ժամանակի ականավոր գիտնականները: Նրանք սահմանել և ձևակերպել են այս հասկացությունը լայն և նեղ առումներով: Մի կողմից այն դիտարկվում է որպես ցանկացած խոսքային հաղորդակցություն՝ իր որոշակի նպատակաուղղվածությամբ, մյուս կողմից՝ զանգվածային լրատվամիջոցների համակարգում քարոզչական ներկայացում անմիջապես հանդիսատեսի առջև [*Тарасов и др., 107*]:

Չինացի գիտնական Սուն Յուհուան, ով հանդիսանում է քաղաքական լեզվաբանության հիմնադիրը Չինաստանում, սահմանում է քաղաքական լեզվաբանությունը որպես գիտություն, որը «լեզվական տեսանկյունից ուսումնասիրում է այն օրենքներն ու մարտավարությունը, որոնց կիրառումը կարող է հանգեցնել քաղաքական իշխանության գրավմանը և գաղափարախոսական շահարկմանը» [*Сун и др. 20*]:

Չերնյավսկայան լեզվական մանիպուլյացիայի վերաբերյալ ունի հետևյալ կարծիքը. «Մենք մանիպուլյացիան հասկանում ենք որպես խոսքի ազդեցություն, որն անուղղակիորեն և ծածուկ կերպով հասցեատիրոջը դրդում է որոշակի գործողություններ կատարելու» [*Чернявская, 65*]:

Ըստ Ստերնինի, խոսքի ազդեցությունը խոսքի կամ ոչ խոսքային միջոցների օգնությամբ մեկ անձի ազդեցությունն է մեկ այլ անձի կամ անձանց խմբի վրա՝ սահմանված նպատակին հասնելու համար: Նա գտնում է, որ խոսքային ազդեցությունը և խոսքի մանիպուլյացիան տարբերվում են իրարից նրանով, որ առաջինի պարագայում ազդեցությունը կատարվում է բացահայտ և գիտակցաբար, մինչդեռ երկրորդի դեպքում՝ այն անուղղակի է և գաղտնի [*Стернин, 51-66*]:

Հարկ է նշել, որ զանգվածային լրատվամիջոցներում և հատկապես քաղաքական կամ հասարակական հարցազրույցներում խոսքային ազդեցությունը հանդիսատեսի վրա տեղի է ունենում անմիջապես, և հեռուստադիտողի համար չեզոքություն պահպանելը դառնում է անհնար: Հավանաբար, հեռուստահարցազրույցներն ամենամեծ ազդեցությունն ունեցող լրատվական միջոցն են՝ հենց իրենց տեսալսողական բնույթի շնորհիվ, քանի որ պարզապես ինչ-որ նյութ թերթում կամ համացանցում կարդալը և անմիջապես կոնկրետ անձից լսելն ու տեսնելը միանշանակ աշխատում են ի օգուտ հեռուստահարցազրույցների: Հարցազրույցի հյուրը կամ նույնիսկ հարցազրուցավարը իրենց կիրառած լեզվական և արտալեզվական միջոցների շնորհիվ չեն կարող անտարբեր թողնել հանդիսատեսին:

Խոսքի ազդեցության ընթացքում որոշակի լեզվական հնարների կիրառությունը թույլ է տալիս խոսողին արտահայտել անձնական վերաբերմունք իր իսկ արտահայտած տեղեկատվության նկատմամբ, որին նպաստում է ոչ միայն տեղեկության փաստացի բովանդակությունը, այլև ենթատեքստային և ոչ ակնհայտ իմաստ արտահայտող բառային միավորների օգտագործումը: Լեզվական հնարները էական նշանակություն ունեն և ներառում են բառային, քերականական և ոճական միջոցներ:

Հարցազրույցների ընթացքում ազդեցություն գործելու լեզվական և քերականական հնարները

Լեզվի բառային մակարդակը, որի հիմնական միավորը բառն է, ներկայացնում է խոսքի ազդեցության ամենալայն հնարավո-

ությունները: Ըստ Ռյուկովայի, կոնկրետ թեմայի հետ կապված բառերի ընտրությունը աննպատակ չէ, քանի որ բառն իր մեջ կոնկրետ իմաստ է պարունակում քննարկվող թեմայի վերաբերյալ [*Рюкова, 431*]:

Բառային միջոցների ամենակարևոր տեսակներից է դարձվածային միավորների կիրառումը, քանի որ դրանց շնորհիվ հարազրույցի մասնակիցները խոսքը կարող են փոխաբերական դարձնել և դուրս գալ դժվարություններից, երբ չեն ցանկանում ուղղակիորեն նշել առարկաների որոշակի հատկանիշներ և պատրաստ են միայն անուղղակիորեն մատնանշել դրանք: Դարձվածները պարունակում են ժողովրդական իմաստություն և ընկալվում են որպես հայտնի և անփոփոխ ճշմարտություն:

Հարցազրույցներում հաճախ հանդիպող ոճական հնարներից են չափազանցությունը (հիպերբոլ), այլաբանությունը, հեգնանքը, ակնարկը, փոխանունները, նրբաբանությունը (օքսիմորոն) և այլն: Ոճական հնարները ուժեղացնում կամ թուլացնում են տեղեկատվության ազդեցությունը ստացողի վրա, դրանց շնորհիվ առանձնացվում և կարևորվում են նկարագրված առարկաների որոշ առանձնահատկություններ, մինչդեռ մյուսների նշանակությունները կարող են անտեսվել:

Հոմանիշների և հականիշների օգտագործումը նույնպես ծառայում է որպես խոսքի միջոցով ազդեցություն գործելու տարածված ոճական միջոց: Հոմանիշների օգտագործումը բարձրացնում է խոսքի դրական կամ բացասական հուզական երանգավորումը, դրա եղանակավորող իմաստները, իսկ հականիշների միջոցով խոսողին հաջողվում է երկու հակադիր բևեռների միջոցով հասնել իր իսկ մտքի պատկերավոր ձևակերպմանը:

Բանավոր խոսքում, հատկապես՝ քաղաքական ոլորտում, հաճախ են հնչում հռետորական հարցեր, որոնց միջոցով խոսողը՝ տվյալ դեպքում հարցվողը, ինչ-որ առումով երկխոսության մեջ է մտնում հեռուստադիտողների հետ, ակտիվացնում նրանց մտածողությունը: Ըստ էության, հռետորական հարցի միջոցով խոսողը հեռուստադիտողի ուշադրությունը կենտրոնացնում է որոշակի գաղափարի վրա:

Քերականական միջոցների կիրառման ամենացայտուն օրինակը կրավորական կառույցների կիրառումն է, որը թույլ է տալիս խոսողին խուսափել ինչ-որ գործողության իրականացնողին կամ պատասխանատուին նշելուց ուղղակիորեն: Գործողության անմիջական կատարողի անունը չնշելը պատասխանատվությունից և սադրանքի մեղադրանքներից խուսափելու միջոց է: Նմանատիպ քերականական միջոցներից է նաև կոնկրետ անձի կամ անձանց փոխարեն երրորդ դեմքի հոգնակի թվի դերանվան (*նրանք, they*) կիրառումը, ինչպես նաև անորոշ դերբայի օգտագործումը որպես ենթակա: Օր.՝

Նախագահի բացակայությունն այդքան կարևոր իրադարձությունից անընդունելի է:

Այդքան կարևոր իրադարձությունից բացակայելն անընդունելի է:

Տրված օրինակում ներգործական սեռով դրված նախադասության փոխարեն անդեմ նախադասության կրառումը մեղմացնում է պարտադրողական վերաբերմունքը նախագահի հանդեպ:

The principal should immediately decide what penalty is relevant in such situations.

They should immediately decide what penalty is relevant in such situations.

Principal բառի փոխարեն **they** դերանվան կիրառումը նվազեցնում է որոշում կայացնողի պատասխանատվությունը:

Հարցազրույցներում հաճախ կարելի է նկատել նաև խոսողի կողմից **ես** դերանունից խուսափելը և փոխարենը **մենք** հոգնակի դերանվան կիրառումը, որի նպատակը սեփական անձի մտքերը և գաղափարները չբարձրացնելն ու չկարևորելն է: Կարելի է դիտարկել նաև հակառակ երևույթը, երբ խոսողը կիրա-

ռում է այնպիսի կառույցներ, ինչպիսիք են՝ «**Իմ կարծիքով», «Ըստ իս», «Ես գտնում եմ, որ...»**, որպեսզի հատկապես շեշտի, որ այդ միտքը հենց իրենն է, իր կարծիքն է, և հնարավոր է՝ հեռուստադիտողները չընդունեն կամ համակարծիք չլինեն իր հետ:

Եղանակավորող բայերի օգտագործումը հատուկ երանգավորում է տալիս խոսքին, այն դարձնում է ավելի համոզիչ, դրդող և վճռական: Այս բայերն արտահայտում են խոսողի վերաբերմունքը իր արտահայտած մտքի վերաբերյալ:

Քերականական հնարներից են նաև ժամանակաձևերի սխալ կիրառությունը, երբ խոսողն ինքն է դիտավորյալ փոխում ժամանակաձևը հետագա հարցերից խուսափելու համար: Օրինակ՝

Մենք ամեն ինչ անում ենք նման իրավիճակից դուրս գալու համար:

Բնականաբար, եթե խոսողը նման միտք արտահայտի՝ օգտագործելով ներկա ժամանակ՝ **անում ենք,** հարցազրուցավարը կարող է շարունակել հարցերի շարքը՝ ակնկալելով լսել այն քայլերի կամ գործողությունների թվարկումը, որոնք դուրս են բերելու այդ իրավիճակից: Սակայն ընդամենը բայի ժամանակաձևը փոխելով ապառնի՝ հնարավոր է կանխել հետագա հարցերը (**Մենք ամեն ինչ անելու ենք նման իրավիճակից դուրս գալու համար):**

Հարցազրույցներում հանդիպում են նաև շարահյուսական մի շարք հնարներ՝ դիտավորյալ կրկնություն, շարադասության աղավաղում, ինչպես նաև անհարկի արտահայտությունների կիրառություն, որոնք համարվում են ժամանակ խնայելու միջոց, որոնց ընթացքում խոսողը հնարավորություն ունի մտքերը հավաքելու:

Պայմանավորված լինելով հյուրի հասարակական պատկանելությամբ, տարիքով, թեմայով, հարցազրույցները երբեմն լինում են չափազանց առօրյա լեզվով և հագեցած լինում բազում սխալներով, ոչ գրական բառապաշարով:

Հարցազրույցի թողած ազդեցությունը հեռուստադիտողի վրա որոշվում է հաղորդակցական և գործաբանական կողմնորոշմամբ. այն պայմանավորված է ոչ միայն հարցվողի անձով, այլև մշակութային և խոսքային իրավիճակի առանձնահատկություններով [*Tran, 51-67*]: Ուստի, հեռուստատեսային հարցազրույցների բառապաշարային և շարահյուսական առանձնահատկությունները ավելի մեծ ազդեցություն են թողնում, քան առօրյա կյանքի բանավոր խոսքը [*Dowling, 209-224*]: Հարցազրույցի խոսակցական-ժարգոնային ոճի հիմքում կան որոշակի լեզվական հարաչափեր, որոնցից առավել հաճախ հանդիպում են հետևյալները [*Jacobson, 63-78*].

- Խոսակցական և հուզական-արտահայտչական բառապաշարի առատ կիրառություն:
- Խոսակցական ոճին հատուկ արտասանության օգտագործում:
- Ուշադրությունը հրավիրելու համար կիրառվող բառեր կամ կառույցներ, որոնք հատուկ իմաստ չունեն, ինչպես օրինակ՝ **նայեք, լսեք, տեսեք, you see, I mean**:
- Ավելորդ բառերի (**filler words**) կիրառություն, որոնք հիմնականում լինում են իրավիճակին չհամապատասխանող շաղկապեր կամ կապակցական բառեր՝ **ուստի, հետևաբար, բայց, մինչդեռ** և այլն:
- Նույնաբանական (տավտոլոգիական) համակցությունների բարձր հաճախականությունը մեկնաբանվում է որպես հեռուստատեսային ինքնաբուխ խոսքի ոճական ցուցիչ:
- Բազմաթիվ բառային կրկնություններ՝ որպես միտքը ընդգծելու միջոց:
- Լեզվի բառային և քերականական կանոնների խախտումներ, որոնք բնորոշ

են առօրյա խոսքին և խոսքը դարձնում են առավել անմիջական:

- Խոսակցական դիմելաձևերի օգտագործում, օրինակ՝ «**Դուք**»-ի փոխարեն «**դու**»-ով դիմելը:
- Պատահական բառակազմություններ:
- Բարդ նեղ մասնագիտական եզրույթների օգտագործման փոխարեն պարզ, հասկանալի, ամենօրյա լեզվով խոսելու ունակություն:

Ի տարբերություն լրատվական միջոցների գրավոր տարատեսակների, հեռուստահարցազրույցներում թեմատիկ եզրույթների կիրառությունը հաճախ չի հանդիպում, քանի որ հարցազրույցների լսարանը հասարակ հանրությունն է և խոսքը պետք է հասկանալի լինի բոլորի համար, ոչ թե սահմանափակ մասնագետների շրջանակներում:

Եզրակացություն

Ամփոփելով վերոնշյալը՝ կարելի է ընդգծել, որ հեռուստահարցազրույցի խոսակցական ոճը ստեղծվում է ոչ միայն բառային և քերականական միջոցներով, այլև լեզվի շարահյուսական հատկանիշներով. նախադասությունների թերի կառուցվածք, կրկնվող հարցեր, բազմաթիվ դադարներ, տատանումներ (ակամա ընդմիջումներ, որոնք լի են տարբեր հնչյուններով և ցույց են տալիս, որ խոսքը կամ միտքը դեռ պատրաստ չեն արտահայտման այս կամ այն պատճառով, և դրա համար անհրաժեշտ է լրացուցիչ ժամանակ դրա ձևակերպման համար), բառային կրկնություններ, նույնաբանական (տավտոլոգիական) համակցություններ, խոսքի հոսքի հատվածավորում, նախադասության մասնատում, թերի կառույցների առկայություն նախադասության անդամների ոչ ճիշտ շարադասություն և այլն:

Գրականության ցանկ

1. **Quirk Randolph**. The use of English. London. Longman, 1962, p. 384.
2. **Стернин Иосиф.** Введение в речевое воздействие. Воронеж, 2001, стр. 227.
3. **Тарасов Евгений и др.** Речевое воздействие в сфере массовой коммуникации. Москва, Наука, 1990, стр. 135.
4. **Чернявская Валерия.** Дискурс власти и власть дискурса, Москва, Флинт, 2006, стр. 136.
5. **Dowling David, Vogan Travis.** ″Can we “Snowfall” this?″, Digital Journalism, Issue 3, N 2, 2015, pp. 209-224.
6. **Jacobson Susan.** ″Emerging Models of Multimedia Journalism: A Content Analysis of Multimedia Packages Published on nytimes.com″, Atlantic Journal of Communication, Issue 18, N 2, 2010, pp. 63-78.
7. **Tran Hai.** ″More or Less? Multimedia Effects on Perception of News Websites″, Electronic News, Issue 9, N 1, 2015, pp. 51-67.
8. **Van Dijck Jan**. ″Picturizing Science: The Science Documentary as Multimedia Spectacle″. International Journal of Cultural Studies, N 9, 2006, pp. 5-24.
9. **Иссерс Оксана.** «Что говорят политики своему народу, что-бы понравиться». Вестник Омского университета, N 1, 1996, сс. 71-74.
10. **Малюга Елена.** «Англоязычный профессиональный жаргон в деловом дискурсе». Научный вестник Воронежского государственного архитектурно-строительного университета. Серия: Современные лингвистические и методико-дидактические исследования. N 2 (14), 2010, сс. 11–17.
11. **Рюкова Айсылу, Филимонова Елена.** «Языковые способы реализации персуазивности», Вестник Башкирского университета, Том 21, N 2, 2016, стр. 431-435.
12. **Сун Юйхуа и др.** «Языковая политика и политический язык: теория и методика лингвополитологии». Иностранные языки и обучение иностранным языкам. 2015. N 1, сс. 1-7.

LINGUOPRAGMATIC PECULIARITES OF TV INTERVIEW

Jabaghyan N. D.
Postgrauduate student
YSU, Department of Translation Studies
narejab@gmail.com

Abstract

The focus of this study is the analysis of television interviews, the purpose of which is to identify the pragmatic and linguistic features of the latter. The linguistic realization of the interview as a genre is determined by the totality of lexico-grammatical (morphological-syntactic) means. The choice of linguistic means depends on the communicative goals of the conversation; it can be determined by the framework of the interview, the subject, and sometimes by a specific situation. It should be noted that the viewer, reader or radio listener (audience) can believe in the truthfulness of the speaker, accept his opinion or judgment, which is the essential intention of the journalist which is often realized with the help of manipulation. Media content analysis allows us to assert that the genre of interview pragmatically performs not only the function of conveying information, but also manipulating by means of words.

Modern television interviewing is a hybrid (mixed), conversational-journalistic genre, characterized by its free style, flexible language abundant in expressive means, and it includes elements of both colloquial language and scientific style features. In the communicative process slang vocabulary can promote a full understanding of the mind, allowing you to overcome the psychological barriers of communication.

Keywords: TV interview, pragmatic analysis, speech situation, interviewer, respondent, manipulation, linguistic and grammatical means.

Ներկայացվել է՝ 15.04.2022 թ.
Գրախոսվել է՝ 23.05.2022 թ.

ԱՅԼԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՆՇԱԿԱՆ ՊԱՏԿԵՐՆԵՐԸ ԹՈՆԻ ՄՈՐԻՍՈՆԻ «ԱՄԵՆԱԿԱՊՈՒՅՏ ԱՉՔԸ» ՎԵՊՈՒՄ

Ասլանյան Ա. Մ.
հայցորդ
ԲՊՀ, Համաշխարհային գրականության և մշակույթի ամբիոն
ani_aslanyan@yahoo.com

Ամփոփագիր

Հոդվածում ուսումնասիրված են Թոնի Մորիսոնի «Ամենակապույտ աչքը» վեպի այլաբանական և խորհրդանշական պատկերները, վերլուծված են դրանց իմաստները և նշանակությունը: Դրանց միջոցով Թոնի Մորիսոնը ամբողջացրել է իր վեպը ամերիկյան հասարակության «հատակում» գտնվող մարդկանց մասին: Ներկայացված է, թե ինչպես է գեղարվեստական այդ արտահայտչամիջոցներով Մորիսոնն ավելի պատկերավոր և ազդեցիկ դարձրել իր նկարագրությունները և կերտել ավարտուն և հոգեբանորեն հիմնավորված կերպարներ: Վեպում Մորիսոնը փորձել է հասկանալ անմարդկային կյանքի և դաժանության և չարիքի պատճառները, հասնել ողբերգության ակունքներին՝ պատասխանելով ոչ միայն «ինչպես անել», այլև թե «ինչու է այդպես» հարցերին: Հոդվածում ներկայացված են Թոնի Մորիսոնի աշխարհայացքը և գաղափարաբանությունը, որում մեծ տեղ ունի խտրականության հիմնախնդիրը: Վեպում պատկերված է 40-ական թվականների Ամերիկան Մեծ ճգնաժամի տարիներին: Գործողությունները ծավալվում են Օհայո նահանգի Լորեին փոքրիկ քաղաքում: Գլխավոր հերոսուհին դեռատի մի աղջիկ է, որը տառապում է սևամորթ լինելու պատճառով և երազում է ունենալ սպիտակ մաշկ և կապույտ աչքեր: Ներկայացված է Մորիսոնի մոտեցումը սևամորթների հանդեպ խտրականության հարցին, որը վեպում ունի ոչ միայն սոցիալական, այլև խորը հոգեբանական և պատմամշակութային արմատներ:

Հիմնաբառեր. Թոնի Մորիսոն, մոգական ռեալիզմ, «Ամենակապույտ աչքը» վեպը, ժամանակակից ամերիկյան գրականություն, այլաբանություն, խորհրդանշաններ:

Ներածություն

Գրական գործունեության առաջին տարիներին Թոնի Մորիսոնը հաճախում էր Հարվարդի համալսարանում գործող բանաստեղծների և արձակագիրների մի խմբակ, որտեղ նրանք քննարկում էին իրենց ստեղծագործությունները: Այդ հավաքներից մեկի ժամանակ Մորիսոնը ներկայացնում է իր պատմվածքը մի սևամորթ աղջկա մասին, որը սևեռուն կերպով երազում է ունենալ կապույտ գույնի աչքեր: Հենց այդ պատմվածքի հիման վրա այնուհետև Մորիսոնը գրում է իր առաջին՝ «Ամենակապույտ աչքը» վեպը, որը լույս է տեսնում 1970 թվականին և շատ բարձր է գնահատվում ամերիկյան գրաքննադատների կողմից: Մորիսոնին համարում են «Սև Ամերիկայի ձայնը», «Արևմուտքի խիղճը», «Ազատության գաղափարի կրողը»՝, որակումներ որոնք հետագայում ամրագրվում են այնպիսի նշանավոր մրցանակներով, ինչպես՝ Պուլիցերյան մրցանակն է (1988 թ.), Նոբելյան մրցանակը (1993 թ.), ինչպես նաև ԱՄՆ նախագահի Ազատության շքանշանը (2012 թ.):

«Ամենակապույտ աչքը» վեպը սևամորթ մի ընտանիքի կյանքի պատմություն է: Գործողությունները տեղի են ունենում ամերիկյան փոքր քաղաքներից մեկում՝ Լորեինում, 20-րդ դարի 40-ական թվականներին: Դա դեռևս այն ժամանակաշրջանն է, երբ Միացյալ նահանգներում սևամորթների նկատմամբ մեծ խտրականությունը կար: Եվ Մորիսոնն այդ վեպում վեր հանելով աֆրոամերիկյան համայնքի կյանքի թաքնված շերտերը՝ արվեստի մեծ ուժով կարողացել է պատկերել «խտրականություն» երևույթի ողջ ողբերգությունը: Հատկանշական է այն, որ վեպում ներկայացված են ցեղային խտրականության ոչ միայն քաղաքական և իրավական կողմերը, այլև առաջին հերթին այն, ինչը կարծրացած է մարդկանց գիտակցության մեջ և ունի խորը հոգեբանական արմատներ:

Հարկ է նշել նաև, որ գիրքը լույս ընծայումից հետո գրաքննադատների կողմից ոչ միայն բարձր գնահատականի է արժանացել, այլև քննադատվել է ինցեստի և մանկապղծության թեման նատուրալիստորեն արծարծելու համար [*Roynon, 16-21*]: Եվ չնայած դրան, վեպը ներառվել է որոշ համալսարանների կրթական ծրագրերում, սակայն ժամանակ անց այն հանվել է ծրագրերից և հայտնվել է արգելված գրականության ցանկում: Հետագայում այն կրկին վերադարձել է գրախանութներ: Այստեղ, թերևս, պետք է համաձայնվել այն գրաքննադատների հետ, որոնք կարծում են, որ «Ամենակապույտ աչքը» ստեղծագործությունը պետք է նախատեսված լինի ավելի հասուն տարիքի ընթերցողների համար, քանի որ վեպում արծարծված վերոնշյալ թեմաները կարող են ճիշտ և ամբողջական ընկալվել ընթերցողի որոշակի գիտելիքների պաշարի առկայության և հոգեբանական ու մտավոր որոշակի պատրաստվածության դեպքում:

Թոնի Մորիսոնի գրական ժառանգությունը ուսումնասիրողների համար «Ամենակապույտ աչքը» վեպը կարևոր է այն առումով, որ այդ ստեղծագործության մեջ արդեն առկա են Մորիսոնի արվեստին բնորոշ այն հիմնական հատկանիշները և գաղափարները, որոնք այնուհետև զարգանում և ծավալվում են նրա հաջորդ վեպերում: Այդ առանձնահատկություններից է՝ որպես գաղափարական և գեղարվեստական արտահայտչամիջոց, այլաբանական և խորհրդանշական պատկերների օգտագործումը վեպում: Ինչպես գիտենք, այլաբանությունը և խորհրդանշանը թեև տարբեր, սակայն փոխկապակցված և միմյանց լրացնող լեզվական և փիլիսոփայական հասկացություններ են: Սովորաբար, խորհրդանշանն ունենում է այլաբանական իմաստ, իսկ այլաբանությունն, իր հերթին, հաճախ արտահայտվում է հենց խորհրդանշանի կամ խորհրդանշանների միջոցով: Թեև այլաբանական նկարագրություններ, գաղափարներ կարող են լինել նաև առանց որևէ խորհրդանշանի օգտագործման, հատկապես գրականության մեջ, այդուհանդերձ, հազարամյակների ընթացքում հենց խորհրդանշաններն են մեծամասամբ մարդուն կյանքի և բնության մասին այլաբանական մտքեր հաղորդելու հնարավորություն ընձեռել [*Керлот, 215*]: Այստեղ մենք առնչվում ենք «բովանդակություն» և «ձև» հասկացությունների փոխհարաբերության հետ, երբ «բովանդակություն»-ը այլաբանությունն է, իսկ արտահայտման «ձև»-ը՝ խորհրդանշանը:

«Ինքնության հավաստագիր»՝ այդպես են բացատրել «խորհրդանշան» հասկացության իմաստն անտիկ դարաշրջանում [*Маслова, 95*], նկատի ունենալով այն, որ խորհրդանշանն իր մեջ ամփոփում է առարկայի կամ երևույթի ամենաբնութագրական հատկանիշները՝ այսինքն՝ ինքնությունը: Խորհրդանշանի բազմաթիվ այլ սահմանումներ և բնութագրումներ կան: Այն համարվում է, օրինակ, յու-

ռահատուկ ծածկագիր՝ հոգևոր, մտավոր հաղորդակցման ընդհանրացված պատկեր: Կարողանալ զանազանել և հասկանալ խորհրդանշանը նշանակում է «գաղտնազերծել» այն, բացահայտել նրա թաքնված իմաստը, որը ձևավորվել է բազմաթիվ սերունդների զգացմունքների, կենսափորձի և հավաքական հիշողության միջոցով: Նշանավոր հոգեբան Էրիխ Ֆրոմն առանձնացնում է խորհրդանշանների երեք տեսակներ. հաստատուն, պատահական և ընդհանրական: «Ամենակապույտ աչքը» վեպում մենք ավելի հաճախ հանդիպում ենք խորհրդանշանի երրորդ՝ ընդհանրական տեսակին, երբ խորհրդանշանի և նրա արտահայտած իմաստի միջև կա ներքին կապ, իսկ խորհրդանշանի իմաստը հանրության համար հայտնի է և ընկալելի. Այսինքն՝ այն ընդհանրական է: Պետք է նշել, որ Մորիսոնն իր վեպում շատ նրբորեն և տեղին է օգտագործում խորհրդանշանները: Դրանք, կարծես, միահյուսված լինեն վեպի սյուժեին և կազմեն ընդհանուր պատկերաշարի անբաժան մասը: «Ամեն գիշեր Պեկոլան խնդրում էր Աստծուն, որ Նա նվիրի իրեն կապույտ աչքեր: Սրտանց աղաչում էր: Մի ամբողջ տարի: Եվ չնայած մի քիչ թևաթափ էր եղել, սակայն հույսը չէր կտրում: Նա մտածում էր, որ այդպիսի հրաշքի իրականացման համար շատ ուժ և ժամանակ է պետք: Եվ խորացնելով իր մեջ այն համոզմունքը, որ միայն հրաշքը կարող է իրեն պարգևել գեղեցկություն, և հրաշքն է, որ կազատի իրեն «իր բնածին այլանդակությունից», նա այդպես էլ երբեք չէր կարող հասկանալ, թե որն է հենց իր գեղեցկությունը: Նա կշարունակի նկատել միայն այն, ինչը միշտ նկատել է. ուրիշների աչքերը» [*Morrison, 46-47*] (Վեպից թարգմանությունները հոդվածագրինն են): Թոնի Մորիսոնն իր վեպում անդրադառնում է հասարակական գիտակցության վրա կարծրատիպերի ներգործության հիմնախնդրին՝ ցույց տալով դրանց վտանգները և ողբերգական հետևանքները:

Հայտնի է, որ զանգվածային լրատվամիջոցների դերի մեծացման հետ մեկտեղ մեծանում է նաև կարծրատիպերի միջոցով հասարակական գիտակցության վրա ներազդելու հնարավորությունը: Այդպես, օրինակ, աչքերի կապույտ գույնը, որը հատկանշական է սպիտակամաշկ մարդկանց, ներկայացվելով գեղեցկության, հաջողության և երջանիկ կյանքի համատեքստում, ձեռք է բերում նոր իմաստ: Զանգվածային լրատվամիջոցների, ինչպես նաև կինեմատոգրաֆիայի և արվեստի այլ ճյուղերի քարոզչական և գովազդային հնարավորությունները օգտագործելու միջոցով կերտվում է կապուտաչյա, շիկահեր կնոջ հաջողակ կերպարը, որը շատ արագ դառնում է գեղեցկության կարծրատիպ և այնուհետև՝ սիրո և երջանկության խորհրդանշան: Մորիսոնը գեղարվեստորեն բացահայտում է մարդկանց և ընտանիքների կյանքում պատահող դժբախտությունների անտեսանելի դրդապատճառները: Թե ինչպես փոքր թվացող երևույթները կարող են լինել մեծ դժբախտությունների պատճառ: Օրինակ, եթե որևէ գույն կարող է հասարակության մեջ համարվել հաջողության և երջանկության չափանիշ, ապա դրա բացակայությունն ինքնաբերաբար կարող է դառնալ անհաջողության և դժբախտության չափանիշ: Փաստորեն, արվեստում խորհրդանշանները գեղարվեստական կարևոր արտահայտչամիջոց են, սակայն կյանքում դրանք կարող են ծառայել մարդկանց գիտակցության մեջ կարծրատիպերի առաջացմանը: Մորիսոնն իր «Ամենակապույտ աչքը» վեպում ցույց է տալիս դրա մեխանիկան, այն, թե ինչպես է դա տեղի ունենում, ինչպես է այդ կարծրատիպերով ձևավորվում հասարակական գիտակցությունը: Այդ առումով վեպի թեման շատ արդիական է այսօր և այն կարող է վերաբերել ոչ միայն սևամորթների նկատմամբ խտրականության հիմախնդրին,

այլև ցանկացած հիմնախնդրի, որն առնչվում է հասարակական գիտակցության վրա ներազդելու և դրա հետևանքների հետ:

«Ամենակապույտ աչքը» վեպի սյուժեի հիմքում սևամորթների կյանքից վերցված մեկ ընտանիքի պատմություն է, որը, սակայն այլաբանության միջոցով ընդհանրացվելով, արտահայտում է Միացյալ նահանգներում սևամորթ հանրության հիմնախնդիրները: Իրավամբ, Մորիսոնն իր վեպում արտացոլում է նաև սևամորթների կեցությունը և նրանց հավաքական ինքնությունը. մի երևույթ, որը Մորիսոնի ստեղծագործության հետազոտող Էլիս Ուոքերն անվանում է «համայնքային ոգի» [*Evans, 489*]: «Ամենակապույտ աչքը» վեպում վերոնշյալ «համայնքային ոգին» դրսևորվում է գլխավորապես խորհրդանշանների և այլաբանության միջոցով: Մի երևույթ, որը պայմանավորված է աֆրոամերիկացիների համապատասխան աշխարհընկալմամբ, ինչպես նաև կապված է կյանքի, սովորույթների և մոգական արարողությունների նկատմամբ նրանց վերաբերմունքի հետ:

Որևէ առարկա կամ երևույթ որպես խորհրդանշան ընկալելու մարդու ունակությունն առաջին հերթին կապված է նրա պատկերային լեզվամտածողության հետ: Իր հերթին լեզուն որպես նշանային համակարգ գործառում է պատկերների միջոցով: Դեռևս վաղնջական ժամանակներից մարդուն հետաքրքրել են երևույթների և առարկաների ոչ միայն արտաքին, այլև խորքային, պայմանական և փոխաբերական իմաստները, որոնք առաջանում են երևույթը կամ առարկան մեկ այլ երևույթի կամ առարկայի հետ համեմատելու կամ դրանք միմյանց նմանեցնելու, կամ մարդու մեկ այլ մտային և հոգեբանական վիճակի շնորհիվ: Գրականությունը գրողի անհատական աշխարհընկալման, այդ թվում կյանքի իմաստի ընկալման և գեղարվեստական վերարտադրման դրսևորումն է: Այսինքն, դա այն կերպն է, այն եղանակը, որով արվեստագետը ստեղծագործաբար ընկալում և գեղարվեստորեն պատկերում է մարդու կապը հասարակության, բնության և, ընդհարապես, աշխարհի հետ: Պատկերը և պատկերայնությունը Թոնի Մորիսոնի գեղարվեստական լեզվամտածողության մեջ առանցքային տեղ ունեն: Նրա ստեղծած բառային-գեղարվեստական պատկերները զգայական են և միևնույն ժամանակ տեսանելի են և շոշափելի: Մորիսոնը, կարծես, բացում է ընթերցողի ներքին տեսողությունը, արթնացնում է նրա երևակայությունը, դարձնում է նրան իր կողմից հորինված իրականության մասը և մասնակիցը: Այստեղ տեղին է հիշատակել գեղարվեստական պատկերի մասին գրականության տեսաբան Վալենտին Խալիզևի դիտարկումը. «Գեղարվեստական պատկերների միջոցով ներկայացվում է առարկայական աշխարհի հանդեպ մարդկանց վերաբերմունքը և ոչ թե, պարզապես, առարկան,- գրում է նա» [*Хализев, 96*]: Մորիսոնի կերտած Պեկոլայի կերպարը նույնպես օժտված է պատկերավոր մտածողությամբ: «Եվ ինչու՞ են մարդիկ խատուտիկներին մոլախոտ համարում»: Օրինակ, Պեկոլային այդ փամփլիկ ծաղիկները միշտ շատ գեղեցիկ են թվացել, բայց նա հաճախ լսում էր, թե ինչպես են մեծահասակներն ասում. - «Ինչ լավ է խնամված օրիորդ Դանիոնի բակը. ոչ մի խատուտիկ չկա: Իսկ կանայք դաշտում կռացած հավաքում էին խատուտիկներ, որպեսզի դրանցով ապուր պատրաստեին: Նրանց միայն տերևներն էին պետք, իսկ փոքրիկ դեղին գլխիկները նրանց չէին հետաքրքրում: Եվ թեև խատուտիկների գլխիկներն այդքան գեղեցիկ էին, բայց, չգիտես ինչու, ոչ ոք նրանց չէր սիրում» [*Morrison, 47*]: Այս պարբերության մեջ խատուտիկի խորհրդանշական պատկերը ձեռք է բերում այլաբանական իմաստ: Մորիսոնը գեղեցիկ, սակայն մոլախոտ համարվող և չսիրված խատուտիկ ծաղկին այլաբանորեն համեմատում

է նույնպես անտեսված և ավելորդ համարվող Պեկոլայի կերպարի հետ:

Թոնի Մորիսոնի «Ամենակապույտ աչքը» վեպում արդեն ի հայտ են եկած գրողի ինքնատիպ գեղարվեստական ոճը, պատկերային և այլաբանական մտածողությունը, ինչպես նաև մոգական և իրական աշխարհների միջև կապը տեսնելու և գրականության միջոցով այն վերարտադրելու նրա ունակությունը: Վեպում տեղ են գտել աֆրոամերիկյան համայնքի հավատքին առնչվող արտասովոր դրվագներ, նկարագրություններ, ինչպես նաև գերբնական ունակություններով օժտված մարդկանց կերպարներ: Մորիսոնի գրականության հետազոտող Հենրի Լուիս Գեյթսը գրում է.- «Մորիսոնի կարծիքով, իրականության աֆրոամերիկյան ընկալումն օգնում է համատեղել մտածողության երկու տեսակները՝ բանականը և զգայականը՝ այն, ինչն ընկալվում է զգայարանների միջոցով: - Ես մեծացել եմ մի տան մեջ, - գրում է Մորիսոնը,- որտեղ մարդիկ խոսում էին իրենց երազների մասին այնպիսի լրջությամբ, ինչպես կխոսեին իրականում տեղի ունեցած դեպքերի մասին: Նրանք գնում էին ինչ-որ հանդիպումների, որոնք տխուր, քաղցր և մտերմիկ կապեր էին և որոնց իրական լինելը հնարավոր չէր պարզել: Առանց այդ միջավայրի, կարծում եմ, ես թերի կլինեի» [*Gates, 415*]: Մորիսոնը խոսում է միջավայրի մասին, որում մեծ տեղ ունեն մոգական երևույթները:

1970-ական թվականների սկզբին Միացյալ նահանգներում Մոգական ռեալիզմը որպես գրական ուղղություն դեռևս նոր էր ձևավորվում, և Մորիսոնն առաջիններից մեկն էր, որն իր գրականության մեջ օգտագործեց իրականության արտահայտման այդ եղանակը: Սակայն պետք է նկատել, որ դա տեղի է ունեցել ոչ թե գրողի հատուկ մտադրությամբ, այլ ինքնաբուխ և ինքնաբերաբար: Անշուշտ, երբ Մորիսոնը գրում էր վեպը, նա չէր մտածում, որ ստեղծագործում է մի գեղարվեստական մեթոդով, որը համարվելու է Մոգական ռեալիզմ: Այդ կարծիքը ձևավորվել և հիմնավորվել է Մորիսոնի գրականության ուսումնասիրությամբ զբաղվող մասնագետների մոտ: Նա ինքն այդպես չի մտածել, այլ, պարզապես, ստեղծագործել է, սակայն այդ ստեղծագործությունն իր բոլոր հատկանիշներով, այդ թվում խորհրդանշական և այլաբանական պատկերների օգտագործման եղանակով ամբողջովին համապատասխանում է Մոգական ռեալիզմ ուղղության և մեթոդաբանության չափանիշներին: Եվ այդ առումով, այսինքն՝ հենց Մոգական ռեալիզմի գաղափարաբանության և ոճաբանության տեսանկյունից, «Ամենակապույտ աչքը» վեպը կարելի է 20-րդ դարի երկրորդ կեսի ամերիկյան գրականության մեջ նորարարական համարել: Միևնույն ժամանակ, պետք է նշել, որ հենց Մոգական ռեալիզմ գեղարվեստական ուղղությանը բնորոշ լեզվամտածողության շնորհիվ է ձևավորվել Մորիսոնի անհատական ոճը, որի առանձնահատկություններից է նաև այլաբանական պատկերայնությունը: Մորիսոնի պատկերացմամբ կյանքը տխուր է, երբ զուրկ է մոգականությունից: Եվ կյանքի մասին նրա այդ պատկերացումն իր արտացոլումն է ստացել նրա ողջ ստեղծագործության մեջ և իհարկե, նրա առաջին՝ «Ամենակապույտ աչքը» վեպում, որտեղ Մոգական ռեալիզմի արտահայտչամիջոցներով, այդ թվում խորհրդանշանների և այլաբանական պատկերների միջոցով Մորիսոնը հասել է մեծ արտահայտչականության և ավելի ներգործուն է դարձրել սևամորթների կյանքից վերցված իր ողբերգական պատումը:

Բեգոնա Սիմա Գոնզալեսը 1996 թվականին հրատարակած «Մոգական ռեալիզմը Թոնի Մորիսոնի ստեղծագործության մեջ» հոդվածում գրում է. «Թեև Մորիսոնի ստեղծագործություններում մենք հանդիպում ենք գերբնական երևույթների, այդուհանդերձ, նրա պատմությունները հիմնված են իրական

կյանքի վրա, և միայն հեղինակի արտիստիկ պատմողական ձիրքի շնորհիվ է, որ այդ սովորական պատմությունները փաթեթավորվում են մոգական մթնոլորտով՝ առաջացնելով այնպիսի զարմանք, ինչպիսին մենք կունենայինք, եթե առնչվեինք ֆանտաստիկ երևույթների հետ: Մորիսոնը իրականի կամ հնարավորի թեզը չի հակադրում երևակայականի կամ գերբնականի հակաթեզին, այլ գնում է ավելի հեռուն, դեպի Մոգական ռեալիզմը, այսինքն՝ այդ հակադրությունից դուրս գտնվող սինթեզը» [*González, 313-318*]:

Մոգական ռեալիզմին բնորոշ է գերբնականի և բնականի միախառնումը, երբ արտասովորն ու սովորականը միաժամանակ դառնում են իրական կյանքի մասեր: Մոգական ռեալիզմի առանձնահատկություններից է նաև անձնական հիշողությունների, իրական դեպքերի, ինչպես նաև առասպելական, դիցաբանական, կամ, պարզապես, հայտնի գրական ստեղծագործությունների սյուժեների և կերպարների օգտագործումը: Գեղարվեստական այդ հնարները գրողին օգնում են ընթերցողի հետ կիսվել անձնական փորձառությամբ և ապրումներով, որոնք խորը հետք են թողել իր կյանքի վրա և, որոնք նա զգում է, որ չի կարող ամբողջովին վերարտադրել՝ «չխախտելով իրականության» սահմանագիծը [*Lodge, 114*]: Հենց այդպես «Ամենակապույտ աչքը» վեպի գաղափարը հասունացել է մանկության ընկերուհու մասին Մորիսոնի հիշողություններից: Վեպի հերոսուհին՝ աֆրոամերիկացի դեռահաս աղջիկ Պեկոլա Բրիդլավը իր մաշկի գույնի պատճառով իրեն համարում է տգեղ և երազում է ունենալ կապույտ գույնի աչքեր՝ համոզված լինելով, որ հենց կապույտ աչքերը նրան կդարձնեն գեղեցիկ և կլուծեն իր կյանքի բոլոր մյուս խնդիրները: Թոնի Մորիսոնը Պեկոլայի կյանքի պատմության միջոցով մատնանշում է անձնական դժբախտության առաջացման հոգեբանական և սոցիոմշակութային ակունքները: Խորհրդանշանների և այլաբանության միջոցով նա ցույց է տալիս, թե ինչպես կարող է մարդու կյանքում ողբերգությունը խորանալ և ի վերջո ավերել կյանքը: Այս վեպում դժբախտությունները պարզապես աղքատության հետևանք չեն, այլ այն բանի, որ բրիդլավները չէին հավատում, որ երբևէ կարող էին փոխել իրենց կյանքի որակը, քանի որ սևամորթ են: «Նրանք ապրում էին այդտեղ, որովհետև սև էին և աղքատ, և մնացին այդտեղ, որովհետև հավատում էին, որ տգեղ են» [*Morrison, 38*]: **տ**գեղ լինելու արմատացած և ճնշող զգացումը թույլ չէր տալիս նրանց ձգտել փոխելու իրենց կյանքը և դիրքը հասարակության մեջ: Վեպի գլխավոր կերպարների կողմից իրենց և մյուսների արտաքինին այդչափ կարևոր և որոշիչ նշանակություն տալով Մորիսոնը շեշտադրում էր նաև, ընդհանուր առմամբ, հասարակության մակերեսայնությունը և մարդկային հարաբերությունների ոչ խորքային, հաճախ քաղքենի բնույթը, որն էլ հաճախ խորը հոգեբանական շեղումների պատճառ է դառնում: Մորիսոնն այլաբանական պատկերների միջոցով ուղղորդում է ընթերցողին մտորելու «կապույտ աչքի» խորհրդանշական և միևնույն ժամանակ կարծրատիպային իմաստի մասին:

Վեպը բաղկացած է չորս գլուխներից, որոնք վերնագրված են տարվա եղանակների անուններով: Պատմությունը սկսվում է «աշուն»-ով և ավարտվում «ամառ»-ով: Դա պատահականություն չէ, անշուշտ: Աշնան ընտրությունը, որպես առաջին գլխի վերնագիր խորհրդանշական է և անուղղակիորեն հիշեցնում է մեզ կյանքի ավարտի մասին: Չնայած իր գեղեցկությանը, աշունը խորհրդանշում է բնության թոշնում, տխրություն և կյանքի մոտալուտ ավարտ: Վեպում տարվա եղանակների անխախտ հերթականությունը՝ աշուն, ձմեռ, գարուն, ամառ և միևնույն ժամանակ, գործող կերպարների կյանքում խախտված ժամանակագրությունը ցույց են տալիս մի

կողմից բնության օրենքների կայունությունը՝ մյուս կողմից կյանքում տիրող անկարգությունն ու քաոսը:

«Ամենակապույտ աչքը» վեպում Թոնի Մորիսոնը վարպետորեն է օգտագործել նաև գույների խորհրդանշական իմաստները: Աչքերի կապույտ գույնի խորհրդանշական իմաստը՝ գեղեցիկի և տգեղի մասին կարծրացած պատկերացումները, վեր են հանում հարցեր, որ առկա են նաև այսօր: Կապույտ գույնն, ընդհանրապես, օգտագործվում է որպես խորհրդավորության, ազատության և խաղաղության խորհրդանիշ: Վեպում կապույտ աչքերը բազմիցս նույնացվում են սպիտակամորթների և նրանց բնորոշ եվրոպական արտաքինի հետ: Այստեղ այն ներկայանում է որպես սպիտակամորթ անգլոսաքսոնացու խորհրդանշան՝ միևնույն ժամանակ հանդիսանալով գեղեցկության կարծրատիպ:

Մորսիոնն այս ողբերգական պատմությամբ շեշտադրում է այն մեծ ազդեցությունը, որ ունի զանգվածային լրատվության աշխարհը մարդկանց գիտակցության և չափանիշների ձևավորման վրա: Վեպում, կապույտ աչքերի կարծրատիպի վերածված խորհրդանշանի միջոցով, մենք տեսնում ենք, թե ինչպես է այն ժամանակի ընթացքում ներազդում և ինչ փոփոխություններ է առաջացնում մարդկանց կյանքում և, թե ինչպես են ներգործում գովազդն ու քարոզչությունը: Մեկ առիթով Պեկոլան և Կլաուդիայի քույրիկը գեղեցկության և անքննելի գեղեցիկ համարվող տիկնիկների մասին խոսելիս ասում են Կլաուդիային. «Մեծահասակները, մեզնից ավելի մեծ աղջիկները, խանութները, ամսագրերը, թերթերը, ցուցափեղկերը՝ ամբողջ աշխարհն է համաձայն այն կարծիքին, որ կապույտ աչքերով, դեղին մազերով, վարդագույն մաշկով տիկնիկն հենց այն տիկնիկն է, որ ամեն աղջիկ երազում է ունենալ» [*Morrison, 19-20*]: Այդպիսի տեսարան է, օրինակ, երբ երեխաները կաթ են խմում և հիանում բաժակին պատկերված հանրաճանաչ փոքրիկ դերասանուհու՝ կապուտաչյա Շիրլի Թեմփլի նկարով:

Թեև Պեկոլան երազում էր վեպում գեղեցիկի խորհրդանիշ համարվող կապույտ աչքեր ունենալու մասին, Մորիսոնը վեպը վերնագրել է «Ամենակապույտ աչքը»: Եզակի թիվն այս դեպքում աչքին տալիս է ընդհանրական իմաստ, ինչպես նաև այն կարող է զուգահեռվել մարդու աշխարհընկալման հետ, երբ աչքն ընկալվում է որպես աշխարհը տեսնելու և դրանում ինքն իրեն գտնելու միջոց: Այն նաև կյանքն ուրիշ կերպ ապրելու ցանկության այլաբանությունն է: Աչքը, որպես հոգևոր և կրոնական խորհրդանիշ, լինելով տեսողական օրգան, ամուր կապված է լույսի, ճշմարտությունը ճանաչելու և բացահայտելու հետ: Եվ, քանի որ տեսողությունը աշխարհը տեսնելու միջոցն է, ժամանակի ընթացքում աչքը ընկալվել է նաև, որպես հոգու հայելի, որի միջոցով կարելի է տեսնել նաև մարդու հոգին և ներաշխարհը: Պատահական չէ, որ վեպի գլխավոր կերպարը՝ Պեկոլան, երազում էր ոչ թե մաշկի գույնը, այլ աչքերի գույնը փոխելու մասին: Ընդհանրապես «Ամենակապույտ աչքը» վեպում գույները առանձնահատուկ նշանակություն ունեն: Դա երևում է վեպի առաջին իսկ տողերից. «Ահա տունը: Այն կանաչ է և սպիտակ: Դուռը կարմիր է: Այն շատ գեղեցիկ է: Ահա ընտանիքը: Մայրը, հայրը, Դիքը և Ջեյնը ապրում են կանաչ և սպիտակ տանը: Նրանք շատ երջանիկ են: Տես Ջեյնին: Նա կրում է կարմիր զգեստ» [*Morrison, 18*]: Գրականության մեջ գույների խորհրդանշական իմաստները տարբեր են: Կանաչ գույնը կյանքի և բնության խորհրդանիշ է: Այդ գույնը զուգորդվում է վերածննդի, ինչպես նաև գարնան հետ, երբ ամեն ինչ վերակենդանանում է: Սակայն դրա հետ մեկտեղ այն նաև սատանայական գայթակղության խորհրդանիշ է: Սպիտակ գույնը խորհրդանշում է մաքրություն, անմեղություն, բարություն, խաղաղություն: Դեռևս անտիկ ժամանակներից սպիտակը

խորհրդանշել է պարզություն և հոգևոր վեհ արժեքներ, սակայն որոշ դեպքերում այն հակառակ նշանակությունն ունի: Սպիտակը նաև դատարկության, սառնության և մահվան խորհրդանիշ է: Ճապոնիայում, Ասիայի և Աֆրիկայի որոշ երկրներում սպիտակը համարվում է սգի խորհրդանիշ: Կարմիրը նույնպես հակասական խորհրդանշան է: Այն կյանքի, սիրո, կրքի, կրակի և արևի խորհրդանիշ է, սակայն կարմիրը նաև արյան, զայրույթի, պատրազմի և վրեժի խորհրդանշան է համարվում: Վեպում Մորիսոնն ունի յուրաքանչյուր գույնի իմաստի իր ընկալումը, որն ընդհանուր պատկերի ներգործությամբ փոխանցվում է նաև ընթերցողին:

Վեպը սկսվում է նկարագրությամբ, որը կրկնվում է երեք անգամ, սակայն տարբեր ձևով: Այսպիսի սկիզբը այլաբանական իմաստ ունի: Հակիրճ և պարզ տեսարանների նկարագրությունը աղոտ երազի տպավորություն է թողնում: Առաջին պարբերությունը կազմված է կարճ և պարզունակ թվացող նախադասություններից: Սակայն առաջին պարբերությունն ավարտելուն պես, երբ ընթերցողը սպասում է շարունակության, սկսվում է երկրորդ պարբերությունը, որը նույնն է, ինչ առաջինը, պարզապես առանց կետադրության: Երկրորդ պարբերությունից հետո սկսվում է երրորդը, որը լրիվ նույն տեքստն է, սակայն արդեն ոչ միայն առանց կետադրության, այլև՝ առանց բառերի միջև տարածության: Այս ոճական հնարով Մորիսոնը ընթերցողի մտքում առաջացնում է խառնաշփոթ՝ դրանով ցույց տալով իր հերոսների հոգեվիճակը: Նա, կարծես, պատկերում է մարդու մտքում տիրող այն խառնաշփոթը, որն ի վերջո կարող է մարդուն հասցնել խելագարության: Առաջին պարբերությամբ Մորիսոնը ցույց է տալիս տունն այնպիսին, ինչպիսին մարդիկ տեսնում են այն դրսից: Դա այն տեսարանն է, որը երևում է բոլորին: Երկրորդը՝ կարգ ու կանոնի խախտված իրականությունն է, որ կար այդ տան և ընտանիքի ներսում, և որը միայն իրենց էր հայտնի: Երրորդ անգամ նույն պարբերությունը ներկայացվում է որպես կատարյալ խառնաշփոթ, երբ անգամ մեկ բառը մյուսից առանձնացված չէ: Այլաբանորեն դա Պեկոլայի ներաշխարհն է՝ այն մանկական հոգին, որը տակն ու վրա էր եղել արտաքին աշխարհի այլասերված գրոհներից և, ի վերջո, խելագարության էր հասցրել նրան:

«Ամենակապույտ աչքը» գիրքը գրելուն Մորիսոնին դրդել է նաև այն հանգամանքը, որ նրան միշտ հետաքրքրել են սևամորթ աղջիկների օրիորդական տարիքի հոգեբանական առանձնահատկությունները: Հեղինակը բարձրացնում է հարցեր, որոնց մասին հիմնականում լռում են: Նա ցույց է տալիս, թե ինչպես են կյանքի պայմանները, մանկության տարիներին ստացած հոգեկան վնասվածքները հոգու խորքում թաքնվում, սակայն արթուն են մնում ենթագիտակցական ապրումների և ձգտումների մեջ՝ հաճախ խեղաթյուրելով մարդու հոգեկան աշխարհը: Մորիսոնի պատմությունը, կարծես, մի մութ թունել լինի, որի վերջում ընթերցողը սպասում է լույսի, սակայն այդպես էլ չի տեսնում այն: Գրողը ո՛չ մեղադրում և ո՛չ էլ արդարացնում է իր հերոսներին, այլ ցույց է տալիս կյանքն այնպիսին, ինչպիսին այն կար սևամորթների համար ոչ վաղ անցյալում:

Այս ստեղծագործության մեջ արծարծված են մի քանի թեմաներ. գեղեցիկի թելադրված չափանիշները և դրանց ընկալումը, սևամորթ աղջիկների դեռահասության տարիքը և այն դժվարությունները, որոնց միջով անցնում են նրանք, սևամորթների և սպիտակամորթների միջև սահմանազատումները և սևամորթների նկատմամբ գոյություն ունեցող խտրականությունը, ինչպես նաև բավական հետաքրքիր տեսանկյունից են դիտարկվում կրոնն ու հավատը:

Պատումը շարադրում է Կլաուդիա Մաք Թիրը, որի հետ հերոսուհին՝ Պեկոլան ընկերացել էր և ում տանը ապրում էր: Ի տարբերություն Պեկոլայի, Կլաուդիան մի աղջիկ է, որը չնայած քնքշանքի թվացյալ պակասին, մեծանում է սիրո և հոգատարության մեջ: Սևամորթների և սպիտակամորթների միջև խտրականությունը թեև արտահայտվում է նաև Կլաուդիայի վարքագծում, սակայն այդ երկու գրեթե տարեկից աղջիկները մարմնավորում են միանգամայն տարբեր կերպարների: «Ամեն ինչ սկսվում էր Սուրբ ծննդին, երբ մեզ սովորաբար նվիրում էին նոր տիկնիկներ,- պատմում է Կլաուդիան, - Ամենալավ և հատուկ սիրով ընտրված նվերը համարվում էր մեծ, կապուտաչյա տիկնիկը, որը տեսնելուն պես մեծերն այնպիսի հոգոց էին հանում, որ դժվար չէր կռահել, որ իրենց կարծիքով այդ տիկնիկը, անկասկած, ցանկացած փոքրիկ աղջկա երազանաքն էր: Միայն, թե իմ դեպքում նրանք սխալվում էին» [*Morrison, 35*]: Այն ժամանակ, երբ Կլաուդիան՝ սպիտակամորթների հանդեպ ունեցած իր ատելությունից դրդված կոտրում է բոլոր իր սպիտակ տիկնիկները, Պեկոլան լուռ երազում է կապույտ աչքերի մասին: Պեկոլայի հոգեբանական այդ շեղումները Մորիսոնը դիտարկում է նրա ընտանիքի և ծնողների հետ ունեցած բարդ փոխհարաբերությունների մեջ: ծնող-երեխա փոխհարաբերությունների թեման կարևոր տեղ ունի Մորիսոնի ստեղծագործության մեջ: Այն «Ամենակապույտ աչքը» վեպում արտացոլված է Պեկոլայի ծնողների փոխհարաբերությունների և նրանց ու Պեկոլայի հարաբերությունների միջոցով: Պեկոլայի հայրը և մայրը սիրել են միմյանց, սակայն կյանքի դժվարությունները, աղքատությունը, շարունակական անհաջողություններն ու հիասթափությունները խեղել են նրանց կյանքը՝ ի վերջո հանգեցնելով հոր և աղջկա միջև այլասերված հարաբերության և ողբերգական ավարտի: Պեկոլայի և մոր հարաբերությունները բարդ են և հակասություններով լեցուն: Մայրը, որ աշխատում էր սպիտակամորթների ընտանիքում և խնամում էր նրանց աղջկան, միշտ հիացմունքով էր խոսում այդ սպիտակամորթ աղջկա մասին և հաճախ համեմատում էր նրան իր աղջկա՝ Պեկոլայի հետ, կարծես, մեղադրելով նրան, որ սևամորթ է: Անհեթեթ մի իրավիճակ, երբ սևամորթ մայրը դժգոհում է, որ իր դուստրը սպիտակամորթ չէ: Մորիսոնն այդ չափազանցեցված պատկերով ընդգծում է տեղեկատվական և քարոզչական միջոցների ազդեցությունն ու հետևանքները: Նա շեշտում է գովազդների ունեցած ազդեցությունը, բայց նաև չնվազեցնելով սևամորթների մեղքի բաժինը, քանզի Մորիսոնի կարծիքով նրանք են ընդունում այդ ամենը որպես ճշմարտություն և դառնում զոհը այդ քարոզչության:

Վեպի երրորդ գլխում գործողություններին է միանում մի նոր կերպար՝ Սոֆեդ Չըրչը: Նա մանկապիղծ և մարդատյաց մի խաբեբա է, որը ներկայանում է որպես մարդկանց հոգիները բուժող անձնավորություն: Պեկոլան, լինելով հոգեպես խոցված և հուսահատված մի աղջիկ, որոշում է գնալ նրա մոտ կապույտ աչքեր ունենալու երազանքով: Սոֆեդ Չըրչը, օգտագործելով աղջկա խոցելի հոգեվիճակը, որոշում է Պեկոլայի միջոցով ձերբազատվել իրեն անհանգստություն պատճառող շնից: Պեկոլան տալիս է շանը Սոֆեդ Չրչի տված թունավոր միսը և սպասում որևէ արտասովոր արձագանքի, քանի որ Չըրչը նրան ասել էր, որ երազանքի կատարման համար շունը պետք է որևէ արտասովոր վարքագիծ դրսևորի: Շունը թունավորվում և տանջվելով սատկում է, իսկ Պեկոլան նայում է նրան և ցնցված սպասում իր «կապույտ աչքերին»: Հենց այդ տեսարանից, երբ իր աչքերի առջև շունը սատկում է և երազանքի իրականացման սպասման ժամանակ Պեկոլան խելագարվում է: Վեպի չորրորդ գլխում հոգեկան խանգարում ստացած Պեկոլայի և իր մտացածին ըն-

կերոջ հետ երկխոսությունը ցնցող տպավորություն է թողնում: Նրանք զրուցում են, իսկ Պեկոլան անդադար ուզում է լսել միայն իր աչքերի մասին, որոնցով շարունակում է հիանալ հայելու առջև: Նա ուզում է վստահ լինել, որ դրանք ամենակապույտն են աշխարհում: Եվ չնայած, որ իր երևակայական աշխարհում ապրող և հասարակությունից միանգամայն կղզիացած Պեկոլան կարծում է, որ իր երազանքն իրականացել է, դրանք, այդուհանդերձ, նրան երբեմն բավարար կապույտ չեն թվում: Նա ուզում է շատ ավելի կապույտ, ամենակապույտ աչքերը, որ երբևէ կարող են աշխարհում լինել:

Խորհրդանշական են թավշածաղիկների մասին Պեկոլայի ընկերուհու՝ Կլաուդիայի հիշողությունները: «Մեզ համար մինչ այսօր գաղտնիք է մնացել, թե ինչու 1941 թվականին թավշածաղիկները ոչ մի տեղ չծաղկեցին: Մեզ թվում էր միայն մեզ մոտ է, որ չեն ծաղկել, քանի որ Պեկոլան հղի էր իր հորից» [*Morrison, 20*]: Այստեղ բնության՝ ի դեմս թավշածաղիկների, չծաղկելն ունի այլաբանական իմաստ և մեկ ուղերձ, մեկ ասելիք, որով Թոնի Մորիսոնն արտահայտում է բնության ծաղկման և կյանքի վերարտադրության ու շարունակականության գաղտնիքը, որը բարոյականությունն է: «Մենք այն ժամանակ չէինք էլ կարող մտածել, որ գուցե հենց ինքը հողն է մերժել թավշածաղիկներին, որ ծաղկեն: Այժմ պարզ է միայն մի բան. այն հույսը, հավատը, ջանքը, սերը և տխրությունը ոչ մի պտուղ չտվեցին: Չոլի բրիդլավը մահացավ: Մահացավ նաև մեր անմեղությունը: Մեր սերմերը, այդպես էլ չծլած մահացան հողում, մահացավ նաև Պեկոլայի երեխան» [*Morrison, 20*]:

Եզրակացություն

Այլաբանական այս պատկերի միջոցով Մորիսոնն ընթերցողներին փոխանցում է հազարամյակների խորքից եկող գեղեցիկ և մարդկային ապրելու պատգամը: Պեկոլայի հղիությունը հենց այդ օրենքի խախտումն էր, որը Մորիսոնի վեպում ավարտվում է ողբերգությամբ: Վեպում Պեկոլայի երեխայի մահը մեկ մարդու մահ չէ:

Թոնի Մորիսոնը մեծ ընդհանրացումների վարպետ է: Նա այդ անմեղ և դեռահաս աղջկա ողբերգության միջոցով, երբ խաթարված են մարդկային հարաբերությունների և ընտանեկան առողջ կյանքի նորմերը, տալիս է հիվանդ հասարակության նկարագիրը և կանխորոշում է ավարտը: «Այդ աշնանը, ոչ մեկի այգում թավշածաղիկները չծաղկեցին: Դրանք չծաղկեցին անգամ այն բակերում, որ նայում էին դեպի լիճը» [*Morrison, 20*]: Վեպի ավարտին, ընթերցողը մտովի վերադառնում է նախաբան և հիշում է Կլաուդիայի խոսքերը. -«Եվ այլևս ոչինչ չի մնում ասել, բացի «ինչու» հարցից: Բայց քանի որ «ինչու»-ին դժվար է պատասխանել, մնում է թաքնվել «ինչպես»-ի ետևում» [*Morrison, 21*]:

Գրականության ցանկ

1. Керлот, Хуан Эдуардо. Словарь символов: / Х.Э. Керлот. - Москва: REFL-book, 1994. - 603 с.: ил. - ISBN 5-87983-014-4
2. Валентина Авраамовна Маслова. Лингвокультурология, 2010 ISBN. 978-5-7695-6179-5
3. Валентин Хализев, Теория литературы. М., 2007. С. 96.
4. Henry Luis Gates, ed. 1982: Black is the Color ofCosmos ... New York, Garland Publishers.
5. Mari Evans. ed. 1984; Black Women Writers, 1950-1980. New York, Anchor, Doubleday. p.489
6. Begoña Simal González, Many Sundry Wits Gathered Together 1996: 313-318 www.ruc.udc.es 27.ապրիլ.2022
https://ruc.udc.es/dspace/bitstream/handle/2183/9571/CC_27_art_39.pdf?sequence=1&isAllowed=y&fbclid=IwAR2PcFMMlkfvfA7inwiPULiUr_Gy_GhdG8hFuXkDBPUFXJ7HWD9BFH4OV_c

7. David Lodge. 1992: The Art ofFiction. London, Penguin.
8. Toni Morrison, The Bluest Eye,. First Vintage International Edition, May 2007 eISBN: 978- 0-307-38658-8 www.memberflies.freewebs.com 27.ապրիլ.2022 https://memberfiles.freewebs.com/36/26/43092636/documents/Bluest%20Eye,%20The%20-%20Toni%20Morrison.pdf
9. Tessa Roynon, (2012). The Cambridge Introduction to Toni Morrison. Cambridge: Cambridge University Press. doi:10.1017/cbo9780511782282. ISBN 9780511782282. www.pdfdrive.com 27.ապրիլ.2022 https://www.pdfdrive.com/the-cambridge-introduction-to-toni-morrison-e188478158.html

ALLEGORICAL AND SYMBOLIC IMAGES IN T. MORRISON'S "THE BLUEST EYE"

Ani Aslanyan
Aspirant
BSU, Chair of World Literature and Culture
ani_aslanyan@yahoo.com

Abstract

The article examines the allegorical "symbolic images" of Tony Morrison's novel "The Bluest Eye" and analyzes their meanings. Through "symbolic image" the author depicts the people at the "bottom" of American society. T. Morrison uses these artistic expressions to make his descriptions more eloquent, influential and to create complete, psychologically grounded characters. The writer tries to understand the causes of inhuman life, cruelty and evil and reveal the roots of the tragedy, answering not only the questions "how to do it", but also "why is it so". The article presents T. Morrison's worldview and ideological stances. The novel also depicts America in the 1940s during the Great Depression. The operation takes place in the small town of Lorein, Ohio. The main character is a young girl who suffers from being blackskinned, dreams of having white skin and blue eyes. Morrison's approach to racial discrimination has social, deep psychological, historical and cultural roots in the novel.

Keywords: Tony Morrison, magical realism, the novel ‘The Bluest Eye’, allegory and symbolism.

Ներկայացվել է՝ 15.04.2022 թ.
Գրախոսվել է՝ 31.05.2022 թ.

ՀԱՍՏԱՏՈՒՆ ՀՈՍԱՆՔՈՎ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՇԱՐԺԻՉԻ ԱՐԱԳՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԼԳՈՐԻԹՄԻ ՄՇԱԿՈՒՄ ՈՉ ՀՍՏԱԿ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՈՎ

Բասկովչյան Ա. Գ.
ասպիրանտ
ՀԵՀ, ՏՏ և կիրառական մաթեմատիկայի ամբիոն
avik.baskovchyan@gmail.com

Ամփոփագիր

Սույն հոդվածում ներկայացված են հաստատուն հոսանքով էլեկտրական շարժիչի կառավարման երկու մոդել՝ չափաբաժնային ինտեգրալ-դիֆերենցիալ կառավարման (ՉԻԴ) [Kadu,Patilb, 737-746] և ոչ հստակ կառավարման մոդելները [Wadhwani, Sahoo, 28-34]: Աշխատանքի իրականացման ընթացքում ներկայացված մոդելների ֆունկցիոնալությունը կայանում է հաստատուն հոսանքով էլկտրական շարժիչի աշխատանքի սխալանքների բացահայտման, լուծման և լավարկման մեջ: Ներդրված համակարգերը փորձում են պրակտիկ չափումների և մաթեմատիկական հաշվարկների միջոցով ստանալ բանաձևային փոփոխականների համապատասխան գործակիցներ, աղմկակայուն և հաստատուն աշխատանք ապահովելու համար: Կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզ է դառնում, որ ոչ հստակ տրամաբանությամբ կառավարման համակարգի աշխատանքն առավել արդյունավետ է համեմատած չափաբաժնային ինտեգրալ-դիֆերենցիալ համակարգի հետ: Որպես ՉԻԴ համակարգի նախաալգորիթմ ընտրվել է դասական ՋՆ (Զիգլեր Նիկոլս) կառավարման մեթոդը, որի աշխատանքի հիմնական սկզբունքը կայանում է ինտեգրալային և դիֆերենցիալային պարամետրերի զրոյացման կամ զրոյին մոտարկման մեջ: Ոչ հստակ կառավարման համակարգի կիրառման համար ընտրվել է «եթե-ապա» մոդելը, որտեղ պայմանական արժեքները կիրառվում են ոչ հստակ արտահայտությունների ներկայացման համար: Աշխատանքում տեղ գտած մոդելավորումներն ու թեստավորումները կատարվել են Մաթլաբ ծրագրային համակարգի սիմուլինկ գործիքի միջավայրում, համեմատական արդյունքները ներկայացված են աղյուսակի միջոցով:

Հիմնաբառեր. ոչ հստակ տրամաբանություն, Մաթլաբ, սիմուլինկ, հաստատուն հոսանքով էլեկտրական շարժիչ, լավարկում, մոդելավորում:

Ներածություն

Հաստատուն հոսանքով էլեկտրական շարժիչների խափանակայուն և ճշգրիտ աշխատանքը ժամանակակից համակարգերի անխափան ու ճիշտ ֆունկցիոնալությունը պահպանելու համար կարևորագույն պայմաններից մեկն է: Վերջինիս լուծման նպատակով կիրառվում են բազմատեսակ կարգավորման ալգորիթմներ, որոնց տարատեսակներից է ՉԻԴ ալգորիթմը: Այս հոդվածի նպատակն է փորձի միջոցով նախագծել արագության կարգավորման մեթոդ՝ օգտագործելով ոչ հստակ տրամաբանության ալգորիթմի ու ՉԻԴ ալգորիթմի համեմատությունը: Աշխատանքի կատարման արդյունքում պարզ դարձավ, որ ոչ հստակ տրամաբանության մեթոդն առավել հարմար և օպտիմալ է կիրառման համար:

Ավտոմատացման համակարգերի գլխավոր խնդիրներն են՝ կարգավորման վրա ծախսվող երկար ժամանակը, կարգավորման հաճախականային գեներացիաները՝ օրինակ դրական հետադարձ կապերի ժամանակ առաջացած գեներացիան, ծախսվող շատ էներգիան ու հզորությունը մի վիճակից մյուսին անցնելու դեպքում: Ոչ հստակ տրամաբանության օգտագործմամբ նախագծված կառավարման համակարգերի առավելությունը ՉԻԴ համակարգերի նկատմամբ կայանում է իրական կյանքին առավել մոտ մոդելների հետ աշխատանքը:

Ոչ հստակ տրամաբանության կիրառմամբ կառավարման համակարգերի աշխատանքը կարելի է ներկայացնել «եթե-ապա» (“if-then”) (4) սկզբունքով:

Հաստատուն հոսանքով էլեկտրական շարժիչի ընդհանուր նկարագիրը

Հաստատուն հոսանքով էլեկտրական շարժիչի սխեման ըստ ֆիզիկական պարամետրերի ներկայացված է ստորև (Տե՛ս, Նկար 1):

Նկար 1.



Հաստատուն հոսանքով էլեկտրական շարժիչի սխեման ըստ ֆիզիկական պարամետրերի

Նկ. 1-ում պատկերված սխեմային համապատասխան բլոկ-սխեման ներկայացված է ստորև (Տե՛ս, Նկար 2):

Նկար 2.



Հաստատուն հոսանքով էլեկտրական շարժիչի բլոկ-սխեման

Նկ. 1-ում ու Նկ. 2-ում պատկերված փոփոխականները տես ստորև՝

Va → հիմնային լարում

Ia → հիմնային հոսանք

Ra → հիմնային դիմադրություն

La → հիմնային ինդուկտիվություն

Tm → պտտման մոմենտ

Jm → իներցիայի մոմենտ

Bm → շարժիչի շփման գործակից

ω → անկյունային արագություն

Աշխատանքի կատարման համար ընտրված փոխանցման ֆունկցիան ներկայացված է ստորև (Տե՛ս, Բանաձև 1):

Բանաձև 1

$$\frac{\theta(s)}{Va(s)} @ \frac{k\varphi}{L_a j_m S^2 \ . \ R_a j_m S \ . \ k^2\varphi^2} \quad (1)$$

Ինչպես նշվեց բանաձև 1-ը շարժիչի փոխանցման ֆունկցիան է, որում՝

Ra = 0.5 օհմ,

La = 0.05 հն

Va = 200 վ

Jm = 0.1 կգ/մ^2

Bm = 0.008 նմ/ռադ/վ

k = 0.5 նմ/Ա

Փորձարարական հաստատուն էլեկտրական հոսանքով շարժիչի համար ընտրված պարամետրերի տեղադրումից հետո ստացված բանաձևը փոխանցման ֆունկցիայի համար ներկայացված է ստորև (Տե՛ս, Բանաձև 2):

Բանաձև 2

$$\frac{\theta(s)}{Va(s)} @ \frac{0,5}{0,002S^2 \ . \ 0,05S \ . \ 0,625} \quad (2)$$

ՉԻԴ մեթոդի կիրառմամբ ստացված կառավարման համակարգ

Որպես օրինակ՝ աշխատանքի կատարման ընթացքում օգտագործված մեթոդներից ՉԻԴ մեթոդով շարժիչի կառավարման համակարգի մշակման համար ընտրվել է ԶՆ [Åström, Hägglund, 635-650] դասական մոդելը:

Նախագծված կառավարման համակարգի սխեման ներկայացված է ստորև (Տե՛ս, Նկար 3):

Նկար 3.



Նախագծված կառավարման համակարգ՝ ՉԻԴ մեթոդի կիրառմամբ

Ներկայացված մոդելը նախագծվել և թեստավորվել է Մաթլաբ ծրագրային ապահովման սիմուլինկ համակարգի միջոցով: Թեստավորման արդյունքը ներկայացված է ստորև (Տե՛ս, Նկար 4):

Նկար 4.



ՉԻԴ մեթոդով նախագծված համակարգի թեստավորման գրաֆիկ

Ինչպես երևում է Նկ. 4-ից համակարգի աշխատանքի կայունացման համար ծախսվող ժամանակը բավական մեծ է և կարող է խնդիրներ առաջացնել ի տարբերություն ոչ հստակ տրամաբանության մեթոդի: Համեմատության արդյունքները ներկայացված են աղյուսակի տեսքով (տե՛ս, Աղյուսակ 1):

Ոչ հստակ տրամաբանության մեթոդով կառավարման համակարգ

Ոչ հստակ տրամաբանությունը ներկայումս հանդիսանում է կառավարման համակարգի ամենատարածված ալգորիթմներից մեկը, որի կիրառումն առավելագույն կերպով մոտեցնում է թեստավորվող համակարգի արդյունքներն իրական կյանքին: Ոչ հստակ տրամաբանության աշխատանքի սկզբունքը կարելի է բաժանել 4 հիմնական կետի՝

- Համակարգի ոչ հստակեցում
- Ոչ հստակ եզրակացություն
- Ստացված ոչ հստակ կանոնների կիրառում
- Ստացված արդյունքի մոտարկում ու հստակեցում

Աշխատանքի կատարման ընթացքում օգտագործվել է 2 անդամակցության ֆունկցիա [4] որպես մուտք՝ մուտքային սխալանքի (e) և սխալանքի փոփոխության (ec) և մեկ ելքային ֆունկցիա՝ որպես արդյունք ստացվելով վերոհիշյալ մուտքային ֆունկցիաներից: Ստացված ոչ հստակ 9 կանոնները ներկայացված են ստորև (Տե՛ս, Նկար 5):

Նկար 5.



Կիրառված՝ ոչ հստակ տրամաբանության «եթե-ապա» կանոնները

Մոդելավորված ոչ հստակ տրամաբանությամբ համակարգի սխեման ներկայացված է ստորև (Տե՛ս, Նկար 6):

Նկար 6.



Օգտագործված՝ ոչ հստակ տրամաբանությամբ կառավարման համակարգ

Թեստավորման արդյունքը ներկայացված է ստորև (Տե՛ս, Նկար 7):

Նկար 7.



Ոչ հստակ տրամաբանությամբ համակարգի թեստավորման արդյունք

Ինչպես երևում է ստացված արդյունքից, ոչ հստակ տրամաբանության կիրառմամբ կառավարման համակարգը գերազանցում է ՉԻԴ համակարգին հաստատուն հոսանքով էլեկտրական շարժիչի կառավարման ժամանակային պարամետրերում, արդյունքը ներկայացված է ստորև (Տե՛ս, Աղյուսակ 1):

Աղյուսակ 1.

	ՉԻԴ համակարգ	Ոչ հստակ տրամաբանություն
Աճի ժամանակ (վ)	0,1301	0,0279
Առավելագույն ամպլիտուդ(վ)	0,2251	1,0568

Ստացված արդյունքների ամփոփում

Ինչպես երևում է աղյուսակ 1-ից, ոչ հստակ տրամաբանության կիրառմամբ համակարգի աշխատանքն առավել արդյունավետ է:

Եզրակացություն

Սույն հոդվածում ներկայացված է հաստատուն էլեկտրական շարժիչի արագության կառավարման երկու տարբերակ՝ ոչ հստակ տրամաբանության կիրառմամբ և ՉԻԴ մեթոդով: Մոդելավորումներն ու թեստավորումներն իրականացվել են Մաթլաբ ծրագրային համակարգի սիմուլինկ փաթեթի միջոցով: Արդյունքում պարզ է դարձել, որ ոչ հստակ տրամաբանության մեթոդով համակարգի աշխատանքը գերազանցում է դիտարկված բոլոր կետերով՝ աճի ժամանակ, առավելագույն ամպլիտուդ:

Գրականության ցանկ

1. Manafeddin Namazov, “DC motor position control using fuzzy proportional derivative controllers with different Defuzzification methods” An Official Journal Fuzzy Systems Association Vol.1, No.1, pp. 36-54, 2010.
2. Sulochana Wadhwani, Amit Kumar Sahoo, “Design and tuning of PID controller parameters based on fuzzy logic and genetic algorithm”, Int. Conf. On soft computing, artificial intelligence, pattern recognition, biomedical engineering and associated technologies (SAP- BEATS), Feb 23-24,2013”, department of electrical engineering, MBM eng. College Jai Narain Vyas university, jodhpur
3. M. Ahmadian, “ACTIVE CONTROL OF VEHICLE VIBRATION”, Encyclopedia of Vibration, pp. 35-47 2001
4. K.J.Åström,T.Hägglund “Revisiting the Ziegler–Nichols step response method for PID control”, Journal of Process Control, Volume 14, Issue 6, September 2004, Pages 635-650
5. C.B.Kadu, C.Y.Patilb, “Design and Implementation of Stable PID Controller for Interacting Level Control System”, Procedia Computer Science, Volume 79, 2016, Pages 737-746

DEVELOPMENT OF DC MOTOR SPEED CONTROL ALGORITHM BY FUZZY LOGIC METHOD

Baskovchyan A.G.
Postgraduate student
EUA, Chair of Information Technologies and Applied Mathematics
avik.baskovchyan@gmail.com

Abstract

This paper presents two models of DC electric motor control: proportional integral derivative control (PID) [Kadu, Patilb, 737-746] and Fuzzy logic control models [Wadhwani etc, 28-34]. The functionality of the models presented during the research lies in the detection and solution of errors in the operation of the electric motor with constant current. Embedded systems try to obtain appropriate coefficients of formula variables through practical measurements, mathematical calculations and to ensure noise-stable operation. Studies have shown that the operation of the control system with fuzzy logic control is more efficient than the proportional integral derivative control system. The classical ZN (Ziegler Nichols) control method was chosen as the pre-algorithm of the proportional integral derivative control system. Present to vague expressions. For exercising not precise administrative system the model "non-commissioned officer" has been selected where the conditioned values are applied for presenting non-precise expressions. The simulations and tests were performed in the environment of the Matlab software system simulation tool and the comparative results are presented in the table.

Keywords: Fuzzy logic, Matlab, simulink, DC motor, optimization, modeling.

Ներկայացվել է՝ 08.04.2022 թ.
Գրախոսվել է՝ 31.05.2022 թ.

MULTI-VTH LOW POWER DESIGN METHOD BASED ON 32/28NM OPENMSP430 PROCESSOR

Babayan D.R.
PhD in Technical Sciences
EUA, Microelectronic Circuits and Systems Interfaculty
davitb@synopsys.com
Ghazaryan A.A
MA student
NPUA, Microelectronic Circuits and Systems Interfaculty,
gartur@synopsys.com

Abstract

The number of transistors in advanced integrated circuits doubles about every two years due to the requirements of the integrated circuit change. One of the main requirements during the process of designing a processor is basically decreasing power consumption and area. The balancing of the one parameter is opposite to the second one, so we must make trade-off decisions. Nowadays 60% of customers mentioned power consumption as an essential problem. For solving this problem engineer-scientists provided low power design methodologies which are: power gating, clock gating, and multi-voltage design. This paper presented a method

for low power openMSP430 which has a 16bit RISC architecture processor design from the MSP430x1xx family: which is a mixed-signal processor family from Texas Instruments, using multi-voltage design techniques. The design has been implemented in 2 ways: standard design and using multi-voltage design technique also a comparison between received results of two options in terms of area timing and power components.

Keywords: dynamic power, leakage power, UPF, area, processor.

Introduction

CMOS technologies are constantly changing. The increase of the number of transistors in integrated circuits and the reduction in area size is characterized by Gordon Moore's 1965 law, which states that the number of transistors in integrated circuits doubles every one and a half years, now exceeding ten billion. As a result of transistor size scaling - also changing requirements for other parameters in integrated circuits, such as power consumption of integrated circuits. The three main challenges arising from Gordon Moore's law are high speed, small area, and low power consumption. The parameters of the integrated circuits are inversely proportional; the improvement of one lead to the deterioration of the other. For example, in multi-core processors, the power consumption is improved due to the reduction clock frequency [*Մելիքյան, 20-50*]. The total power consumption of integrated circuits consists of two components: dynamic and static (Fig. 1) [*Melikyan et al., 1-2*].

Fig 1.



Total power consumption of IC's

Dynamic energy consumption is formed by the power conditioned by short-circuit and switching currents. Power due to switching current occurs when a logical level between logical 1 and logical 0 in the circuit. Short-circuit current occurs when there is a direct connection between the power supply and ground: In CMOS integrated circuits, the dynamic energy consumption mainly depends on the switching component. Power consumption due to static current of CMOS integrated circuits occurs when the circuit is connected to the power supply, but there is no switching at a logical level. The total component of the leakage current is mainly formed based on three components: the current passing through the valve, undercurrent, and the current due to the opposite deflection [*Vashishtha et al.,1-4*].

Collection of techniques and methodologies for reducing dynamic and static power consumption called low power design. There are many low power design techniques one of them is multi voltage design technique. This is a method in which the functions of a chip are separated by performance characteristics: perhaps one block has a high performance, and the rest of the chip has lower performance, as shown in Fig. 2. To achieve the goals of high-power unit performance, higher voltage is usually required, while a lower voltage can be used to save power on lower power sub block of design. This is instead of designing the entire block for a higher voltage, which is simpler but more energy intensive. In the power equation, the voltage is reduced, which reduces all static and dynamic power components. In multi-voltage designs, there is the complexity of designing individual voltage islands, where voltage crossing between islands may require "level switch" cells in order to make signal propagated from one island to another [*Texas Instruments, 1-3*].

Fig 2.



Multi-voltage design

The MSP430 incorporates a 16-bit Reduced instruction set computer (RISC) processor, peripherals, and supple clock system that interconnects using (based on) a von-Neuman common memory address bus and memory data bus [*Texas Instruments IV*]. The Fig. 3 shows the structure of openMSP430 processor.

Fig 3.



openMSP430 design structure

openMSP430 design structure: Frontend, Fetch and Decode instruction tasks were performed in this module. The module also contains the state machine execution. Execution unit contains arithmetical logic unit and register file it's executes the current decoded instruction. Serial debug interface contains required logic for Nexus class 3 debugging unit, without trace. Basic Clock Module or BCM generates MSLK, ACLK, SMCLK and manage the low power modes [*Girand, 10-12*].

Design process

The logical synthesis was performed by Design Compiler software, for which the input information is the RTL description of the processor in Verilog language. The process of logical synthesis begins with the translation of a verified code at the level of logical elements. The translation is done by matching certain structures with digital functions. At first Design Compiler creating scheme structure via internal library called GTECH during that process speed, area and energy consumption limitations of the device as well as the technology is omitted. The resulting scheme is subject to logical optimization, after which the final synthesis is performed and translation to the library elements considering the specifications. The synthesis process is shown in Figure 4 [*Չուխաջյան, 217-247*].

Fig 4.



RTL to gate level netlist generation flow

In the process of design synthesis, optimization is carried out, which is divided into three groups:

a) High level or Architectural optimization,
b) Logic Level optimization
c) Gate-level optimization.

High-level optimization is performed considering the components of the internal Library Design Ware which is integrated in algorithms of synthesis tool. This stage affects the structure of the design and is its technologically independent. The components of Design Ware are adders, multipliers, and other major schemes architectural solutions. The following operations are performed at this level of optimization: resource sharing, optimization of arithmetic expressions, choice of implementation, reordering of operators. At the stage of optimization of arithmetic expressions, the possibility of using common parts in expressions is determined. Operator reordering is done to optimize time. Design Ware Library contains multiple implementations for each operator such as multiplication: Booth multiplier, Walles tree multiplier exc. The conditions for selection are timing constraints and then area.

After the structural description of the circuit, a detailed parametric study was carried out based on the power/time dependence. During the study, high-power modules were discovered, and as a result, a UPF file was developed to obtain a low-power processor for a multi-wire design, the integration of part of which into the CAD flow is shown in Figure 5.

Fig 5.



RTL to gate level netlist generation flow with UPF

Omsp_execution_unit from OpenMSP430 chosen as a low voltage domain which operates at 0.6V while the processor operates at 0.72V. United power format (UPF) description showed in figure 6.Omsp_execution_unit supplied by VDDL with low voltage and the rest of the processor supplied by regular voltage VDD. Across the borders of the power domains inserted level shifters which are needed for different sub block interactions.

Fig. 6.

```
create_power_domain TOP
create_supply_port VDD
create_supply_port VSS
create_supply_port VDDL
create_supply_net  VDD
create_supply_net  VSS
create_supply_net  VDDL
set_voltage 0.72 -object_list {VDD}
set_voltage 0.6  -object_list {VDDL}
set_voltage 0    -object_list {VSS}
connect_supply_net VDD   -ports VDD
connect_supply_net VSS   -ports VSS
connect_supply_net VDDL  -ports VDDL
set_domain_supply_net TOP   -primary_power_net VDD   -primary_ground_net VSS
create_power_domain omsp_execution_unit  -elements execution_unit_0
create_supply_net  VSS   -domain omsp_execution_unit -reuse
create_supply_net  VDD   -domain omsp_execution_unit -reuse
create_supply_net  VDDL   -domain omsp_execution_unit -reuse
set_domain_supply_net omsp_execution_unit  -primary_power_net VDDL -primary_ground_net VSS
add_port_state VDD   -state {HV  0.72}
add_port_state VDDL  -state {LV  0.6}
add_port_state VSS   -state {GND  0}
```

UPF description

Constraints were applied to the design during logic synthesis using Synopsys Design Constraints (SDC) format. SDC file contains information about clock frequencies, input delays, output delays, etc. Example of these SDC file are provided in figure 7.

Fig. 7.

```
create_clock -name "clock" -period 4 [get_ports clock]
set_clock_latency 1 [get_clocks clock]
set_clock_uncertainty 0.2 [get_clocks clock]
set_clock_transition 0.3 [get_clocks clock]

group_path  -name CLOCK\
            -to clock\
            -weight 1

group_path  -name INPUTS\
            -through [all_inputs]\
            -weight 1

group_path  -name OUTPUTS\
            -to [all_outputs]\
            -weight 1

set INPUTPORTS [remove_from_collection [all_inputs] [get_ports clock]]
set OUTPUTPORTS [all_outputs]

set_input_delay -clock "clock" -max 2.0 $INPUTPORTS
set_output_delay -clock "clock" -max 2.0 $OUTPUTPORTS
set_input_delay -clock "clock" -min 1.0 $INPUTPORTS
set_output_delay -clock "clock" -min 1.0 $OUTPUTPORTS
remove_driving_cell [get_ports clock]
```

Constraint file

Processor gate-level construction synthesized with UPF shown in figure 8.

Fig. 8.



OpenMSP430 processor

Classical and offered design results provided in table 1.

Table 1.

	OpenMSP430 classical design	OpenMSP430 multi-voltage design
Area	5633.59	6050.41
Dynamic power (uW)	52.79	35.18
Total power (uW)	53.33	44.03

Results

Conclusion

The paper researched the openMSP430 processor which consists of 1) frontend, 2) execution unit, 3) serial debug interface, 4) memory backbone modules. For comparing parameters have done synthesis in 2 ways first one is standard design using simple RTL description and the second one along with RTL is using low power multi-voltage design technique with UPF. After both options optimization - the results showed processors' dynamic power consumption decreased ~33%, total power decreased ~17% but area increased ~6% with low power multi-voltage design technique with UPF.

References

1. **Չուխաջյան Հայկ**: «Verilog-ի կիրառումը թվային համակարգերի նախագծման գործընթացում»: Երևան Էդիթ Պրինտ, 2011, էջ 248
2. **Մելիքյան Վազգեն**: «Ինտեգրալ սխեմաների նախագծման ներածություն»: Երևան Ճարտարագետ, 2017, էջ 119
3. **V. Melikyan, M. Martirosyan, D. Babayan, V. Janpoladov, D. Musayelyan**. “Multi-Voltage and Multi-Threshold Low Power Design Techniques for ORCA Processor Based on 14 nm technology” 2018 IEEE 38th International Conference on Electronics and Nanotechnology (ELNANO) https://ieeexplore.ieee.org/document/8477510
4. **V. Vashishtha, A. Gujja,L. Clark** “Delay and power tradeoffs for static and dynamic register files” IEEE International Symopsium,2015, May, page 2900-2903 https://ieeexplore.ieee.org/document/7169293
5. **Texas Instruments.** “MSP430x1xx Family User’s Guide”, 2018, page 415
6. **Oliver Girand.** “OpenMSP430 – Rev 1.17”, November 6 2017. page 129

Ներկայացվել է՝ 08.04.2022թ.
Գրախոսվել է՝ 31.05.2022թ.

REACT.JS-ի ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ ԵՎ ԴԱՍ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Օհանյան Հ. Հ.
պ.գ.թ., դոցենտ
ՎՊՀ, Մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ամբիոն
ohanyanhh1970@mail.ru
Հովհաննիսյան Ն. Վ.
մագիստրանտ
ՎՊՀ, Մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ամբիոն
narek.hovhannisyan.work@gmail.com

Ամփոփագիր

Հոդվածում նշված են, թե որոնք են ֆունկցիոնալ բաղադրիչները, որն է նրանց դերը ծրագրավորման մեջ՝ տալով ֆունկցիոնալ բաղադրիչների առավելությունները և թերությունները: Համեմատական կարգով ներկայացված են նաև դաս բաղադրիչները, դաս բաղադրիչների առավելություններն ու թերությունները, դրանց դերը ծրագրավորման մեջ:

Ներկայացված է հեղինակների կողմից մշակված լուծում, որը հնարավորություն է տալիս փոխարինել componentDidCatch() կյանքի ցիկլի մեթոդը հեղինակների կողմից ստեղծված hook-ով:

Ներկայացված են ժամանակի ընթացքում դասային բաղադրիչների փոխարինումը ֆունկցիոնալ բաղադրիչներով, որը React.js-ը ստեղծող թիմի ուշադրության կենտրոնում է, և ժամանակ առ ժամանակ կատարվում են փոփոխություններ ցուցադրելով փոփոխությունները նոր տարբերակներ ցուցադրելիս: Ամեն նոր տարբերակում ցուցադրվող փոփոխությունները ավելացվում են React.js-ի պաշտոնական գրականության մեջ:

Այնուամենայնիվ, ուշադրություն է դարձվում նաև դասային բաղադրիչների վրա, որը վստահություն է առաջացնում մասնագետների շրջանում չփոխարինելու արդեն իսկ դասային բաղադրիչներով գրված ծրագրերը՝ ֆունկցիոնալ բաղադրիչներով:

Եզրահանգման մեջ ներկայացված է այն բաղադրիչը, որն ավելի նպատակահարմար է օգտագործել ծրագրավորման մեջ, և որը մեծ գործածություն ունի ներկայիս ծրագրավորողների շրջանակներում՝ տալով փաստացի հիմնավորումներ, նշելով նաև թե ինչ հեռանկարներ կան ապագայում կապված ֆունկցիոնալ բաղադրիչների հետ:

Հիմնաբառեր. վեբ հավելված, ֆունկցիոնալ բաղադրիչներ, դաս բաղադրիչներ, ֆունկցիա, արգումենտ, կյանքի ցիկլ:

Ներածություն

Ըստ հետազոտությունների, կայքերում մշակման լավագույն գրադարան է համարվում React.js գրադարանը: Ներկայումս մի շարք հայտնի ընկերություններ, ինչպիսիք են Amazon, Apple, Facebook, Google, Microsoft օգտագործում են React.js: Ըստ 2018 թ. Google -ի կողմից տրամադրած վերլուծությունների 2012-2018 թթ React.js-ի որոնումների քանակը աճել է մոտավորապես 4 անգամ: Այս բարձր ցուցանիշը խոսում է գրադարանի օգտագործման արդիականության և հետագա արագ զարգացման մասին: React.js ում զարգացում կարելի է նկատել բավականին արագ: Զարգացումների

առկայության լավագույն դրսևորումներից մեկը դասային բաղադիչներից ֆունկցիոնալ բաղադրիչների անցում կատարելն է: Բաղադրիչներից յուրաքանչյուրի կիրառությունն ունի իր առավելությունները և հարմարությունները ծրագրավորողների համար, սակայն ներկայում ավելի առաջնայությունը տրվում է ֆունկցիոնալ բաղադրիչների կիրառությանը: Չնայած այն փաստին, որ ծրագրերի մշակման գործընթացը մինչ այժմ իրականացվել է դասային բաղադրիչներով, այսօր շատ արագ ծրագրավորողներն անցում են կատարում ֆունկցիոնալ բաղադրիչների օգտագործմանը: Բաղադրիչներից յուրաքանչյուրի առավելությունների և տարբերությունների, ինչպես նաև դասային բաղադրիչներից ֆուկցիոնալ բաղադրիչների անցման կարևորությունը մանրամասն ներկայացված է հոդվածում:

React.js-ը, JavaScript ծրագրավորման լեզվի գրադարան է, որի միջոցով կառուցվում է օգտատերին հասանելի վեբ կայքի արտաքին տեսքը: React.js-ը թույլ է տալիս մշակողներին ստեղծել խոշոր վեբ ծրագիր, որը օգտագործում է այնպիսի տվյալներ, որոնք ժամանակի ընթացքում կարող են փոխվել առանց էջը վերբեռնելու: Դրա հիմնական նպատակը արագ, պարզ և լայնածավալ լինելն է: React.js-ը ստեղծվել է Վեբ հավելվածի արտաքին տեսքը կառուցելու համար: React.js-ում ստեղծում են բաղադրիչներ, որոնք նախատեսված են վեբ հավելվածի արտաքին տեսքը մաս առ մաս կառուցելու համար:

Վեբ հավելվածների արտաքին տեսքը ստեղծելիս էջը բաժանում են փոքր մասերի, յուրաքանչյուր փոքր մասի համար ստեղծում անհրաժեշտ ֆայլերը՝ որպես բաղադրիչներ, հայտարարում բաղադրիչը այն ֆայլում, որտեղ պետք է կառուցվի էջի արտաքին տեսքը, և օգտագործում տվյալ էջում: Վեբ հավելվածը ստեղծելու համար, հիմնականում պետք է ունենալ ընդհանուր մասեր կայքում (header, navigation bar, footer, content, image slide, carousel), որպեսզի ամեն անգամ կայքում չկառուցվեն նույն բաղադրիչները, պետք է ստեղծել ընդհանուր բաղադրիչի ֆայլը և տվյալ էջը կառուցող ֆայլում հայտարարել և կիրառել: React.js-ի բաղադրիչները անկախ և բազմակի օգտագործման համար են և պարունակում են JSX (JavaScript XML) շարահյուսություն, որը JS + HTML համադրություն է: Բաղադրիչը վերադարձնում է Document Object Model (DOM) տարրը, որը նկարագրում է, թե ինչպես պետք է արտապատկերվի կայքի արտաքին տեսքը(UI):

Յուրաքանչյուր կառուցվող բաղադրիչի ֆայլ իրենից ներկայացնում է ֆունկցիա (function) կամ դաս (class):

Ֆունկցիոնալ բաղադրիչները (functional components)՝

- javascript ծրագրավորման լեզվի ֆունկցիաներ են, որոնք ստանում են արգումենտներ props (հատկություններ) անվանումը և վերադարձնում են React-ի էլեմենտներ՝ վեբ հավելվածի արտաքին տեսքը կառուցելու համար,
- անվանվում են նաև առանց վիճակ (stateless) բաղադրիչներ, քանի որ նրանք պարզապես ընդունում են տվյալները և ցուցադրում էջի արտաքին տեսքում,
- ընդունում են ֆունկցիայի հատկությունները և վերադարձնում html(JSX) ֆորմատ
- առաջարկում են լուծումներ առանց վիճակ (state) կիրառելու
- նախատեսված չեն նկարել (render) մեթոդի կիրառման համար
- ստեղծելու համար կարող ենք հայտարարել սլաքային ֆունկցիաներ (arrow functions) կամ ուղղակի ֆունկցիաներ (regular functions)
- հնարավորություն է տալիս ստեղծել սեփական hook-եր, որը օգնում է կրճա-

տել կոդի ծավալը և բարելավում է կոդի ընթեռնելիությունը

Դաս բաղադրիչները (Class components)՝

- Javascript-ի ES6 ստանդարտին համապատասխանող դասեր են, որոնք ժառանգում են մեթոդներ React.Component դասից, ինչպիսիք են օրինակ կյանքի ցիկլի (lifecycle methods) մեթոդները (componentDidMount, componentDidUpdate, componentWillUnmount, render)
- հաճախ ճանաչվում են որպես՝ վիճակով բաղադրիչներ (stateful components), որովհետև նրանք իրականացնում են տրամաբանական և վիճակային գործողություններ
- պարտադիր պետք է ունենան render() մեթոդ՝ html ֆորմատավորում վերադարձնելու համար
- դասին փոխանցում են հատկություններ և նրանց դիմելու համար կիրառվում է this.props (հատկություններ) բանալի բառը
- ամբողջությամբ փոխարինված չէ ֆունկցիոնալ բաղադրիչներով

Վիճակը React.js-ում շատ կարևոր մաս է, որը թույլ է տալիս պահպանել հավելվածի ընթացիկ արժեքները, և եթե աշխատանքի ընթացքում կիրառվել է setState մեթոդը, որը փոխել է բաղադրիչի վիճակը, ապա բաղադրիչը կրկին կարտապատկերվի հավելվածի արտաքին տեսքում [*React-компоненты*]: Վիճակի գաղափարն առաջնային տարբերություններից է ֆունկցիոնալ և դասային բաղադրիչներում: Դասային բաղադրիչում, որպեսզի ստանանք հնարավորություն կիրառելու վիճակի գաղափարը անհրաժեշտ է սահմանել կոնստրուկտոր և կանչել super() մեթոդը: Կոնստրուկտորում super() մեթոդը փոխանցվում է, որպես հատկություն (this.props), հակառակ դեպքում հատկությունները(props) կլինեն չվերագրված(undefined):

Մինչ React.js-ի 16.8 տարբերակը ծրագրավորողները հիմնականում չէին կիրառում ֆունկցիոնալ կոմպոնենտներ, քանի որ այն չէր կարողանում լուծել խնդիրները կապված կյանքի ցիկլի (LifeCycle) հետ: React.js-ի 16.8 տարբերակից սկսած առաջացավ React Hooks գաղափարը, որպեսզի ծրագրավորողներին հնարավորություն ընձեռնվեր կիրառել վիճակի (state) գաղափարը ֆունկցիոնալ բաղադրիչներում: Այնուհետև React Hooks գաղափարը նաև բավական մեծ խնդիր էր լուծում կյանքի ցիկլի (LifeCycle) մեթոդներ կիրառելու համար (օր. componentDidMount, componentWillUnmount և այլն), մինչ այս կյանքի ցիկլի գաղափարը կիրառվում էր միայն դասային բաղադիչներում:

Կյանքի ցիկլերը կարևոր դեր են խաղում արտաքին տեսքում բաղադրիչները ցուցադրելու (rendering) ժամանակ: Աշխատանքում դասային բաղադրիչը, որպես ֆունկցիոնալ բաղադրիչ ինտեգրելիս անհրաժեշտ է ուշադրություն դարձնել, թե ինչով պետք է փոխարինել կյանքի ցիկլի մեթոդները, օրինակ componentDidMount() մեթոդը:

Կյանքի ցիկլի componentDidMount() մեթոդը կանչվում է առաջին ցուցադրման (render) ավարտից անմիջապես հետո: [*Yetayeh, 58*] Նախկինում եղել է componentWillMount()-ը, որը կանչվում է առաջին ցուցադրումից (rendering) առաջ, բայց խորհուրդ չի տրվում այն օգտագործել React- ի ավելի նոր տարբերակներում: Ֆունկցիոնալ բաղադրիչում componentDidMount()-ը փոխարինվում է useEffect hook-ով՝ երկրորդ արգումենտ ստանալով զանգված: Սա լավագույն տարբերակն է componentDidMount() componentDidUpdate(), և componentWillUnmount() մեթոդների փոխարինման համար ֆունկցիոնալ բաղադրիչներում:

Ստանդարտ դասի մեթոդները լավ են աշխատում, բայց կոդային տեսքի առումով այնքան էլ նպատակահարմար չէ: Ֆունկցիոնալ բաղադրիչներն առաջարկում են էլեգանտ և

պարզ լուծում: Կյանքի ցիկլի բազմաթիվ մեթոդներ օգտագործելու փոխարեն, մենք կարող ենք կիրառել useEffect() մեթոդը:

Ըստ React.js-ի պաշտոնական գրականության՝ ստեղծողների առաջնային նպատակը կյանքի ցիկլերը(lifecycles) hook-երով ամբողջական փոխարինումն է, ինչպիսիք են, օրինակ՝ getSnapshotBeforeUpdate(), getDerivedStateFromError() և componentDidCatch(), որոնք շուտով կլինեն պատրաստ [*React js hooks*]: Քանի որ վերը նշված կյանքի ցիկլի մեթոդները դեռևս չեն փոխարինվել hook-երով, աշխատանքում կցուցադրվեն կյանքի ցիկլի մեթոդները փոխարինող hook-եր, որոնք կլուծեն դասային բաղադրիչները ֆունկցիոնալ բաղադրիչներով փոխարինելու խնդիրը ամբողջությամբ:

Սեփական hook-երը (custom hooks) ստեղծվում են հիմնական hook-երի հիման վրա, բայց դրանք ամբողջությամբ անկախ են, քանի որ կարող են ստեղծվել՝ կիրառելով մի քանի hook-եր, տվյալ խնդրին համապատասխան լուծում տալու համար:

Ցուցադրված է հեղինակների կողմից մշակված մեթոդ, որը ֆունկցիոնալ բաղադրիչներում ստանձնում է դասային բաղադրիչների կյանքի ցիկլի componentDidCatch() մեթոդի դերը:

componentDidCatch() կյանքի ցիկլի մեթոդը չունի իրեն փոխարինող հիմնական hook, այս խնդիրը լուծելու համար կցուցադրվի սեփական hook-ի օրինակ, որը խնդիրները լուծելիս կփոխարինի componentDidCatch() կյանքի ցիկլի մեթոդին:

componentDidCatch() մեթոդը կանչվում է, երբ տեղի է ունենում սխալ: Այս մեթոդը hook-ով կարելի է փոխարինել MyErrorCatcher() custom hook-ով: Մեթոդը պետք է տեղադրել նոր ֆայլի մեջ, հայտարարել մեթոդը, որպեսզի հասանելի լինի կանչը այլ ֆայլերից, որպես փոխանցվող մեթոդ և այն ֆայլերում որտեղ անհրաժեշտություն կլինի փնտրել սխալ,կկանչենք այս մեթոդը մեր նախօրոք ստեղծած ֆայլից և կօգտագործենք այն էջում, որտեղ անհրաժեշտ է:

Ստորև նշված կոդի գործառույթը ամբողջությամբ համարժեք է componentDidCatch() կյանքի ցիկլի մեթոդին:

```
const MyErrorCatcher = React.errorBoundary((props, error, stack) => {
// This code segment is equivalent to `componentDidCatch`
useEffect(() => {
if (error !== null) {
logErrorToBackend(error, stack);
}
}, [error]); // dependency is important here to not sent the information on every render
// No need to derive state from error anymore. Just use the error value to do whatever you want
if (error) {
return <BoxError error={error} />
}
return props.children;
});
```

Custom hook-երը բացի նրանից, որ փոխարինում են դասային բաղադրիչներին, նաև շատ հեշտացնում են React-ում ընդգրկված hook-երի աշխատանքը:

Դասային և ֆունկցիոնալ բաղադրիչներն ունեն նաև այլ անվանումներ, որոնք հանդիպում են տարբեր աղբյուրներում՝ [*Kicker, 12*]:

- Վիճակով և առանց վիճակի բաղադրիչներ (stateful and stateless components)
- Կոնտեյներային և ներկայանալի բաղադրիչներ (Container components and Presentational components)
- Խելացի և բութ (Smart components and Dumb components)

Եզրակացություն

Այսպիսով՝ երկու տեսակի բաղադրիչներն էլ ունեն և՛ առավելություններ, և՛ թերություններ: Անդրադառնանք այն փաստին, որ ֆունկցիոնալ բաղադրիչները ավելի հեշտ են թեստավորվում, և ծրագրավորման տեսանկյունից կոդը հեշտ ընթեռնելի է, կարող ենք եզրակաց-

նել, որ մոտ ապագայում ֆունկցիոնալ բաղադրիչները ամբողջությամբ կգրավեն React.js-ը: React-ի թիմը կենտրոնացել է ֆունկցիանոլ բաղարիչների hook-երի վրա, որոնց միջոցով ֆունկցիոնալ բաղադրիչները ամբողջությամբ փոխարինում են դասային բաղադրիչներին: componentDidCatch() մեթոդը՝ հեղինակների կողմից ստեղծված MyErrorCatcher() մեթոդով փոխարինումը, առավելություն է տալիս ֆունկցիոնալ բաղադրիչին դասային բաղադրիչի նկատմամբ: Ներկայիս տվյալները համեմատելիս դասային բաղադրիչները առավել են ֆունկցիոնալ բաղադրիչներից, քանի որ դասային բաղադրիչի ոչ բոլոր կյանքի ցիկլի մեթոդներն են փոխարինված ֆունկցիոնալ բաղադրիչների համար նախատեսված hook-երով: Պաշտոնապես ոչ բոլոր կյանքի ցիկլի մեթոդները hook-երով չփոխարինվելը ներկայումս կարևորագույն առավելությունն է դասային բաղադրիչների համար:

Գրականության ցանկ

1. Asabeneh Yetayeh. “30 days of React” 303 p.
2. Goal Kicker. “REACT JS NOTES FOR PROFESSIONALS” 110 p.
3. “React-компоненты”: WannaFly 01.02.2022 https://wf-agency.ru/articles/react-komponenty/
4. “React js hooks”: React, 11.12.2021 https://reactjs.org/docs/hooks-faq.html#do-hooks-cover-all-use-cases-for-classes

ADVANTAGES AND DISADVANTAGES OF REACT.JS FUNCTIONAL AND CLASS COMPONENTS

Ohanyan H. H.
PhD in Technical Sciences, Associate Professor
VSU, Chair of Mathematics and Informatics
ohanyanhh1970@mail.ru
Hovhannisyan N. V.
MA Student
VSU, Chair of Mathematics and Informatics,
narek.hovhannisyan.work@gmail.com

Abstract

The article presents the meaning and types of functional components, their role in programming, the advantages and disadvantages of functional components. Class components, advantages and disadvantages of class components and their role in programming are also presented as well.

The authors have developed a solution to replace the componentDidCatch() lifecycle method with a hook created by the authors.

This article describes the replacement of class components over time with functional components, which is the focus of React.js development team. Changes are made from time to time by displaying changes in new versions. The changes, which appear in each new version, are added to the official literature on React.js.

However, attention is also paid to class components, which makes, professionals confident that it is impossible to replace already written class components of the program with functional components.

In the concluding part of the research a component that is more appropriate for the use in programming is widely used by programmers nowadays, and gives factual justifications and showing this components for future functional components.

Keywords: web application, functional components, class components, function, argument, lifecycle.

Ներկայացվել է՝ 07.04.2022 թ.
Գրախոսվել է՝ 26.05.2022 թ.

**Խմբագրության հասցեն. Հայաստանի Հանրապետություն,
Երևան 0037, Դավիթ Անհաղթի 10**

Հեռ. (374 10) 24 00 38
Ֆաքս (374 10) 24 00 38
Վեբկայք http://www.eua.am
Էլ. փոստ. info@eua.am

Համակարգչային ձևավորումը՝ Մ. Գևորգյանի
Սրբագրությունը՝ Գ. Պետրոսյանի, Հ. Թամազյանի

Ստորագրված է տպագրության 15.06.2022թ.

Ֆորմատ՝ 60x84/16 Թուղթ՝ օֆսեթ:
Տպագրական 15 մամուլ: Տպաքանակ՝ 100:

Եվրոպական համալսարան
հրատարակչություն,
Երևան 0037, Դավիթ Անհաղթի 10